


4028

ԱՅՐԻՍԻ ԾԱԼՈՎԱՐ  
ԹԱՐԿԱՐԱԿԱՆ



281.6  
G - 63

ՏՊԵՑԱԻ ԳԻՐՔՍ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՄԲ  
Ն. Ա. ՕԾ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ  
ՀԱՅՐԱՊԵՏԻ



МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ им. МАШТОЦА  
ПРИ ПРАВИТЕЛЬСТВЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НЕРСЕС ШНОРАЛИ  
СОБОРНОЕ ПОСЛАНИЕ

Текст, вступительная статья и комментарии  
Э. М. БАГДАСАРЯНА

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА  
ЕРЕВАН 1995.

281.6  
4-63

ՄԱՍԵՆԱԳԱՐԱՆ

ՀՈՅՈՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՈԲՆԹԵՐ  
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏ

12012

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԹՈՒՂթ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

Աշխատավրությամբ  
Է. Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական  
խորհրդի որոշմամբ

Տ 108

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտուրյունների դոկտոր

Փ. Փ. ԱնթաղջԱն

Գիրքը հրատարակուրյան ևն երաշխավորել գրախսներ՝  
բանասիրական գիտուրյունների դոկտոր Ա. Ն. ՍԲԱՊՅԱՆը  
և բանասիրական գիտուրյունների դոկտոր Փ. Փ. ԱնթաղջԱնը

## Ներսես Շնորհալի

Ն-631 Թուղթ ընդհանրական /Աշխատասիր. է. Մ. Բաղդասարյանի; Պատ. խմբ. Փ. Փ. Անթաղջյան, Մատենադարան, ՀՀ կառավար. առընթեր Մաշտոցի անվ. Հինձնուագրերի ինտ-եր.: ՀՀ ԳԱԱ Հրատ., 1995-176 էջ:

Գիրքը նվիրված է XII դարի պետական և եկեղեցական  
ականավոր գործիչ, գիտնական Ներսես Շնորհալու «Թուղթ  
ընդհանրական» կոչված խրատականին: Հրատարակվում է  
«Թուղթ ընդհանրականի» քննական բնադիրը: Աշխատության  
առաջաբանում քննության ևն առնվում այդ նշանավոր երկի  
առանձնահատկությունները, տեղի ու դերը միջնադարյան հայ  
մատենագրական աղբյուրների մեջ:

Նախատեսվում է մասնագետների և միջնադարյան Հայ-  
յատանի պատմությամբ հետաքրքրվող լայն հասարակայ-  
նության համար:

Ն 4702080101  
703 (02)-94 112-94

ԳՄԴ 84 Հ 1

111445-ԱՀ

ISBN

© ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 1995

880-2011



## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը...»<sup>1</sup> միջնադարյան կանոնախրատական և Հրապարակախոսական ամենակնառու երկերից է։ Այն ոչ միայն բարոյակրթիչ նշանակություն է ունեցել բազմաթիվ սերունդների համար, այլև հաստատորեն եղել է տեսակը սկզբնավորող երկերից մեկը, նպատակ ունենալով կանոնավորել հասարակության ներքին կյանքը, միջնադարյան ըմբռնողությամբ դասերի և դասակարգերի հարաբերությունները, եկեղեցու շուրջը նրանց ավելի սերտ համախմբումը և ժողովրդի կենցաղի ու բարքերի մաքրության ապահովումը։ Ինչպես այլ առիթով՝ արդեն նշել ենք, Շնորհալին ու Հետագայում նրան հետևող այլ գործիչներ դրան հասնելու համար, ի թիվս այլ միջոցների, զիմեցին նաև «Կանոնական խրատներին», իրրև հայ եկեղեցու կանոնագրքի դրույթները և հայ իրականության մեջ եղած իրավական նորմերը առավել մատշելի ու ճկուն ձևով ժողովրդական ամենալայն դանդամներին հասցնելու միջոցի<sup>2</sup>։ Խնդիրն այն է, որ միջին դարերում եթե ժողովրդի ազգային գիմագգի, մշակույթի, լեզվի պահպանման համար ընդհանրապես կարևոր նշանակություն ուներ կրոնը, կամ ավելի ճիշտ՝ կրոնի այն դավանանքը, որին հետևում էր տվյալ ժողովուրդը, ապա այն ժողովուրդների մոտ, որոնց կենտրոնական ազգային պետականությունը հարատես չի եղել, այդ հանգամանքն ավելի շեշտվել է, որովհետև պետականության բացակայության պայմաններում եկեղեցին իր վրա էր վերցնում լրացուցիչ պարտականություններ։ Դա վերաբերում է հատկապես հայ ժողովրդի պատմությանը։ Հնարավոր է նույնիսկ պարբերացնել այն երեսությներ,

որոնցով հայերը, անհրաժեշտության դեպքում, պայքարում՝ էին ճգնաժամային վիճակներից դուրս գալու համար։ Դրանց թվին են այնպիսի խոշոր երևույթներ, ինչպես հայոց այբուբենի դյուտը, քրիստոնեական կրոնի ազգայնացումը, հայ եկեղեցու հակաքաղկեդոնական կողմնորոշումը, Կանոնդրբի ստեղծումը։ Այս իմաստով մեծ նշանակություն ունեցավ նաև զրավոր քարոզների և կանոնական իրատական ժողովածուների ստեղծումը<sup>3</sup>։

Դատելով այն փաստից, որ ինչպես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», այնպես էլ նրան հետևած այլ գործիշների նույնատիպ գրությունները, մասնավորապես Հովհաննես Երզնկացու «Խրատ հասարակացը», մեծ ուշադրության ու բարձր գնահատականի են արժանացել ժամանակի շատ ականավոր պետական, հոգևոր և մշակութային գործիշների կողմից, անկասկած պետք է ենթադրել, որ դրանք մեծարժեք գործեր են եղել ժամանակակիցների համար։ Այդ երկերը իրենց թարմությունը պահպանել են գրեթե ողջ միջնադարի ընթացքում և պատահական չեն, որ տարբեր հարյուրամյակներում բազմիցս արտադրվել, բազմացվել ու տարածվել են հայկական համայնքներում։

Ահա թե ինչպիսի հատկանշական գնահատական է տալիս Պ. Ալիշանը Շնորհալու «Թուղթ ընդհանրականին»։ «Թէ մեր ամեն կաթողիկոսունք ալ այսպիսի բան մ’ըրած են յաթոռակալութեան իրենց՝ շեմք տարակուսիր. բայց շատ տարակուսիմք թէ Շնորհալույ նման բան մ’ըրած և գրած թվան, գոնէ մեզի հասած ըըլլալով՝ յայսմ ալ յառաջադէմ և նախօրինակ կը գտնեմք զնա, և իր Ընդհանրական ըսուածվարդապետական թուղթը կամ գրքոյկը, իր եղական և դասական գործոց մէկն, դարձեալ ընտիր մը յընտիրս և պարծանք ի պարծելիս»<sup>4</sup>։

«Թուղթ ընդհանրականը» հրատարակվել է բազմիցս՝ Ս. Պետերբուրգում 1788 թ., Կ. Պոլսում 1825 թ., Վենետիկում 1830 թ., Էջմիածնում 1865 թ., Երևանում 1871 թ., դարձյալ Վենետիկում 1873 թ., և, վերջապես,

«Թուղթ ընդհանրականի» աշխարհաբար թարգմանությունը  
Անթիլիասում՝ 1977թ.<sup>6</sup>:

Թեև նշվածներից մի քանիսը ձեռագրերի համեմատությամբ կատարված հրատարակություններ են, այնուամենայնիվ «Թուղթ ընդհանրականի» և՛ ուսումնասիրությունը, և՛ հրատարակությունն այսօր մեծապես անհրաժեշտ են իրարևե ժամանակի բազմաթիվ կնճռոտ հարցերի լուսաբանման համար խիստ կարևոր պատմական սկզբնաղբյուր, հայագիտության մեջ բարձր գնահատված լեզվական հուշարձան, բայց առ այսօր ըստ էության շհետազոտված ու չբացահայտված մատենագրական հազվագյուտ նմուշ: Առանց նսեմացնելու նախորդ հրատարակությունների արժեքն ու նշանակությունը հարկ է նշել, որ այսօր նրանք անկարող են մտավորականության և հատկապես մասնագետ գիտնականների հետաքրքրությունը բավարարելու հնարավորությունից, մանավանդ որ տպագիր օրինակները հազվագեց են:

Սույն աշխատությունը մաս է կազմում խրատների, ճառերի, քարոզների և համարենույթ երկերի ու ժողովածուների Մաշտոցի անվան Մատենադարանի կողմից իրականացվող հրատարակության, որոնք նպաստելու են հայ ժողովրդի պատմության ու մշակութի ըստ ամենայնի ուսումնասիրմանը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XII դարի վերջին տասնամյակներում քաղաքական իրադրությունը Հայաստանում և նրա հարևան երկրներում լուրջ փոփոխություններ կրեց: Սելջուկյան հսկայածավալ պետության մասնատումը և Բյուզանդիայի աստիճանական թուլացումն ստեղծեցին ուժերի նոր հարաբերակցություն, որը նպաստավոր էր նվաճված ժողովուրդների պետական անկախության վերականգնման համար:

Օգտվելով այդ հանգամանքից և դաշնակից ունենալով Վրաստանը, Հայաստանի Հյուսիսային մասի ուղղմաքաղաքական ղեկավարությունը մահմեդական ամիրայությունների դեմ մղած համառ ու հաղթական պայքարի շնորհիվ ազատագրում է Հայրենիքի մի զգալի մասը և կազմում է Զաքարյանների ուժեղ իշխանապետությունը:

Այս նույն ժամանակ առավել նպաստավոր իրադրություն էր ստեղծվել Կիլիկիայում, որտեղ Թորոս Երկրորդն իր իշխանակալության տարիներին մղած տևական պայքարից հետո կարողացավ ամրապնդել իշխանությունը լեռնային Կիլիկիայում: Այնուհետև, Հենվելով դաշտային Կիլիկիայի հայ բնակչության աջակցության վրա, աստիճանաբար դուրս վռնդեց և Բյուզանդական կայսրությանը, և խաչակիրների ու մահմեդական իշխանություններին: Ավելին, սկսած XII դ. կեսերից Կիլիկիան հայկական պետությունը այնպիսի ուժ դարձավ, որ կարողացավ վճռական դեր խաղաղ Մերձավոր արևելքում մրցակցող կողմերի ուղղմաստրատեգիական ծրագրերում:

Հայկական պետական միավորումների ստեղծումն ու ամրապնդումը Հայաստանի Հյուսիսային մասում և Կիլի-

կիայում ոչ միայն նպաստեցին Հայ ժողովրդի տնտեսական-մշակութային ընդհանուր վերելքին, այլև նոր նախադրյալներ ստեղծեցին, եթե ոչ պետական, զոնե ազգային-զա-դափառական միասնություն հաստատելու տարրեր երկրուներում ցրված Հայկական զանգվածների միջև: Ի Հեծուկս պատմական ճակատագրի և օտար նվաճողների վարած քա-դաբականության, Հայաստանում ու նրանից դուրս եղած Հայության մեջ ամբապնդվեց մեկ միասնական ժողովրդի պատկանելու գաղափարը, որն իր արտացոլումը գտավ ժա-մանակակիցների ստեղծագործություններում և առավել ըն-դարձակ ձևով արտահայտվեց Հովհաննես Երզնկացու «մեկ է ժողովուրդն Հայոց» նշանավոր արտահայտության մեջ: Այդ Հանգամանքը նպաստեց ոչ միայն Հայ ժողովրդի սո-ցիալ-իրավական կյանքը, կենցաղը, սովորությունները, մշակույթը, Հոգեոր դավանանքը, ծեսերը ժամանակավորա-պես հեռու պահելու օտար, բացասական ազգեցություննե-րից, այլև Հայ զրականությունը, արվեստը, մշակույթը առ-հասարակ բարգավաճման և զարգացման նոր թափ ապրե-ցին: Պատահական չե, որ այդ շրջանը Հայ ժողովրդի պատ-մության մեջ հետագայում գնահատվեց որպես «արծաթի դար»:

Միջնադարի պայմաններում, Հասկանալի պատճառնե-րով, այդ գործի նախաձեռնողն ու կազմակերպողը պետք է դառնար եկեղեցին, որը միակ ուժեղ ու հեղինակավոր կազ-մակերպությունն էր Համահայկական առումով, նա էր օտար-ներին ներկայացնում Հայ ժողովրդի Հավաքականությունը: Ահա թե ինչու, Հայ ժողովրդի ուղմաքաղաքական հզորու-թյանը զուղընթաց նկատվում է նաև Հայ եկեղեցու հեղինա-կոթյան նշանակալից աճ: Բյուզանդիան, Համակերպվելով Կիլիկիայի՝ իր Համար անվերադր կորստի հետ, XII դ. վերջին տասնամյակներին փոխում է Հայ եկեղեցու անկա-խության նկատմամբ դավադրական իր վարքագիծը, փոր-ձելով նոր միջոցներով Հասնել եկեղեցիների իրեն բազալի միության: Ըստ որում, դա արվում էր ոչ այնքան Հույն Հոգեորականության, որքան բյուզանդական կայսրերի ան-

միջական նախաձեռնությամբ։ Նրանք ձգտում էին այդպիսով հայերի ուղմական շոշափելի ուժը օգտագործել Փոքր Ասիայի, Միջագետքի մահմեղականության ու խաչակիրների դեմ և խափանել կաթոլիկ եկեղեցու հեղինակության հնարավոր աճը հայկական շրջանակների վրա։

Ուշադրության է արժանի հետեւյալ երեսությը։ Եթե դարեր շարունակ բյուզանդական կայսրությունը եկեղեցիների միության խնդիրը ձգտում էր զենք դարձնել թուլացնելու, իսկ հնարավորության դեպքում նաև խպառ վերացնելու հայկական պետականությունը, ապա նոր պայմաններում ստիպված է լինում ոչ միայն լսելու հայերի կարծիքներն ու տեսակետները միության խնդիրների վերաբերյալ, այլև, ի վերջո, ճանաչում է հենց բյուզանդիայից խլված տարածքների վրա հայկական պետականության գոյությունը և, իբրև աննախադեպ երեսությունը ողջ հայ-բյուզանդական հարաբերությունների պատմության մեջ, ընդունում է այդ պետության ինքնակալ իշխանության փաստը։

Կաթոլիկ եկեղեցին իր հերթին, նկատելով խաչակրաց իշխանությունների անկայունությունը և համոզվելով, որ Կիլիկյան հայկական պետությունը քրիստոնեության ամենաշղոր հենարաններից մեկն է դարձել արևելքում, XII դ. վերջերից լուրջ միջոցների է դիմում հայերին կաթոլիկական դավանանքի դարձնելու ուղղությամբ։ Ըստ որում նկատելի է, որ կաթոլիկության ջանքերն այս ուղղությամբ ավելանում են արևելքում խաչակիրների հզորության թուլացմանը զուգահեռ։

Իսկապես, միայն Կիլիկիայի ուղմաքաղաքական իրական ուժով և հեղինակությամբ կարելի է բացատրել այն փաստը, որ մահմեղական իշխանությունները ևս, հարմար առիթով, ձգտում էին իրենց կողմը գրավել Կիլիկյան հայկական իշխանությունը։ Այդ տեսակետից հատկապես ուշադրավ է Հալեպի էմիր Նուր էդ Դինի պատասխանը նորանց, ովքեր իրեն մեղադրում էին Կիլիկիայի քրիստոնյա տիրակալ Մլեհի հետ դաշնակցելու համար։ «Ես,—զորում է էմիրը,—ձգտում էի նրա հետ բարեկամության, որովհետեւ նրա

Երկիրը Հարմար պաշտպանություն ունի, Ճանապարհներն  
այնտեղ զրեթե անանցանելի են, իսկ ամրոցները՝ շատ հզոր:  
Մենք ուղիներ չունենք նրա երկիրը տանող, այն գեպում,  
երբ նա Հնարավորություն ունի այնտեղից առաջ խաղալու  
և շախաղախելու մուսուլմանական երկիրը»<sup>8</sup>: Էմիրի Հետագա  
խոսքերից պարզվում է, որ զաշտային Կիլիկիայի դեմ Հնա-  
րավոր գործողությունները չեն կարող վճռական լինել ուժի-  
ցի Հարաբերակցությունը որոշելու համար, որը և ստիպում  
է Էմիրին Հաշտության ձեռք մեկնելու Հայկական պետու-  
թյանը:

Այն կարեոր Հանգամանքը, որ Հայկական երկու պե-  
տությունները զրեթե միաժամանակ միջազգային ճանաշ-  
ման հն արժանանում, ինչպես նաև մեծապես աճում է Հայ-  
եկեղեցու վարկը, անշուշտ, նպաստավոր էր Հայ ժողովրդի  
բարոյական, տնտեսական, մշակութային նոր զարթոնքի  
համար, ինչ որ շոշափելորեն նկատվում է այս և Հետագա  
2րջանում:

Զպետք է աշքաթող անել սակայն, որ այս ամենին զու-  
պահեռ, ամրողությամբ վերցրած, Փոքր Ասիայի և Միջա-  
զետքի մի շարք երկրներում ցիր ու ցան եղած Հայ բնակչու-  
թյան վիճակը գեռնս բավական ծանր էր: Խնդիրն այն է, որ  
Հայ ժողովրդի համար ոչ միայն շկար քաղաքական և տնտե-  
սական մեկ միասնական կենտրոն, որը մի հզոր բռունցքի  
մեջ կենտրոնացներ ժողովրդի ուժերն ու միջոցները, այս  
միակ Համազգային, այն էլ սոսկ հոգեոր կենտրոնի՝ եկե-  
ղեցու համար անշափ դժվար էր իրականացնել վերահսկո-  
ղությունն ու զեկավարությունը Հայկական թեմերի վրա:  
Մանավանդ եթե նկատի ունենանք, որ Հայաստանից գուրս՝  
Հռոմեական, որը ի դեպ գտնվում էր Հալեպի Էմիրության  
կազմում, Հաստատված կաթողիկոսարանը նյութական ու  
բարոյական լուրջ կարիքի մեջ էր: Այդ ամենի մասին իր մի  
շարք գործերում լավագույնս վկայում է Ժամանակի կա-  
թողիկոս և նշանավոր գործիշ Ներսես Շնորհալին. «Քանզի  
2րջել առ ամենեսեան՝ ընդ ամենայն կողմանս աշխարհի և  
քարոզել զբան Աստուծոյ ըստ նմանութեան առաքելոցն սրբ-

քոց, անկարելի է՝ յաղագս ժամանակիս շարութեան և բազմիշխանութեան»<sup>9</sup>: Իսկ ավելի որոշակի. «Եւ քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ գոյ ազգի մերում, որպէս զի անդանօր նստելով յաթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսուցանէաք ժողովրդեան մերոյ զԱստուածային պատուիրանս ըստ առաջին հայրապետացն և վարդապետաց: Այլ եմք իբրև զայծեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք ի քարանձաւ յայս բնակելով, յորում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիւք շատացեալք ի զիւղից կամ յագարակաց, յորոց ունիմք և ոչ մի: Նաև ոչ անդաստան հողոյ, զի վաստակօք և աշխատութեամբ զպէտս մեր լնուաք, և ոչ օգնութիւն ուստէք, որպէս արժան էր, ի թագաւորաց և յիշխանաց ի Քրիստոս հաւատացելոց»<sup>10</sup>:

Սակայն, դժվարություններից մեծագույնը ոչ թե կաթողիկոսարանի անմիտիթար վիճակն էր, այլ այն, որ հայերը «ոչ ի միում աշխարհի բնակեն, որպէս այլոց ազգաց, զի դիւրին էր շրջել առ նոսա առաջնորդացն, եւ սերմանել զԲանն, այլ ըստ մեղաց մերոց ցրուեալ են ազգ մեր և ժողովուրդը ի ոլորտս տիեզերաց ի մէջ օտարասեռ ազանց»<sup>11</sup>:

Յրված լինելով օտար տերությունների ու ժողովուրդների մէջ և բնականաբար ենթակա նրանց, հայկական համայնքներին լրջորեն սպառնում էր ոչ միայն օտարացում ազգային եկեղեցուց, այլև մշակութային և էթնիկական ուժացում, մանավանդ եթե նկատի ունենանք, որ XII դարը հայիրականության մէջ ոչ միայն մշակութային զարթոնքի, այլև աշխարհիկ մտայնության զարգացման շրջան էր, երբ անտարբերությունը դեպի հավատն ու եկեղեցին թափանցում էին անգամ հոգեոր գործիչների շրջանակները:

Կրոնական խիստ կենցաղավարությունից ազատված մարդկանց համար աշխարհն ավելի ազատ ընկալելու և վայելու տենդն այնքան ուժեղ էր, որ Ծնորհալու վկայությամբ անգամ եկեղեցու շատ պաշտոնյաներ հոգեոր ծեսերն ու աղոթքները համարում էին ձևական միջոցներ, առանց խորանալու նրանց իմաստի ու նշանակության մէջ: Բնդիմանրապես դրական այս երկութիւն անգամ Հայաստա-

Նում միանշանակ չի եղել բոլոր ժամանակների համար: Կոնկրետ XII դարում հայ իրականության պայմաններում այն ունեցել է նաև բացասական հետեւանքներ: Հեռանալով կրոնից ու եկեղեցուց, մարդիկ ավելի հեշտ էին կու գնում օտար ազդեցություններին, որոնք շարունակում էին Հայաստան թափանցել, ինչպես այլադավան քրիստոնեական եկեղեցիների, այնպես էլ մահմեդականության միջոցով: Եվ երբեք պատճառական չպետք է համարել, որ այդ երկութիւննեմ պայքարում էին հայ մշակույթի ու եկեղեցու լավագույն ներկայացուցիչները:

Ստեղծված կացությունը պահանջում էր եռանդուն գործունեություն մի կողմից սատար լինելու ազգային կյանքում նկատելի քաղաքական-տնտեսական վերելքին, մյուս կողմից, ինչպես ասկեց, պայքարելու հանգամանքների բերումով գեռնս պահպանվող, մասամբ նույնիսկ խորացող դժվարությունների հաղթահարման համար:

Հայ իրականության մեջ տեղի ունեցող նոր տեղաշարժերի և այդ իրականության երկակի վիճակով էլ պետք է բացատրել այն իրազությունը, որ հատկապես XII դարի երկրորդ կեսում է վերսկսվում լայն շարժում ինչպես ազգային եղած արժեքները պահպանելու ու զարգացնելու, այնպես էլ նորը ստեղծելու ուղղությամբ:

Այդ շարժման ազդեցության ներքո ծնունդ առան այնպիսի երկեր, որոնց պահանջը հրամայական էր դարձել և որոնց ազդեցությունը հսկարակական կյանքի վրա, իրոք, հսկայական էր: Նկատի ունենք այն փաստը, որ XII դարում նոր զարգացում ապրեցին գրավոր աղոթքները, ստեղծվեցին կանոնական բնույթի խրատների ժողովածուներ, հայերեն առաջին գատաստանագիրքը և այլն: Այդ մասին վկայում են հենց իրենք, այդ երկերի հեղինակները: Մենք արդյուն վերը տեսանք, թե Ծնորհալին, թվարկելով ծառացած դժվարությունները, ինչպես էր հուսալի ելք փնտրում եղած դժվարությունները հաղթահարելու համար: Հանրահայտ է նաև Միհիթար Գոշի տված բացատրությունը աշխարհիկ դատաստանագործի երկան գալու պատճառների ու հանգա-

մանքների մասին։ Ուշագրավ է, որ գրավոր քարոզների և խրատների երեան գալու անհրաժեշտության վերաբերյալ Շնորհալու տված բացատրությունը դատաստանագրքի մասին Գոշի մի փոքր ուշ տված բացատրությանը շատ համաձնչուն է։ Շնորհալին գրում է. «Ցառաջազոյն՝ ի ժամանակս առաքելոցն, մինչդեռ նոր ծաղկեաց գարունն հաւատոյ։ ամենեքեան լի էին Հոգով Սրբով և շնորհօք Հոգուն յինքեանց մտաց խօսէին զբանս աղօթից՝ ըստ ժամուն պիտոյից զպատարագին խորհրդածութեան և զամենայն կատարողապետութեանց։ Իսկ ի ժամանակս յետինս, քանզի հանգերձեալ էր ձմեռն մեզացն սառնամանեօք խստութեան ցրտացուցանել զբորքումն առ Աստուած սիրոյն յամենեցունց և բթացուցանել ի շնորհաց Սուրբ Հոգուն, տեսեալ Հոգույ ակամք սուրբ և հոգեկիր վարդապետք եկեղեցւոյ՝ և այնր աղազաւ գրով աւանդեցին զամենայնն զկնի եկողաց։ Զի նոքօք անվրէալ և անսայթաք առաջնորդեալք կատարեցուք զամենայն կարգաւորութիւնս եկեղեցւոյ, վասն որոյ զայն մտաւորաբար պարտ է մատուցանել և մեծաւ հաւատով և յուսով<sup>12</sup>:

Այս ամենը, անկասկած, վերաբերում էն նաև խրատներին և մասնավորապես՝ կանոնական բնույթի խրատներին։ Հայ Հոգևորականները, բնական է, իրենց առօրյա գործունեության բնթացքում նաև խրատների բացատրության բանագոր ձևերին ևն դիմել, սակայն առկա պայմանները թելադրում են ստեղծել հատկապես գրավոր խրատների շարք, որը հնարավոր էր տարածել զանազան վայրերում։ Հայ Հոգևոր և աշխարհիկ գործիչները հետազայում էլ ինչպես և նախկինում, անտարակույս, օգտվում էին նաև օտար հեղինակների բարողներից ու խրատներից, բայց մանավանդ մեզ հետաքրքրող ժամանակներում, պայքարելով օտար եկեղեցիների ազգեցության դեմ, չէին կարող բավարպել միայն դրանցով։

Առաջին հայացքից իրաբից տարբեր, անկախ թվացող պայքարի այս երկու ուղղութիւններն ի վերջո գալիս էին միմյանց լրացնելու և միենույն նպատակն էին հետապնդում։

ամբապնդելու հայ հասարակության ներքին միասնությունը, հզորացնելու հայոց պետականությունն ու եկեղեցին։ Ոչ միայն պատահական չէ, որ այդ շարժման երկու ուղղություններն էլ գլխավորեց ականավոր մտածող ու գործիչ ներսես Շնորհալին, այլ որ ժամանակակից գործիչներից շատերը ըմբռնեցին շարժման երկու թևերի ունեցած ներքին կապը, միասնականությունը։

Հետաքրքիր է այն փաստը, որ «Թուղթ ընդհանրականը» ոչ միայն մտցվել էր Շնորհալու դիվանագիտական, դաշվանաբանական բազմաթիվ գործերի ընդհանուր ժողովածուի մեջ՝ հասցեագրված հայ և օտար պետական ու հոգեվոր գործիչների, այլև վերնագիրը ընկալվել է իբրև խորագիր նրա նաև այլ երկերից բաղկացած ժողովածուի համար, ինչպես ձեռագիր մատյաններում, այնպես էլ մի շարք հրատարակություններում։

Այսպիսին էին պայմանները, երբ գրվեց Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», որին, ինչպես վերն ասվեց, վերապահված էր ոչ միայն դարեր շարունակ կարևոր դեր խաղալու հասարակության բարոյական դաստիարակության գործում, այլև սկզբնավորողը դառնալու այդ կարգի ժողովածուների<sup>18</sup>։

Շնորհալու այս, հետագայում նաև այլ հեղինակների նմանատիպ երկերի երեան գալու հանգամանքները քննության առնելիս պետք է ուշադրություն դարձնել մի կարևոր փաստի վրա ևս։ Դեռևս Հռվիաննես Երզնկացու «Խրատական արձակը» ուսումնասիրության մեջ, փորձելով դաստիարակել միջնադարյան խրատները, նկատել էինք, թե XIII—XIII դարերում մեզ մոտ զարգացում ապրած խրատական ժողովածուների նոր տիպը, որ անվանել ենք կանոնական խրատներ, մի նշանակալից շափով գալիս էին նպաստելու հայ Կանոնդրքից բխող իրավաբարոյական նորմերի տարածմանն ու ամբապնդմանը, քանի որ հայ ժողովրդի քաղաքական մասնատվածությունը հաճախ հնարավոր չէր դարձնում Կանոնագրքի ուղղակի կիրառումը առանձին վայրերում։ Արդ, մեր այդ թեզը հաստատվում է նաև մի նոր

կարևոր փաստով, որն ըստ էության մի ամբողջական երեւլութ է Հայ ժողովրդի պատմության մեջ: Խնդիրն այն է, որ VIII դարում ստեղծված Հայոց Կանոնգիրքը անընդհատ Հարստանոամ էր նոր կանոնական որոշումներով և կանոնախմբերով, սակայն XI դ. վերջերից Կանոնգրքի հետագա աճը երկար ժամանակով գրիթե դադարում է:

Անշուշտ, այս երեւլովը միանդամայն օրինաչափ էր սելցուկյան գերիշխանության շրջանում, սակայն նկատելի է, որ Հայ պետականության ամրապնդման ու Հայ եկեղեցու միջազգային վարկի բարձրացման շրջանում ևս այդ դադարը շարունակվում է և անդամ Շնորհալին ու նրան Հաջորդած մի քանի այլ ականավոր կաթողիկոսներ միաժամանակ շեն փորձում կանոնական նոր որոշումներ կայացնել, չնայած այդ ընթացքում բազմաթիվ եկեղեցական ժողովներ են գումարվում<sup>14</sup>: Մինչդեռ Շնորհալուն և նրանից հետո եկած գործիչներին խորապես մտահոգել էր մարդկանց ու թեմերի հետ առավել մատչելի և գործոն Հարաբերություններ հաստատելու միջոցը գտնելու հարցը: Շնորհալին այդ առիթով գորում է. «Սակայն զի մի ամենեին անպատուղք եղիցուք առ ձեզ հաւատացեալ ժողովուրդ մեղ ի Հոգոյն Աստուծոյ, արդարապես դատեցաք մեք և որ ընդմեղ եպիսկոպոսունք և վարդապետք լիշեցուցանել ձեղ դրով զպատուիրեալսն լԱստուծոյ ի Հին և ի Նոր կտակարան»<sup>15</sup>:

Շնորհալու կողմից մեկ անգամ գտնված այս միջոցն է, որ երկար ժամանակ շարունակում է մնալ Հայ եկեղեցու ականավոր շատ գործիչների զինանոցում, իրեն կարենոր ձեզերից մեկը Հայկական ցրված Համայնքներին ազգային սովորությունները, դավանանքը, ծեսերն ու կենցաղը ծանոթացնելու, այն ամրապնդելու համար: Այս տեսակետից հատկանշական է Հակոբ Մեծքարեցի (Կլայեցի) կաթողիկոսի (1268—1286) կատարած գործը ևս: Մտահոգված լինելով նման մի գրություն ստեղծելու հարցով, նա նախ պըրպըրուում է Հոռմկլայի կաթողիկոսական գրապահոցները և դժունում է Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», «...և մինչ յայս մտախոհութեան էի, ի մերոց մտաց, մերով բանիւ գրել

առ ձեզ գհաճոյսն Աստուծոյ գօղուտոն անձանց ձերոց, գտի յաթոռ սրբոյն Գրիգորի ի Հռոմէկայս, ի սրբատանն մեր սուրբ կաթողիկոսին՝ մեծին Ներսէսի գրեալ զայս լուսաւոր, պարզ և իմաստուն բանից խրատ յորդորական եպիսկոպոսաց, վանականաց, քահանայից, թագաւորաց, իշխանաց և որբ ընդ իշխանութեամբ են ժողովրդականաց»<sup>16</sup>:

Մեծքարեցին այս գյուտը Աստվածային պարգև է համարում և, իր խոսքերով ասած, «զայս գիր լի իմաստութեամբ և գիտութեամբ և հանձարով» բազմացնել է տալիս ու բոլոր թեմերի առաջնորդներին պարտադրում՝ ծանոթանալ թղթի բովանդակությանը և այն պարբերաբար ուսուցանել ու բացատրել ժողովրդին:

Երատական գրության այս նորագյուտ ձևին հետևողները, սակայն, մեքենայորեն չկրկնեցին իրենց մեծ նախորդին: Կյանքը օրավոր նորանոր պահանջներ էր առաջադրում, որոնց պետք էր ըստ այդու պատասխանել: Այդ հանգամանքը հետագա խրատագիրների կողմից հաշվի է առնվում: Օրինակ, Շնորհալուց մեկ դար հետո ստեղծագործող Հովհաննես Երգնկացին, եթե մի դեպքում իր «Խրատք հասարակաց»-ով Շնորհալուց փոքրինչ տարբեր միջոցներով ձրգում էր նույն նպատակին, այսինքն՝ միշնադարյան ըմբըռնմամբ, ինչպես եկեղեցու ներսում, այնպես էլ հասարակության մեջ օրինականության, կարգ ու կանոնի ամրապնդմանը, բարքերի ու կենցաղի մաքրությանը, ապա իր մի շարք այլ խրատական գրություններում աշխատում էր պատասխան տալ հասարակությանը հուզող ավելի որոշակի հարցերին, զրելով կանոնական խրատներ երիտասարդական կազմակերպությունների համար, խրատական թղթեր իշխաններին և այլն<sup>17</sup>: Երգնկացու ավագ ժամանակակից մի այլ գործիչ՝ Կոստանդին Բարձրերդցին իր կանոնախրատական մեկ, բայց անշափ կարենոր թղթով հիմնականում հետապնդում էր քաղաքական մեկ նպատակ՝ զերծ պահելու Հայստանը մոնղոլական նոր խժդժություններից<sup>18</sup>:

Ինչեւ, ինչպիսի տարածեռ հանգամանքներում էլ հանդես գային և ինչպիսի նոր հարցեր էլ շոշափեին կանոնա-



կան խրատները, մինչև XV դարը, մասամբ և դրանից հետո էլ նրանք շարունակում են շոշափելի դեր խաղալ ժողովրդի ազգային միասնականության ըմբռնման և հայ եկեղեցու շուրջը նրանց համախմբման գործում:

Անհրաժեշտ է նշել, որ, շնայած նորանոր կանոնախրատական գրությունների երեսն գալուն, Ծնորհալու «Թուղթ ընդհանրականը» եղել է ամենագնահատվածն ինչպես ժամանակակիցների, այնպես էլ միջնադարի հետագա հայ մտածողների կողմից:

Ծնորհալու այս նշանավոր երկին տարբեր առիթներով անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ, այդ թվում Գ. Ալիշանը<sup>19</sup>, Մ. Օրմանյանը<sup>20</sup>, Մ. Արեգյանը<sup>21</sup>: Սակայն նրանց համար «Թուղթ ընդհանրականը» եղել է միջնադարի ականավոր գործչի բազմաթեղուն գործունեության միայն մեկ էջը, թեկուզ և կարևոր, որին անդրադարձել են գնահատելով այն իրեն գրական կամ պատմական սկզբնադրյուրի, այդ միջոցով հաճախ բացահայտել են Ծնորհալու գործունեության և ժամանակի իրադարձությունների հետ կապված, նրա հայացքները բացահայտող շատ հարցեր:

Մեր հերթին, օգտվելով նախորդ հեղինակների հետագություններից, փորձել ենք ոչ միայն անդրադառնալ «Թուղթ ընդհանրականի» բովանդակությանը և այն դերին, որ նա ունեցել է կանոնական խրատների ժանրի արարման ու զարգացման գործում, այլ մանավանդ ուշադրություն հրավիրել այնտեղ արտահայտություն գտած մի շաբք կարեոր երևութների վրա, որոնք, մեր կարծիքով, առավել էական են, ինչպես նաև՝ բացահայտել նրանց ծնող պատճառները:

\* \* \*

«Թուղթ ընդհանրականը», ինչպես և երեսում է նրա ընդարձակ վերնագրից, շրջաբերական նամակ է՝ ուղղված համայն հայությանը և նպատակ է ունեցել սուրբգրքային, հայրաբանական իմացություններն ու եկեղեցու կանոնական դրույթներն առավել մատչելի մեկնաբանությամբ ծառայեց-

նել ժամանակակից հասարակության շահերին, լինեն դրանք հոգուր, թե աշխարհիկ:

«Թուղթ ընդհանրականում» խրատները խմբավորված են ըստ հասարակական դասերի, ընդ որում, հոգևորականներին ուղղվածները հասցեազրված են վանականներին, եպիսկոպոսներին ու քահանաներին, իսկ աշխարհականներին վերաբերող խրատները՝ իշխաններին, զինվորներին, քաղաքի առևտրականներին, արհեստավորներին, երկրագործներին և, վերջապես, կանանց: Շնորհալու երկի բովանդակությունը բացահայտող այս հակիրճ վերնազրերն իսկ որոշակի արժեք ունեն գաղափար տալու համար Հայաստանում եղած հիմնական դասերի, աշխարհիկ ու հոգևոր նվիրապետություններում նրանց գրաված դերի ու նշանակության մասին:

\* \* \*

Այլ առիթով նշել ենք, որ խրատական գրություններում մեծ մասամբ շոշափվում են բազմաբնույթ հարցեր<sup>22</sup>: Ինչպես տեսնում ենք, դա առավել ևս վերաբերում է «Թուղթ ընդհանրականին»:

Արդեն նկատված է, որ նրա մեջ կարևոր տեղ են գրավում Հայ եկեղեցու հոգևոր դասի ու նրա առանձին խմբերի միմյանց նկատմամբ ունեցած հարաբերությունների մասին նշութերը, որոնց մեջ հատկապես արժեքավոր են կաթողիկոսներին վերաբերողները:

Ինքնին հասկանալի է, որ կաթողիկոսի և կաթողիկոսարանի հարաբերությունները հզոր կամ թույլ թեմերի, վանքերի ու անգամ առանձին ազգեցիկ հոգևորականների հետ պետք է որոշվեին այն բանով, թե ինչ վիճակում և դիրքում էր գտնվում ինքը՝ կաթողիկոսը կամ կաթողիկոսարանը: Վերն արդեն նշեցինք, որ չնայած Հայաստանում և Կիլիկիայում առկա քաղաքական ու տնտեսական վերելքին, կաթողիկոսարանը զեռևս գտնվում էր և՛ քաղաքական, և՛ տնտեսական իմաստով անապահով վիճակում, որը և իր կնիքն է դնում կաթողիկոսի գործունեության վրա:

ինչպես երևում է, կաթողիկոսի իշխանությունը ավելի գործուն է եղել քաջանաների և եկեղեցու այլ ցածրաստիճան պաշտոնյաների, քան վանական հաստատությունների ու միաբանությունների նկատմամբ։ Հատկանշական է, որ կուսակրոն հոգևորականության բարքերին անհարիր թերությունները նշելով հանդերձ, Ծնորհալին նրանց դիմում է մեղմ խորհուրդներով ու խրատներով, անդամ նկատելով, որի համար պատասխանատու էին դառնում միայն իրենց խղճի առջև։ Որոշակի է, որ այս հարցում կաթողիկոսին ինչ-որ բան կաշկանդում էր։ Ամենից հավանականը, կարծում ենք, այն է, որ վանքերը, հենվելով տեղական ազգեցիկ ավատատերերի վրա և տնտեսապես անկախ լինելով կաթողիկոսարանից, օգտվել են իրենց ինքնավարության իրավունքից<sup>23</sup>։ Ի միջի այլոց, առանց տարակույսի կարելի է ասել, որ մի շարք վանքեր, որոնց հովանավորում էին ազգեցիկ հայ ավատատերերը, այս շրջանում նույնիսկ առավել բարեկեցիկ վիճակում են եղել, քան կաթողիկոսարանը։

Վանական հաստատությունների առօրյայի վերաբերյալ Ծնորհալու հաղորդածներից, ինչպես և նկատվել է, ամենաարժեքավորը պետք է համարել XII դ. կեսերից կուսակրոն հոգևորականության մի զգալի մասի գյուղատնտեսությամբ Հրապուրվելու, դրամական ու նյութական կուտակումներ ստեղծելու վերաբերյալ տված տեղեկությունը, մանավանդ որ այդ խնդրին մի փոքր ուշ անդրադառնում է նաև գրեթե ժամանակակից մեկ այլ նշանավոր գործի՝ Վարդան Ազգեկցին<sup>24</sup>։ Ուշագրավն այստեղ միայն բուն փաստի արձանագրումը չէ, այլ մանավանդ առաջ բերող պատճառները։ Ինչպես հայտնի է, եկեղեցին ու վանական հաստատությունները ավատատիրական հարաբերությունների պայմաններում խոշոր հողատերեր են դառնում համեմատաբար ուժեղ աշխարհիկ ազգային-պետական իշխանության պայմաններում, տնտեսությունը վարելով ազատ կամ կախյալ գյուղացիական աշխատութիւնիցոցով։ Մինչդեռ «Թուղթ ընդհանրականի» վկայությամբ, այս շրջանում հենց հոգևորականությունն

սկսում է ակտիվորեն զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով: Անշուշտ, սա չի նշանակում, թե այլև չէր շահագործվում գյուղացիության կամ հոգեորականության ստորին շերտերի աշխատուժը, որ հեշտ է նկատել հենց թղթում առկա առանձին մտքերից, սակայն հոգեորականության մի զգալի մասի անմիջական մասնակցությունը գյուղատնտեսական մթերքների արտադրությանը, իսկապես որ նորություն էր:

Այս երևույթի աշխատացումը այդ օրերին պետք է բացատրել մի շարք բարոյական և սոցիալական պատճառներով: Նախ կյանքի և աշխարհիկ ըմբռնողության տարած հաղթանակներով միստիցիզմի նկատմամբ, որ հատկապես նկատելի է վանականների կենցաղի ու բարոյականության քննադատության մեջ: Հասկանալի է, ազատորեն խորհող ու մտածող վանականների համար աշխարհիկ գործերով զբաղվելը շատ ավելի հետաքրքրական կարող էր լինել՝ վանական կենցաղի միապաղաղ ձանձրույթից հետո<sup>25</sup>: Երկրորդ, և թերեւ առավել այն պատճառով, որ քաղաքական անապահով վիճակը ու հաճախ հպատակված լինելը այլակրոն կամ երբեմն ոչ ավելի հանդուրժող այլադավան քրիստոնյա ավատակերերին, հնարավորություն չէին տալիս ունենալու ուրիշ կայուն եկամուտներ<sup>26</sup>: Երրորդ կարեոր պատճառը, անշուշտ, Հայաստանում, Կիլիկիայում և Հայաջատ այլ վայրերում զարգացած քաղաքների ու շուկայի առկայությունն էր, որը հնարավորություն էր տալիս արագորեն դրամի վերածելու ստացված ավելցուկը: Նկատի պետք է ունենալ նաև, որ բազմաթիվ Հայկական վանքեր դեռևս շարունակում էին իրենց գոյությունը այնպիսի վայրերում, որի բնակչության մի զգալի մասը օտարներ էին, հետեւարար վանական հաստատությունների համար միշտ չէ, որ հնարավոր է եղել Համապատասխան աշխատուժ ձեռք բերելը:

Անշուշտ, կային այս երևույթը խթանող այլ պատճառներ են: Վանականները լինելով հասարակության առավել բանիմաց, զբագետ տարրը, ավելի արդյունավետությամբ կարող էին գյուղատնտեսության բնագավառում եղած նվա-

Ճումները օգտագործել բերքատվության բարձրացման գործում:

Անձնական նախաձեռնությանն ու արտադրության ավելացմանը խթանում էր նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն ավատատիրական հասարակության մեջ եղած այլ տնտեսությունների, վանքերը հիմնականում ազատ էին ծանր հարկատվությունից:

Ծնորհալին, քննադատելով Հոգևորականների աշխարհիկ գործերով զբաղվելու եռանդը, միաժամանակ նրանց լրիվ չի արգելում, չեր էլ կարող արգելել զբաղվելու գյուղատնտեսությամբ: Բայտ որում, դա արվում է ոչ միայն այն պատճառով, որ վանականները կարող էին անտեսել կաթողիկոսի խորհուրդները, ինչպես ենթադրում է Աքեղյանը<sup>27</sup>, այլ առավելապես այն պատճառով, որ նոր պայմաններում այն անհրաժեշտ էր վանքերի նյութական ապահովության համար: Ավելին՝ Ծնորհալին ինքն է տեսական հիմքեր տալիս գյուղատնտեսությամբ և աշխարհիկ այլ գործերով զբաղվելու համար. «Գործել արժան է և զայս, քանզի դատարկութիւն չար է, որպէս և Պօղոս խրատ տայ, մանաւանդ զի և օրէնս դնէ, եթէ «որ գործիցէ ոչ և կերիցէ մի», զոր և ինքն կատարէր յասելն՝ զցայգ և զցերեկ գործէաք առի շանրանալոյ ումեք»<sup>28</sup>: Ծնորհալու պահանջն ըստ էության այն է, որ առաջնությունը պետք է տալ Հոգևոր պարտականությունների կատարմանը, ապա նոր զբաղվել աշխարհիկ գործերով:

Եպիսկոպոսներին ուղղված բաժնում Ծնորհալին խստիվ բողոքում է անօրինական ճանապարհով եպիսկոպոսական աթոռներ զավթելու դեմ: Այս երկույթն այնքան էր ամրապնդվել, որ հաճախ այդ բարձր աստիճանին էին կոչվում եկեղեցու վարդապետությանն ու գործերին անդիտակ մարդիկ, խախտելով նաև դրա համար սահմանված նվազագույն տարիքը:

Անզոր լինելով արմատախիլ անելու այս երկույթը, Ծնորհալին ստիպված է լինում այդպիսի եպիսկոպոսներին Հորդորելու իրենց մոտ ունենալու գոնե գիտակ ու վարժ

գևոյականներ և առաջնորդվելու նրանց խորհուրդներով։ Սակայն, սա դեռ շարյաց փոքրագույնն է։ Ոմանք օգտվելով միասնական աշխարհիկ իշխանության բացակայությունից և հոգենոր կենտրոնական իշխանության թուլությունից, բռնի միջոցներով զավթում էին եպիսկոպոսական աթոռները, իսկ կաթողիկոսական հրահանգով իշխանությունից վոնդվելու դեպքում՝ դիմում էին առավել վատթար միջոցների։ Նրանցից ոմանք իրենց իշխանությունը պահպանելու համար կաշառում էին օտար բռնակալներին և նույնիսկ հարկատու դարձնում եկեղեցին. «Եւ ոչ թէ ի նոցանէ բռնադատելով զայն առնեն, քանզի ի սոյն իսկ յազգէ մերմէ սկսաւ այս գործ շարութեան և ծանուցաւ ալազգեաց յաներկիւղից ոմանց և ի փառամոլից՝ որք մի ի միոյ վերայ յառնելով տակաւին աճեցուցանեն զկապալս ի վերայ եկեղեցւոյ Քրիստոսի, որպէս զտունս բաժից կամ զներկոցաց»<sup>29</sup>։

Անշուշտ, Շնորհալու այն միտքը, թե դրանում հիմնական մեղավորը հայ հոգեկորականներն էին՝ ճիշտ չէ։ Բանն այն է, որ օտար բռնակալները օգտագործում էին առանձին հոգեկոր ֆեոդալների փառասիրական ձգտումներն ու ընշաքաղցությունը և հենց իրենք էին ստեղծում պայմաններ այդ երևույթի տարածման համար։

Ինչպես զկայում են ժամանակակից հայկական աղբյուրները, սելչուկները, Հայաստանը նվաճելով, բազմաթիվ տիրույթներ իրեն ինչու բաժանեցին ուազմավատատիրական վերնախավին՝ տիրույթներ, որոնք բռնագրավվում էին հայ ավատատերերից<sup>30</sup>։ Նույն երևույթը սկզբում նկատելի էր նաև հայ հոգեկոր հողատիրության նկատմամբ. «Դառն էր ժամանակս ի վերայ մեր յամենայն դիմաց և սատանայ յարոց ի վերայ մեր և սովոր՝ կատարէ զկամս իւրոյ շարութեան, որ զքակտումն և դիսափանումն ժամանակաց մտածեաց, թէ ցրուեցէք ամեներեան ինձ երէց չէ պիտոյ, կամ տուք զհարկն, կամ զնացէք»<sup>31</sup>։ Սակայն այս երևույթը, եթե ընդունելի էր քոշվոր հորդաների համար, ապա նստակյաց պետական վարչակարգի համար, որն ուզած թէ

շուզած պետք է հաշվի նստեր քաղաքակիրթ արևելքում եղած դարավոր ավանդույթների հետ, անընդունելի էր, և պատահական չէ, որ այն վերացվեց գեռս Մելիք շահի իշխանության տարիներին։ Հայ եկեղեցին ազատվում է ծանր հարկերից և կաթողիկոսին տրվում են հատուկ հրովարտակներ և ազատության (ապահարկության) գիր<sup>32</sup>։ Բայց դա չեր արգելում օտարազգի և այլակրոն սելջուկներին հաճախ ոտնձգություններ կատարելու եկեղեցու իրավունքների դեմ, երբեմն էլ իրենց գործակից դարձնելով առանձին հայ ավատակերերի կամ հոգևորականների։

Այս հարցում, կարծում ենք, ավելի ընդունելի է Շնորհալու կրտսեր ժամանակակցի՝ Ներսես Լամբրոնացու տված բացատրությունը։ Լամբրոնացին հայ եկեղեցու ներսում եղած այս և այլ թերությունները, որոնց մասին խոսում է իր խառնվածքին հատուկ կրթությամբ, վերագրում է Հայաստանում տիրող անիշխանությանը. «Այլ այս շարիք շունի բազում ինչ ժամանակ, զի սկսաւ ընձիւղել. զրեթէ հարիւր ամ աւելի կամ պակաս՝ յորմէ հետէ տապալեցաւ իշխանութիւնն, օր ըստ օրէ սկսաւ զարգանալ, և բնաւ փոյթումէք շեղև առ ի կարճել զսոյն աշխատել. այլ մանաւանդ քանի ընդերկարութեամբ հնանայ՝ որպէս զօրէնս ըմբռնեմք զյանցանս, քանզի այս է մարդկային բնութեան սովորութիւն։ Եւ նուաղեալ աղօտացեալ, այժմ յափն կորստեան հասեալ ժամանեցաք. քանզի ամենայն հայրենի աշխարհն մեր՝ ոչ թէ միայն յանկարգութեան է, այլ և ի շար և ի դառն ծառայութեան»<sup>33</sup>. Սակայն, եթե դա պատճառն է, ապա հետեանքը լինում է այն, որ շատ եպիսկոպոսներ նախընտրում են հեռանալ աթոռանիստ քաղաքներից և բնակվել վանքերում կամ սեփական կալվածքներում։ Ըստ Լամբրոնացու վկայության, անզամ Միջագետքի և Կիլիկիայի բազմաթիվ հայաշատ քաղաքներում՝ Անարդարա, Ուռհա, Սամոսատ և այլն, չկային հայ եպիսկոպոսներ. «Իսկ Սիս, որ իշխանանիստն է քաղաք մեր, այժմ լցեալ իշխանօք և ժողովրդօք, առանց այցելութեան և այցելուի, ոչ եկեղեցիք և ոչ ի նոյն

ժողովրդեանն ընթացք, և ոչ բնաւ գիտեն թէ հարկաւոր է մեզ ունել զայս»<sup>34:</sup>

Ինչպես որոշակի երևում է Շնորհալու և կամբրոնացու վերը բերված տեղեկություններից, բուն Հայաստանում եկեղեցին փաստորեն հարկաւոր էր դարձել օտար տիրակալներին: Հարցը ճիշտ հասկանալու համար պետք է նկատի առնել, որ նույն հեղինակների վկայությամբ այդ հանգամանքը վերաբերել է բացառապես Հայաստանին և, ինչպես արդեն ասվեց, հայ հոգևորականության մի մասը ինքն է ընդառաջ գնացել այդ արտառոց երևույթի տարածմանը. «Եւ ոչ թէ ի նոցանէ բռնադատելով զայն առնեն, քանզի ի սոյն իսկ յազգէ մերմէ սկսաւ այս գործ չարութեան և ծանուցաւ ալլազգեաց յաներկիւղից ոմանց և ի փառամուլից»<sup>35:</sup>— գրում է Շնորհալին: «Թուրքն չառնու կապալ և եպիսկոպոսքն վաճառեալ զշնորհն Քրիստոսի բնութեամբ զնոյն յաճախեն»<sup>36:</sup>— երկրորդում է կամբրոնացին: Երեվույթն իսկապես առաջին հայացքից անհասկանալի կարող է թվալ, եթե նկատի չառնենք, որ այստեղ ուղղակի ակնարկ կա Հայաստանում լայն տարածում ստացած պարոնտերության վերաբերյալ:

Հայաստանում փաստորեն ինչ-որ չափով վերանում է սահմանը աշխարհիկ ավատատիրության և հոգևոր հոգատիրության միջև: Ավելի ճիշտ, չկարողանալով պահպանել ավատական տիրութները, շատերը իրենք ընդունում էին հոգևոր աստիճան և տիրութներն էլ ձեւականորեն եկեղեցուն նվիրում: Մինչդեռ իրականում այդ տիրութների հետ վարվում էին նախկին ավատատիրական իրավունքով: Հավանաբար, նույն երևույթի հետեւանքն էր նաև, որ նախկին ավատատեր եպիսկոպոսները որեւէ շահախնդրություն հանդես չեին բերում քաղաքներում հաստատվելու, այլ նախընտրում էին իրենց կալվածքներում, կամ կալվածքի տարածքում եղած ամրացված վանքերում բնակվելու, ինչպես նախկինում բնակվում էին իրենց ամրոցներում, բայց այս դեպքում՝ կես-աշխարհիկ, կես-հոգևոր հանգամանքով:

Որ վերջիններս եկեղեցուն անցած նախկին տիրույթների հետ վարվում էին ավատատերերի նախկին իրավունքներով, երեսում է այն փաստից, թե ինչպիսի մեծ ուժ են կազմել նրանք և ինչպիսի երկար ու գաֆան դիմադրություննեն ցույց տվել գեռևս Գրիգոր Գ Պահավունի կաթողիկոսի ժամանակ Հրավիրված եկեղեցական ժողովի որոշումներին, ըստ որոնց այդպիսի եպիսկոպոսները պետք է վոնդվեին եկեղեցուց. «Որք յաղագս սոյն և այս իրի յանդգնութեան ի ժամանակս տեառն մերոյ և եղբօր Գրիգորիսի կաթողիկոսի սրբոյ, ի Սուրբ Լիհառն մեծաւ սիւնհոդոսիւ սուրբ և առաքինեաց արանց ազգիս Հայոց՝ ժողովով աւելի քան զերկու հազար և հինգ հարիւր անձանց եպիսկոպոսաց, վարդապետաց, հարց վանականաց և միանձանց Սրբոյ Լեռինն, նզովեալ հերքեցան յեկեղեցւոյ Քրիստոսի, և սրով բանին Աստուծոյ հատեալ՝ ի բաց ընկեցան որպէս զնեխեալ և զփտեալ անդամ յառողջ մարմնոյ եկեղեցւոյ՝ անէծս ցաւագինս կուտեալ ի գլուխ նոցա»<sup>37</sup>: Սակայն, նրանցից շատերը այս արմատական միջոցառումից հետո էլ շարունակել են գործել նաև Շնորհալու կաթողիկոսության օրոք. «Այլ հանգոյն իժի և քարբի խցեալ զլսելիս Աստուածային Բանին, դեռևս յամառեալ բորբոքին ի նոյն շարութեան, արբեալ և յիմարեալ փառամոլ ախտիւ իբրև զգագան»<sup>38</sup>:

Անզոր լինելով լիովին ջախջախելու նրանց դիմադրությունը, Շնորհալին բանադրանքի ու անեծքների է զատապարտում այդպիսիներին:

Պետք է նկատի ունենալ նաև հետեւյալ հանգամանքը՝ բուն Հայաստանում, աշխարհիկ կենտրոնական իշխանության բացակայության պայմաններում, պարոնտերերը շէին կարող բախվել ազգային քաղաքական իշխանությունների հետ, մինչդեռ հոգևոր կենտրոնական իշխանությունների հետ նրանց բախումը առկա էր: Փաստացի անկախությունը հաճախ հանգեցնում էր նաև անկախության հոգևոր հարցերում, որը պատճառ էր դառնում բազմաթիվ վեճերի, խաթարում հայ եկեղեցու գաղափարական միասնությունն ու խանգարում նրա համախմբմանը:

Ակներևաբար նաև սրանով էին պայմանավորված կրօնական այն թեժ վեճերը, որոնք սկիզբ առան Կիլիկիայի և Հյուսիսային Հայաստանի հոգևորականների միջև XII դ. վերջերին և XIII դ. ընթացքում:

Այլ առիթի թողնելով պարոնտերության մասին խոռնաբանելը, նշենք միայն, որ դրությունը այլ էր Կիլիկիայում: Այստեղ հող չկար պարոնտերության զարգացման համար և աշխարհիկ քաղաքական իշխանությունը ինչ-որ շափով պայքարում էր եկեղեցու հեղինակության շափից ավելի բարձրացման դեմ: Այս հանգամանքով թերեւ կարելի է բացատրել այն փաստը, որ Կիլիկիայի տիրակալները ևս այս շրջանում դեռևս չեին ոգերում եպիսկոպոսների գործունեությունը քաղաքներում, որը տեղի է տալիս Ներսես Լամբրոնացու բողոքներին<sup>39</sup>:

Անշուշտ հետագայում, և կեռու երկրորդի արքայակալության, և հատկապես Հեթումյանների տիրակալության ժամանակ դրությունը փոխվեց ու հաճախ արքունիքը ինքն էր սատար լինում հոգեորականությանը, սակայն, նույնիսկ նրանց օրոք Կիլիկիայում եպիսկոպոսները, ի տարբերություն քրիստոնեական այլ երկրների, մասնավորապես Ֆրանսիայի և խաչակրաց արևելյան պետությունների, շատ խիստ ստորադասված էին աշխարհիկ ավատատերերի համեմատությամբ:

Ավելին, Սմբատ Սպարապետի դատաստանագրքում ուղղակի նշվում է, թե եպիսկոպոսի ձեռնադրությունը պետք է կատարվի միայն տվյալ գալքառի կամ նահանգի իշխանի և այլոց համաձայնությամբ<sup>40</sup>: Միաժամանակ նույն դատաստանագրքում յուրովի օրինականացվում է այն փաստը, որ շատ քաղաքներ կարող են և չունենալ եպիսկոպոսներ<sup>41</sup>: Հավանաբար Կիլիկիան տիրակալներին անհանգստացրել է Հայաստանի օրինակով ավատատերերի նոր տեսակի երեսն դալու հնարավորությունը Կիլիկիայում:

\* \* \*

«Թուղթ ընդհանրականում» արծարծված հետաքրքիր հարցերից է օտար մանուկներին հայկական ծեսով մկըր-

տելու փաստը և այդ առթիվ Ծնորհալու մտքերը: Բայ որում, նրա ասածից երևում է, թե այս երկույթը հնուց է գալիս, և բավական տարածված է եղել նաև իր ժամանակներում: Նշելով մկրտության ծեսի խորհուրդն ու նշանակությունը, Ծնորհալին գրում է. «Ասեմք և յաղագս զծնունդս այլազգեացն մկրտելոյ՝ որ սովորութեամբ բերի ի հին ժամանակաց և է ընդդէմ հրամանին Քրիստոսի, որպէս ասաց՝ ո՛չ տալ զսրութիւն շանց, զոր արժան էր խափանել և ոչ թողացուցանել, զի զի՞նչ օգուտ է այլով բերանով խոստովանել զՔրիստոս, և զգենով զնա մկրտութեամբն մինչ անրանն է և անզգայ, և յորժամ զարգանայ հասակաւ՝ մերկանալ դարձեալ ուրացութեամբն և լինել հայրոյիշ Աստուածային խորհրդոյ տնօրինովթեան նորա ըստ գենին իւրեանց՝ փոխանակ փառաբանիշ լինելոյ...»<sup>42</sup>: Այնուհետև խստիվ արգելում է շահադիտական ինչ-ինչ նպատակներով այդ քայլին դիմելը, բացառությամբ այն դեպքերի, երբ հավատացած են, որ օտարները ծեսը ընդունում են կամավոր և պետք է հաստատուն պահեն այն:

Օրինական հարց է առաջանում. ովքե՞ր էին այդ անհավատները և ի՞նչն էր թելադրում նրանց հայկական ծեսով մկրտելու իրենց զավակներին: Եթե խոսքն անցյալին է վերաբերում, ապա, կարծում ենք, տարօրինակ ոչինչ չկա, որ հայկական պետության գոյության պայմաններում Հայաստանում բնակվող առանձին անհատներ կամ համայնքներ ընդունած լինեին հայկական եկեղեցու այս կամ այն ծեսը: Ինչ վերաբերում է Ծնորհալու ժամանակներին, ապա հավանական է, որ այն նորից տարածում էր գտնում, կապված Կիլիկիայում և Հայաստանում հայկական պետական միավորների հղորացման, ինչպես և դեպի Արևելք խաչակիրների միջոցով քրիստոնեական գաղափարների ու ազդեցության թափանցման հետ: Հավանական է, որ խաչակիրներին հպատակեցված և կրոնական հալածանքների ենթարկված ռանհավատներից համար ավելի ընդունելի են եղել դարավոր հարևանությամբ ապրող հայ ժողովրդի իրենց ժամոթ ծեսերը, քան ելքոպայից եկած խաչակիրների<sup>43</sup>:

Այնուամենայնիվ, պետք է խոստովանել, որ մեկնաբանություններն ու ենթադրությունները բավարար չեն և հարցը ըստ էության դեռևս մնում է մութ ու կարոտ հետագա լուսաբանությունների: Յավոք, հարցի պարզաբանմանը ոչնչով չի օգնում նաև Ծնորհալու բացատրությունը, ըստ որի հայկական ծեսերով մկրտվածները շափաճաս դառնալով՝ վերադառնալու էին դարձյալ իրենց «դենին»<sup>44</sup>:

Սակայն հարցը սրանով չի սպառվում: Ծնորհալու «Թուղթ ընդհանրականի» համապատասխան հատվածները ուղղակի վկայություն են քրիստոնեություն ընդունած, ապա նրանից հրաժարված օտարների նկատմամբ միջնադարի պայմաններում հայ եկեղեցու գարմանալի հանդուրժողականության մասին, ինչ որ զրեթե անկարելի էր ոչ միայն մահմեղականների մոտ, այլ նույնիսկ այլաղավան քրիստոնեական եկեղեցիներում: Ավելին, խիստ կամավորական սկզբանքը և նույնիսկ դժկամությունը, որ հանգես է բերում Ծնորհալու պես նշանավոր հոգեոր ու քաղաքական գործիշը օտարներին հայկական ծեսով մկրտելու հարցում, ուղղակի վկայություն է այն մասին, որ հայկական եկեղեցուն, ի տարբերություն արևմտյան քրիստոնեական եկեղեցիների, խորթ է եղել իր դավանանքը ամեն գնով օտարների վզին փաթաթելու միտումը, համենայն դեպք, նրա այն ձևերն ու միջոցները, որոնք ոչ միայն օգտագործվում էին այլակրոնների, այլ մասնավորապես այլաղավան քրիստոնյաների: այդ թվում՝ հայերի նկատմամբ:

\* \* \*

Ինչպես արդեն նշվեց, «Թուղթ ընդհանրականում» խրատներն առանձնացված են ըստ սոցիալական դասերի, որոնցից մեկն էլ ուղղված է զինվորներին՝ «Առ Զինուրաց դաս»: Խոսքն այստեղ վերաբերում է ոչ միայն զինվորներին, այլև, դատելով խրատների բնույթից, միջին և ստորին հրամանատարությանը: Զինվորականության մասին մտքեր հանդիպում են նաև այլ դասերին՝ աշխարհիկ և հոգեոր

ավատատերերին ուղղված խրատներում։ Նկատի ունենալով հարցի կարևորությունը, կցանկանայինք մի փոքր ավելի հանգամանորեն անդրադառնալ գրան։

Ի տարբերություն Հայկական պետականության պարբերաբար կրկնվող անկայունությանը, նկատելի է, որ զինվորականությունը միջնադարյան Հայաստանում գրեթե միշտ լուրջ ուժ է ներկայացրել ինչպես թվական, այնպես էլ որակական հատկանիշներով։ Դա է պատճառը, որ դեռևս վաղընջական ժամանակներից Հայ զինվորությունը բարձր է գնահատվել Հայաստանի հարևան Բյուզանդիայի և Պարսկաստանի կողմից, որոնց բանակներում հաճախ ոչ երեքրորդական դեր էին խաղում Հայկական զորամասերն ու Հայ զինվորականները։ Իհարկե, այս երեսությը շի կարելի պատահական համարել։ Այն բխել է երկրի սոցիալ-քաղաքական վիճակից ու պատմաշխարհագրական դիրքից։

Ճակատագրի բերումով Հայաստանը գրեթե միշտ ուղղմական թատերաբեմ է եղել ոչ միայն Հզոր տերությունների, այլև Հաճախ երկու հակագիր, իրարամերժ աշխարհների ու գաղափարների, մի հանգամանք, որն ուղեկցվում էր ժողովրդի համար ահավոր հետեւանքներով։ Նման վիճակը թելագրում էր, նույնիսկ կենտրոնական պետության բացակայության պայմաններում, ունենալ համապատասխան զինվորական միավորներ, իրենց միմյանցից անջրպետված տիրությները պահպանելու համար։ Այս հանգամանքը, հավանաբար, իր խոր ազդեցությունն է թողել նաև Հայաստանում ավատատիրական կարգերի ձևափորման վրա։ Միանգամայն բնորոշ է, որ Հայ ավատատերերը, առավելապես նախարարները, զինվորականներ էին, քան կալվածատերեր<sup>45</sup>, և Հայաստանի յուրաքանչյուր գավառում առկա էր որոշակի ռազմական ինքնուրույն ուժ։ Հայտնի է, որ այս ավանդույթները շարունակվեցին ոչ միայն Բագրատունյաց Հայաստանում, որտեղ ի տարբերություն այլ պետությունների, սպարապետը թագավորից հետո պետության երկրորդ դեմքն էր, այլև Հայաստանից Վրաստան թափանցեցին<sup>46</sup>, Վրաց արքունիքում Զաքարյան Հայ իշխանների գրաված բացառիկ

բարձր դիրքը պայմանավորված էր ոչ միայն նրանց ռազմական փայլուն գործունեությամբ, այլև առավելապես նրանով, թե հայ-վրացական ընդհանուր բանակում ի՞նչ տեսակաբար ուժ էր ներկայացնում անմիջապես Զաքարյաններին ենթակա բուն հայկական բանակը<sup>47</sup>:

Վերջապես, Կիլիկյան Հայաստանն անգամ, շնայած բազմաթիվ արևմտյան նորամուծություններին, այս կարեւվոր հարցում հարազատորեն հետեւմ է նախնյաց ավանդներին: Եվ սա հասկանալի է, եթե նկատի առնենք, որ սկզբույթան արշավանքների շրջանում բազմաթիվ հայ իշխաններ դեպի արևմուտք և Կիլիկիա էին մեկնում իրենց զինվորներով ու վասալներով: Ինչպես իրավացիորեն նկատում է Դ. Ալիշանը, շնայած մի շարք պատվավոր և կարևոր պաշտոնների առկայությանը՝ պայլ, պարոնաց-պարոն և ուրիշներ; «Յիրական և ի մշտակայ պաշտօնեայս՝ նախադասի յարքունիս Սիսուանայ, որպէս և ի Փուանկացն գունդըստապն...: Բստ աւատական օրինաց՝ թագաւորն էր նախազուում և առաջնորդ բանակին. իսկ ուր նա ոչ՝ գունդստապն լիներ միագիշապես և կարգաւորիչ ամենայնի, և կրէր զնշան թագաւորին, որ էր Առիւծ կանգուն...»<sup>48</sup>: Մինչդեռ, «Առ բազումս յարեւմտեաց մարտախտն վերագոյն էր, քան զգունդստապն՝ յառաջնորդութեան զօրաբանակին»<sup>49</sup>:

Հայտնի է, որ նախքան Կիլիկիայում կենտրոնացված հայկական իշխանություն և թագավորություն ստեղծվելը, Կիլիկիայում և նրա հարևան մարզերում կազմվեցին նաև հայկական այլ իշխանություններ (Գող Վասիլ, Փիլարտոս Վարաժնունի և այլն), որոնք պահպանվում էին ամենօրյա դաժան պայքար մղելով թուրքերի, եղիպտական սովորական թյան և խաչակիրների գեմ: Ճիշտ է, XII դ. այդ իշխանությունները, ի վերջո, անհավասար պայքարում կործանվեցին, սակայն նրանցում եղած ռազմական զորությունն այնքան նշանակալից էր, որ հենց նույն շրջանում քաղաքական, տնտեսական և ռազմական վերելք ապրող Կիլիկյան պետությունն անգամ շկարողացավ իր մեջ ներառնել այդ իշխանություններում առկա հայկական խոշոր ռազմական

ուժերը: Մյուս կողմից, բուն Հայաստանում հզորացած ջաքարյաններն էլ, չնայած հայկական հողերը ազատագրելու իրենց վճռական գործունեությանը, փաստորեն չեն կարողանում իրենց մոտ ծառայության վերցնել առկա ամբողջ հայկական զինվորականությանը: Հետեւանքը եղավ այն, որ, դժբախտաբար, բավական մեծ թվով հայ զինվորներ ու զորավարներ ստիպված ծառայության են անցնում ոչ միայն խաչակիրների ու Բյուզանդիայի բանակներում, այլև Հայաստանում և Հարեւան շրջաններում տիրող մահմեդական ու հավատափոխ եղած նախկին հայ կամ հույն ավատակերի մոտ:

Արդ, «Թուղթ ընդհանրականի» շնորհիվ ինչ-որ շափով հնարավոր է դառնում հետեւելու այն փոփոխություններին, որ տեղի էին ունեցել բանակում և որոշ դատողություններ անելու, թե XII և հետագա դարերում ինչ սկզբունքով էր կազմակերպվում հայկական բանակը և ինչ պարտավ դություններ ունեին օտարների մոտ ծառայության անցած հայ զինվորները:

Իշխաններին ու զինվորներին ուղղված Շնորհալու խրատներից հետեւում է, թե ինչպես արքունական, այնպես էլ Կիլիկյան հայ իշխանների կամ առանձին հայկական իշխանությունների բանակները հիմնականում կազմվել են ազատ վարձու զինվորներից, որոնց կախումը ավատակերից պայմանավորված էր ստացված վարձատրությամբ և դրա դիմաց որոշակի ժամկետում կատարվելիք ծառայությամբ: Դիմելով իշխաններին, Շնորհալին հորդորում է նրանց շկարել իրենց զինվորների, ինչպես և ծառայության անցած այլ մարդկանց աշխատավարձը, շտոնահարել նրանց իրավունքները, որովհետև նրանք երկուստեք պարտականություններ ունեն միմյանց նկատմամբ. «Նաև զզինուորաց ձերոց և զամենեցոցն՝ որք ծառայենն ձեղ, զսահմանեալ հոռդսն մի պակասեցուցանէք, զի զրկանք մեծ է այն և անիրաւութիւն. քանզի, որպէս նոքա պարտական են վասն պարզեցն՝ որ ի ձենչ, զարիւնս իրեանց հեղուլ վասն ձեր, նոյնպէս և դուք պարտիք զխոստացեալ թոշակսն նոցին

Հատուցանել անթերի»<sup>50</sup>, կամ «Մի՛ զվարձս վաստակաւուրաց ձերոց հատանէք իշխանաբար»<sup>51</sup>:

Ենորհալին ոչ միայն չի բացառում գինվորների և այլ զարձու ծառայողների ավատատերերից հեռանալու իրավունքը, այլև հորդորում է իշխաններին այդ հարցում բռնություններ շգործադրել. «Այլ եթէ հաւանիք խորհրդակցութեան մերոյ և խրատու, զայս սահման դիք ամենեցնցն՝ որք ծառայինն ձեզ, զի որչափ կամք լինին մարդոյ կալ ի ծառայութեան ձերում՝ հաւատարմութեամբ ծառայեցն ձեզ և առանց նենգութեան, և որ ոք յօժարի ելանել ի ծառայութենէ ձերմէ՝ յայտնի հրաման խնդրեսցէ ի ձէնջ առանց երկեղի, և զուք մի՛ սաստիւ և բռնութեամբ լինիք արգելող, բայց եթէ սիրով և խրով կամաւ. զայն որ ոչ կամիք զուք գնալ ի ձէնջ, այլոցն քաղցրութեամբ տուք հրաման, և եթէ ինչ պարտ իցէք, հատուցէք նոցա: Եւ յորժամ այսպիսի իրաւունք տեսանեն ի ձէնջ լեալ, կամ՝ ոչ զնան բնաւ, և կամ՝ թէ զնան՝ փութով դարձեալ առ ձեզ դառնան, և ազաւէք զնոսա և զձեզ ի խղճէ երդմնազանցութեանն»<sup>52</sup>:

Ինչպես տեսնում ենք, ավատատիրական հարաբերությունների մեջ բավական լուրջ տեղաշարժեր են եղել և, ըստ էության, բուն ավատատիրական կախվածությունը սենյորից նշանակալից շափով վեր է ածվել ժամանակավոր փոխպայմանավորվածության: Մյուս կողմից այս փաստը պկայում է, որ հասարակության մեջ բավական մեծ թիվ էին կազմում անձնապես ազատ մարդիկ, որոնք կարող էին զինվորական վարձու ծառայություն կատարել: Իհարկե, խոսքն այստեղ չի վերաբերում այն բանին, թէ այդ կարգը որքանով էր պահպանվում ավատատերերի կողմից: Խնդիրն այն է, որ վասալին իրավունք է վերապահվում հեռանալու սենյորից նախապես այդ մասին հայտնելով վերջինին, և դա չի հակասում ժամանակի ոգուն և չի դիտվում երդմնազանցովներ, հետեապես, եթե ոչ իրականության մեջ, գոներնքով չի կարող ենթակա լինել աշխարհիկ կամ հռամոր իշխանությունների դատապարտմանը:

Եթե խոսքը մասնավորեցնենք բանակին, ապա հասկանալի է, որ նրա մեծ մասը կազմված էր ազատ վարձու գինվորներից: Իմիջիալոց, այս հարցում, կարծում ենք, էական նշանակություն ունի նաև հետեւյալ փաստը. ինչպես XI—XII դդ., այնպես էլ ավելի ուշ՝ XIII—XV դդ., օտարանդամ մահմեղական բանակներում ժառայող հայ զինվորները մեծ մասամբ պահպանում էին իրենց ազգային բոլոր հատկանիշները; այդ թվում նաև կրոնը և նրանց ժառայությունը ևս վարձու բնույթ էր կրում: Այդպիսիներին նկատի ունի Շնորհալին, երբ զիմելով զինվորներին գրում է. «Եւ զինչ ասեմք առ քրիստոնեաց իշխանս՝ ունել միամտութիւն և աէր, յայտնի և ծածուկ, այլ թէն ի քրիստոնէից ոք բնդ այլազգոյ է իշխանութեամբ և ի նորին պարզեաց կերպարի և զգինու, զնոյն հաւատարմութիւն պարտ է ցուցանել նման զառանց նենդութեան ժառայութիւն»<sup>53</sup>:

Անշուշտ, Շնորհալու ասածները զինվորների մասին առավել շափով վերաբերում են նաև Կիլիկյան հայկական բանակին: Ինչպես հայտնի է, բազմաթիվ պետական և սոցիալական ըմբռնումներ Հայաստանից ուղղակի տեղափոխվեցին Կիլիկիա, սակայն փաստ է նաև, որ նոր պայմաններում Կիլիկյան արքունիքը և պետական կառուցվածքը իրենց վրա կրել են օտար ազգեցություններ, ինչպես Բյուզանդիայից և խաչակիրներից, այնպես էլ մահմեղական տիրապետողներից: Իզուր չէ, որ Շնորհալին դժուճում է, թէ դուրս գալով հայրենիքից, ամեն ինչ փոխվել և դարձել է անկայուն. «Եթէ աստուածային գործոյն տեսութիւնս և եթէ նիւթականիս աշխարհի իշխանութիւն»<sup>54</sup>: Խսկ նրա կըտակը ժամանակից Ներսես Լամբրոնացին գանգատվում է, որ աշխարհիկ իշխանության հարցերում Կիլիկիան ազգին է արեմուտքից, մինչդեռ հոգևոր խնդիրներում ոչ մի բարեփոխություն չի կատարվել. «Մարմնական իշխանութիւնն բազում ինչ բարեձեռութիւն նախանձեալ առին ի ֆունկաց և հոգերոն՝ անհաղորդ ամենաին»<sup>55</sup>:

Բացառություն չէր կարող կազմել նաև բանակը՝ Կիլիկյան հայկական բանակը ևս, ինչոր շափով, շարունակել է

մնալ ազնվականական բանակ, որի հիմնական կորիզը եղել է հեծելազորը: Սա մի անգամ ևս ապացուցում է նրա սերտ կապը հայկական արքունական բանակների հետ: Հայտնի է, որ ինչպես թագավորի, այնպես էլ պալատականների և քարձր ազնվականության որդիները հատուկ ծեսով ձիավորի տիտղոս էին ընդունում, որը միջնադարյան Հայաստանում գրեթե հոմանիշ է եղել արևմտյան ասպետին<sup>56</sup>:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ Կիլիկյան թագավորությունը շատ ավելի կենտրոնացված պետություն էր, քան Արշակունյաց և Բագրատունյաց թագավորությունները Հայաստանում, և Կիլիկյան ազնվականությունը չունենալով նախարարական Հայաստանում ազնվականության չայն իրավունքներն ու հնարավորությունները, անկարող էր պետության պահպանության համար անհրաժեշտ թվով զորական միավորներ ապահովելու, որը և ստիպում է արքունիքին և առանձին ավատատերների օտարների օրինակով հիմնական ուշադրությունը կենտրոնացնելու վարձու զորաբանակների ծառայության վրա:

Իհարկե, վարձու զինվորների օգտագործումը Հայաստանում և նրա հարեան երկրներում նորություն չէր: Հայտնի են այդպիսի փաստեր գեռես Աշոտ Բ-ի թագավորության տարիներին<sup>57</sup>: Այս երեսությը առավել լայն տարածում ուներ վրաստանում<sup>58</sup>, սակայն զրանք գեռես կայուն բնույթ չունեին և չէին կազմում բանակի հիմնական կորիզը: Մինչդեռ Կիլիկյան Հայաստանում զորքի մի զգալի մասը, անկամած, բաղկացած է եղել վարձու զինվորներից:

Ուշադրության արժանի է մի այլ հանգամանք ևս: Վերն արդեն ասվեց, որ Կիլիկյան հայկական բանակում բավական նշանակալից է եղել հեծելազորի և մասնավորապես ձիավորների դերը: Այս փաստը ոմանց տեղիք է տվել ենթադրելու, թե Կիլիկյան Հայաստանում արևմտյան տիպի ասպետական կազմակերպություններ են եղել:

Խւկատես, թվում է թե Կիլիկիայում պարարտ հող կար ասպետական կազմակերպություններ ստեղծելու: Նախ այնտեղ առկա էր նշանակալից թվով ազնվականություն, որի

Հիմնական զբաղմունքը զինվորականությունն էր, և որը, հողատարածությունների սահմանափակության պատճառով, թվում է, թե պետք է ձգտեր տարածքային նվաճումների երկրորդ, բազմաթիվ հայ ազնվականների որդիներ, ենթարկված լինելով Անտիոքի պրինցին կամ խաչակիր այլ իշխանների, նրանց կողմից ասպետական կարգ էին ընդունում: Վերջապես, ինչպես հայտնում է Պ. Ալիշանը, XVII—XVIII դդ. եվրոպական մի քանի հեղինակներ ասպետական կարգերի մեջ նշում են նաև հայ ասպետական կազմակերպությունների մասին, որոնցից մեկը իրը ստեղծվել է 1118թ. Տաճարականների կազմակերպման շրջանում: Ճիշտ է, Ալիշանը նկատում է, որ այս թվականին հազիվ թե հնարավոր լիներ նման կազմակերպության ստեղծումը, սակայն ենթադրում է, թե այն կարող էր տեղի ունենալ Լևոն Բ թագավորի օրոք, այսինքն, երբ հայ ազնվականները ասպետական տիտղոս էին ստանում հայ արքայի կողմից: Ալիշանը օտար աղբյուրներից քաղված տվյալներ է բերում նույնիսկ հայ ասպետական կարգերի, տարապի և անվանումների մասին. «Երկու դասք ասեն լինել ասպետաց հայոց, մի եկեղեցականաց կամ քահանայից և միւս՝ աշխարհայանոց, երկոցուն ևս նպատակ գոլով՝ բանիւ և զինու պաշտպանել զուղղափառ հաւատու, և կրօնաւորիլ կանոնօք Ս. Բարսղի, պաշտպան ունելով զՍ. Վլաս եպիսկոպոս (թերմ զնոյն ինքն զՍ. Բարսղ), վասն որոյ և ասպետք Ս. Վլասայ կոչէին. որ և այս ոչ թուի ինձ հաւանական, մասնաւանդ զի յիշեն և այլք զկարգ Ս. Վլասայ յԱսորիս, և յատուկ, ի Պաղոմային՝ այլ ոչ ասեն Հայոց սեփական:

Նշան ձիաւորացա էր խաչ կարմիր՝ զպատկեր Սրբոյն Վըանա՝ ի միջին ունելով. զգեստ՝ ասուայ սպիտակ: Զպատկերս երկոցուն ևս դասուց անուանեալ հայ ձիաւորացա՝ ընծածայէ ուն յասպետագիր հեղինակաց, որ և մեծ խնամով ասէ հետախուզեալ և ճշգրտագոյն զձևսն աւանդեալ... Այլ ոք կապուտագոյն ասէ զհանդերձսն և զխաչն ոսկեղին առ հաջողական առիւծիուաց<sup>59</sup>:

Ալիշանը բերում է նաև մի թարգմանություն, որը դարձյալ վերաբերում է զենքերի ու հանդերձների նկարագրությանը: Սակայն այստեղ ևս ոչ մի խոսք չկա կազմակերպության կարգի մասին: Բացի այդ, երախտավոր գիտնականը ինքն էլ նկատում է, որ ինչպես հայկական, այնպես էլ արևելյան և եվրոպական ժամանակակից հեղինակներից և ոչ մեկը չի նշում հայկական ասպետական կազմակերպությունների գոյության մասին, չնայած նրանց մոտ ամենատարբեր առիթներով հիշատակվում են հայկական զինվորականության, այդ թվում նաև ձիավորների օճախն վերաբերյալ տեղեկություններ: Կարծում ենք, հենց այստեղ էլ գտնվում է հարցի բանալին: Ազնվական երիտասարդներին ձիավոր օծելու սովորությունը և նրա հետ կապված ծեսերը ոչ թե պետք է կապել արևմտյան ասպետական կազմակերպությունների հետ, այլ բուն ազգային այնպիսի ավանդների, ինչպես իր «Կրկին կանոնք»-ում նկարագրում է Հովհաննես Երզնկացին: Հիշեցնենք, որ հասունացած երիտասարդներին գոտի տալու արարողության նկարագրության մեջ Երզնկացին ի թիվս այլ գոտիների հիշատակում է նաև զինվորական գոտու մասին: «Չորրորդ գոտի զինուորականն է, որով զինուորն պնդէ զմէջսն, յորում և իցեն ամենայն պատերազմական գործիքն»<sup>60:</sup>

Այս ամենը թելադրում են մտածելու, որ ասպետական տարազը միայն ձև էր հեծյալ զորաբանակի համար և Կիլիկյան Հայաստանում շեն եղել ասպետական կազմակերպություններ ու շէին կարող լինել նաև նրանց համար զբաժանական կանոններ:

Ինչպես հայտնի է, ասպետական օրդենների ծաղկման շրջանը համապատասխանում է եվրոպական երկրներում ավատական մասնատվածությանը, և այդ օրդենները որոշակի ինքնավարություն ունեին անգամ թագավորից, և առավելապես ներկայացնում էին պապի իշխանությունն ու կաթոլիկ հոգևորականության շահերը: Պատահական չէ, որ նրանք ստեղծվեցին պապական իշխանության հզորացման

տարիներին, երբ պապերը գերազա՞ծության էին ձգտում նույնիսկ Եվոպայի աշխարհիկ գահակալների նկատմամբ։ Մինչեռ թագավորական իշխանությունը Կիլիկիայում շատ ավելի կենտրոնացած էր, քան Ֆրանսիայում, Գերմանիայում կամ Արևելքի խաչակրաց պետություններում։ Հայոց եկեղեցին ոչ միայն երբեք գերիշխող դիրք չի ունեցել պետության մեջ, այլև որոշակի պայքարի մեջ է եղել կաթոլիկ եկեղեցու դեմ։ Բացի այդ, խաչակրաց Հոգևոր-ռազմական կազմակերպությունները, ինչպես ճիշտ նկատում է Ա. Բոռնազյանը, հետապնդել են առավելապես նվաճողական նպատակներ, մինչդեռ Կիլիկյան Հայ Ճիավորների, ինչպես և ողջ պետության առաջնահերթ նպատակն է եղել Իրկրի պաշտպանությունը արտաքին թշնամիներից<sup>61</sup>։ Որովհետև ոչ միայն դժվար էր նոր զրավված տարածքները պետությանը հավատաբիմ էթնիկական տարրերով բնակեցնելը, այն, որ ավելի կարևոր էր, դա խստ կբարդացներ առանց այն էլ Կիլիկիայի թշնամական հարաբերությունները հարեվան պետությունների հետ։ Այս տեսակետը հաստատող շատ կարևոր փաստ է Լևոն Գ-ի Հրաժարումը Իկոնիայի սուլթանության տիրույթների մի մասը իր երկրին կցելու Աբարդա խանի առաջարկությունից<sup>62</sup>։

Սա չի նշանակում, թե Հայկական պետության և Հայոց եկեղեցու համար խորթ են եղել Համաքրիստոնեական սրբագայությունը ազատագրելու կամ քրիստոնյաներին այլակրոնների տիրապետությունից փրկելու գաղափարները։ Ընդհակառակը, բազմաթիվ նշանավոր Հայ գործիչներ դա համարել են արքաների ու իշխանների սրբազն պարտականությունը։ Հայկական շրջանակներում եղած այդ գաղափարը լավագույնս արտահայտված է Հովհաննես Երզնկացու մոտ։ Վերջինս քրիստոնյա թագավորների համար մեծագույն փառք է համարում ոչ թե Հարստությունն ու ճոխությունը կամ տիրույթների լայնարձակությունը, այլ այն, թե նրանք ինչպես են պայքարում հանուն քրիստոնյաների ազատագրության։ Սակայն, այլ բան է ցանկությունը և այլ՝ իրականությունը։ Կիլիկյան Հայկական պետությունը այդ-

պիսի քայլերի կարող էր դիմել և դիմեց միայն գաշնակից-ների օգնությամբ, սկզբում խաչակիրների, ապա մոնղոլ-ների: Միաժամանակ շպետք է մոռանալ, որ բոլոր նման՝ դեպքերում հայ եկեղեցին հանդես չի բերում հայկական պետությունից տարբեր շահեր, չի ձգտում իր գերիշխանությունը տարածելու այլադավան քրիստոնյաների վրա:

Ասվածից հետևում է, որ հայկական եկեղեցին գաղափարական հենարանը լինելով հայ պետականության, ընդհանրապես չէր կարող նյութական և ոչ էլ գաղափարական առումով հենարան դառնալ այնպիսի կազմակերպությունների, որոնց նպատակները այլ էին, քան պետության շահերը:

Ինչ վերաբերում է Ալիշանի բերած փաստերին, ապա կարելի է թերևս վերապահությամբ ընդունել, որ հայկական ասպետական կազմակերպություն ստեղծելու փորձ է արվել Անտիքում ծառայության անցած հայ ազնվականներից, սակայն Կիլիկյան թագավորության ստեղծմամբ անկատար է մնացել խաչակիրների մտադրությունը: Բացաված չէ նաև, որ օտարները շփոթեին ձիավոր ազնվականներից կազմված հայկական հեծյալ բանակի գորամասերը ասպետական կազմակերպության հետ, մանավանդ որ իրենց արտաքինով նրանք կարող էին նմանվել խաչակիր ասպետներին:

Վերջապես Կիլիկիայի հայկական թագավորության համար XIII դ. վերջերին ստեղծված օրհասական պահին, Հովհաննես Երզնկացու վկայությամբ, եկեղեցու հովանու ներքո ստեղծվում են զինվորական նոր կազմավորումներ<sup>63</sup>, որոնք օտարների կողմից հեշտությամբ կարող էին շփոթվել ասպետական կազմակերպությունների հետ: Հնարավորությունը շունենալով այստեղ ավելի մանրամասն խոսել այդ կարեվոր խնդրի շուրջ, քանի որ դա առանձին ուսումնասիրության նյութ է, որին կանդրադառնանք մենք այլուր, նշենք միայն, որ պրատումները հանգեցնում են այն համոզման, թե նորաստեղծ զինվորական կազմակերպությունները ևս զուտ աղգալին երևույթ էին և չէին առնչվում օրդենների հետ:

Ավարտելուց առաջ մեր խոսքը հայ զինվորականության մասին, անհրաժեշտ ենք համարում ավելացնել, որ հաճախ և Հայաստանում, և Կիլիկիայում պաշտպանական ուժը համարում էին ոչ միայն աշխատավոր զանգվածները, որոնք ընդդրկվում էին աշխարհագորում և հատկապես քաղաքներում ունեին իրենց կազմակերպությունները ու հաճախ ուժեղ դիմադրություն էին ցուց տալիս թշնամուն<sup>64</sup>, այլև անգամ հոգևոր դասի ներկայացուցիչները:

Խնդիրն այն է, որ ինչպես ասվեց, Հայաստանում հաճախ բացակայում էր ազգային պետականությունը և անկայուն էր յուրաքանչյուր նահանգի իշխանություն, ինչպես իշխողի անձի, այնպես էլ նրա էթնիկական ու կրոնական պատկանելության իմաստով։ Սա անհրաժեշտ էր դարձնում սեփական բնակավայրի, քաղաքի կամ վանքի ապահովության մասին մտածելու հենց իրենց՝ բնակիչներին։ Այսպիսի վիճակից թելադրված, մասամբ նաև օգտվելով դրանից, հայ հոգևորականներից ոմանք սովորական երևոյթ էին դարձրել զենք կրելը. «Լսեմք զոմանց քահանայից ձիավարժություն լինել և զէնս առնուլ ըստ զինուորաց և ի խրախճանութիւնս խաղուց ձիբնթացից ընդ նոսին արշաւել երիվարօք և ի յորս երէոց և ի նետաձգութիւնս և յամենայն ինչ յայսպիսիս, որ նոցայն գործոյ է անկ և ոչ եկեղեցոյ սպասաւորաց»<sup>65</sup>: Ինչպես և պետք է սպասել, Շնորհալին խիստ դժգոհում է այս երևոյթից, սակայն հատկանշականն այն է, որ ինքը ևս օրինականացնում է հոգևորականների զենք կրելու իրավունքը, քաջ զիտակցելով, թե այն միայն հաճոյցքներով ու փառամոլությամբ չէր թելադրված, այլ հաճախ անհրաժեշտություն էր. «Վասնորոյ, — գրում է նա, — աղաչենք ի բաց լինել յայսմհետէ ի յանկարգ սովորութենէ աստի, և բայց թէ ի ճանապարհի, եթէ ի հետիտս և թէ ի երիվարաւ՝ առնուլ զէնս յաղագս երկիրդի ինչ եղելոյ կարծեաց, և այն պարկեշտութեամբ և ոչ ըստ զինուորական կարգի կապարճիւք և կամ կազմեալ սուսերաւ»<sup>66</sup>: Ավելորդ է ասել, որ հոգևորականների մոտ առկա զենքը կարող էր

օգտագործվել ոչ միայն ճանապարհորդության, այլև առօրյա մշյուս վտանգների ժամանակ:

\* \* \*

Ծնորհալին, ինչպես վերը նշվեց, «Թուղթ ընդհանրականում» տարբեր առիթներով անզրադառնում է միջնադարի Հուգող հարցերից նաև՝ տիրոջ ու ծառայի փոխարաբերությանը, եթե նկատի առնենք, որ խոսքն ուղղված է ոչ թե առանձին անհատների, այլ ողջ հասարակությանը, ապա հասկանալի կդառնա, որ գործ ունենք դասերի ու դասակարգերի փոխարաբերության հետ: Ինչպես և ժամանակի այլ առաջադեմ մտածողներ, Ծնորհալին ևս կանգնած է միջնադարյան ըմբոնմամբ օրենքն ու օրինականությունը պահպանելու դիրքերում: Նա տերերից պահանջում է շղիմել ծայրաջեղությունների, մեղմել իրենց վերաբերմունքը ենթակաների նկատմամբ. «բաւական լիցի ձեզ, զի վաստակօք նոցա մհծանայք և առաւել քան զշափն փափկանայք, և այն զի ոչ թէ այլ բնութիւն է նոցա, և այլ ձեր, այլ ի միոյ կատը և ի խառնուածոյ. քանզի նմանապէս է տէրանց և ծառայից՝ փարթամաց և աղքատաց սկիզբն զալոյ աշխարհ և կատարած ելիցն յաշխարհէ...»<sup>67</sup>:

Ծնորհալին շի բավարարվում միայն բարոյագիտական խրատներ կարդալով, այլ աշխատում է ցույց տալ տիրողներին, որ իր ասածները ոչ միայն բարի ցանկություններ են, այլ իրական կյանքի հրամայական պահանջ, որ զրանք թելազրված են նաև ավատատերերի, տիրողների շահերից: Ամենաէական եզրակացությունը, որ բխում է Ծնորհալու ասածից, հետևյալն է. իշխանությունն ու պետությունը կանգուն պահելու համար հարկավոր է աշխատավորին հնարավորություն տալ վերականգնելու իր աշխատութը վճարելու արքունական հարկերը: Դրա համար նա պահանջում է. «Մի՛ որպէս զանքան կենդանիս՝ որ բնութեամբ ծառայք են մարդկան, ծառայեցուցանէք զմարդիկ, որ ընդ իշխանութեամբ ձերով լինին..., այլ ներելով և քաղցրութեամբ և սակաւորեայ ժամանակաւ, և առատագոյն կերակրօք լցու-

ցանել զնոսա յաշխատութիւն անդր և չափով և մի՛ յանշափս, որպէսզի կարօղ լինիցին վաստակօք իրեանց զաղքատանաց կեանս զտանց և զորդոց իրեանց լցուցանել և զարքունական հարկսն հատուցանելը<sup>68</sup>:

Սակայն զարգացած միջնադարում կնճռոտ հարցը միայն տիրոջ ու ծառայի փոխհարաբերությունը չէր: Աշխատավոր զանդվածները շահագործման էին ենթարկվում նաև առևտրականների և ունեոր արհեստավորների կողմից, չնայած, ըստ միջնադարյան դասակարգման, նրանք ստորադաս էին անգամ զինվորների համեմատությամբ և ավատափրական ըմբռնմամբ չէին կարող տեր համարվել զյուղացիության կամ քաղաքային չքավորության նկատմամբ:

Առևտրականներին ու արհեստավորներին ուղղված, ցավոք, շատ համեստոտ խրատներում, Ծնորհալին հիմնականում կոչ է անում լինել արդար, չլյուրել չափ ու կշիռ, ողորմել աղքատներին ու թույլերին, չզրադվել վաշխառությամբ: Հորդորում է նաև համերաշխ լինել միմյանց հետ և տիրոզների կողմից անիրավված ընկերներին օգնության ձեռք մենենել, թույլ շտալ նրանց քայլքայվել ու սնանկանալ. «Մի՛ տալք զարծաթ ձեր ի վարձու», ըստ մարզարէին, այնոցիկ, որք նեղին ի բռնութենէ իշխողաց, և ուտէք զաղքատութեան վաստակս նոցա ի շահս վաշխիցն, այլ որպէս եղբարք կարեկիցք և օգնական լերուք միմհանց»<sup>69</sup>:

Մեզ հետաքրքրող զրջանում քաղաքային բնակչությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, բավական մեծ թիվ էր կազմում և, դատելով առանձին փաստերից, ունեոր քաղաքացիները ձգտում էին որոշակի արտոնություններ ձեռք բերել ոչ միայն գեղջկական բնակչության նկատմամբ, այլև Հնարավորության գեպքում սահմանափակել նաև ավատատերերի իրավունքները: Մանավանդ, ինչպես հայտնի է, դեռևս վաղնջական ժամանակներից գեղջուկները ստորագրաված էին անգամ քաղաքային չքավորիավերի նկատմամբ, և Վաղարշակ թագավորը իր բարեկարգությունների ժամանակ, ինչպես այդ մասին եռքենացին է վկայում, «Հրաման տայ և քաղաքացիաց մարդկան

արգոյ և պատիւ լինել առաւել քան զգեղջկաց. և զեղջկաց պատուել զբազաքացիս որպէս զիշխանն...»<sup>70</sup>: Մինչդեռ Շնորհալին այս հարցում ևս հանդես է բերում նոր և հետաքրքիր մոտեցում: Նա որոշակի ակնարկում է, որ քաղաքացիները իրավական ոչ մի առավելություն չունեն շինարկանների նկատմամբ, հետեւաբար չպետք է նրանց արշավարձին և տգետի տեղ դնեն՝ պարզամտության պատճեռություն:

Բուն շինականներին տրված խրատները ուղիղ համեմատական են նրանց իրավիճակին: Վերջիններին միակ իրավունքը, որ առավել ևս նրանց պարտականությունն էր, սեփական վարքը, կենցաղը տնօրինելը և տիրողներին հպատակիվելն էր:

Կենցաղային և բարոյական բնույթ ունեն «Թուղթ ընդհանրականում» կանանց գիրաբերյալ խրատները ևս:

\* \* \*

«Թուղթ ընդհանրականը» դնահատելի սկզբնաղբյուր է նաեւ ժոմանակի իրավաբարոյական հասկացություններք ուսումնասիրության համար:

Հանրահայտ է շարին բարությամբ հակադրվելու քրիստոնեական ընդհանուր պատվիրանը, որն անհրաժեշտաբար քարոզվում է նաև «Թուղթ ընդհանրականում»: Սակայն XIII դարում, երբ ժողովուրդը բուն երկրում և Կիլիկիայում ամենօրյա օրհասական պայքար էր մզում իր գոյատեման համար, հասկանալի է, որ այդ պատվիրանը խմբագրման պետք է ենթարկվեր և ընդունվեր վերապահությամբ: Եպիկոպոսներին ուղղված խրատներում Շնորհալին պահանջում է ներողամտություն հանդես բերել նրանց նկատմամբ, ովքեր պատրաստ են ուղղելու իրենց հանցանքները, բայց միայն այն դեպքում, եթե հանցանքը գործված է անձի ու անհատի իշխանության դեմ, իսկ եկեղեցու, այն է՝ ընդհանրության կամ ընդհանուր գաղափարախոսության դեմ կատարված հանցագործությունները պետք է պատժվեն ա-

նողոքությամբ. «Քանզի յիւրոյ անձին արհամարհութիւն՝ որ յանիրաւաց, բարոք է հանդարտութիւն և վարձուց արժանաւոր. իսկ յորժամ զԱստուածային պատուիրանս տեսանէ արհամարհել յանգամաց, առ այնպիսիս ոչ զ՞անդարտութիւն, այլ զբարկութիւն ի կիր արկանել արժան է, ըստ բարոյ նախանձուն Եղիայի վառելով»<sup>72</sup>:

Ծնորհալու սույն երկի առանձին համվածներ որոշակի պատկերացում կարող են տալ, թե ինչպես աստվածաշընչային դրույթները իրավագիտական կոթողների երևան գալու նախօրեին իրավական հասկացություններից աստիճանաբար վեր էին ածվում իրավագիտական հոգվածներից<sup>73</sup>:

Այստեղ ոչ միայն արտացոլված են միջնադարյան հասկացությամբ պարսավելի համարված զանցանքներն ու դատապարտելի հանցագործությունները, այլև երեխն տեղեկություններ։ Ին տրվում հայկական շրջաններում ՀII դ. իրավագիտական այս կամ այն հասկացության վիճակի վերաբերյալ։ Իշխաններին տրված խրատներում, խոսելով երդման շարաշահման և ուրացության մասին, Ծնորհալին այդ ամենածանր համարված հանցանքների համար անգամ ընդգծում է՝ մեղմացնող կամ ծանրացնող հանդամանքների նշանակությունը։ Բնական է, որ այսպիսի իրավագիտական ըմբռնում ունեցող գործիչը պետք է պահանջեր օրինազանցներին պատժելու միայն պատշաճ դատավարությամբ։

Ծնորհալին հիշեցնում է իշխաններին, որ նոր օրենքը ընդհանրապես արգելում է՝ մարդկանց անդամահատել կամ մահվան դատապարտել։ Սա, անշուշտ, մարդասիրական մոռանեցում է, սակայն, ինչպես և պետք էր սպասել, նա շեշտը դնում է Հին օրենքի վրա<sup>74</sup>, փաստորեն օրինականացնելով մահապատժի և անդամահատության իրավունքը, որով ըստ էտերյան առաջնորդվում էին ժամանակակիցները։ Սակայն, նա գտնում է նաև, որ այդպիսի ժամանակակիցների մարդը կարող է ենթարկվել համապատասխան ժամանակ կատարելու դեպքում։ Այսպիսի արդարացի դատավարությունից հետո. «Պարձեալ աղաջեմբ, մի՛ առ բարկութիւն շարժելով և ոչ ուղղական իրաւամբք, կամ խրատ ինչ առնեք մարդոյ

կամ մահու վճիռ տայցէք. քանզի նոր օրէնքս ոչ հրամա-  
յեն գայսոսիկ և Հին օրէնքն թէպէտ և հրամայեն, բայց  
ոչ վայրապար, այլ ըստ յանցանացն արժանաւորութեան  
զիւրաքանչիւրսն դատել ի խրատ և ի մահ<sup>75</sup>:

\* \* \*

«Թուղթ ընդհանրականում» ուշագրավ վկայություններ  
են հանդիպում նաև ժամանակի հարկերի, ինչպես և գո-  
ղթվրդական կենցաղի ու բարքերի առանձին երկութիւնների  
վերաբերյալ, որոնց վերապրովեները կարելի է գտնել ան-  
դամ մեր օրերում:

Վերն արդեն խոսք եղավ այն մասին, որ առանձին  
բարձրացած հոգևորականներ եկեղեցու հասրաթները  
իրեն կաշառք էին օգտագործում՝ օտար տիրողներին սի-  
րաշահելու համար: «Եւ զգերփինալսն ի հնագանդելոյ պէս-  
պէս հնարիւք և բռնութեամբ՝ զոր յեկեղեցոյ պայծառու-  
թին և յաղքատաց պէտո հրամայեցաւ լինել, զայնոսիկ ժո-  
ղովեն որպէս զմաքսաւորս, և բռնակալաց աշխարհի նուի-  
րեն»: Այդպիսիները զնալով ծանրացնում են վիճակը և «մի-  
ի միոյ վերայ յառնելով տակաւին աճեցուցանեն դկապալս  
ի վերայ եկեղեցոյ Քքիստոսի, որպէս զտունս բաժից կամ  
զներկոցաց»<sup>76</sup>:

Մանրամասնությունների մեջ շմտնելով, նկատենք  
միանութեամսագութատ հետաքրքիր է «որպէս զտունս բա-  
ժից կամ զներկոցաց» արտահայտությունը: Ինչպես ենթա-  
դրել է Հ. Մանանդյանը, «տուն բաժից» արտահայտությունը  
իսկապես պետք է հասկանալ մաքսատուն իմաստով<sup>77</sup>: Ինչ  
վերաբերում է «կամ զներկոցաց» արտահայտությանը, ապա  
այն ոչ միայն ուղղակի վկայության, այլև, կարծում ենք, հա-  
վասարապես վկայում է ինչպես այլ արհեստանոցներից  
գանձվող հարկերի մասին, այնպես էլ ինթագրել է տալիս,  
որ գրանք եղել են ամենից կարևոր հարկեցից: Վերը բերած  
հատվածից պարզվում է, թե կարիքի մեջ եղողներին ուսան-

քատաներին գանագան բարեգործական ծառայություններ պարբերավոր էին կատարել ոչ միայն վանքերը, որ հանրահայտ երեսույթ է և ազգյուրներում բազմիցս վկայված է, այլև եկեղեցիները՝ եպիսկոպոսների և քահանաների միջոցով։ Հենց այդ նպատակի համար հավաքված գումարներն են, որ ի շարն են օգտագործել եկեղեցու որոշ պաշտոնական երթեր մեր ասածը համեմատելու լինենք Շնորհայուայն, Շորդորների հետ, որով ոիմում է վանականներին, պահանջելով «Եւ ի գինոյն ժամանակի ի գինոյ անտի մասնաւորեցէք զբաժինն աստուծոյ։ Եւ յորժամ առաւելացու քան զպէաս ձեր, և հարկ լինի վաճառել, ի գնոց անտի արծաթոյ առանենք պաղաբերեցէք Քրիստոսի՝ տալով տառապելոց և դերելոց, և մի ամբաբիցէք յերկրի»<sup>78</sup>, ապա հաստատվում է, որ Հայաստանում գոյություն է ունեցել եկեղեցիների և վանքերի կողմից պարտադիր նվիրաբերության սովորություն՝ «պաղաբերում», որը, սակայն, հաճախ չի իրականացվել:

Պատմապատճական առումով որոշակի արժեք ունի նաև մեկ այլ երկուլիթի մասին Շնորհալու վկայությունը։ Գիմելով իշխաններին, ինչպես տեսանք, Շնորհալին պահանջում է նրանցից ոչ միայն մարդասիրական վերաբերմունք ունենալ իրենց համար աշխատող ենթակաների նկատմամբ։ «Ներելով և քաղցրութեամբ և սակաւորեայ ժամանակաւ», այլև «առատագոյն կերակրօք լցուցանել զնոսա աշխատութիւն անդր»<sup>79</sup>։ Մեր համոզմամբ Շնորհալու այս պահանջը բխում է հայ ժողովրդի առ այսօր կենդանի այն սովորությունից, ըստ որի գործատերը պարտավոր է կերակրել աշխատող բանվորին, եթե անգամ այդ մասին հատուկ պայմանագրվածություն չի եղել նրանց միջև։

\* \* \*

Առիթի բերումով կուզեինք համառոտակի անզբազմունակ հայ և օտար պատմագիտության մեջ արծաթված մի կարենը հարցի եօ:

Ինչպես հայտնի է, այն կարծիքը կա, թե հայկական եկեղեցիները իրենց ներքին հարդարանքով միշտ զիշել են օտար եկեղեցիներին և իրեն դա արդյունք է վարդապետական դավանաբանական առանձնահատկության, որ բը-խում է հայ առաքելական եկեղեցու գաղափարախոսությունից: Չնայած բազմաթիվ նշանավոր հոգևոր գործիչների առարկություններին ու բացատրություններին, հայ եկեղեցին հաճախ մեղադրվել է անգամ պատկերամարտության մեջ: Այդ իմաստով շատ հետաքրքիր է Շնորհալու հաղորդածը, ըստ որի մինչև բուն հայրենիքում թագավորության ու պետականության վերացումը և հայրենիքի գրավումը օտար նվաճողների կողմից, հայկական եկեղեցիները ևս շքեղորեն զարդարվում էին: Նա գրում է, «Որ և ընդ բնաւ աշխարհս մեծազարդ պայծառութեամբ զարդարեալ լինէին եկեղեցիք ընդհանուր ազգաց քրիստոնէից. պայծառազգեստ վայելլութեամբ սպասաւորել սրբութեանցն: Նա՝ ևս առաւել և Հայաստանի ազգի եկեղեցիք ի սուրբ Լուսաւորչէն մերմէ սկսեալ մինչև յաւերումն աշխարհի ի հիմանց»<sup>80</sup>: Ինչպես տեսնում ենք, Շնորհալու հաղորդած տեղեկությունը ժիտում է վերոհիշյալ մեղադրանքները: Ավելին, այն շատ ավելի հասկանալի է դարձնում Հովհաննես Դրասխանակերտցու հայտնի վկայությունը, թե նույնիսկ կաթողիկոսարանում ի թիվս այլ շքեղությունների, կախվում էին նաև կաթողիկոսների դիմանկարները<sup>81</sup>:

Հարցն ըստ էության հետաքրքիր է նաև նրանով, որ, կարծում ենք, այդ մասին այստեղ պատահաբար չի խոսվում:

Կիլիկիայում, մասամբ պետականության առկայության շնորհիվ, մասամբ արևմտյան եկեղեցիների ազգեցությամբ, հայկական եկեղեցիները, բնականաբար, ավելի շքեղ էին ձևավորվում, քան Հայաստանում և այս հանգամանքը կարող էր ծնել և ծնեց լուրջ վեճեր: Շնորհալին փաստորեն ձգում է կանխել այդ վեճերը կամ պատասխան տալ, եթե այն արդեն գոյություն ուներ, քանի որ Յինց ինքը պարսավում է նաև նրանց, որոնք պարզունակությունն ու ազքա-

տությունը ինչպես եկեղեցու ձևավորման, այնպես էլ Հոգ-  
ովորականների արտաքինի վերաբերյալ պարկեշտություն  
են համարում, իրականում անձնական նպատակների հա-  
մար յուրացնելով եկեղեցու հասությները:

Բայտ էության այստեղ շփոթված է մի կարեռ հարց,  
որ իրոք դալիս է հայ եկեղեցու գաղափարախոսությունից՝  
վերաբերմունքը սրբապատկերների նկատմամբ։ Լինելով  
հակաքաղկեդոնական, հայ եկեղեցին իսկապես ժխտում էր  
սրբապատկերների պաշտամունքը, սակայն վերջիններս լիո-  
վին խոտելի չեր համարում, չեր արգելում նրանց ներկա-  
յությունը եկեղեցիներում և հարգալից վերաբերմունքը  
նրանց նկատմամբ։

«Թուղթ ընդհանրականը» իրավացիորեն համարվել և  
համարվոմ է միջնադարյան գեղարվեստական արձակի  
ուշագրավ նմուշներից մեկը։ Անկասկած «Թուղթ ընդհանրա-  
կանը» նախ և առաջ կարեռ սկզբնաղբյուր է, սակայն որոշ  
շափով նաև գեղարվեստական հնարանքներով և միջոցնե-  
րով հորինված ստեղծագործություն, որտեղ միջնադարյան  
իրական կյանքը պատկերված է գեղարվեստական շոշափե-  
լի գույներով ու պատկերներով։ Երբեմն ակամա թվում է,  
թե կարդացածք իրատական գրություն չէ, այլ ճաշակով գրր-  
ված իրապես գեղարվեստական ստեղծագործություն, որի  
գործող անձինք, սակայն, անհատներ չեն, այլ ամբողջ  
դասեր ու դասակարգեր։

Հարկ ենք համարում նշելու նաև, որ «Թուղթ ընդհան-  
րականը», ըստ էության, հայ հրապարակադրության հին և  
լավագույն նմուշներից մեկն է։ Իհարկե, XII և XIII դարե-  
րում հայ հրապարակադրության առկայության, ինչպես նաև  
«Թուղթ ընդհանրականի» այդ իմաստով նշանակության մա-  
սին, զիտությունը դեռևս կասի իր խոսքը։ Մենք միայն  
ուզում ենք նշել, որ օգտագործելով միջնադարյան հրապա-  
րակադրություն արտահայտությունը, բոլորովին էլ չենք մո-  
ռանում ժամանակագրական առումով այն հսկայական ան-  
ջրապետը, որ գոյություն ունի «Թուղթ ընդհանրականի» և  
նրա ազդեցությամբ ու հետևողությամբ գրված այլ կանո-

նական խրատների և ուշ շրջանի հրապարակախոսական  
երկերի միջև:

«Թուղթ ընդհանրականի» բնագիրը կազմված է Մաշ-  
տոցի անվան Մատենադարանում պահվող ութ ընտիր ձե-  
ռագրերի հիման վրա, որոնք ժամանակագրական կարգով  
ներկայացնում են հետևյալ պատկերը՝ XIII դարից երեք  
ձեռագիր, XIV դարից՝ երկու, XV դարից՝ երկու և XVI  
դարից՝ մեկ:

Բացառությամբ A ձեռագրի, մյուսները մեր բնագրում  
ժամանակագրական սկզբունքով դարձյալ նշանակված են  
լատինական տառերով

Զեռագրեր B № 2496, Ժ. 1294թ.

C № 500, Ժ. 1293—1305թ.

D № 3651, Ժ. 1315թ.

E № 581, Ժ. 14-րդ դ. (1371<sup>o</sup>թ.)

F № 2678, Ժ. 1426—1476թ.

G № 582, Ժ. 15-րդ դ. (1443-ից առաջ և  
հետո)

H № 3906, Ժ. XVII դար<sup>82</sup>

A № 912 ձեռագրը թեև գրված է 1779թ., սակայն,  
նկատի ունենալով ձեռագրի նախագաղափարի հնագույն լի-  
նելը և բնտիր գրչությունը, այն դրել ենք բնագրի հիմքում<sup>83</sup>,  
իսկ մյուս ձեռագրերի տարրնթերցվածքները՝ տողատակ:  
Այն դեպքերում, երբ ճիշտ ընթերցում տալիս են այլ ձե-  
ռագրեր, այդ ընթերցումը տարվում է բնագր, ըստ որում  
նշվում է նաև A ձեռագրի տարրնթերցումը:

Ա Զեռագրին գրեթե համարժեք է նաև «Թուղթ ընդհան-  
րականի» 1825թ. Կոստանդնուպոլսի հրատարակությունը,  
կատարված նույն հիմքից, ինչ որ A ձեռագրը, սակայն  
նախապատվությունը տրված է № 912 ձեռագրին, որովհետև  
հրատարակության ընթացքում Ակնեցի Անդրեաս վարդապե-  
տը, իր իսկ խոստովանությամբ, կատարել է խմբագրական

ինչ-ինչ անհրաժեշտ աշխատանքներ, մի փոքր հեռանալով  
բնագրից («Թուղթ ընդհանրական», Կ. Պոլիս, 1825 թ.,  
էջ 4):

Ենոքալու «Թուղթ ընդհանրականը», ինչպես ներկա-  
յացրինք, որոշ առումով կանոնիկ երկ է և մեզ է հասել  
բազմաթիվ ընտիր ընդօրինակություններով։ Համեմատա-  
կան բնագրիր կազմելիս նկատի ենք ունեցել բոլոր այն  
տարբնթերցվածքները, որոնք կարող են լուրջ ճշտումներ  
մտցնել բնագրում։ Զենք նշել ուղղագրական բնույթի տար-  
բնթերցումները, բացահայտ սխալներն ու վրիպումները,  
երբեմն նաև որոշիչ հոդերի անհարկի կիրառումը։ Բնագրում  
բերվում են առավել ջիշտ ձևերը։

Նույն սկզբունքն ենք կիրառում նաև հատուկ անուննե-  
րի նկատմամբ։ օրինակ՝ Ներսիսի-Ներսեսի, Ներսէսի։

Բնագրիր կազմելիս բացված են բոլոր հապավումներն  
ու համառոտագրությունները, պատիվները։

Զանց ենք առել ձեռագրերի մանրամասն նկարագրու-  
թյունը, միայն անհրաժեշտ դեպքերում (բնագրի ընդհա-  
տում, գլուխների հետեառաջություն, գրշության փոփոխու-  
թյուն և այլն) տողատակում տալիս ենք համապատասխան  
ծանոթագրություններ։

ԲՆԱԳԻՐ



ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԵՐՍԷՄԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ  
ՀԱՅՈՅ ԱՌ ՀԱՄՈՐԷՆ ՀԱՅԱՍԵՌ ԱԶԻՆՍ, ՈՐՈՅ  
ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏԱՑԱՒ ՆՄԱ. Ի ՏԵՍՈՒՆՔ

Ներսէն ծառայ Քրիստոսի և ողորմութեամբ նո-  
5 րին կաթուղիկոս Հայոց Բնդհանուր Հաւատացելոց  
Հայկականացդ սեռից, որք յարնելս՝ ի սեփէական աշ-  
խարհն Հայաստանեայց բնակեալք, և որք յարնմտեան  
կողմանսդ սահեալք նժդեհութեամբ, և որք ի միջերկ-  
րեայս՝ ի մէջ այլալեզու ազանց տարաքերեալք, և որք  
10 յիրաքանչիւր յեղերս աշխարհաց բառ մեղաց մերոց  
յըրուեալք ի քաղաքս և ի դղեակս, ի գիւղս և յագա-  
րակս, որոց այդոցիկ ամենեցունց քահանայապետաց  
և քահանայից, վանականաց և քաղաքայնոց, իշխա-  
նաց և իշխեցելոց, զինուորաց զատոց՝ ծիավարժից և  
15 Հետեակաց, գաւառապետաց և զործակալաց, տանու-  
տէրաց և երկրագործաց, վաճառականաց և արուես-  
տագիտաց և որոց միանգամ ի զանազան ճանապարհու-  
թանան կենցաղոյս՝ ըստ բնտրութեան կամաց և յօ-  
ժարութեան, արանց և կանանց, մանկանց և երիտա-  
20 սարդաց, կատարելոց և ծերոց, որք ըստ օրինաց աշ-  
խարհի քաղաքավարեալք, և որք գերաշխարհիկք են

1 Ե Տեառն ներսէսի

2 Ե տեսլութեամբ

5 Ե Հաւատացելոց աստուծոյ

6 Ե կողմանս յասեալք Շ յարնմտական

8 Ե մէջ երկրեայս Շ ոյք

9 Ե տարրերեալք

18 Ե կամաց յոժարութեան

21 Ե զի՞ գերաշխարհիկք

վարուք, ողջո՞յն սիրոյ և խաղաղութեան հասցէ յԱստուածընկալ և փրկական Սրբոյ նշանէս և ի Հրեղէն էկուաց Հոգոյն ընդունողաց Առաքելական նշխաքաց,

- 25 և ի Սուրբ Խուսաւորչին մերոյ Աջէս և Աթոռոյք: Որոց առաջի պաղատիմք յաղաշանս՝ որ առ Աստուած, յաղագս ոգուց ձերոց փրկութեան, բանալ զականչս մտաց ձերոց յունկնդրութիւն աստուածայնոց բանիցս այս-ցիկ, զոր հանդերձեալ եմք ի պատուիրանաց Աստու-  
30 ծոյ գնել առաջի ձեր որպէս զի՝ առաջնորդեաք մեօք ի շատիզա արդարութեան՝ արժանի եղիցի իւրաքանչիւ- րոք ի ձէնչ՝ միոյ օթևանաց տան Հօր երկնաւոքի լինել ժառանգաւոր:

Հայցեմ և ես յամենեցունց՝ ազօթս առնել և վամն մեր՝ բարտոք տալ Աստուծոյ զհամար տնտեսութեանն, որ վասն ձեր, յորթամ կոչեցեալ պահանջից ի մէնց:

- Գիտութիւն լիցի ամենեցուն ձեզ, զի հայքին մեր Յոգմաք և եղբայրն ըստ մարմնոյ՝ սրբազան եաթուղի- կոսն Գրիգորիոս, աթոռակալն և արեանառուն մէծի  
40 Խուսաւորչին Հայաստանեալց և համանմանն նմին մաք- րութեամբ անձին և իմաստութեամբ, այն, որ բաքուք հովուեաց երկայն ժամանակաւ զհօտդ բանաւոր, զոր ետ ցնա Քրիստոս ըստ Պետրոսի՝ թէ «Արածեամ՝ կոշ- խարս իմ»\*: որոյ հասեալ ի կատարումն հասանի՝ բատ  
45 նահապետացն կարգի, նախ քան զվախճանն ակզումն

\* Յովհ. ԻԱ. 17

23 Ծ վիք սրբոյ

25 Ի աղոյս

27 Բ անձանց վիս ոգուց

28 DFH աստուածային

30 Ե շիք մեօք Ե միով

35 Ե բարի ոք

36 Ե կոչեալ

40 Ե մաքրութեան

42 Ծ զհաւատդ վիս զհօտդ

եղեալ նմա ի Հոգւոյն, կոշեաց զեպիսկոպոսունս և  
զվարդապետս և զ՞արս սրբոյ լերինն<sup>84</sup> և զորս ի յամ  
կողմանց: Եւ թէպէտ և մեք ի բազում անգամ կոշմանէ  
նորին յայսոսիկ՝ հրաժարէաք յառաջին ժամանակն,  
50 անարժան զանձն վարկանելով, նակայն յայժմուա  
ակամայ բռնազբօսելով զմեղ՝ ինքն ու ժողովը եպիս-  
կոպոսացն, ձեռնազբեաց զմերս անարժանութիւն յա-  
թոռ Կաթողիկոսութեան ազգիս Հայկայ և տանն Թոր-  
դոմայ<sup>85</sup>;

55 Եւ իբրև կատարեաց զգործ հրամանին՝ որ ազդե-  
ցաւ նմա ի վերուստ, յետ երից ամսոց փոխեցաւ իբր  
կոչմամբ առ Քրիստոս, դասաւորելով ընդ հարսն՝ հայ-  
րապետսն. ընդ առաքեալսն՝ երկոտասանիցն լրումն.  
60 ընդ հալածեալսն վասն արդարութեան՝ համբերօդն ի  
հալածանս, և ի զանազան փորձութիւնս ի հակառա-  
կացն ճշմարտութեան, ընդ փառաւորեալսն՝ պա-  
տուեալն Յաստուծոյ և ի մարդկանէ ի կեանս: Որոյ և  
մահ՝ պատուական եղեւ առաջի Տեառն՝ ըստ գերազու-  
նից սրբոցն, զորոց ասէ մարգարէն. Ինքն նաւու հաւա-  
65 տոյ ընդ ծով աշխարհիս՝ Հողմով Հոգուոյն ուղղակի նա-  
ւապետեալ ճշմարտութեամբ և առաքինութեամբ, եհաս  
անվնաս յանքոյթ և յառանց ալեաց նաւահանգիստն.  
և զմեղ եթող ի տաժանելի և յաղցաւոր կեանս, ի մէջ  
օծից և կարծաց և զանազան խածանօղ գաղանաց՝  
70 երևելիաց և աներեւութից. Եւ ոչ այս միայն, այլև ծան-  
րութեան բեռանց ի ներքոյ՝ Հոգուորաց և մարմնաւո-  
րաց: Յորոց կրից թեթևացեալ ինքն թոհաւ յիմանա-  
լիացն կայանս՝ մերումս տկար և անզօր անձին յանձն

46 Յ Հոգոյն սրբոյն

63 Ե չի՛ առաջի տեառն

70 CDEH չի՛ այս

71 Ս չի՛ ծանրութեան

73 Ս չի՛ յանձն

արարեալ բառնալ թիկանց զծանրութիւն հոգոց ամեւ-  
75 նայն եկեղեցեաց:

Եւ իմ յայսոսիկ եղեալ՝ զարջուրիմ սարսեակ, զահ  
և զերկիւղ դատաստանին Աստուծոյ զմտաւ ածելով,  
որ վասն հովուաց և առաջնորդաց՝ ի Հին և ի Նոր  
կտակարանս ասացեալ: Մինչ զի՞ ոչ «տալ քուն աշաց՝  
80 կամ նինջ արտեանաց»\*, յերկիւղէ այսոցիկ՝ շաբչարեալ  
ոգուց իմոյ: Քանզի ի բազումս և ի զանազանս բաժա-  
նին անուանս և իրս մի գործ տեսչութեանս ոգուց՝ որ  
կոշի կաթուղիկոսութիւն և հայրապետութիւն, եպիս-  
կոպոսութիւն և քահանայութիւն. և մի քան զմի առա-  
85 ւելեալ և նուազեալ: Քանզի՝ որ մեծն է ի սոսա, ծան-  
րագունի բեռանց է ի ներքոյ, որպէս պարունակօղ զա-  
մենայնն: Սակայն, ըստ գործոյն՝ անուանադրութիւնքն  
մի և նոյն են իւրաքանչիւրոցն՝ քահանայութեանն և  
քահանայապետութեանն:

90 Քանզի՝ վերակոշին ծնօղ, դայեակ, վարդապետ,  
բժիշկ, դէտ, հովիւ, առաջնորդ, միջնորդ, դատաւոր և  
այլ ևս յոլովագոյն անուանս, որովք խորջուրդ աս-  
տուածպաշտութեանն կատարի, և օրէնք եկեղեցոյ  
Քրիստոսի ամբողջ մնայ:

95 Եւ արդ՝ զիա՞րդ օտար եղելոց ի մօրէ՝ կարիցէ լի-  
նել ոք ծնօղ, կամ դայեակ ըստ Պօղոսի. զի առէ՝ «Որ-  
դեակք իմ, զորս երկնեմ վերստին մինչեւ նկարեսցի  
Քրիստոս ի ձեզ»\*\*. և դարձեալ «Որպէս դայեակ մի՝ որ  
անուցանիցէ զմանկունս, այնպէս դիմացաք ի ձեզ»\*\*\*,

\* Սաղմ. ձև. 4:

\*\* Գաղ. Դ. 19:

\*\*\* Ա. Թհա. բ. 7—8:

76 Ե չի՛ եղեալ

81 Ե զանազանս փխ ի զանազանս

87 Ե աւրինագրութիւնք փխ անուանադրութիւնք

88 Ե ընդ նմի փխ մի

97 Կ դորս դարձեալ

100 Զի ծնեալքն բնութեամբ սիրեն զծնօղսն. և սնկալքն  
գգայեակսն: Խակ առ որս փոխանակ սիրոյ՝ ատելու-  
թիւն և օտարութիւն, զի՞նչ յոյս գոյ ծնանելոյ զայն-  
պիսիսն վերստին՝ աստուածեղէն բանիւն յապաշխա-  
րութիւն, կամ սնուցանելոյ հայրօրէն՝ ուսմամբ և եր-  
105 կիւղի Տեառն զնոսա:

Ո՞րպէս Հնար է՝ լինել վարդապետ և ուսուցիչ և  
քարոզ, ելանել ըստ Հրամանին Աստուծոյ ի վերայ  
բարձու լերին Սիօնի՝ որ է Եկեղեցի սուրբ և բարձրա-  
ցուցանել զրաբրառ Աւետարանին և ո՛չ երկնշել. կամ  
110 ըստ Պօղոսի՝ որ առ Տիմոթէոս քարոզել զբանն՝ «Ի  
ժամու և ի տարաժամու. յանդիմանել սաստել և մխի-  
թարել»<sup>\*</sup>. ուր աշակերտեալքն ցրուեալք են, և ոչ ժո-  
ղովեալք ի վարժարանի. և ո՛չ սիրողք վարժից ճշմա-  
րիտ իմաստութեանն, այլ ստութեան և նանրութեան, և  
115 առ շարութիւնն կատարեալք, և ի բարեաց տղայա-  
ցեալք:

Զիա՞րդ բժշկական գործոյն կարեմք լինել նմա-  
նօղ՝ առ Հիւանդացեալ ոգիսն ի խայթմանէ կամակոր  
վիշապին, ի բնասորականաց կամ յանբնականացն  
120 ախտից բժշկել ջանալով, ուր ախտացեալքն ոչ միայն  
ոչ են ի խնդիր առողջարար արուեստի հոգեսոր բժշկաց,  
այլև դժկամակ լինին յարբումն գեղոցն օգտակարու-  
թեան, եթէ ոք մատուցանէ նոցա յանդիմանութիւն կամ  
խրատ, ըստ ստամոքսացաւոցն նմանութեան, որոց  
125 դառն մաղձիւք ապականեալք իցեն: Եւ ոչ միայն այս,

\* Բ. Տիմոթ. Դ. 3—4:

103 CD աստուածային

107 CD Հրամանի տեառն վիս Հրամանին աստուծոյ

112 B աշակերտքն

113 B ճշմարտի իմաստութեան E իմաստութեան ճշմարտի G վարժանի վիս վարժարանի

120 B կամելով վիս ջանալով C ջանով

125 BFH չի՞ այս

ալև ընդդիմաբանեն ևս նոցին, թէ բժիշկ՝ նպի զանձընք քո բժշկեա յայդպիսի ցաւոց, և ապա առ իս մատիցես յանդիմանօղ քո բանիւ:

Կամ զիա՞րդ այնքան հեռացելոց ի մէնջ տեղեաւ  
130 և սիրով՝ հնար է լինել դէտ, ըստ հրամանին Աստուծոյ՝ որ առ Եղեկիէլ, թէ՝ «Որդի մարդոյ դէտ կացուցի զքեզ տանդ Խորայէլի, զի թէ ոչ աղաղակաւ ազդարացես նոցա զդարանակալութիւն և զասպատակ թշնամոյն, և նոքա սպանցին կամ զերեցցին, զարիւն նոցա ի ձեռաց քոց խոնդրեցց»\*: Մի միայն ունիմք մխիթարութիւն յայտոսիկ զմիւս բանն՝ զոր ասէ Աստուծած առ սոյն մարգարէ՝ «Զի թէ զձայն բարբառոյ քո լուիցեն, և անզգոյշ եղեալ կորիցեն, զու զանձն քո ապրեցուցեր՝ ասէ, և արեան իւրեանց ինքեանք լի-  
140 նին պարտականք»\*\*:

Զիա՞րդ հնար է մեզ և զ՞ովութեանն օրէն լնուլ ի վայրի դալարուց աստուածային օրինացն հանգուցանել, և կենդանարար ջրով հոգույն իմաստութեամբ սնուցանել, զգալլսն հալածել, և զվիրաւորսք բժշկիւ,  
145 ի բացեայ լինելով հովուին և հօտիդ յոյժ հեռաւորութեամբ ի միմեանց:

Զիա՞րդ կարելի է մեզ լինել առաջնորդ այնպիս սեաց, որք ոչ զկնի հետոց առաջնորդին յօժարին ընդարքունականն ընթանալ հանապարհ, որ տանի հասուցանէ յերկինս, այլ ընդ լայն և ընդարձակ պողոտայն, որ հասուցանէ յատակս դժոխոց:

\* Եղեկ. Գ. 17:

\*\* Եղեկ. Գ. 19:

126 Ե դիմաբանեն

127 Յ առ իմս

129 Յ շիք ի մէնջ

137 Ե այն փխ սոյն

147 Ե շիք լինել

150 BCF շիք հասուցանէ Ը լայն և արձակ

150 Ո՞րպէս կարասցուք լինէլ միջնորդ ի մէջ Աստու-  
ժոյ և մարդկան՝ այնոցիկ, որք ոչ կամիցին պահել  
զգաշինս ուխտին, զոր եղին ընդ Աստուծոյ՝ մկրտու-  
թեամբն հրաժարեալ ի սատանայէ և յամենայն գոր-  
ծոց նորա և ի պատրանաց նորա, այլ ուխտազանց  
եղեալ ուխտին, զոր եղին Հոգույն Սրբոյ յասուրն փրբ-  
կութեան, զկնի շարին ընթանան յօժարական կամօք՝  
բանիւք և գործովք:

160 Զիա՞րդ կարիցեմք և զքահանայապետական դա-  
տաւորութիւնն ի գործ արկանել առ ազգ այնպիսի; որք  
ոչ միայն դատաստանի աստուածային օրինացն ոչ ի  
ներքոյ անկեալ հնագանդին, այլև դատաւորաց եկե-  
ղեցւոյ՝ նստին դատաւորք անիրաւութեան, և ինքեանք  
165 գերանալից աշօք եղեալ՝ դատին միշտ շարաշար բամ-  
բասանօք և անդուն բերանով զշիւղս յանցանաց վա-  
րուց նոցա:

Եւ արդ՝ վասն զի այսոքիկ այսպէս, զարհուրիմ և  
գողամ յերկիւդէ դատաստանացն Աստուծոյ. մի՛ գուցէ  
170 այս գործ տնտեսութեան՝ յանձն եղեալ ինձ յԱստու-  
ծոյ, փոխանակ փառաց՝ անարգութեան լինիցի պատ-  
ճառ, և փոխանակ անթառամ պսակացն՝ ըստ խոստ-  
մանն ամօթ երեսաց: Եւ փոխանակ լսելոյ թէ՝ «Ծա-  
ռա՞յ բարի և հաւատարիմ»\*, որպէս և ծառայքն՝ որք  
175 յարկեցին զտուեալ տաղանդն և շահաբերք եղին  
Տեառն, զահագինն լսել և զսարսափելին հրաման ընդ  
ոչ շահեցելոյ ծառային, թէ՝ «Ծառա՞յ շար և վատ,  
պարտ էր քեզ զարծաթ բանի իմոյ արկանել ի սեղա-  
նաւորս, որք են ոգիք մարդկան, և ես եղեալ տոկո-

\* Մատթ. հե. 21:

158 Յ ընթանան

163 CDF հնագանդեցան

167 Յ նոցա լինիցի ամօթ

174 Յ որ

175 Յ զի՞ զտուեալ

179 Յ որ

180 սեօք պահանջէի զիմն»<sup>\*</sup>. այսինքն՝ ընդ բանին, որուի քէն լսէին, և զգործոցն կատարումն ի լսողացն: «Եւ զի դու ո՛չ ետուր քոց ծառայակցացն զկերակուրն հոգոց՝ յորժամ ժամանակ էր լսէլոյ, վասն այդորիկ՝ ասեմ, առէք ի դմանէ զարծաթ շնորհաց իմոց, և տուք

185 այնմ, որ կատարելապէս աճեցոյց զբան իմ, ըստ կատարեալ թուոյ տասն քանքարացն. և զծառայդ՝ անպիտան եղեալ ի գործ պաշտաման իմոյ, յորում եղի, հանէք ի խաւարն արտաքին»<sup>\*\*</sup>:

Եւ թէ զի՞նչ արարից, զի ապրեսցի անձն իմ յա-  
190 հագնալուր սպառնալեաց աստի, տարակուսելի է ինձ: Քանզի շրջել առ ամեննսեան՝ ընդ ամենայն կողմանս աշխարհի, և զարողել զբանն Աստուծոյ ըստ նմանութեան առաքելոցն սրբոց, անկարելի է՝ յաղագս ժամանակիս շարութեան և բազմիշխանութեան: Եւ քա-  
195 զաք թագաւորական և բազմափողվ ոչ զոյ ազգի մերում, որպէս զի անդանօր նստելով յաթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսուցանէք ժողովը բրդեան մերոյ զաստուածային պատուիրանս, ըստ ա-  
ռաջի հայրապետացն և վարդապետաց: Այլ եմք իբրև  
200 զայծեամն յորսորդաց և ի շանց փախուցեալք՝ ի քա-  
րանձաւիս յայս բնակելով<sup>88</sup>, յորում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիւք շատացեալք ի գիւղից, կամ յա-  
գարակաց, յորոց ունիմք և ո՛չ մի: Նաև ո՛չ անդաս-  
տան հողոյ, զի վաստակօք և աշխատութեամբ զպէտո  
205 մեր լնուաք, և ո՛չ օգնութիւն ուստեք, որպէս արժան էր լնուաք, և ո՛չ օգնութիւն ուստեք, որպէս արժան էր, ի թագաւորաց և յիշխանաց ի Քրիստոս հաւատա-  
ցելոց: Այլ միայն ի Տեառնէ Աստուծոյ՝ ըստ մարզա-

\* Մատթ. ԻԵ. 26:

\*\* Մատթ. ԻԵ. 27—30:

180 C ի բանէ D ի բանէն որ

200 F չի ի քարանձաւիս... յորում

201 F չի ոչ և մարմնական... շատացեալք E մարմնաւոք ԸԵ չի հաբեկաւոր

բէին խրատու, զի ասէ՝ «Ծնկեա ի Տէր զօռգս քո, և նաք  
կերակրէ զքեզ»\*. և դարձեալ՝ «Ո՞ յուսացաւ ի Տէր,  
210 և յամօթ եղեա\*\*: Եւ զի այսոքիկ այսպէս, և սպառնա-  
լիք դատաստանին Աստուծոյ աններելիք ի վերաբ  
պղերգացն Հովուաց և Հեղգացելոց, որք ոչ արածեն  
զբանաւոր Հօտս Քրիստոսի յաստուածեղէն նորա վար-  
դապետութիւնս, և ոչ արրուցանեն զջուրն կենդանի\*  
215 իմաստութեանն Աստուծոյ:

Եւ զի՝ իմս տարտամութեան անկաւ այս վիճակ  
Հոգեւոր տնտեսութեան, յորում ոչ է արթնութիւն ոգ-  
ւոյ և ոչ զօրութիւն մարմնոյ և ոչ պատահումն բարւոյ  
ժամանակի, ըստ վերագրելոցդ: Վասնորոյ՝ անգիտա-  
220 նամ եթէ զի՞նչ գործեցից: Թողով լքանել զօտոս Հո-  
վուապետին ի խնամոց Հովուութեան, և զգառինսն ի  
զալլոցն տեսանելով յափշտակեալս և անտես առնել,  
անհաւատութեան է նշանակ, մանաւանդ՝ զիտողի  
զկամս Աստուծոյ և ոչ տգիտի: Թանգի թէ առ տգիտու-  
225 տեան ոք գործէ զանպատշաճն՝ ըմպէ գան, բայց սա-  
կաւ, ըստ տէրունական Հրամանին, իսկ զիտութեամբն՝  
բազումս և սաստկագոյնս, թէպէտ և յայժմուս ոչ ոք է  
տգիտ յընտրողութիւն բարւոյն և շարի, թէն՝ կամաւ ոք  
տգիտանայ: Իսկ փութալ ի խրատել և ուսուցանել՝ ըստ  
230 աստիճանիս գործոյ Հարկաւորութեան, և միշտ ճմլել  
լեզուաւ զկաթն բանին Աստուծոյ ի բերանս Հոգուց  
տղայացելոց ի Քրիստոս, ահա յանհնարիցն է, ըստ  
վերագրելոցդ՝ այսմ ժամանակի և տեղւոյ, անձամբ  
մերով զայս առնել: Սակայն, զի մի՛ ամեննին անպը-

\* Սաղմ. ՍԴ. 23:

\*\* Սաղմ. ԻԴ. 20:

211 B չի՛ աստուծոյ

224 CF տեառն

226 ABGH թէի B տէրունեան

229 D չի՛ ի խրատել

230 D չի՛ գործոյ

233 CDEF յալժմու

235 տուղք եղիցուք առ ձեզ հաւատացեալ ժողովութեք մեզ  
ի Հոգույն Աստուծոյ, արդարապէս դատեցաք մեք, և որ  
ընդ մեզ եպիսկոպոսունք և վարդապէտք, յիշեցուցա-  
նել ձեզ գրով զապատուիրեալսն յԱստուծոյ ի հին և ի  
նոր կտակարանս: Նմանելով յայտմիկ մեծի առաքե-  
240 լոյն Պօղոսի, որ ոչ միայն շրջելով ի տար աշխարհ  
քարոզէր զաւետարանն, որպէս և ինքն իսկ ասէք՝ յԵ-  
րուսաղեմէ մինչ ի Լիորիկեա<sup>87</sup>, այս ի կապանս գոլով՝  
թղթովք հաստատէր զաշակերտեալսն, որպէս և յայտ  
առնէ գրելովն՝ «աղաշեմ զձեզ ես, որ կապեալս եմ ի  
245 Տէր, արժանի գնալ կոչմանն, յոր կոչեցարուք»\*:

Ընդ նմին և մեք իբրև ի կամաւոր բանտէ, և ի կա-  
պանաց՝ յայտմ տօթագին քարանձաւի արգելեալք, զրով  
ձեռին մերոյ խօսիմք, որպէս բերանով ընդ ամենե-  
սին, որք ունիցին ականջս լսելոյ: Ոչ զմեր ինչ բան,  
250 այլ զառաքելոցն և զմարդարէիցն և զվարդապէտացն  
եկեղեցւոյ երկրորդելով զբանից նոցա զօրութիւն ի  
լսելիս ձեր: Զորս եթէ լուեալ՝ յօժարութեամբ ի միտ  
առնուցուք, որպէս բարի երկիր և պարարտ զսիրմա-  
նեալսն յինքեան՝ և գործով պտղաբերեսցիք Աստուծոյ,  
255 անձանց ձերոց փրկութեան և մեզ վարձուց լինիցիք  
պատճառ: Ապա թէ ոք ոչ լուիցէ մտագիւրութեամբ,  
այլ արհամարհիցէ որպէս ապստամբ յԱստուծոյ. և  
կամ թէ լուեալ և ոչ պտղաբերեսցէ գործով զարդարու-  
թիւն, այլ անզեղջ հոգուվ և ապառում սրտիւ կայ ան-  
260 յուսութեամբ ի մեղս անդարձ մինչ ի վախճան, մեք

\* Եփիս. Պ. 1:

236 EF սրբով Փիս աստուծոյ

242 CD լուրիկէ

245 B յոր և

249 B չի՛ լսելոյ

252 G յոր

257 B և Փիս այլ, իբրև

259 CDEH սպառումն

անպարտ եմք յարենէ նորա առաջի Քրիստոսի՝ վկա-  
յութիամբ Աստուծոյ և Հրեշտակաց նորա և ձեր լսո-  
ղացդ ամենեցուն: Քանզի ոչ խորշեցաք, կամ արգելաք  
ի պատմելոյ նմա զբանն Աստուծոյ:

265 Եւ արդ՝ որպէս ի մասունս մարմնոյ քան զամե-  
նայն պատուականագոյն և առաջին՝ գլուխն է, յաղագո  
տեղոյն բարձրութեան և զգայարանացն ի նմա եղե-  
լոց, և ապա այլքն յանդամոց մի ըստ միոցէ. այսպէս  
և յանդամս հոգույն՝ մեծ և առաջին իբրև զգլուխս է  
270 հաւատոյն ճշմարտութիւն. և ընդ նմին յարմարեալք  
որպէս անձն ընդ զլիսոյ՝ զործք արդարութեան մեծա-  
մեծք և փոքունք, ըստ պատուիրանացն Քրիստոսի Աս-  
տուծոյ: Վասն այսորիկ և մեք նախ և առաջին զգլիսոյն  
ամենայն բարութեանց զհաւատոյն բուռն հարկանելով  
275 դիցուք առաջի լսողացդ, ոչ նորոգ ինչ զրելով, այլ ի  
վերայ հիման առաքելոց և մարդարից և հարց սրբոց  
շինելով համառօտ բանիւ, զի մի յանուսումն տպիտաց  
լսելով բան, որ ոչ ըստ ուղղափառ եկեղեցոյ դաւանու-  
թեան, այլ արտաքոյ Աստուածաշունչ զրոց բարքառին:  
280 ի կործանումն լսողաց, մոլորիցի ոք ի ճշմարտութենէն:  
Այլ զի գիտիցէք, թէ յո՞վ արդեօք հաւատացիք ի մկըր-  
տութեանն աւուր, ըստ Պօղոսի՝ որ ասէ՝ «Գիտեմ յո՞՛  
հաւատացեալն եմ»\*, եւ կամ թէ՝ որպէս արժան է  
285 ունել ուղղափառ քրիստոնէին զգաւանութիւն հաւա-  
տոյն, յորում և սկսանիմք պարզ և յայտնի բանիւ ցու-  
ցանել զհաւատոյ ճշմարտութիւն:

---

\*Բ. Տիմոթ. Ա. 12:

264 G չի՛ նմա

271 G ունքն զիս անձն

272 C չի՛ աստուծոյ

274 C բուռ

276 G չի՛ եկեղեցւոյ

283 G չի՛ բանիւ

286 ACDFH զհաւատոյ դաւանութեան

Պարտ և արժանի է Քրիստոսի երկրպագության յանուն սուլը Երրորդութիւնն մկրտելոց խոստովանել համագոյ զերիս անձնաւորութիւնն՝ Հօր և Որդույ և 290 Հոգույն սրբոյ, մի բնութիւն և մի աստուածութիւն և մի իշխանութիւն՝ համապատիւ և զուգափառ: Ոչ յումեքէ եղեալ և ոչ յետոյ սկսեալ և ոչ ի խոնարհութենէ ի բարձրութիւն ամբարձեալ, կամ ի տկարութենէ ի զօրութիւն փոփոխեալ, այլ յառաջ քան զամենայն յաւիտեանս էր և յայժմուս է և յանվախճան յաւիտեանսն եղիցի՝ անեղ և անմահ էութիւն, աներեւոյթ ի բնութենէ և երեկոյ վասն արարածոցս, տեսօղ ամենայնի և անտես յամենայնէ:

Հայր՝ անսկիզբն և անծին: Որդի՝ ծնեալ ի բնութենէ Հօր, այլ՝ անժամանակ: Ոչ ըստ մարդկան օնցնդեան ախտաւոր և հոսանուտ, զոր և զմտաւ ածելն է հայցոյութիւն, թող թէ բարբառել բանիւ, այլ որպէս լոյս ի լուսոյ և հուր ի հրոյ, զի ոչ են օտարք ի բաժանիլն, այլ մի հառագայթ և մի զերմութիւն հրոյն և 305 լուսոյ, ծնելոյն և յորմէ ծնաւն. և մի է բնութիւն երկաքանչիւրոցն, թէպէտ և բաժանին ի միմեանց անձամբ: Նոյնպէս և լոյս Որդի՝ ի լոյս Հօրէ, և հուր աստուածութեանն Որդույ՝ ի հրոյ աստուածութեան Հօր յառաջ եկեալ ծննդեամբ, ոչ են այլեալլ, այլ մի և նոյն բնութեամբ:

Իսկ օրինակ անօրինակ ծննդեանն Որդույ ոչ այինչ է, բայց որ ի մեզ մտացս ծնունդ զբան, թէպէտ և ոչ ամենայնիւ համեմատի ճշմարտութեանն օրինակս: Վասն որոյ և բան ասի՞ յաղագս անապական զոլոյ ծննդեանն: Իսկ որդի, զի ի Հօր բնութենէ և ոչ օտար ի նմանէ, կամ արարած, ըստ հայցոյութեանն Արիոսի<sup>88</sup>: Եւ հնար իմանալոյ զանիմանալին՝ ոչ այլ ինչ է,

296 Ե բնութիւն վիս էութիւն

311 Յ անօրինական

բայց հաւատալ ասացելոցն ի գիրս սուրբս, և ոչ ընդ  
քննութեամբ արկանել զանքննելին, որք անհաս մտաց  
320 ասացին զաստուածային ծնունդն և անձառ բանից:

Նոյնպէս և Հոգին սուրբ՝ բղխումն ասի առ ի Հօրէ  
և փառակից Որդոյ, Աստուած կատարեալ որպէս զշայր  
և զՈրդի:

Մի կամք՝ երից անձնաւորութեանն և մի զօրու-  
թիւն և մի արարչութիւն:

Հայր կամեցաւ ստեղծանել զերեկելի և զաներենոյթ  
արարածս, և Որդի՝ գոյացոյց յանգոյից, և Հոգին սուրբ  
զարդարեաց իմաստութեամբ:

Եվ նոյն ինքն բանն Աստուծոյ, որ արար զմարդն  
330 ի պատեհեր իւր, և երեկցաւ նմա յետ յանցաւորութեանն  
և ամենայն արդարոցն առաջնոց՝ նոյի և Աբրահամու և  
Խսահակայ և Յակոբալ և Յօրայ, Մօսիսի և Ահարոնի  
և Յեսուայ և այլոց մարգարեիցն; և խօսեցաւ ընդ նո-  
սա, ի ժամանակս վերջինս աւետեօք Հրեշտակապետին  
335 Գաբրիելի էջ յորովայն կուտին Մարիամու, և առեալ ի  
ընութենէ նորա մարմին և հոգի և միտս, և խառնեաց  
նոր և անձառելի միաւորութեամբ ընդ Աստուածու-  
թեան իւրում. և զարգացեալ յորովայնին իննամսնաց  
ժամանակաւ որպէս մանուկ, ծնաւ Աստուած և Մարդ  
340 կատարեալ, անշփոթ էութեամբ և անբաժանելի միա-  
ւորութեամբ, մի Քրիստոս և մի անձնաւորութիւն նորա,  
յերկուց ընութեանց միացելոց:

Կաթնասուն եղե որպէս զմարդ, և ի Հրեշտակաց  
փառաւորեցաւ որպէս զԱստուած:

345 Երջեցաւ յաշխարհի կատարիչն ամենայնի զամս և,  
մինչև ի կատարումն հասակի մարդկութեանն, մկրտե-  
ցաւ ի ծառայէն որպէս զմարդ, և վկայեցաւ ի Հօրէ և  
ի Հոգուն որպէս զՈրդի բարձելոյն:

319 Բ որ Փիս որք

341 Բ անձնութիւն

343 Բ եղեալ

347 Ծ չի զմարդ

Փորձեցաւ ի սատանայէ որպէս զմարդ և յաղթեաց  
350 փորձողին որպէս զԱստուած:

Քաղցեաւ և ծարաւեցաւ և ննջեաց և արտասուեաց  
և վաստակեցաւ որպէս մարդ՝ մտեալ ընդ օրինօք  
մարմնոյ, և կատարեաց զսքանչելիս և նշանս և եցոյց  
գորութիւնս աստուածայինս՝ որպէս զԱստուած կատա-  
355 րեալ:

Եկն կամաւորաբար ի շարչարանս, և շարչարեցաւ  
անշարչարելին՝ շարչարելի բնութեամբ ի վերայ Խա-  
շին. մեռաւ անպարտականն մահու՝ մահկանացու  
մարմնովս, վասն կենդանացուցանելոյ զմեռեալ մե-  
360 դօք բնութիւնս. էջ ի գերեզման և արար աւարումն  
կրկին դժոխոց մարդկային հոգւովն՝ միացելովն ընդ  
աստուածութեանն, հոգւոցն՝ որ ի դժոխս, շնորհելով  
ազատութիւն: Իսկ աստուածային մարմնոյն յարու-  
թեամբն՝ տալով լուս յարութեան մահկանացու բնու-  
365 թեանս յապականութենէ մահու. յարեաւ ի մեռելոց իշ-  
խանաբար յաւուր երրորդի, և երեկոցաւ աշակերտաց  
իւրոց ՚իրկոտասանիցն և հօթանասանիցն և հինգ հա-  
րիւրոցն և այլոց բազմաց, որք եղեն նորա վկայք և  
քարոզք ընդ տիեզերս, և յաւուրս քառասունս երեկալ  
370 նոցա և խօսէր ընդ նոսա:

Եւ ի լրումն քառասնեկի աւուրցն՝ վերացաւ ի յեր-  
կինս և նստաւ ընդ աշմէ Հօր ի բարձումն՝ մերով բնու-  
թեամբս, յորմէ անբաժանելի էլ Աստուածութեամբն,  
և գալոց է նովին մարմնովն՝ փառօք Աստուածութեան  
375 իւրոյ և Հօր՝ յարուցանել զմեռեալս և դատել զաշխար-  
հըս արդարութեամբ՝ բարեգործացն զբարեացն տալով  
ժառանգութիւն և զանվախճան թագաւորութիւնն, իսկ  
գործողացն շարեաց՝ զամօթ յաւիտենից և զտանջանսն  
քստ իւրաքանչիւր գործոց:

359 Յ զմեռեալս մեղօք բնութեամբս

360 Յ աւերումն

364 Ը յապատութեամբն փիս յարութեամբն

380 Եւ արդ՝ այս գաւանութիւն ճշմարիտ հաւատով՝  
Հիմն է աստուածայնոյ տաճարիս որ ի մեզ: Իսկ գործք  
բարեաց՝ շինուածն է ի վերայ այսր Հիման, Որպէս և  
Տէրն զդաւանութիւնն Պետրոսի եղ որպէս զվեմ՝ Հիմն  
իմանալի եկեղեցւոյ իւրում, և զինքն որպէս զշինօղ,  
385 և զընտրելոց իւրոց բարեգործութիւնս՝ որ յամենայն  
ազգաց իբրև զնիւթ շինուածոց՝ փոխանակ քարի և  
փայտի և այլոց պիտոյից:

Դարձեալ՝ է նա որպէս զճարտարապետ, և մեք  
որպէս զմշակս Հրամանատարու: Բստ որում ասաց  
390 աշակերտացն, թէ «Առանց իմ՝ ոչ ինչ կարէք առնել»\*:  
Գրէ և Պօղոս, թէ՝ «Ես զիմաստութիւնն Աստուծոյ Հիմն  
եղի»\*\*: որ է Քրիստոս, և որ ի նա հաւատն ճշմարտու-  
թեան, «բայց՝ այլ է, որ շինէ..., այսինքն՝ որ էն և  
որ գալոց էն յաշխարհ: Եւ շինելն՝ գործովք, զոր կա-  
395 մի իւրաքանչիւր ոք, եթէ բարի և եթէ շար:

«Եթէ ոք շինէ ասէ ի վերայ Հիմանս այսորիկ ոս-  
կի»\*\*\*, որ է արդարութիւն և ճշմարտութիւն, արծաթ,  
որ է մաքրութիւն մտաց և սրբութիւն սրտի, ականս  
պատուականս, որ են մասունք բազմապատիկ առաքի-  
400 նութեանց, սէր, խոնարհութիւն, ողորմածութիւն, անո-  
խակալութիւն, պահք, աղօթք, ժուժկալութիւն: Այսո-  
քիկ և որ նման սոցա են պատուական ակունքն՝ շի-  
նեալք յարդարոց անձանց ի վերայ Հիման հաւատովն:

\* Յովհ. ԺԵ. 5:

\*\* Ա. Կորնթ. Գ. 10:

\*\*\* Ա. Կորնթ. Գ. 10:

\*\*\*\* Ա. Կորնթ. Գ. 12:

382 Եւ շինուած ի վերայ

383 Եւ շիմ և

388 ԵՇ զտաճարապետ Եւ մեք իբրև

394 Եւ գործ ԵՇ զալոց էր

396 Եւ շիմ ասէ

409 ԵՇ ողորմութիւն

իսկ մեղսասիրացն անձինք՝ ոչ ի պատուական և  
405 ի հաստատուն նիւթոցն յայսցանէ ասէ, շինեն զշինուա-  
ծըս իւրեանց ի վերայ հաւատոյն հիման, այլ յանար-  
դաց և ի դիւրավատնելեաց, այսինքն՝ փայտ, խոտ,  
եղէգն։ Փայտն՝ զթանձրագունից մեղաց ունելով զտե-  
սակ, զապականութեան, զպունկութեան, զգողութեան,  
410 զյափշտակութեան, և որ նման սոցա. խոտն՝ զխոր-  
ջըրդոցն շարութիւն ժողովեալս ի սրտի. եղէգն՝ զբա-  
նիցն զարշութիւնս նշանակէ, զորս բղինեն ի բերանոց  
մարդիկ, զլեզուն դործարան տուեալ սատանայի, թօշ-  
նամանելով և անարդելով զընկերու՝ զանազան և պէս-  
415 պէս հայոցութեամբ։ Որ ըստ զեղզկացն բարբառոյ՝  
յիշոցք անուանին, և ըստ զրոց սովորութեան՝ անէծք  
և թշնամանք և որ այսպիսի են անուանք, զորոց և  
դաւիթ ասէ, թէ՝ «Անիծիւք և դառնութեամբ լի են բե-  
րանք նոցա»\*։ Նաև ստութիւնն և շարախօսութիւնն և  
420 մատնութիւնն և այլք՝ որ յայտ յարին, բանք անիրա-  
ւութեան՝ յեղեգան են օրինակի։

Եւ զայսոցիկ զերկուց հակառակ շինուածոց նիւթու-  
որ ի պատուականաց և յանարդաց, հուրն՝ ասէ ընտ-  
ըհսցէ, քանզի հրով յայտնելոց է դատաւորն։ Եթէ զոր-  
425 ծըն, զոր շինեաց ի վերայ հաւատոյն հիման, ոսկի է  
և արծաթ և ականս պատուականս, որք ոչ ապականին,  
այլև սրբին ի հրոյն, զործօղն կեցցէ՝ և վարձս առցէ։  
Իսկ եթէ խոտ է և եղէգն և փայտ, որ դիւրաւ ապակա-  
նին ի հրոյ անտի, որ գործեացն զայն՝ տուժեցի։ Վա-  
430 սընզի, զորօրինակ ապարանք՝ հիմամբն միայն շեն  
բաւական լինել ի բնակութիւն մարդկան, այլ՝ պէտո-  
ունին որմոց և ձեղուանց և այլոց շինուածոցն։ Նոյն-

\* Սաղմ. թ. 7:

405 CEF նիւթոյս յայսմանէ

422 չի՞ հակառակ

431 Կ չի՞ լինել

պէս և հաւատովն՝ միայն, առանց գործոց, ոչ ոք կարէ  
զանձն իւր շինել տաճար Աստուծոյ:

435 Եւ որպէս զլուխ՝ առանց անձին յարմարութեան  
ոչ կարէ կրել կենդանութիւն, և ոչ անձն՝ առանց գլխոյ,  
նոյնպէս և հաւատ՝ առանց գործոց, և գործք՝ առանց  
հաւատոյ, մեռեալ են երկոքին, ըստ առաքելոյն:

Վասն որոյ, աղալեմ զամենեան, զի ընդ հաւա-  
440 տոցդ ճշմարտութեան, զոր ընկալայք ի ծննդենէ աւա-  
զանին և ունիք հաստատութեամբ, յարմարեցէք և  
զգործս արգարութեան, զի մի՛ միով աշօք միայն լու-  
սաւորիցէք զանձինս, այլև երկոքումբք պայծառանայ-  
ցէք: Եւ մի վստահանայք ի մնոտի յոյսն անմտաց, որք  
445 ասեն, թէ՝ բաւական է հաւատովն միայն ճշմարտու-  
թիւն քրիստոնէին՝ փրկել ի տանջանաց և արժանաւո-  
րել արքայութեան: Զի, զորորինակ, մեռեալ անդամ շեն  
ինչ պիտանացու ի գործ մարմնոյն. նոյնպէս և մե-  
ռեալ հաւատ՝ ոչ տայ զօրութիւն Հոգույն, այլ մանա-  
450 ւանդ՝ առաւելագոյն տանջանաց պարտական կացուցա-  
նէ զունօղն իւր, որպէս այն, որ զմի տաղանդն պա-  
հեաց և ոչ շահեցաւ նման ընկերացն, զի տաղանդն՝  
հաւատն է, և շահ տաղանդացն՝ գործքն:

Եթէ վասն է՞ր ասի հաւատ՝ մեռեալ առանց գոր-  
455 ծոց, յայտնի արացուք, որոց ոչ զիտեն:

Հաւատոյն անուն մի է, բայց կրկին ունի զօրու-  
թիւն: Առաջին՝ դաւանութեան հաւատն, որ է խոստո-  
վանութիւն ի սուրբ Երրորդութիւնն, զոր ընկալաւ իւ-  
րաքանչիւր ոք յաւագանէն: Երկրորդ, հաւատ այն է՝  
460 որ զբանս, զոր Հոգին Սուրբ խօսեցեալ է բերանով՝  
մարգարէին և առաքելոցն և եկեղեցոյ վարդապետօք,  
զորս ի զիրս սուրբս գրեցին, շնամարի առասպելս և  
սուտս, այլ հաւատայ թէ ճշմարիտ են և ուղիղ, այն-  
պէս, որպէս թէ աշօք իւրովք տեսանէ զամենայն զե-

439 Յ այսորիկ ՓԽ որոյ, աղալեմ զձեղ Ե ըստ ՓԽ ընդ

465 ղեալսն և զիինելոցն և զոր էնն: Եղեալն այն է, զոր  
պատմեն, թէ ամենայն երելի և աներեոյթ բնութիւնք  
ոչ էին և յԱստուծոյ Հրամանէն ստեղծեալ եղեն, և որ  
ինչ յետ լինելութեան արարածոց սքանչելիք և զօրու-  
թիւնք եղեալք յԱստուծոյ՝ պատմին ի գիրս, ի հնումն  
470 և ի նորումն: Եւ լինելոցն այն է, զոր ասեն՝ բարե-  
գործացն բարի Հատուցումն լինել յԱստուծոյ, և շա-  
րագործացն՝ տանջանք և Յուր յաւիտենական: Եւ որ  
էնն այն է, զոր քարոզեն յամենայն բանս իւրեանց, թէ՝  
475 Աստուած մերձաւոր է առ ամենեսեան և ոչ հեռաւոր,  
և զեր խորհին մարդիկ ի միտս իւրեանց, բարի կամ  
շար, իմանայ զամենայն, և զոր խօսին բանս լեզուաւ՝  
լուէ անսխալ, և զոր գործեն մարմնով ի ծածուկ՝ տե-  
սանէ յայտնապէս, զի շիք արարած աներեոյթ առ ի  
նմանէ:

480 Արդ՝ որ այսոցիկ ի բոլոր սրտէ Հաւատայ, նա է,  
որ ունի հաւատ կենդանի, որ և ոչ՝ երբէք յանդզնի  
կամ խորհել շարութիւն ի սրտի, կամ խօսել անիրա-  
ւութիւն բերանով, կամ գործել զմեղս անձամք իւրով,  
զի թէ ի միոյ ուրուք մերձ լինելոյ, արգելուն մարդիկ  
485 յանարժանս գործելոյ. յորժամ Հաւատայ ոք զԱս-  
տուած՝ լինել տեսօղ, զիա՞րդ ժպրհի, կամ խօսել ինչ,  
կամ գործել կամակոր մտօք զշարութիւն: Իսկ՝ որ  
բանիւ միայն ունի զառ ի յԱստուած խոստովանու-  
թիւնն, այլ ոչ գործով, այնպիսոյն Հաւատն ասի մե-  
490 ռեալ:

Եւ արդ վասն զի ընդ բազմատեսակ տնտեսական  
գործոցն անուանս, որ Հաւատացաւ մեզ ի Տեառնէ ի  
ձեռն սրբոյ Աթոռոյս սպասաւորութեան, է և բժշկա-

470 B ասեն թէ

471 B շարհացն

477 CD չի՛ ի ծածուկ

489 B չի՛ ասի Ը մեռեալ է

491 B չի՛ վասն չի՛ տնտեսական CEGH բազում

կան անուն և գործ, վասն որոյ որպէս բժիշկ՝ ճանաշե-  
 լով զհիւանդացելոյն ախտարար ցաւոցն զպատճառ,  
 495 Հրամայէ ի վնասակարացն ի բաց կալ և զառողա-  
 րարն ընդունել դեղ և կերակուր. այսպէս և մեք զընդ-  
 հանրական եկեղեցւոյ Քրիստոսի հոգեոր բժշկութեան  
 ունելով զփոյթ, տեսանեմք մտաց աչօք, թէ և ոչ զա-  
 500 մենեսեան, այլ զյուլվագոյն մասն աշխարհի, զի յա-  
 զագս մեռելոտի գործոց՝ մեռեալ ունին և զհաւատն<sup>89</sup>:  
 Եւ կամիմք որպէս զբժիշկ ուսուցանել ամենայն անձին՝  
 զմաջաբեր ախտից իւրեանց զպատճառն և զկենդա-  
 նարար հոգուց զդեղսն, զոր թէ առեալ ըմպիցէք առանց  
 505 գժկամակ լինելոյ, և ի բաց մաքրիցէք յոգոց ձերոց  
 զգառութիւն մաղձիցն ապականութեան՝ խոստովա-  
 նութեամք և ապաշխարութեամք, արժանի լինիք ողոր-  
 մութեանն Աստուծոյ, և առ ի նմանէ խոստացելոց բա-  
 րութեանցն: Իսկ որոց ոչ թուին ախորժելի ասացեալքս  
 510 ի մէնջ, կամ՝ յաղագս ծուլութեան և մեղսասիրութեան,  
 կամ՝ վասն արջամարձելոյ զմեօք, առ այնպիսիսն  
 զմարդարէականն ասասցուք, թէ որ «անօրինելոցն է՝  
 անօրինեցի և որ արդարանալոցն է՝ արդարացի»\*:  
 Մէք, զոր հրամայեալն է մեղ՝ արասցուք, աղաղակե-  
 515 լով որպէս զէտ ի բարձր զիտանոցէ զպատուիրանս  
 Աստուծոյ ի լսելին ձեր: Այսուհետեւ՝ առնելն և ոչ առ-  
 նելն ի կամս ազատութեան իւրաքանչիւր անձին է:  
 Բայց մի ոք կարծիցէ զմէնջ, թէ իբրև առողջու-  
 զմեկ համարելով յախտից մեղաց, ձեղ միայն զբժշկա-  
 520 կանս զայս մատուցանեմք դեղ՝ որպէս հիւանդացելոց  
 այլ ծանիցէ ամենայն ոք, զի մեք առաւել քան զամե-  
 նեսեան ունիմք պէտս հոգոց բժշկութեան: Բայց որ

\* ԵԱ. Ի. Ա. 2:

494 Ե և ՓԽ որպէս

502 ԲՀ ցուցանել

505 ԲՀ իւրոց

520 Ե չի որպէս

պէս յիմար հիւանդի է զիւրն առողջութեան դեղ՝ զոր  
մատուցանէ նմա ախտացեալ ոմն բժիշկ ի բաց մեր-  
525 ժել, տեսանելով զցաւս մարմնոյ նորա, նոյնպէս  
իմաստնոյ է ոչ զբնութեան բժշկին ունել փոյթ, թէ  
առողջ է և կամ հիւանդ, այլ զգեղին քննել զօգտակա-  
րութիւն, եթէ առողջարար իցէ, եթէ՝ վնասակար:

Արդ և զուք մի վասն մեր անարժանութեան և ի  
530 հոգեկրսն պակասութեան զօգտակար դեղս հոգոց,  
զորս մատուցանեմք ձեզ, արհամարհիցէք և ոչ ընդու-  
նիցիք յանձինս: Զոր աղաշեմք ընկալարուք սիրով և  
յօժարութեամք ոչ վասն մեր ինչ փառաց և պատուց,  
զոր ոչ պահանջեմք յումեքէ, թէ և էաք արժանաւոր,  
535 այլ վասն սիրոյն Քրիստոսի, որ կոչեաց զմեզ յիւր ար-  
քայութիւնն և ի փառս, զի թէպէտ և մեր անարժան  
եմք, այլ բանս վասն զի աստուածային է, արժանա-  
ւոր է ընդունելութեան: Եւ ընդունելութիւնն ոչ այլ ինչ  
եղիցի, այլ կատարումն զործոց:

540 Վասն որոյ, աղօթեացուք ի վերայ միմեանց, մեր  
յաղագս ձեր՝ որպէս զլուխ վասն անձին, մտադիրու-  
թեամք ընդունել զսերմն աստուածային բանիս ի  
սիրտս, և պտղաբերել Աստուծոյ՝ մի ի յերից պտղաբե-  
րութեանց բարի և պարարտ երկրին: Եւ զուք վասն  
545 մեր, բստ որում անձն՝ վասն զլխոյ՝ առողջանալ ի  
հոգեկր հիւանդութեանց և զօրանալ ի տկարութենէ  
զգայութեանց: Որպէս զի, թէ զերան իցէ ի մեզ մե-  
րումս տեսարանի կուրացուցիչ, նախ ի բաց մաքրել  
զայն, զի և զայլոց շիւզս տեսանել և սրբել կարօղ լի-  
550 նիցիմք: Բանալ և զխցեալ ունկն՝ աստուածայնոյ ձայ-

526 Յ և իմաստնոյ Ը ոչ բստ

533 Ե շի՛ ինչ

534 Յ արժանակար

542 CDE բանին

545 Յ որպէս փխ ըստ որում

547 Յ մերումս

նին հնչման ճանապարհ առնելով, և զհոտոտելիս՝ ան-  
մահութեան թափեցելոյ իւղոյ անուամբն անուշացու-  
ցանել, և գճաշակելիս՝ կենացն հացի քաղցնով և ծա-  
րաւել և յադիլ՝ անյագութեամբ արդարութեան և իմաս-  
տութեան, և զլեզուս, որ ի փառ Աստուծոյ և ի շի-  
նութիւն լսողաց բանից, լինել սպասաւոր՝ աղ լինելով՝  
նեխելոց և լոյս խաւարելոց, ըստ Հրամանի Տեառն՝  
նախ՝ անձին, և ասկա այլոց: Որով և զերկոսին դնեմք  
առաջի լսողացդ զանազան կերպարանօք. պայծառա-  
ցելոց ոգով՝ զլուսափայլ բանից ճառագայթ. և մթա-  
ցելոց կամ նեխելոց՝ զադին օրինակի յանդիմանողա-  
կան մորմոքումն, որով և սկսանիմք այժմ՝ առ որու-  
արժան է, նախակարգել զբանե:

## ԱՐ ԿՐՈՆԱԿՈՐՍ ԽԱՐԱՁՆԱԶԳԵԱՅՄ ՈՐ Ի ՎԱՆՈՐԱՅՄ

Եւ արդ՝ առաջին ընդ գերաշխարհիկադ վարուք և  
քաղաքավարութեամբ խօսեցուք, առ կրօնաւրսոդ  
որք ի վանորայս և ի մենաստանս բնակիք, որք սիւնք  
5 էք աշխարհի և պարիսպ ընդդէմ թշնամոյն՝ աղօթիք  
ձեր և բարի վարուք. Հրեշտակք ի մարմնի, և աստեղք  
լուսատուք յերկրի, յորոց ի բարի և ի լուսաւոր վարուց  
փառաւորի միշտ Հայք ձեր՝ որ յերկինս է, որք թէպէտ  
և խրատեալ էք յԱստուածաշունչ զրոց՝ միշտ ի լոե-  
10 լիս ձեր ջնշելով, և չունիք ինչ պէտս կարեաց՝ մերոց  
դուզնաքեայ բանից, այլ որպէս ծառայք՝ որք զհասա-  
րակականն կերակուր Հրաման առնուն ի տէրանց բաշ-  
խել՝ ոչ միայն քաղցելոց, այլև յագեցելոցն շնորհեն:  
Նոյնպէս և մեք, զի ընդհանուր ծառայակցաց մերոց  
15 Հրամայեցաք ի Տեառնէ տալ զբանին կերակուր, Հա-  
սարակարար պարտիմք մատակարարել փարթամաց  
գիտութեամբ և աղքատաց՝ ի զիտութենէ, զօրաւորաց՝  
առաքինութեամբ և տկարագունիցն՝ յառաքինութենէ:

---

1 Ե չի՞ փիս վասն վարդապետաց GEF չի՞ խարազնազգեց F  
չի՞ առ G չի՞ H առ կրօնաւորսն որ ի վանորայս են բնակեալ E ձեռա-  
գորում զլումների հերթականությունը խախտված է և վանականներին ուղղ-  
ված խրատների փոխարեն բերված են բահանաներին ուղղվածները: Մնա-  
ցած զեպերում զլումները ճշտորեն հաջորդում են միմյանց

5 Ե պարիսպ ամուր C լուսաւորք G չի՞ երկրի

10 կարից վիս պէտս կարեաց

13 Ե չի՞ ոչ միայն բաղցելոց այլև յագեցելոցն շնորհեն F բաշխեն  
փիս շնորհեն

Վասն որոյ՝ աղաշեմ զամենեսեան մի նուազու-  
թեամբ իւղոյ ողորմութեան և սրբութեան աղօտացու-  
ցանէք զլոյս հաւատոյ լապտերաց ձերոց, այլ անշի-  
շանելի պահեցէք զճառագայթս աստուածութեան մըշ-  
տավառ առաքինութեամբ յանձինս ձեր:

Մի՛ վասն սիրոյ նիւթականիս ի հրոյ սիրոյն  
Քրիստոսի, զոր արկ յերկիր և կամի զբորբոքելն վաղ-  
վաղակի, ցրտացուցանէք զոգիս:

Մի՛ տայք տեղի օտար հրոյ ցանկութեան ի սիրու  
ձեր և այնու խնկարկել Աստուծոյ զաղօթս և զխոր-  
հուրդ աստուածայնոյ պատարագին, որպէս որդիքն  
ՅՀարօնի<sup>25</sup> Նաբատ և Աբիուդ, այլ նախ մաքրեսցի իւ-  
րաքանչիւր ոք խոստովանութեամբ յանմաքուր խորհըր-  
դոց և զործոց և պատարագ կենդանի զինքն մատու-  
ցէ կենդանւոյն Աստուծոյ՝ առաքինութեամբ և ապա ի  
մաքուրն մերձեսցի և սրբութեան սրբոցն սպասաւո-  
քեսցէ, զի մի, ըստ նմանութեան նոցա, տանջողական  
հրովն այրեսցի ներքին մարդն, աստ խղճիւ մտաց և  
անդ բոցովն անշիշանելեաւ: Մի՛ լիցի ումեհք ի ձէնջ  
յարձան աղի մածնուլ, որպէս կինն Դովտայ, յաղագս  
յետս դառնալոյ յաշխարհական իրս՝ ի հեշտութիւնս  
40 ախտից կամ ի ցանկութիւնս հիւթանիւթից:

Քանզի, զորօրինակ, նա յետ պատուհասին ոչ եղն  
համեմիշ կերպակոց իբրև զաղ, քանզի քար էր և ոչ ի  
շինուած ինչ պիտանացաւ եղաւ որպէս զքար, վասն զի  
աղ էր: Ըստ այսմ նմանութեան և ամենայն ոք, որ  
45 ելանէ յաշխարհէ, որպէս Դովտ ի Սողոմայ, և բարձ-  
րանայ ի կարդ կրօնաւորութեան, որ է հրեշտակական,  
որպէս նորա ճանապարհորդեալք ընդ հրեշտակացն ի

25 Ծի՛ արկ

27 Ե չի՛ տեղի

30 Շի՛ իւրաքանչիւր ոք

34 Շ սրբութեամբ

Ենթինն, և դառնայ անդրէն ի սէր աշխարհիս և յախտս  
թաւալի մեղաց, որպէս և կինն այն՝ զի դառնայր դի-  
50 մօք ի Սողոմ. ոչ Աստուծոյ է պիտանացու այնպիսին՝  
իբրև զկրօնաւոր, և ոչ աշխարհի օրինաց՝ որպէս զաշ-  
խարհական, այլ է անարգ և անպիտան, կոխան եղեալ  
ի մարդկանէ՝ որպէս զաղ անհամեալ, բայց ձեր, որ  
անփոփոխ էք յաստուածայինսդ, ամենայն ինչ ըստ  
55 առարելոյն խրատու՝ բարեձեսութեամբ և ըստ կարգի  
եղիցի: Որ և դարձեալ ասէ՝ «Իմաստութեամբ զնասչիք  
առ արտաքինսն, զնոյ առեալ զժամանակ»\*. և թէ՝  
օջախ ձեր առաջի հեթանոսաց պարկիշտ ունիցիք»\*\*:

Եւ արդ՝ մի ոք ի ձէնց զվատթարս խոսելով լեզուաւ,  
60 կամ իրս ինչ անպատշաճ գործելով անձամբ առաջի  
արտաքնոցն՝ պատճառ լինիցի բանալոյ զանդուռն բե-  
րան նոցա ի հայէոյութիւն սուրբ հաւատոյս և կարգիս,  
որովք կրկին դատաստանս տալոց հն այնպիսիքն առա-  
ջի Աստուծոյ, առաջին՝ ընդ մեղանացն, զոր խօսին  
65 կամ գործեն. երկրորդ և մեծ՝ ընդ գայթակղութեան լի-  
նելոյն պատճառ:

Մի ոք զընկերակից կրօնաւորաց թողլով զկենակ-  
ցութիւն՝ առանձինն բնակիցէ, ոչ յաղագս ճզնողական  
վարուց՝ որպէս միայնակեացք, այլ վասն ադահութեան  
70 ախտի, զի զանձին իւրոյ աշխատութիւնն ոչ հասարա-  
կաց եկեղեցւոյն, այլ իւր միայնոյ ամբարիցէ, յորմէ  
վնասք բազում՝ հոգոց, և ի միարանութենէն՝ օգու-

\* Կողոս. Դ. 5:

\*\* Ա. Պետ. Բ. 12:

48 G լիառնն

49 CF չի՛ և

51 B իբրև զաշխարհական CDE որպէս Փիս իբրև

53 B իբրև

64 G մեղացն

71 F միայն

թիւնք յոլովագոյնք, որպէս աստուածախօս վարդապետացն ցուցանեն բանք, զի առ բազումն քան զերկիւղն  
25 Աստուծոյ առաւել զօրէ ընկերակցացն ամօթոյ երկիւղ,  
յետո դարձուցանելով զյոժարութիւն մտացն ի շար  
ցանկութեանց մեղացն կատարմանէ: Եւ ևս՝ բազմա-  
պատիկք են շահիցն հոյլք՝ ի միասին եղբարցն բնա-  
կութենէ, զոր առելորդ վարկանիմք գիտողացդ երկրոր-  
80 դել:

Են ոմանք դարձեալ յաշխարհանէր և ի մեղկ կրօ-  
նաւորաց, զի ոչ միայն սրտիւք ըստ հնոյն հսբայելի  
դառնան յեփիպտական գործն խաւարինս, այլև ան-  
ձամբ իսկ ընդ աշխարհական բնակեն ի գիւղս և ի քա-  
85 ղաքս, և ի բանից բերանոյ վարզութիւնս և ի գործն  
վատթարութեան, և յորովայնամոլութիւնս անպատ-  
կառս և յարեցութիւնս անառակս և յամենացն ան-  
կարգութեանց բերմունս՝ առաւելուն քան զնոսա:

Պարտ և արժան էր, զի թէ պատահէր կրօնաւո-  
րաց ըստ հարկաւոր ինչ պատճառի բնակել յաշխարհի,  
իբրև զլուսատու լինել աստուածային և ուղիղ վարուքն  
ի մէջ նոցա՝ ի փառաց պատճառս անուանն Աստուծոյ  
և ոչ ի հայհոյութեան: Զայնպիսին մանաւանդ յորդու-  
րեմք ի նոյն, քան թէ արգելումք, զի օրինակաւ բա-  
95 րեաց՝ բազումք լինին բարիք, որպէս և ի նախանձուէ  
չարացն վարուք՝ շարք յոլովագոյնք:

Արդ՝ հրամանաւն Աստուծոյ և մեր, այս եղիցի  
կանոնական օրէնք ի վերայ այնպիսեացն, փոխել այ-  
սուհետև զբնակութիւնս իւրեանց ի վանս և զվարս իւ-  
100 րեանց ըստ ձկոյն և ըստ կարգին՝ յապաշխարութիւն և

73 Ը վարդապետութեանն

78 Ե միաբնութենէ փխ բնակութենէ

81 Ե չի դարձեալ

87 Ը ի յարեցութիւնս յանառակս

93 Ը ի հայհոյութեան

100 Ե չի ըստ

ի պարկելու տութիւն մինչև ի վախճան<sup>90</sup>: Իսկ եթէ ոք ի  
նոցանէ ոչ լուիցէ աստուածային օրինացս՝ զար գրե-  
ցաք, և ոչ ելցէ յաշխարհէ, այլ կացցէ յամառեալ մին-  
չև ի մահ իւր՝ ի նոյն, անպարտ եմք մեք ի խղճէ կո-  
105 րըստեան նորա, ինքն եղիցի արեան իւրոյ պարտա-  
կան առաջի Աստուծոյ:

Այլ քահանայից պատուէր տամք, զի թէ մինչ  
յաշխարհի իցէ այնպիսին, և վախճան մարմնոյ ընդ  
հոգւոյն մեռելութեան հասանէ նմա, ո՛չ հաղորդու-  
թեան և ո՛չ օրինաւոր թաղման արժանի առնել զնա,  
մանաւանդ զայնոսիկ, որ միշտ յանզղութեան լինի-  
ցին մինչ ի մահ: Իսկ եթէ ոք յայնպիսեացն մերձ  
եղեալ ի մահ՝ զղասցի և հայցէ արտասուօք զհաղոր-  
դութիւն և զթաղումն, և խոստովանութեան նորա գի-  
115 տողք վկայեցեն, եթէ հաստատեալ էր ի միտս՝ եւանել  
յաշխարհէ, եթէ օրհաս մահուն ոչ էր կանխեալ, այս-  
պիսոյն վասն ողորմութեանն Աստուծոյ տացի թօշակն  
վերջին, և օրինաւոր թաղումն՝ ոչ որպէս քահանայի,  
կամ կրօնաւորի, այլ իբրև զմիոյ աշխարհականաց:

120 Բայց մի ոք անընտրողաբար զամենայն, որ յաշ-  
խարհի մեռանիցին կրօնաւորք, հաւասար համարեցի-  
զի են բազումք, որ հիւրութեամբ եկեալք յաշխարհ,  
պատահէ նոցա վախճան, և այլք, որ ծեր և տկար գո-  
լով մարմնով և վասն ոչ գտանելոյ խնամս ի վանո-  
125 րայս՝ բնակին յաշխարհի ուղիղ և ոչ բամբասելի վա-  
րուք, այսոքիկ և սոյնպիսիքս պատուվ թաղեսցին,  
յորժամ հասանէ վախճան՝ որպէս զծառայս աստու-  
ծոյ:

101 С չի ոք

104 DH զմահ

105 EH պարտապան

107 G չի մինչ

113 D զհաղորդ

115 B վկայէ

122 G ի յաշխարհ

Դարձեալ՝ զգուշացուցանեմք զճշմարտագունիցդ  
 130 Երամս՝ յաղագս նոր եղելոյ սովորութեանդ ի վանո-  
 րայս ի մերում ժամանակի, այդեզործ խրաքանչիւր ոք  
 լինելով ի կրօնաւորաց, որպէս ի գեօդս, որ անվայե-  
 լուշ է կրօնաւորական կարգի, և արտաքոյ առաջին  
 սրբոց հարցն պատուիրանաց: Զի նոքա և զորս յաշ-  
 135 խարհի ունէին ժառանգութիւնս և ստացուածս՝ թողին,  
 և թողու օրինագրեցին, և զիաւ առաքինութեան բար-  
 ձին և զկնի գնացին Քրիստոսի, որպէս և Ինքն Հրա-  
 մայէր մեծատանն, թէ՝ «Երթ վաճառեա, զոր ինչ ունիս,  
 և տուր աղքատաց, և դու առ զիաւ քո և եկ զկնի իմ,  
 140 և ունիցիս գանձս բազումս յերկինս»\*: Եւ դարձեալ թէ՝  
 «Որ կամիցի զկնի իմ զալ և ոչ ուրացի զամենայն,  
 զոր ունիցի յաշխարհի, և առցէ զիաւ իւր հանապազ,  
 ոչ կարէ իմ աշակերտ լինել»\*\*: Եւ այլ ևս՝ որ այսպի-  
 սիք են աւետարանական պատուիրանք աշակերտելոց  
 145 անձանց, որ էք դուք: Յորոց բազումք են ի ժամանա-  
 կիս կրօնաւորաց, որ յաշխարհի առանց ժառանգու-  
 թեան էին և հարկատուք իշխանաց և աղքատք ի գո-  
 յից և կարօտք հարկաւորացն, և յորժամ զձև կրօնա-  
 ւորութեան ընկալան՝ տեարք եղեն ի վանորայս բա-  
 150 զում ժառանգութեան և փարթամացն ստացուածովք,  
 և ոչ միայն հարկաւոր պիտոյիցն եղեն անկարօտ, այլև  
 աւելորդօքն լցան՝ և յաշխարհի հոգովք և երկօք տա-  
 ժանեալք և աստ անհոգութեամբ և հեշտութեամբ  
 ստուարացեալք: Եւ զիաւրդ կարիցէ այնպիսին յա-  
 155 շակերտութեան լինել կարգի, և ասել ընդ Պետրոսի,

\* Մարկ. Ժ. 21

\*\* Ղուկ. Ժ. 26—27:

131 Ե վայելուշ չէ

141 Յ զամենայն ինչս G զամենայն ինչ

143 Յ չի՛ և

149 G բազում ստացուածքով

155 Յ որպէս փիս ընդ

«Տէ՛ր, աշա մեք թողաք զամենայն» և եկաք գկնիքո, արդ՝ զի՞նչ լինիցի մեզ»\*: Յայտ է, զի ոչ հթող ինչ վասն Քրիստոսի, այլ մանաւանդ, զոր ոչ ունէր յաշ-խարհի, ստացաւ հակառակ Քրիստոսի:

- 160 Եւ արդ, քանզի աստուածային պատուիրանք ըստ զօրութեան ընդունողացն եղան յիւրաքանչիւր ժամանակի՝ տկարագունիցն թեթևագոյնք, զի տանել կարիցեն, և զօրաւորացն՝ ծանուք, զի յօժարութեամբ բառնան: Բայտ այսմ օրինակի և մեք, վասն զի տեսանեմք 165 զբաղումն ցամաքիալս յաստուածային սիրոյն, և ոչ մի քան զմի նախանձու լարեաց շարժեալք՝ ի բարձրագոյն առաքինութիւնս ձեռնարկելով, որպէս առաջին հարքն, այլ մերոյս նախանձ ի հակառակսն վերաբերի նոցա, այսինքն թէ՝ ո՞վ քան զընկերս յընդարձակագոյն տեղ-170 տօց և ի պարարտ երկրի տնկիցէ այզի, և թէ՝ զիա՞րդ սնուցանիցէ իմաստութեամբ զնորագոյն տունկն: Եւ փոխանակ զարուեստս առաքինութեան ուսանելոյ ի միմեանց, յայգեգործութեան հնարս վարժին անհմուտք ի հմտագունիցն: Արժան է, ասեն, այսքան և այսպիսի 175 օրինակաւ վաստակել եղամբք և բրել ձիումբ, փայտատօք և բազիւք, և հակառակ տնկոցն՝ զարմատս և զրոյսս արմատաքի խլել, զոր պարտ էր նախ զբարեաց հակառակ բոյսն, որ ի վարս մեր և ի բարս, ի բաց հանել ի մէնչ և ապա արտաքնոցն ունել փոյթ: 180 Այլև հատանելոյն օրինակ զանազանեալ է իւրաքանչիւր տնկոցն սեռից առ իմաստունսն յայնոսիկ, զի զումանս հուզ յարմատսն և զայլսն ի բացեալ հատանեն,

\* Մատթ. ԺԲ. 27:

156 Հ զհետ վիս զկնի

160 Յ վասն զի

170 Ը տգնիցի Հ շիք թէ

172 Հ ուսուցանելոյ

180 Ը յայտնելոյն

յոմանս՝ սակաւ զուռսն, և ի կէսս՝ յոլովագոյնս թողուն, և այս ամենայն՝ որպէս զի յաճախագոյնս պըտ-  
185 դարերեսցեն և յոլովս զգինւոյն շափոյ աճեցուացեն  
զթիւս: Թողից ասել զպատուաստելոյն հնարս, մի քան  
զմի առաւելեալ ի հանճար և զգործելոյն եռանդն ջեր-  
մութեան, զի ոչ զտիւն ոմանք բաւական համարին ժա-  
մանակ գործելոյ, այլև զգիշերն ևս խառնեն ընդ տուն-  
190 ջեանն: Զոր արժան էր յայզի պատուիրանացն Աստ-  
տուծոյ զայնքան ունել փոյթ և յօժարութիւն գործոյ,  
յորում հրաւիրեցաք ի քարոզչացն, և մտաք ի գործ  
հաւատովք և կրօնիւք ընդ դահեկանին վարձու մեզ  
յԱստուծոյ, յերեկոյանալ կենցաղոյս ժամանակի նման  
195 լինելով նմա, ըստ խոստացելոյ:

Դարձեալ՝ յորժամ պատահին միմեանց տեարք  
այգեաց, կրօնաւորք յայլ և յայլ տեղեաց, յետ ողու-  
նին ոչ զողութենէ հոգւոց հարցանեն և զհիւանդու-  
թեանց ախտից, և ոչ զպատերազմաց դիւաց և զխա-  
200 դաղութեանց, և ոչ թէ՝ զիա՞րդ ստասցուք շնորհմ ար-  
տասուաց՝ ի ժամ աղօթելոյն, այլ թէ՝ յայսմ ամի,  
ո՞վ եղբայր, զիա՞րդ է պտղաբերութիւն քոյին տնկոցն,  
առաւել՝ է, թէ՝ նուազ: Եւ նա թախծեալ սրտիւ պա-  
տասխանէ՝ զինչ ասացից, ասէ, զաղէտսն, որ պատա-  
205 հեցան, զի ոմանք ի ձճեաց վնասեցան, և յոմանց ծա-  
ղիկըն թօթափեցան, և այլքն արևակէզ եղեալ՝ ողկու-  
զաց շորացան, և կէսք՝ նեխութեամբ ապականեցան. և  
թէ զի՞նչ արարից՝ անդիտանամ զելս վտանգիս եղե-  
լոյ: Եւ ընկերն թելադիր եղեալ նմին՝ խրատ տայ, զո-  
210 նմաս պատուաստել ի տնկոցն, որք պտղակորույսք լի-  
նին, և զայսն զանազան փորձեալ հնարիւք՝ բժշկել ի  
պատահելոց կրիցն:

204 Յ շիք ասէ

205 Յ թափեցան Յ Ը կէս ողկուզացն

207 Յ շիք նեխութեամբ ապականեցան Յ շիք և կէսք

211 Յ փորձելով

Եւ քանզի՝ ի նիւթականացս ցանկութիւն զբագումս  
ի կրօնաւորաց ժամանակիս տեսանեմք ըմբռնեալս,  
215 որք զթեթևանալն յայսպիսի ծանրութեան հոգոց՝  
դժուարինս վարկանին, և գնալ զհետ խրատուն Քրիս-  
տոսի, որ հրամայէ՝ ո՛չ հոգովք պաշարել զանձն յա-  
ղագս հարկաւորացն կերակրոց և զգեստուց, թող թէ՝  
վասն աւելորդացն։ Վասն այնորիկ և մեք ոչ զնիմք  
220 օրէնս՝ այսպիսի կրօնաւորաց ամենկին ի բաց կալ ի  
տնկագործութենէ և յամենայն գոյից ստանալոյ, որ-  
պէս վայել է աշակերտաց Քրիստոսի, զի մի ի լսելն  
դարձուցին զգէման յարևմուտս և խոժոռեալ ընդ լուր  
խրատական մեր բանի՝ ի բաց գնասցին, որպէս և մե-  
225 ծատունն այն, այլ զերկրորդն գտեալ, զոր յայսոսիկ  
հաճոյս իմանամք կամացն Աստուծոյ, և զայն զիցուք  
ձեզ օրէնս։ Եւ դուք թէկ ընդ առաջինն՝ դժուարանայք  
զամենայնն տալ Աստուծոյ և մերկանալ աշխարհի՝  
կամաւ, նախ քան զմերկ զնիլն ի կերեզմանի ակամայ,  
230 զերկրորդ օրինադրութիւնս ընկալարուք ախորդելի  
կամօք, զոր թէ յօժարական սրտիւ առնիցէք, հաւա-  
տամք ողորմութեանն Աստուծոյ, զի որպէս զառաջինն  
ընկալցի, և ի ձեռն երկրորդիս կատարման՝ առաջինն  
առաջնորդեսցէ ձեզ վերանալ յօժարութեամք և ոչ բըռ-  
235 նութեամք. և այս է՝ զոր ասելոցս եմք։

Յամենայնէ, զոր ստանայք՝ եթէ տունկս և եթէ այլ  
ինչ, զախտ ագահութեան ի բաց մերժեցէք ի նոցանէ,  
որպէս զբոյս վնասակար ի բարի սերմանց, և զաշխա-  
տութիւն ձեր, որ ի նոսա, մի վասն յոլովելոյ յինչսն  
240 առնիցէք, այլ վասն կամացն Աստուծոյ և յերկինս  
զանձելոյ զերկրաւորս, և ի մարմնոցդ աշխատութենէ՝  
հոգուցդ ամբարել զանձ։

215 С չիք յայսպիսի

237 В չիք զախտ

239 Г չիք որ

Եւ զոր ասեմքս՝ այսպէս եղիցի, որով լինիցին  
ստացուածք ձեր ի հաճոյս Աստուծոյ:

245 ի պտղոցն ժամանակի՝ զպտղաբերացն ձերոց մա-  
սըն տուք Աստուծոյ ի ձեռու ազքատաց և կարօտելոց,  
և մի դատարկ և ունայն զինդրողմն պտղոյն դարձու-  
ցանիցէք, զի մի զձեզ Աստուծած ի յիւր տնկեալ դրախ-  
տէն ունայն դարձուցէ:

250 Եւ եթէ տայցէք, մի խոժոռ դիմօք և զայրացեալ  
սրտիւ և դժկամակ բանիւք՝ իբրև զզո՞ն Կայենի, որ  
ոչ է հաճոյ աստուծոյ, այլ և պատճառ զայրացման,  
այլ զուարթառատ կամօք, որպէս սիրէ և խնդրէ Աս-  
տուծած:

255 Եւ ի զինւոյն ժամանակի՝ ի զինւոյ անտի մասնա-  
ւորեցէք զբաժինն Աստուծոյ: Եւ յորժամ առաւելուցու  
քան զպէտու ձեր, և հարկ լինի վաճառել, ի գնոց անտի  
արձաթոյ առաւել պտղաբերեցէք Քրիստոսի՝ տալով  
տառապելոց և գերելոց, և մի ամբարիցէք յերկրի և  
260 յուսալք յետ մահու ալլոց ձեռամբ զձերն տալ Աստու-  
ծոյ վասն ձեր, զի փոքր է յոյսն այն, շասեմ թէ՝ ամե-  
նակն ընգունայն. և երկրորդ բարի, և ոչ առաջին. ի  
յալլոց ձեռն յուսալ առատագոյն լինել յինչս իւր և  
զիւրն կարկամեցուցանել, մինչ իշխան է զոյիցն և տէր:  
265 Եւ երկրայելի է այր այնպիսի գտանել, որ երկիւղին  
Աստուծոյ մատակարարիցէ զինչսն, ըստ հրամանի  
գնացելոյն: Զի բազմաց աներկիւղից պատճառ կորս-  
տեանն լինի Հոգոյ ստացուածք մեռելոցն, յորժամ  
ժառանգէ անառակ և անկարգ գնացիւք վատնելով զա-  
270 մենայնն, որ վնասու պատճառ, փոխանակ փրկու-  
թեան, լինիցին ինչքն այն ստացողին իւրում:

246 Е շիբ աստուծոյ ի ձեռու

247 С ի վիս մի СЕ զինդրողմն մի դարձուցանէք

251—257 СЕ շիբ որ ոչ է... զայրացման

255—261 С շիբ ի զինւոյն... յորժամ

271 Г շիբ իւրում

- Դարձեալ, զի թէկ երկիւղած ոք հանդիպիցի և զամենայն գոյս մեռելոյն ըստ կամացն Աստուծոյ. տնօրինէ՝ վասն հոգուոյ նորա թողութեան մեղաց, նուազէ 275 ի բարեաց և ոչ կատարեալ բարի: Եւ զի այս ճշմարիտէ, ի բանից իմաստնոյն ուսանիմք այն, զի ասէ, թէ «Որ ողորմի աղքատին, փոխ տայ Աստուծոյ»\*: Եւ զիտէ զայս ամենայն ոք, զի զվճար փոխոյն ոչ օտարի ուրուք, այլ փոխատուին տայ փոխառուն:
- Վասն որոյ աղաշեմ, մի յայլ ոք վստահանալը, այլ դուք տուք զփոխն ձեռամք ձերով ի ձեռս Աստուծոյ, զի թէ զձեզ ճանաշլցէ փոխատուս՝ խնդրող փոխոյն Աստուծած յաւուր պայմանի հատուցման իւրոյ, զոր եղ, ի ձեռս տացչէ զվճար փոխոյն:
- Իսկ եթէ ձերոց զոյցն այլ ոք լինիցի տուօղ փոխոյն, նոյն ընկալցի և զփոխարէնսն յԱստուծոյ, և ձեզ մասն ինչ թերիս հատուցի ողորմութեան՝ միջնորդութեամք տուողին զձերն:
- Այլև տէրունական հրամանն՝ զոր ի հրապարական խօս ատենի անդ ասելոց է առ աջակողմեանսն, զնոյն նշանակէ, քանզի ոչ ասէ թէ՝ քաղցեալ, և այլք վասն ձեր ետուն ինձ ուտել, կամ թէ՝ «Մերկ էի, և այլք վասն ձեր զգեցուցին զիս, այլ թէ՝ դուք ետուք ինձ ուտել, և դուք զգեցուցէք զիս»\*\*:
- Եւ արդ՝ թէպէտ և առաջին կամք Քրիստոսի և Հրամանք այն է, զի ոչ բնաւ ստանայցէ կրօնաւորն ստացուածս, որպէս վերագոյն ասացաք, զի մի յաղագըն նիւթականիս հոգալոյ՝ յաստուածային առաքինութեանց աննիւթական հոգոցն խափանեցի և բազում

\* Առակ. ԾԲ. 17

\*\* Մատթ. իԵ. 35

276 СВЕ չի այն

286 նոյնպէս և փի նոյն

292 DGH չի թէ

300 վնասուց՝ հոգոց և ծանրութեանց զանձն ի ներքոյ արկանիցէ, այլ ունել ի միաբանական կենացն կերակուր և Հանդերձ ըստ Հրամանին առաքելոց, և այնու շատանալ: Բայց, վասն զի այս ոչ ամենեցուն է, այլ որք վասն սիրոյն Աստուծոյ ատեցին զաշխարհ և ելին յաշաւութէ, և ոչ յաղագս այլ ինչ պատճառի:

Վասն որոյ և մեր՝ այնոցիկ կրօնաւորաց, որք երկակենցաղ կենդանեաց նմանեալք են, զի են ցամաքայինք վասն ձեռյն և են ծովայինք՝ յաղագս ի ծովուաշխարհին զբաղանաց, զաշխարհայնոցն զիցուք օրենս, և ոչ զգերաշխարհիցն, զի մեծ է աղքատանալն վասն Քրիստոսի, քան ստանալ ինչս և տալ աղքատաց բաղադր Հրամանին Քրիստոսի. որքան մեծ է Քրիստոսի քան զայն, որ ողորմի աղքատին՝ ի դեմս Քրիստոսի:

315 Քանզի կամաւոր աղքատն, որ յաղագս Աստուծոյ նմանօղ Քրիստոսի է, վասն մեր աղքատացաւ, սասցաւ ի զիրո՝ իսկ ողորմածն աղքատին՝ բարեկամ Քրիստոսի կոչի, այլ ոչ նոյն ինքն Քրիստոսի:

Եւ արդ, զի բոլորովին լինել Քրիստոս՝ մերկանալովն կամաւորութեամբ զամենայն ինչ վասն Քրիստոսի դժուարին է ամենեցուն, ոչ ասեմ թէ անհնարին, զի որք կամին կարօղ են, զոր յայտ առնէ բազմացն կատարումն յամենայն ժամանակի: Դուք այսուհետեւ, որ ստացեալ էք ինչս, զբարեկամացն Քրիստոսի ընկալարուք զաստիճան՝ ողորմելովն աղքատաց, որպէս և ինքն իսկ Հրամայեաց տէրն, թէ՝ «Տուք ողորմութիւն, և ամենայն ինչ ձեր սուրբ է»\*, այսինքն թէ՝ յորժամ ի ձերոց ստացեալ գոյիցն տայցէք մասն ողորմութեան աղքատաց՝ յօժարական և առատամիտ կամօք, մնա-

\* Ղուկ. ԺԱ. 41

300 В Հոգոց վիս վնասուց՝ Հոգոց CDEF Ճի՛ Հոգոց

305 Գ վասն վիս յաղագս

316 CDE Ճի՛ է

324 С ստեալ վիս ստացեալ

330 ցեալն ամենայն սրբին և անվնաս լինին ձեզ: Եւ ոչ  
դատիք իբրև զագահս յաղագս ստանալոյն, այլ ողոր-  
մութեան արժանաւորիք յԱստուծոյ որպէս զողորմածո-  
ըստ ասելոյն Տեառն մերոյ՝ երանի ողորմածոց, զի նո-  
քա ողորմութիւն գտցեն:

335 Նաև զայս ևս ասեմք, թէ օրէնք, որ եղան կրօնա-  
ւորաց անինչս և անստացուածու լինել, թէպէտ և յա-  
ղագս անզբաղ լինելոյ է յաշխարհական իրաց, և միայն  
Հոգևորացն պարապել, այլ կատարեալ պատճառն՝ յա-  
ղագս կարօտ լինելոյ կրօնաւորին, ոչ միայն յատելոր-

340 դացն կերակրոց և ըմպելեաց և զգեստոց, այլ ի  
հարկաւորացն ևս, որպէս զի՝ կարօդ լինիցի պատե-  
րազմի ցանկութեան, որ զինուորին ընդդէմ մաքուր  
կուսութեան, յաղթօդ լինել. զի որք անխտիր տան  
զանձինս որկորստութեան և արթեցութեան, թէև դեք-  
345 պտոնկութեան գրգռիչս ոչ ունէին ախտից, բասական է  
բոցոյ ցանկութեան՝ զառաւելութիւն նիւթոյ որովայնա-  
մոլութեամբն տալ, ձգել զնոսա ի կատարումն մեղաց:

Վասն որոյ աղաշեմ, զի թէպէտ և յոլովս ունիցիք  
զնիսթ կերակրոյ և ըմպելոյ առ ձեռն և առտնին, այլ  
350 յոգիս ձեր խնայելով մի ագահութեամբ և որկորստու-  
թեամբ յայնոսիկ վարիցիք, այլ պարկեշտութեամբ և  
օրինաւոր, ըստ կարգի կրօնաւորաց: Եւ զոր է ձէնչ  
պակասեցուցանէք վասն պատուիրանին Աստուծոյ՝ ի  
սէր կարօտեալ և չքաւոր եղբարց և ծերագունից և տկա-  
355 րաց, զայնոսիկ ի կիր արկանիցէք, յորոց կրկին ամ-  
բարէք ի յոգիս ձեր զբարին՝ զպարկեշտութիւն անձանց  
ձերոց և զսիրով ողորմութիւն կարօտելոց:

331 F ստացուածոյն

337 BF լինելոյն վիս լինելոյ է G չի՛ յաղագս

345 B ունին

346 D չի՛ բոցոյ

349 B ըմպելեաց F չի՛ ըմպելուոյ

354 B կարօտ, ծերունեաց վիս ծերագունից

Մի՛ ոք գտցի ի միջի՛ ձերում, որ զծե կրօնաւորութեան զգեցի ել և յառաւելութիւն գինուց տուեալ  
360 զանձն խր՝ զբամբասանս արբեցողաց ընկալցի ի կարպըն սուրբ, զի միոյն անկարգութեամբ՝ ամենայն կարպակիցը նորա անգունեցին յաշխարհականաց և յայլազգեց: Եւ թէս այլով ամենայնիւ հնար էր անբամբասելի լինել այնպիսոյն, արբեցութեամբն արտաքս  
365 ելցէ յարբայութենէն՝ ըստ բանին առաքելոյ, քանզի ասէ՝ «Մի՛ խարիք, ո՛չ սպանօղ, ո՛չ շնացօղք, ո՛չ արուագէտք, ո՛չ արբեցօղք» և զայլն, որ ըստ կարգի թուէ, «Ոչ ժառանգեցին զարքայութիւն Քրիստոսի և Աստուծոյ»\*:  
370 Զի, որք օրինակ լինել բարեաց պարտական են ամենայն տեսողաց, և նոքա զայն ինչ գործեն, զոր արգելուն զիրք սուրբք ի յաշխարհականաց, զի՞նչ լոյս աշխարհականին կայցէ, և կամ՝ ո՞վ համարձակեցէ առ նոսա յաղագս վատթար ինչ գործոց յանդիմանութեան ինչ խօսել բան, որք և ընդդիմարանն զկարգաւորաց ոմանց զանազան անկարգութիւնն: Ոչ զամենեցուն ասեմք, զի բազումք ի ձենջ և ոչ հացիւ և շրով յագին վասն սիրոյն Աստուծոյ, թող թէ՝ աւելորդ կերակրովք և զինեաւ:  
380 Այլ յաղագս անխրատիցն և ծուլից, զորս և դուք, որ կատարեալք էք, խրատեցէք զնոսա, որ ստահակսն զնայցեն, զի ուղղեցին: Իսկ որք յամառեալք, ի նոյն բերին հանապազ ի լոյժ և ի մեղկ կեանս, յետ բազում անգամ խրատելոյն և ոչ անսալոյն՝ ի բաց հատէք

\* Ա. Կորնթ. Զ. 9

359 Ե որ և

361 Ե չի՛ զի միոյն անկարգութեամբ

374 Ե չի՛ վատթար, յանդիմանութեան խօսել

378 Ե Քրիստոսի վիս աստուծոյ

381 Ե չի՛ որ ստահակսն զնայցեն

383 Ե ծոյլ վիս լոյժ

384 Ե բացէ ի բաց

385 զանբժշկելի անդամն ի մարմնոյ եկեղեցւոյ, զի մի՛  
փոքր մի խմորն զամենայն զանգուածն ապականիցէ,  
շարն՝ շարեաց լինելով օրինակ:

Իսկ եթէ ոք յեղեարցն ջատագով է այնպիսումն  
վասն մարմնաւոր ընտանութեան կամ սիրելութեան,  
390 որպէս զի ախտացեալ անդամն ի կարգ առողջիցն պա-  
հեցից՝ լրբարար գործելով զանպատշաճն, և մերձա-  
կայիցն պատճառ լինելով Հիւանդութեան՝ զիւրն հոգուց  
ախտ ի նոսա փոփոխելով, որպէս զրոր կորստեան հոգ-  
ուց նորին և այլոցն՝ որ նովաւ, օգնականն նորա տացէ  
395 պատասխանի առաջի Քրիստոսի, եթէ առաջնորդն իցէ  
և թէ այլ ոք լընկերակցացն: Զի թէ Տէրն զաջ ակնն  
հրամայէ խել, և զձեռն աջոյ և զոտն հատանել, զի՞նչ  
լինիցին, որք զայթակղեցուցիչն առ զայթակղեալսըն  
պնդեալ պահեն՝ ի վնաս երկարանչիւրոցն ոգուց, Հի-  
400 ւանդացն՝ աներկիւղ գործելով զվատթարս, և առողջի-  
ցըն՝ զայթագկղելովն և բամբասելով:

Իսկ եթէ յետ ի բաց զնալոյն և զզացեալ դարձցի  
յուղութիւն այնպիսին շնորհօքն Աստուծոյ և ողջացի  
ապաշխարութեամբ՝ ճշմարտութեամբ և ոչ կեղծաւո-  
405 րութեամբ, ընկալցի վերստին յառողջ անդամոցն Քրիս-  
տոսի միաւորութիւնն:

Դարձեալ և զայս պատուիրեմք. զի թէ Հնար է փո-  
փոխել ձեզ ի փոփոխական բարուց՝ վանաց ի վանս  
շրջելով, զի վասն զոյզն պատճառի թողու զառաջնոր-  
410 դըն իւր և զկենակից եղբարսն, անհաստատողթեան  
բարուց է նշանակ: Վասն զի բաց ի հոգուց վնասուէ,

386 Յ փոքր խմորն

397 Յ զոտն աջոց Շ զձեռն և զոտսն

398 Բ շի՞ առ զայթակղեալսն

402 Բ ողջացեալ Հ ի յուղութիւն

403 Յ զզացցի վիս ողջացցի

407 Յ իցէ վիս է

410 Յ անհաստատագոյն

411 Շ վնասութեան

որ հրամայեալ է ի գիրս, թողով և գնալ յաղագս մարմ-  
նաւոր ինչ պատճառի, ոչ թողացուցանեն զփոփոխումն  
ի տեղուցէն: Եւ յայսմ պատճառէ յազգի մերոյ կրօնա-  
415 ուրաց զբազումս տեսանեմք անհրաժանգս և անխրատս  
և անհնազանդս աւագագունից: և գրեթե զբովանդակն,  
բաց ի սակաւոց: Զի յորժամ յանպատշաճսն, կամ ի  
գործս, կամ ի խօսս, որ անվայելու է կրօնաւորաց,  
տեսանիցեն զոք եղեալ՝ առաջնորդն կամ վարդապետն  
420 կամ ոք ի ծերագունիցն, և յանդիմանօդ բանիւ սաս-  
տիցէ, վաղվաղակի զիշերագնաց եղեալ իբրև ծառաց  
փախուցեալ ի տեսանէ, փախչի զայրացեալ սրտիւ  
յաստուածալին խրատտուէ անտի:

Եւ զի առաջնորդն երկնչի մի գուցէ ի գնալ եղ-  
425 բարց յաղագս այսպիսի պատճառի՝ գործոյ եկեղեցւոյն  
պակասումն լինիցի, ներօդ լինի ամենայն ստահակ  
եղբօր, կալ մնալ անբժշկելի ի բարս և ի գործս ստա-  
հակութեան, և այսու աղագաւ՝ անխրատս և անհրա-  
ժանգս մնան այնպիսիքն մինչ ի վախճան:

Նաև՝ ևս ծանրագոյն լիմարութեան բանք, զոր  
պատասխանեն նոքա խրատտուաց իւրեանց մի լինել  
հետաշրջօղս, ասեն՝ Աստուած աղատ արար զմեղ և  
ինքնիշխանս, զիա՞րդ զազատութիւնս մեր ի ծառայու-  
թիւն դիցուք մարդկան: Եւ երանի թէ զազատութիւնն,  
435 զոր ևս Աստուած բնութեանս, բարուք ի կիր արկա-  
նէին, այսինքն՝ ի յախտից լինել ազատս:

Վատթար ծառայութիւն և վնասարար՝ մեղաց ծա-  
ռայութիւն է, որպէս ասաց Քրիստոս՝ թէ «Որ առնէ

419 В չի կամ ի խօսս

423 СЕ խրատէ

426 В ներումն

430 В և փխ ևս

432 ВН շատաշբչողս

433 CD չի մեր

գմեղս, ծառայ է մեղաց»\*: իսկ Աստուծոյ ծառայութիւնն է վասն Աստուծոյ՝ եկեղեցւոյն, և վասն եկեղեցւոյն՝ առաջնորդին, արդարութիւն է և ոչ մեղք. զոր և առաքեալն օրինադրէ թէ՝ «Ծառայեցէք միմեանց երկիւղիւն Քրիստոսի»\*\*. և ինքն Քրիստոս հրամայէ թէ՝ «Որ կամիցի մեծ լինել, եղիցի ամենեցուն ծառայ»\*\*\*.

445 զրէ և սուրբն Բարսեղ ի կրօնաւորաց սահմանն, թէ՝ «Ամենայն ժուժկալութիւն և առաքինութիւն այնմ, որ զհնազանդութիւն առաջնորդին ոչ ունիցի, անօգուտք են և յուշ ինչ պէտս համարեալ»:

Մի ոք յեղբարց տրտնջող լինիցի զառաջնորդէ 450 իւրմէ յինչ և իցէ պատճառս տրտնջման, թէև արդար գտանիցի ի տրտնջելն, զի մի զվարձսն, որ յԱստուծոյ՝ կորուսանիցէ, և ընդ այգույն մշակացն առաջնոց դատեցի, վասն տրտնջելոյն զտեառնէն անիրաւաբար: Զի թէ մարմնաւոր ծառայից հրամայէ առաքեալն՝ Հնագանդ լինել ըստ մարմնոյ տերանց, ոչ առ ականէ ծառայելով, այլ միամտութեամբ սրտիւ որպէս Աստուծոյ, «զի ի Տեառնէ, ասէ, ընդունիցիք զվարձսն»\*\*\*\*. քանի ևս պահանջէ Աստուած ի հոգերացդ, առաւել քան զնոցայն ցուցանել Հնազանդութիւն և համբերութիւն 455 և միամտութիւն՝ եկեղեցւոյ հոգեկոր առաջնորդաց: Զի ոչ միայն ընդ պահոցն և աղօթից և որ նման սոցին մասանց առաքինութեանց տայ Աստուած զվարձս վաստակոց՝ զործողաց ի յայգի պատուիրանի նորա, այլ

\* Յովհ. Ղ. 34

\*\* Եփես. Ե. 21

\*\*\* Մատթ. Ի. 11

\*\*\*\* Կողոս. Գ. 22—24

443 EF աստուծոյ վիս Քրիստոսի

453 G զտանուտեառնեն վիս զտեառնէն

457 C քանզի վիս քանի

առաւել ընդ հաւատարիմ լինելն եկեղեցւոյ՝ ի գործու և  
465 յաշխատութիւնս և յամենայն իրս:

Իսկ զգողսն և զկծծիսն և զհատուսն, քան զարտա-  
քինսն ի սոյն յանցանս գտեալս, առաւելապէս դատի  
Աստուած, որպէս զգիտող կամաց տեառն ծառայ, քան  
զայն՝ որ ոչն գիտէ: Զի, զորօրինակ, զսուրբ կերակուրս  
470 և զըմպելիս՝ պիղծ կայտառք անկեալք ի նոսա և Հեղ-  
ձեալք ապականեն, սոյնպէս և յարդար վաստակս, յոր-  
ժամ ձեռն զողոց մերձենան ի կծութիւն, ինքեանց  
բարեգործութիւնն հեղձնուն ի հոգիս իւրեանց՝ որպէս  
զմկունս, և զմնացեալ ստացուածսն պղծեն անիրաւու-  
թեամբն: Յորմէ զգուշանալ աղաչեմ և սուրբ պահել  
զձեռս ի վնասակար և յանիծարեր անձին ախտիցս,  
քանզի անէծք ցաւագինք վասն այլ մեղաց ոչ ևս շար-  
ժին ի մէջ եկեղեցւոյ, քան յաղագս զողութեան:

Եւ մի ոք փոքր համարեցի զսա ի կարգ մեղաց,  
480 զի ի քարեղին տախտակսն ի զրեալ օրէնսն մատամբն  
Աստութոյ՝ երրորդն է սա կարգեալ, յետ սպանութեանն  
և շնութեանն: Եւ մի ոք կարծիցէ, թէ մեծագոյն իրաց  
յափշտակութիւնն է ի զողութեան համարի, և փոքրն  
ոչ. ծանիցէ այնպիսին, զի թէպէտ և ի տուգանսն զա-  
485 նազանութիւն է, քանզի չորեքպատիկ հատուցանել՝  
յօրէնսն հրամայեցաւ զգողութեան վճարումն, և տասն  
դահեկանի շափոյն՝ չորեքպատիկն, կամ հարիւրին կամ  
հազարին՝ առաւել է քան զմիոյն կամ զերկուցն: Սա-  
կայն, անունն մի և նոյն է մեծին և փոքրուն՝ բազմին՝  
490 և սակաւուն, զի ոչ թէ որ զմեծագոյն իրս կամ զբա-  
զումս զողանայ՝ նա միայն կոչի զող, և որ զփոքումս  
և զսակաւս՝ յայլ ինչ անուն վերաձայնի, այլ՝ համա-  
նունաբար ի վերայ ամենայն զողոց է զողութեան ա-

466 Յ չի՛ քան

468 Յ քանզի փխ զի

486 Յ համարեցաւ փխ հրամայեցաւ

նուն և պատիժ, որ զբագումսն գողանայ և որ զսա-  
495 կաւուն:

Եւ սահման, որ ընդ գողութեան անուամբ և բամ-  
բանանօք արկանէ զմարդ՝ այլափէ է, ամենացն ոք,  
որ զձեռու իւր ձգէ յառնուլ զինչ և իցէ իրս և աշօքն  
այսր և անդր նայեսցի, զի մի տեսցէ կա՛մ տէր գոյին  
500 և ըմբռնեսցէ զնա, կա՛մ օտար ոք և հայցոյեսցէ, զող  
է այնպիսին, և գողութիւն է զոր առնուն:

Եւ մի ոք ինքն ինքեան իրաւունս առնիցէ, կամ  
աշխատութեան իւրոյ վարձ՝ զգողացեալն ասելով, և  
կամ այլ ինչ ցուրտ պատճառս յօդելով, անպատիժ հա-  
505 մարի լինել զինքն ի դատաստանէն Աստուծոյ. ի նախ-  
նի եղեալ օրինակէն զգաստացի այնպիսին. Անանիայ  
և Սափիրայ՝ միթէ անձի՞ն աշխատութիւն էր գողա-  
ցեալն յիրաց այլոց՝ որպէս և քոյդ, ո՞ւ այլ ի սեպհա-  
կան իւրեանց գեղջն զնոց և ի հայրենի ժառանգութենէ,  
510 զոր վաճառեալ արծաթոյ և սակաւ ինչ խորեալ յա-  
ղագս առանձնական իւրեանց պիտոյից, և զբագումսն  
առ ոտան եղեալ Պետրոսի. տե՛ս զիա՞րդ մահու եղեն  
պարտականք ի վիմին հաւատոյ արդար իրաւանցն  
պատուհասեալք. ո՞ւ վասն արծաթոյն ինչ կարեաց,  
515 զորմէ ոչ ինչ փոյթ էր Պետրոսի, այլ վասն ստու-  
թեանն, որպէս և ասէք՝ «Ու ստեցեր զու մարդոց, այլ  
Աստուծոյ»\*:

Իսկ առ մերովքս տեսանեմք ոչ միայն գողութիւն,  
այլև ստութիւն վասն գողութեանն, ոչ լոկ բանիւ, այլև  
520 մեծամեծ երգմամբ ուրացութիւն, որոյ մեղաց չիք թո-  
ղութիւն. զի և ոչ զղջումն՝ խոստովանութիւն առ այն,  
յորմէ գողացաւն, զի թողութեան իշխանութիւն զո-

\* Գործք. Ե. 3

498 Ե վիք իրս

499 Ե մի ոք

513 EG իրաւամբք

525 զոյն՝ յաղագս գողացելոյ իրին, որ տէրն է գողացեալ  
գոյին՝ ունի, և ոչ օտար ոք խոստովանաջար: Վաս-  
դորոյ, զի ոչ խոստովանի նմա և ոչ հատուցանէ, զոր  
գողացաւն ի նմանէ և զրկեաց, ոչ ասեմ շորեքիին,  
ըստ մաքսաւորին Զաքէի, այլև ոչ զոր էառն, ոչ ըն-  
դունի թողութիւն յաւիտեան:

Են դարձեալ ոմանք ի պակասամիտ կրօնաւորաց,  
530 որք թէպէտ և ոչ զարտաքին իրս, այլ զանձին իրեանց  
գորութիւն և զյաջողութիւն գողանան յեկեղեցւոյն, ի  
յիւրեանց առանձնական զործս արի և արթուն լինելով,  
և ի հասարակացն՝ Հեղդ և պղերդ, ոչ անպատճս ի  
դատաստանէ Աստուծոյ մնան այնպիսիքն ընդ թերա-  
535 հաւատութեանն՝ առաւել քան ընդ պղերգութեանն, զի  
ոչ հաւատան զաշխատութեանն վարձ ի Տեանէ ըն-  
դունել, այլ զմարդկայինն միայն համարին հատուցու-  
մըն, որոց յորժամ ըստ կամաց զպէտսն տայ առաջ-  
նորդն՝ արիանան ի վաստակսն, իսկ յորժամ փոքր մի  
540 նուազանալ հանդիպի ընդ հեղդութեան զործոյն զտըր-  
տունջն ևս յաւելուն:

Ընդ այսոսիկ՝ որ զործոց զրեցան պատուիրանք  
յԱստուածաշունչ զբոց, և շրթանց և լեզուոյ ղնել  
դրունս, աղաշեմք և դռնապանս, որպէս զի զօգուա-  
545 կարն ի բանից և զբարին թողացուցեն ելանել, իսկ  
զշարս և զվնասակարս և զանօգուտս ի սրտին, որպէս  
ի բանտի, արգելցեն՝ ոչ թոյլ տալով մտացն ծնանել  
զշար մանկունսն, այլ մանաւանդ հեղձուցանել մին-  
քեան զսերմանեալ յուրթիւնն ի սատանայք:

550           եւ արդ՝ մի՛ ոք զատեսցի զընկեր իւր, զի մի և

527 Ե ետուն փին էառն

531 Ե առողջութիւն փին զյաջողութիւն

537 Ե զմարդկան

538 Ե զի՞ յորժամ

ինքն դատեսցի յարդարադատէն Աստուծոյ՝ որպէս և  
ասաց տէրն՝ «Մի դատէք, և ոչ դատիցիք»\*:

Մի՛ ոք ի բամբասանս յօժարեսցի, թէև ուղիղ իցէ,  
թող թէ՝ զբահետ վարեալ, զի զի՞նչ օգտեցուցանես  
555 զեղբայրն՝ բամբասելովն զնա առ ալլս. զքեզ վնասե-  
ցեր ի բամբասելն, և նա ոչ ինչ օգտեցաւ: Եթէ կամիս  
օգտեցուցանել զնա և զքեզ, տէրունականաւն վարես-  
ցիր խրատով, յանդիմանեա զնա սիրով, որպէս զ՞ի-  
ւանդացեալ անդամ՝ սպեղանեօք, նախ՝ առանձնաբար,  
560 եթէ ոչ անսայցէ՝ առաջի երկուց և երից վկայից. եթէ  
և ի նոցանէ ոչ պատկառեսցի դառնալ յուղղութիւն՝  
ասասցիր յեկեղեցւոջն, և թէ՝ և յեկեղեցւոյն ի ճրագա-  
րականախատ լինելոյն ոչ զղացացի, յայնժամ ճամա-  
րեսցի քեզ և բամբասեսցի իրաւապէս՝ իբրև զ՞եթանոս  
565 և զմաքսաւոր:

Եւ արդ՝ մի՛ ոք սովորեցուցէ ի կրօնաւորաց զիհ-  
պու իւր, կամ չարախօսել ի զուր զումեքէ, կամ անի-  
ծանել վայրապար, կամ ճակառակել ընդդէմ բանից  
ճակառակողաց յանօգուտ կոիւս և ի վնասակար վիճա-  
570 բանութիւնս, կամ ի վիճելն՝ թշնամանաց և անարգա-  
նաց բանս բարբառել, որպէս զաշխարհականս, որ ոչ  
վայելէ սրբոց: Զի թէ ընդ դատարկ բանից ճամարս  
պահանջէ Քրիստոս, որպէս և ճրամայեաց, զի՞նչ լի-  
նիցին, որք գարշելի և վատթար բանիւք վարին ան-  
575 խըտրաբար, մանաւանդ, որք ի խեղկատակութիւն սո-  
վորեցուցեն զիկուս և ի ծիծաղական բանս՝ նման լի-

\* Մատթ. է. 1

555 Յ ալլ վիխ առ ալլս

556 Յ չի՛ ինչ Յ չի՛ ի բամբասելն և նա ոչ ինչ օգտեցաւ: Եթէ կա-  
միս

560 Ե վկայից ճաստատեսցի

564 Ծ բամբասեսցի քեզ

568 Յ վայրաբար

569 Յ չի՛ յանօգուտ կոիւս

նելով խաղալկացն և հացկատակաց, և որք ի ծիծառելն այլալին զդէմս և կարկաչեն անմտաբար:

Վասն որոյ, աղաշեմ, զի բանք ձեր ոչ լիցին ան-  
580 համ և անաղ, որպէս զուամկաց անմտաց, այլ որպէս  
աղիւ համեմեալ, ըստ խրատուն առաքելոյ, ի շահ և ի  
շնորհս տալ լսողաց, և ոչ ի գայթագողութիւն և ի գաղ-  
րութիւն լինել լսելեաց:

Այլի՛ նոյն ինքն շահաւէտ և օգտակար բանքն մի  
585 յաճախութեամբ և առանց դիպող ժամու եղիցին խօ-  
սեցեալ յայնմանէ, որ խօսելն գիտիցի իմաստութեամբ,  
զի մի ձան ձրտցեալ՝ նողկտացեն լսողը, և դորովանս  
դիցին ատեցողք բարի բանից, այլ՝ սակաւք եղիցին,  
և այն՝ հեղութեամբ և հանդարտութեամբ:

590       Եւ գլխաւորելով զբանս, որ առ մաքրագունիցդ  
երամք, ասենք զայս, Եթէ խորհուրդք և բանք և գործք  
ձեր և ամենայն շարժումն հոգւոյ և մարմնոյ այն-  
պէս եղիցին պարկեշտք և աստուածավայելուչք, որ-  
պէս զի՝ անուանն Աստուծոյ և ձեռյ կրօնաւորութեանդ  
595 մի հայոցովթեան և պարսաւանաց, այլ զովութեան  
և փառաւորելոյ լինիցին պատճառք ի տեսողաց և ի  
լսողաց: Զի մի լիցի ումեք ի ձէնչ, ըստ հնոյն իսրա-  
յելի, լսել յԱստուծոյ մարդարէիւն, թէ՝ «Անուն իմ վա-  
սըն ձեր հայոցի ի մէջ հեթանոսաց»\*, այլ, մանա-  
600 ւանդ, տէրունական բանին, որ առ աշակերտուն, ար-  
ժանաւոր առնիցէք զանձինս պայծառ առաքինու-  
թեամբ, թէ՝ «Այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր առաջի  
մարդկան, որպէս զի՝ տեսցին զգործս ձեր բարիս և  
փառաւորեսցին զհայրն ձեր, որ յերկինս է»\*\*:

605       Եւ այս ինչ սակաւուք՝ առ աշակերտեալ եղբարսդ  
ասացեալ ի մէնչ՝ ի փառս Աստուծոյ, աւարտեսցին:

\* ԾԱ. ԾԲ. 5

\*\* Մատթ. Ե. 10:

582 BEF յաւգուտ փխ շնորհս տալ

597 Յ ընդ փխ ըստ

597—599 Յ չի ոի... հեթանոսաց

## ԱՌ ԱՌԱՋՆՈՐԴՄ ՍՐՅՈՅ ՈՒԽՏԻՑ ՎԱՆԱԿԱՆԱՑ

Փոքր ինչ և առաջնորդացդ, ի յերկինս ճանապարհորդելոցն տացուք ծառայակցաբար զհոգելորական և զաստուածային բանին կերակուր, որք զաշաց ունիք 5 գործ և սպասավորութիւն մարմնոյ եկեղեցւոյ:

Զի, զոր օրինակ, աշք առաջնորդին անձին յամենայն շարժումն ի լավագոյնսն կամ ի վատթարագոյնս, ըստ այսմ նմանութեան և առաջնորդք՝ առաջնորդելոցըն: Եւ որպէս բիբք աշացն, եթէ մաքուրք լինիցին ի յախտից ինչ ի ներքս անկելոց, սրատեսութեամբն անմոլար առաջնորդէ անձին յուղիդ ճանապարհն. իսկ եթէ շամանդաղք մթինք զերակսն լուսոյ, որ ի գլխոյ անտի յաշսն իջանեն՝ խնուն անտեսութեամբն, սխալէ և ընդ ինքեան ի խորխորատ մահու զբոլոր անձն իւր ար-15 կանէ:

Ըստ այսմ օրինակի և առաջնորդք եկեղեցւոյ, որ ոք երկոքումբք աշօք լուսաւորեալ իցէ, այսինքն՝ գիտութեամբ Աստուածաշունչ զրոց, և առաքինասէր գործովք՝ ամբծութեամբ, և սրբութեամբ և ամենայն 20 արդարութեամբ, զոր պատուիրանք Աստուծոյ ունուցանեն, այնպիսին՝ որպէս անձին իւրոյ, սոյնպէս և ճամօրէն եղբայրութեանն բարւոք առաջնորդէ յաստուածայինսն: Իսկ որ զմի յաշացն բաց ունիցի և միւ-

1 Յ Տեառն ներսիսի ասացեալ առ, սուրբ Է այս զլուխը բացակացումէ է ։ Հ նորին առ

6 Յ չի զի

սովն կափուցեալ իցէ, այսինքն՝ որ կամ գիտութիւն  
25 առանց գործոց առաքինութեան և կամ առաքինութիւն  
առանց գիտութեան ունիցի, թէրի է ի բարեաց և ոչ  
կատարեալ. քանզի միականեաց նմանի այնպիսին:

Զի թէպէտ և որ զիմաստութիւնն ունիցի՝ գիտէ  
ոշաւիդս արդարութեան ճանապարհին ուղիղ ուսու-  
30 ցանել բանիւ, այլ ինքեան ոչ զնալովն ընդ նոյն գոր-  
ծով՝ ոչ կարէ հաւանեցուցանել զալլս զնալ. նոյնպէս  
և այն, որ սրբութեամբ վարուք իցէ միայն առանց գի-  
տութեան գրոց, թէպէտ և անձամբ իւրով զնայ ընդ  
ճանապարհ օրինացն Աստուծոյ, բայց զի ալլոց՝ որ-  
պէս արժան է, ոչ գիտէ իմաստութեամբ առաջնորդել,  
վասն այնորիկ՝ բազում անկարդութիւնս մտանէ յեկե-  
ղեցի: Իսկ այնոքիկ, որ զերկոսեան տեսարանս աշաց  
խաւարեալս ունիցին ի լուսոյ, այսինքն՝ զի են տգէտք  
աստուածալին զիտութեանց և են պղերդ յամենայն  
40 գործս արդարութեան, մանաւանդ թէ՝ և ճակառակօքն  
լցեալք և յանդգնին տալ զանձինս յառաջնորդութիւն  
եկեղեցոյ, որ և զբաղումս տեսանեմք յայսպիսեաց ի  
մերումս թշուառացեալ ժամանակի ձեռնամուխ եղեալ  
յայսոսիկ, լինին այնպիսիք ըստ տէրունական առա-  
45 կին՝ «Կոյր կուրի յորժամ առաջնորդէ, ասէ, երկոքին  
ի խորխորատ անկանիցին»\*, որք ոչ յԱստուծոյ, այլ ի  
սատանայէ շարժեալք՝ զիմեն յառաջնորդութիւնն յայն՝  
ի կորուստ ինքեանց և առաջնորդելոցն:

Վասն այնորիկ՝ և մեք զաստուածալինս բանի  
50 խրատու սերմն յայնց առաջնորդաց յոզիս սերմանես-  
ցուք, որք օրինօքն Աստուծոյ վարել յօժարին զառաջ-  
նորդութիւնս իւրեանց, որք Աստուծով սկսանին և առ  
Աստուած կատարեացին:

\* Մատթ. ԺԵ. 14

27 CDG չի՞ բանզի միականեաց նմանի այնպիսին

45 Յ կարի ասէ, առաջնորդէ սխալ է և երկոքին

50 Յ սերմանց փխ սերմն յայնց

54 Յ չի՞ յօժարին

Առ որս և ասեմք, մի՛ անփոյթ առնիցէք զաշա-  
կերտելոց եղբարցն ի հոգւոյ ինչ վտանգս անկեալ ու-  
րուք, կամ ի մարմնոյ. քանդի համարս տալոց էք ընդ  
իւրաքանչիւրոցն: Մի՛ զնիւթականին գործոյ միայն  
պահանջել զկատարումն անթերի, և զհոգեոր գործոյ  
դառ ի նոցանէ կատարելոյ անփոյթ առնել, այլ ի  
վատթարաց զգուշանալ և լաւագունիցն պատկառ կալ՝  
միշտ խրատ տալով, զոր մանաւանդ պահանջէ ձեն և  
կարգն, զոր ընկալան: Վասն զի այսմ կարգի է մեռեալ  
լինել աշխարհի և աշխարհական իրաց, և կենդանի  
Քրիստոսի և նորին պատուիրանաց, ըստ խրատուն  
Պօղոսի. զի զայդի օրինացն կոչեցան գործել, և ոչ  
զարտաքնոցն մշակութեան գործ: Եւ որ այն միայն  
գործէ աստ, և ի հոգեորացն ոչ բնաւ, կամ զնիւթա-  
կանսն ի բոլոր սրտէ, և զաննիւթն ի հարկէ և առ աշւ  
մարդկան, ոչ եղել լսելի ներքին ականջօք տէրունական  
հրամանին, թէ «Գործեցէք՝ մի զկորստական կերա-  
կուրն, այլ զայն, որ տանի ի կեանսն յակիտենից»\*:

Գործել արժան է և զայս, քանզի դատարկութիւնն  
շար է, որպէս և Պօղոս խրատ տայ, մանաւանդ զի և  
օրէնս զնէ, եթէ «Որ գործիցէ ոչ՝ և կերիցէ մի»\*\*, զոր  
և ինքն կատարէր յասելն՝ «Զցայգ և զցերեկ գործէաք  
առ ի շծանրանալոյ ումեք»\*\*\*, և թէ «Զեռքս այս պաշ-  
տեցին զիս, և որ ընդ իսն էին»\*\*\*\*: Բայց յաղագս  
մարմնական գործոյն զհոգեորսն անտես առնել իբրեւ

\* Յովէ. Զ. 27

\*\* Բ. Թէս. Գ. 10

\*\*\*\* Բ. Թէս. Գ. 8

\*\*\*\*\* Գործք. Ի. 34

60 F Հպատակ Փիս պատկառ

61 G Ճիֆ միշտ խրատ տալով

62 B և Փիս է C կարգ իցէ

66 G ոչ Փիս որ

69 B լուս

զաւելորդ իրս՝ յոյժ վատթարագոյն է աշակերտելոց  
80 բանին: Քանզի պարտ է, որպէս երկրորդ է մարմին  
Հոգւոյն, առաջին զհոգւոյն հոգալ կերակրոց, որ ին  
ազօթք և ամենայն բարեգործութիւնք, և ապա՝ զմարմ-  
նոյն և զմարմնականաց, զի և առ մարդիկ նախ տէրն  
կերակրի՝ սպասաւորեալ ի ծառայիցն, և ապա ծառայ-  
քըն. ի նշխարէ տերանցն: Եւ ի մեզ՝ քանզի մարմինն  
ծառայական է և Հոգին տիրական և կամք մտացն դա-  
տողական, արժան է դատողականին ի կարգի պահել  
զերկաքանչիւրսն: Յառաջադոյն զհոգին կերակրել Հոգե-  
վորական կերակրօք ի ձեռն մարմնոյն սպասաւորու-  
թեան, և ապա զմարմնականացն հոգալ՝ Հոգւոյն իմաս-  
տութեամբ և տնօրինութեամբ:

Արդ, յայսոսիկ և որ նման սոցա բարեկարգու-  
թիւնս՝ պահեսչիք զմիաբանութիւն եղբայրութեան ձե-  
րոյ:

95 Դարձեալ՝ մի կողմնաւոր բարուք զոմանս սիրել՝  
ջոկս առնելով և զոմանս անտես առնել, ոմանց աւե-  
լորդօք բերիլ ի պէտսն, և ալլոց՝ և ոչ հարկաւորօքն  
բաւականանալ, այլ սէրն հասարակաց եղիցի՝ ըստ  
սրբոյն Բարսղի կանոնադրութեանն, և պատիկ՝ որոց  
100 վայել է:

Իսկ կերակրոցն բաշխումն՝ ըստ շափոյ աշխատու-  
թեանն առ իւրաքանչիւրսն լիցի՝ առաւելութեամբ և  
նուազութեամբ: Զծերացեալսն և զվտանգեալսն, որք  
զմանկութեան ժամանակն և զօրութիւն անձանց ի  
105 յաշխատութիւնս եկեղեցւոյն ծախեցին, մի բարձի թո-  
ղի առնիցէք, որպէս ոչ ժամանակին պիտանացուք, զի  
մի բարկասցի Տէր, քանզի թէ՝ օտարաց վտանգելոց,  
նաև թշնամեաց՝ խնամ տանել հրամայէ Քրիստոս և

81 Ծի՛ առաջին զհոգւոյն

84 Գ ծի՛ սպասաւորեալ

86 Ե ծի՛ և կամք մտացն դատողական

ողորմել, և պատուհաս սպառնայ, որք ոչն առնեն, քա-  
110 նի՞ ևս եղբարցն և անդամոց եկեղեցւոյն: Վասն որոյ,  
զծերս պատուեցէք և ծերատածեցէք, ըստ Հրամանին  
առաքելոյ, և զտկարացեալսն խնամարկեցէք տեսլու-  
թեամբ և պիտոյից նոցա պատրաստութեամբ՝ ըստ  
115 շափոյ զօրութեան ձերոյ: Դիտեմք, զի այսպիսեաց բա-  
րեկարգութեանց խափանելոյ աղքատութիւն ժամանա-  
կիս է պատճառ, բայց ոչ զառաւելն, այլ զյօժարութիւն-  
կամացն և զկարն պահանջէ Աստուած:

Մի զնուիրեալն յեկեղեցիս՝ կամ կենդանւոյ միա-  
բանութեան, կամ մեռելոց յիշատակի, անձին միայ-  
120 նոյ սեպհականեսցէ առաջնորդն, այլ ի պէտս եկեղեց-  
ւոյն ծախիցէ: Զնոյն և հատուցէ եկեղեցեաւն դժոգե-  
վոր պարտսն, զի մի յարդար դատաստանին աւուր  
պահանջեսցէ իւրաքանչիւր ոք զտուեալն, և զի՞ ոչ  
ունիցի յայնժամ հատուցանել, զիւրն առեալ բարեգոր-  
125 ծութիւն՝ փոխարէն տայցեն:

Եւ թէ առաջնորդն առաջին՝ զոր առ յաւուրս իւր Ե  
ծախս եկեղեցւոյն վատնեաց հաստատուն վկայիւք և  
ոչ ժամանեաց յաղագս օրհասին մահու կանխելոյ՝ հա-  
տուցանել զպարտսն, երկրորդն, որ զկնի նորա ժա-  
130 ռանգէ զառաջնորդութիւն եղբայրութեանն, պարտական  
է վճարելոյ և, եթէ անտես առնէ, ունի տոկոսեօք վճա-  
րել առաջի Քրիստոսի: Իսկ եթէ ոչ վկայեն նմա ի պէտս  
եկեղեցւոյն առնել զառեալն, ինքն՝ որ էան, հատուցէ  
ի հանդերձելումն:

135 Մի ոք ինքնակամ ախտիւ շարժեալ՝ կաշառանօք  
աւագաց յափշտակեսցէ զառաջնորդութիւն վանաց՝ ա-  
ռանց ժամանակին առաջնորդի քննութեան և Հրամա-

111—112 Յ շիք ըստ... խնամարկեցէք

119 Յ շիք անձին

123 Յ իւրոք վիս իւրաքանչիւրոք

131 Յ ծախել վիս առնէ

132 Յ ոք ոչ

նի, քանզի երկու են պատճառ իրաւացի փոխելոյ գվանաց առաջնորդս. կամ՝ վասն զանարժանս գործելոյ արտաքոյ օրինաց Աստուծոյ, և այն՝ ձշմարիտ վկայիք, կամ՝ եկեղեցոյն ոչ շինութեան, այլ աւերման լինելոյ պատճառ: Եւ առանց այսոցիկ, եթէ յանդկնի ոք հակառակ յառնել, մեղանչէ յօրէնս Աստուծոյ:

Եւ զոր ինչ միանգամ կանոնեալք են և եղեալ ի բանս սրբոց հարցն յաղագս առաջնորդաց՝ առ ի խրատ և յուղղութիւն ի բանս, ի գործս և յամենայն բարեձեղ վութիւնս կարգաւորութեանց, զամենայն բարեացն զտիպսն և զօրինական փութացիք յանձինս ձեր նկառագրել: Եւ թէ և զամենայնն ոչ էք բաւական կատարել յաղագս ձմեռն գոլով ի բարեաց ժամանակիս, զոնէ զյուղվան գործով կատարեցէք և առ պակասեալսն զյօժարութիւն կամաց ունիցիք, և զղումն և տրտմութիւն վասն պակասութեան:

Զի յորժամ յայսոսիկ հաստատիցէք զմիտս, հակառակ բարւոյ ոչ կարէ տեղի գտանել յոգիս ձեր:

Վասն որոյ և մեր աղալեսցուք զՏէր, զի առաջնորդացդ և առաջնորդելոցդ յաջողեսցէ և յերկնայինն հետեւ հանապարհ՝ մեօք հանդերձ, զի ամենեքեան արժանացուք խոստացելոց բարեացն, որ ի Քրիստոս

160 Յիսուս՝ ի Տէր մեր:

139 D չի՛ վանաց

143 B յայտնել փխ յառնել

146 B բարեգործութիւնս

150 G առ ձեռն կարճ փխ ձմեռն

160 CDF չի՛ ի տէր մեր G մեր ամեն H չի՛ Յիսուս ի տէր մեր

ԱՌ ԱՌԱՋՆՈՐԴՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ՝ ՈՐ ԵՆ ՑԱՇԽԱՐՁԻ, ՈՐ  
ԿՈՉԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԽՔ

Խօսեցուք և առ դասս հպիսկոպոսաց սրբոց, որ  
էք տեսուչք կարգեալք յԱստուծոյ՝ Հոգոց հաւատացե-  
5 լոց, որ են յաշխարհի, որ թէպէտ և ըստ կարգի երկ-  
րորդ եգաք յաղագս բարեկարգութեանն՝ նախ առ վա-  
նականսն, սակայն ըստ աստիճանի՝ առաջին էք:

Զորս աղաշեմ նախ քան զամենայն՝ ի միտս ձեր  
դալ և ճանաշել իմաստութեամբ զաստիճանիդ, զոր  
10 ունիք, զբարձրութիւն և զգործ, եթէ ուստի՞ սկսաւ, և  
վասն է՞ր եղաւ, և զի՞նչ հրամայեցաւ առնել յայնցա-  
նէ, յորոց համատեցին զսաւ: Զի յորժամ զայսոսիկ  
գիտիցէ ոք, որպէս պարտն իցէ գիտել, մի ի յերից  
աստի շահիցի, կամ ճանաշելովն զծանրութիւն սորա  
15 և զդուարակրութիւն, և ոչ յօժարութեամբ դիմել իբր  
ի զիւրին իրս և ի հեշտալիս՝ գիտելով զիւր տկարու-  
թիւնն, այլ ի բաց հրաժարել, թէկ բռնադատիցի յիւ-  
րոց մտացն ախտից կամ ի մերձակայից՝ որպէս և  
առաջին սուրբքն արարին և ուսուցին. կամ թէ լանձն  
20 առցէ զլինելն, փութայ ըստ հաճոյիցն Աստուծոյ կա-

1 Ե Տեառն ներսեսի Հայոց կաթողիկոսի ասացեալ առ Ծ Ճի՛ առ  
Գ տեառն ներսեսի ասացեալ առ Ա որ կոչին այցելուք որք են հպիսկոպոս

6 Ե վանականսն և ապա առ որս յաշխարհ են առաջնորդ խօսելով

9 Ծ գրեալ փիս գալ

13 Ե գիտեցէք փիս գիտիցէ ոք

14 Ե Ճի՛ սորա

15 Ե Ճի՛ զդուարակրութիւն

տարել զտնտեսութիւն գործոյն, կամ թէ՝ ոչ արացէ զանարժանն՝ ճանաշէ զպակասութիւն բարոյն եղեալ յինքեան և զվնասն, և խղճիւ մտաց իրոց դատէ զանձըն՝ յանցաւոր զինքն համարելով:

25 Արդ, թէ՝ ուստի՞ սկսաւ ասացուք:

Սկիզբն եպիսկոպոսութեան եղեւ յայնմանէ, ոք երդմամբ առ զքահանայութիւնն ի Հօրէ, ըստ կարգին Մելքիսեդեկի. ոչ ըստ աստուածութեանն, այլ ըստ մարդկութեանն, ոչ յանբանից մատուցանելով պատարագս, ըստ ահարօնեան քահանայութեանն, այլ զանձն իր մատոյց կամաւոր պատարագ ի վերայ խաշին՝ Հօր, վասն ընդ մեզ հաշտութեան: Եւ զնոյն քահանայապետութիւն, զոր ինքն ի Հօրէ ընկալաւ յաղագս խաշին մահու ի վերայ այնոցիկ, զորս զնեաց արեամբն իւրով, շնորհեաց աշակերտաց իրոց ի ժամանակի համբառնալոյն յերկինս, ըստ աւետարանին Ղուկայ, թէ՝ «Եղ ձեռս ի վերայ նոցա և օրհնեաց զնոսա»\*, և ապա ինքն, ասէ, վերանայր յերկինս, զնոյն օրինակ պահանջելով և ի նոցանէ, թէ՝ որպէս ևս ոչ հեշտութեամբ, 40 այլ շարշարանօք և մահուամբ ընկալայ զքահանայութիւն ի վերայ ազգի մարդկան, և գուք նմանապէս մահու շափ նահատակեցարուք ի վերայ ոշխարաց հօտի իմոյ, զոր ստացայ արեամբ իմով. որք և արարին, ըստ հրամանին՝ մեռանելով ի վերայ ժողովրեանն, 45 որ հաւատացաւ նոցա ի Տեառնէ:

Եւ յորժամ հանդերձեալ էին առաքեալքն Քրիստոսի ելանել յաշխարհէ, ընտրէին ի հաւատացելոց անտի արս երկիւղածս և իմաստունս և կացուցանէին փո-

\* Ղուկ. իդ. 50

21 BG որ փի ոչ

23 B չի՛ իւրոց

31 C չի՛ պատարագ

32—34 EF չի՛ վասն... մահու

43 B որ փիս որբ

խանակ իւրեանց զլուխ ժողովրդեանն ի քաղաքս, և ի  
50 գաւռոս, զորս և հպիսկոպոս անուանեցին, որ թարգ-  
մանի՝ տեսուշ:

Արդ, այս թէ ուստի՞ սկսաւ՝ ասացաք:

Թարտ է զիտել և զայն, թէ յաղազս որո՞յ պատ-  
ճառի եղաւ ի Քրիստոսէ և յառաքելոց նորա այս գործ  
55 եպիսկոպոսութեան, յայտ է թէ՝ վասն լինելոյ զլուխ և  
Հրամանատար քահանայից և ժողովրդոց, և որպէս  
զգէտ աննիբէ՞ աչօք մտացն նայել ի վերայ ամենեցուն՝  
զթիւրեալսն ուղղել և զուղիղսն հաստատուն պահել  
յուղպութեանն:

60 Եւ թէ զի՞նը Հրամայեցաւ լինել եպիսկոպոսին և  
կամ զի՞նը առնել, զայս Պօղոս յայտ առնէ առ Տիմո-  
թէոս զրելովն, թէ՝ «Պարտ է եպիսկոպոսին անարատ  
լինել»\* որպէս Աստուծոյ տնտեսի, հեզ, ցած, պար-  
կեշտ, հիւրասէր, բարեսէր, արդար, սուրբ, ժուժկալ,  
65 մի՛ արծաթասէր, մի կոռուղ, մի՛ հարկանօղ, այլ հան-  
դարտ և այն ևս:

Անարատն ասելովն, յամենայն արատոյ, որ ըստ  
Հոգույ և մարմնոյ իցեն, մաքուր լինել Հրամայէ:

Իսկ որպէս Աստուծոյ տնտեսի՝ զայս յայտ առնէ.  
70 զի թէ մարդիկ նիւթական գոյից իւրեանց տնտես զա-  
նարատսն ասէ ընտրեն լինել, այսինքն՝ որ ոչ գո-  
ղասցի աւազակօրէն, և ոչ հեղգայցէ ի ինամ տանե-  
լոյ զոյիցն և ի պահպանութենէ, քանի՞ ևս արժան է  
անարատութիւն և արթնութիւն և զգուշութիւն ունել  
75 տանն Աստուծոյ տնտեսաց, որ է եկեղեցի սուրբ, ոչ  
զնիւթականս ասեմ զեկեղեցւոյ, այլ զհոգիս մարդկան,  
որք շինին տաճար Աստուծոյ կենդանուոյ, զորս պարտ է

\* Ա. Տիմոթ. Գ. 2

64 Ծիր սուրբ

65 Յ հակառակող վիս հարկանօղ

71 Յ շիր այսինքն

որչափ զօրութիւն իցէ Աստուծոյ տնտեսին անխախտելի պահել զշինուածս աստուածաբնակ տաճարացն,  
80 և ոչ տալ դողանալ սատանալի իւրով պղերգութեամբն  
ի հոգեսր գանձուց անտի, ոչ դիւր և ոչ յորոց զտնտեսութեանն ունի դործ, տացէ նոցին օք ըստ օրէ և զբանին կերակուր ի ժամո՞ւ ըստ տէրունական հրամանին:  
Հեզ, ցած, պարկեցա. Հեզութեամբն յուշ առնէ  
85 նմանօղ լիւել Մովսիսի և Դաւթի՝ որք ի հնումն էին  
Հովիւր ժողովրդեանն իսրայէլի, թէ նոյնպէս պարտ է  
և նորոց Հովուացս Հեզութեամբ և հանդարտութեամբ  
Հովուել զժողովուրդս, որպէս Հովիւր՝ զհօտս, և ոչ ճո-  
խութեամբ և սաստկութեամբ՝ ըստ աշխարհի իշխա-  
90 նաց: Իսկ ասելովն թէ՝ ցած, զիսնարհութեանն ուսու-  
ցանէ, զի անդէպ է եպիսկոպոսին Հպարտութեամբ և  
գոռողութեամբ լիւել առ հնազանդեալ ժողովուրդսն,  
որպէս զգործակալս բոնաւորաց, այլ Հեզութեամբ և  
խոնարհութեամբ բերիլ առ ամենենեան, որպէս և  
95 Քրիստոս յայսոսիկ զինքն տայ օրինակ, «Ուսարուք լի-  
նէն, ասէ, զի Հեզ եմ և խոնարհ սրտի»\*: Եւ դարձեալ  
ցուցանելով զոր ի խոնարհութենէն օգուտն և զառ ի  
Հպարտութենէն վնասն՝ ասէ, «Ամենայն՝ որ բարձրա-  
ցուցանէ զանձն՝ խոնարհեցից, և որ խոնարհեցուցանէ  
100 զանձն՝ բարձրացի»\*\*: Եւ Պօղոս զգուշացուցանելով  
զՏիմոթէոս, զի մի զանկատարսն հոգեսր և մարմնա-  
ւոր Հասակաւ վերակոչեցէ յաստիճան եպիսկոպոսու-  
թեան, ասէ՝ «Մի մատաղատունկ, զի մի Հպարտացեալ  
ի դատաստանս անկցին սատանալի»\*\*\*: Քանզի սատա-

\* Մատթ. ԺԱ, 29

\*\* Մատթ. ԻՒ, 12

\*\*\* Ա. Տիմոթ. Գ, 6

81 Ե իւրոցն որ վիս յորոց Ը զտնտեսին վիս զտնտեսութեանն

82—83 Ը վիմ ունի... զբանին

89 Ե հանդարտութեամբ վիս սաստկութեամբ

90 Ե խոնարհութեանն էն

91 Ե Հպարտութեան են

105 նայ ընդդէմ արարչին Աստուծոյ հպարտացեալ՝ և վասն  
այնորիկ անկաւ յերկնից, և պարտական է յափտենա-  
կան դատաստանացն և մշտնջենաւոր տանջանացն:  
Վասնորոյ, հրամայէ, թէ՝ ցած, զի մի նորին ախտիւն  
ըմբռնեալք՝ նորայն դատաստանի և պատժոց կցորդք  
110 եղիցին:

Պարկեշտ. պարկեշտն անուն՝ մի է, բայց առ ամե-  
նայն շարժումն հոգույ և մարմնոյ պատշաճեալ բերի  
պարկեշտութիւնն՝ ի բանս մի շատախօս լինել, ի կե-  
րակուրս և յըմպելիս և ի զգեստս մի աշխարհօրէն բե-  
րիլ, այլ ըստ նոցա նմանութեան, որոց խաչեալ է աշ-  
խարհ: Նաև յընթացս ճանապարհի ոչ երկելի և կազ-  
մեալ երիվարօք և կամ կիսիշօք<sup>92</sup> ամբարձեալ եղիցին  
ի բարձրն կոյս, այլ վասն զտկարացեալ մարմինն միայն  
բառնալոյ, ըստ պատշելոյ կրողին: Եւ ոչ սրբնթաց  
120 ձիովք շահատակել, և շամբք և բազէիւթ որսականօք  
բերիլ առ երէվայրիս և թոշունս, որպէս լսեմք զոմանց,  
թէ՝ իցին: Որ այնքան պատշաճի այսմ ձեռյ ունողաց  
այս գործ, որպէս թէ՝ զգտակ կարմիր դիցէ ի զլուխ իւր  
կրօնաւորն՝ փոխանակ քուսիթայի, և զգեստ բեհեղեայ  
125 ընդ ասուոյ և այծեաց: Եւ կերակուրքն և ըմպելիքն ոչ  
յաճախութեամբ և անկարգութեամբ, այլ պարկեշտու-  
թեամբ և չափաւորութեամբ եղիցին, ըստ Աստուածա-  
շունչ գրոց խրատու: Եւ բանք բերանոյն մի անմտաբար  
խեղկատակութեամբ կամ աշխարհօրէն, զառականս  
130 կամ զանկածութիւնս ի լեզուն յեղյեղլով անարգել զոք,  
այլ բզիսեցէ սրտիւն զբան բարի՝ ըստ մարգարէին, ի  
յօդուտ և ի շնորհս լինել լսողաց՝ ըստ առաքելոյն, և

108 Յ չի՛ թէ Յ ցած լինել

111 Յ պարկեշտ անունն շատախօս լինել ի բան մեր

119 Յ չի՛ ըստ պատշելոյ

123 Ե չի՛ ք զլուխ իւր ԴԻ չի՛ իւր

125 Յ և ընդ այծեաց

130 Յ յեղոնզ

մի ի վնաս և ի տաղտկութիւն և ի պատճառս աղար-  
տելոյ զառաքելականն աստիճան:

135 Հիւրասէր. ըստ Աբրահամու և Ղովտայ և այսց  
նահապետացն, որք այնշափ գտան Հիւրասիրութեամբն  
հանդոյք Աստուծոյ, մինչ զի և զԱստուած, Հանդերձ  
Հորեղտակօք, ընկալան և պատուասիրեցին: Եւ ոչ ասէ  
Հիւրընկալ, այլ Հիւրասէր, քանզի Հիւրընկալութիւն է  
140 երբէք, զի ի Հարկաւոր ինչ պատճառէ լինեցի, կամ ի  
լու ութեաէ, կամ ի պատույ երեսաց, կամ գովութիւն  
և կառս որսալոյ ի պատուասիրելոցն: Իսկ սիրով ըն-  
դունելութիւն յայցանէ յամենեցունց աղատ է, որով  
145 և խնուրութեամբ ընուռնի զեկեալ Հիւրսն և ոչ տրտմու-  
թեամբ, և զուարթ ցուցանէ կերպարանս և ոչ խոժոս,  
և թախծեալ դէմս և ոչ գժղմնելով ինչ բարբառի բանս,  
այլ ուրախարար և խրախճանականս, որ յոյժ լաւա-  
գոյն է Հիւրոցն, քան զկերակուրսն:

Վասն այսր պատճառի հրամայէ եպիսկոպոսաց և  
150 քահանայից, նաև ամենայն քրիստոնէից\* ոչ միայն  
Հիւրընկալ, այլև Հիւրասէր լինել:

Յարեսէր. և ո՞ր են բարիին, զորս հրամայէ սիրել-  
ոչ զկարծեցեալ բարիսն, որ են ախտաւոր բարիք  
մարմնականք, կամ Հոգեկանք և նիւթք աշխարհի, այլ  
155 նախ և առաջին զՃշմարիտ բարին սիրել զԱստուած,  
որ է սկիզբն և աղբիւր բարութեան, երկրորդ՝ զպա-  
տուիրանս նորա որ է բղխումն յաղբերէն բարեաց յԱս-  
տուծոյ, ըստ Դաւթայ, թէ՝ «Սիրեցի զպատուիրանս քոյ  
160 քամենայն ոսկի և զտպազիոն»\*. երրորդ, զորս ի  
մարդկանէ լինին բարիք: Իսկ զհակառակ բարոյն

\* Սաղմ. ՃԺԲ. 127

133 Ե պատճառ ուղարկելոյ

146 ԵԿ գժղմնելով

154 Յ շի՛ կամ Հոգեկանք

159 Յ շի՛ զամենայն շի՛ և զտպազիոն

զշարն, այսինքն՝ զսատանայ, և զորս ի նմանէ սերմանեալ զմեղս ատել և ի բաց դառնալ, ըստ նորուն Դաւթայ, թէ՝ «Զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի»\*: Նաև դշարասէրն և դանդարձոն ատել և ի բաց դառնալ, լորոց յետ բազում անգամ խրատելոյն և ոչ դառնալոյն՝ հրաժարել հրամայէ տէրն, և համարել որպէս զհեթանոս և զմաքսաւոր:

Մրգար. արդարութեան անուն մի է, բայց զամենայն պարունակէ յինքեան զմասում բարեաց, որ 170 ուսին զնա: Որպէս և արդարարքն առաջինք, որք վկայեցան յԱստուծոյ՝ Յօր և Զաքարիա և Յովսէփ և այլք բազումք ըստ նոցին օրինակի պարտ է լինել, ասէ և հպիսկոպոսին՝ արդար և ճշմարիտ առաջի Աստուծոյ և մարդկան, և արտաքոյ ստութեան և անիրաւութեան՝ ի բանս և ի զործս:

Սուրբ. առաջին սուրբ այն է, որ մաքուրն է՝ յամենայն ախտից, որ պատերազմին ընդ ողին, որ ոչ խոցուածս ընդունիցի ի սկզբանն և ոչ դեղոց կարօտանայցէ: Երկրորդ՝ սուրբ է, որ թէպէտ և Հարկանիցի ինչ նետիւք բժից, ոչ ասեմ մինչ ի կատարումն ոչ լինի ի ներքոյ անկեալ թշնամոյն, միշտ խոցուելոյ զողին՝ Հեղտութեանցն ախտից տեղի տուեալ, և երկրորդ բնութիւն զնոյն սովորութիւն առնելով, այլ, մանաւանդ, զանցեալ խոցուածսն բժշկեցէ դեղովք ապաշխարութեան և յառաջակայիցն՝ զինուք ազօթից և պահոց պահպանութեամբ զգայարանացն զգուշանալ. ոչ վերստին խոցութիւն սովորական նետիւքն, այլ այնքան

\* Սաղմ. ՃԺԸ. 163

165 Յ շին յորոց

174 Յ շին և անիրաւութեան

182 Յ հեղտ յանկութեանցն վիս Հեղտութեանցն

186 Յ զգուշանալով վերստին

ատել զնոսա, մինչ զի յիշատակ նոցին ոչ հեշտութիւն,  
այլ տրտմութիւն բերել մտացն:

190      Արդ, որ յայսմ մասին է յառաջնոյն կամ յերկ-  
րորդիս, նա է սուրբ և այսմ առաքելական աստիճանի  
արժանաւոր, իսկ որ ախտիցն յօժարութեամբ տուեալ  
տեղի է՝ ոչ պատերազմի ընդ նոսա, այլև խնամով  
թաքուցանէ յինքեան զիսմորն շարութեան, և միշտ խո-  
195 ցեալ ոգով ոչ ատեայ զիսոցմանն պատճառս. այլև  
սիրէ ևս և ոչ բժշկել փութայ զիսոցուածն, այլև օր  
ըստ օրէ նորոգել զվերսն, ոչ է, և ոչ ասի սուրբ այն-  
պիսին, և ոչ ընտրութեամբն Աստուծոյ կոչի սպասա-  
ւորել աստուածայնոցն, այլ իւրով ախտիւն շարժեալ  
200 ըստ ներելոյն Աստուծոյ ձղի յայնոսիկ՝ ի կորուստ  
անձին և բազմաց:

Ժումկալ. Ժումկալութիւնն իբրև նիւթ և տեղի իմն  
է ամենայն առաքինութեանց, զի որ կրէ յինքեան զառ  
ի շարեաց ժումկալութիւն, կրէ և զրովանդակ մասունս  
205 բարեաց. և որ ոչ ունի զսա, անհաստատ է յամենայն  
բարութիւնս, զի թէպէտ և յօժարի ի բարիս և սկսանի,  
այլ ոչ կատարէ, որպէս այն, որ կամեցաւ առանց խոր-  
հելոյ շինել աշտարակ:

Եւ ժումկալութեան սահման այս ինչ է. յամենայ-  
210 նէ, յորոց օրէնք Աստուծոյ հրաժարեցուցանեն զմեզ,  
պարտ է ժումկալ լինել. առաջին՝ խորհրդոցն վատթա-  
րաց ոչ տալ տեղի առ միտսն, այլ ընդդէմ կալ ժում-  
կալութեամբն և հալածել ի սրտէն, զի մի և կատարու-  
մըն հետեւսցի: Զնոյն ժումկալութիւն պարտ է և աշա-  
215 ցըն զնել պահապան, ոչ բոնադատիլ հեշտութեամբ ի

188 G չի՞ այլ տրտմութիւն

190 G չի՞ որ

191 B չի՞ առաքելական

198 G սպասավորութիւն

211 B առաջի

յալրատ հայեցուածս կամ ի շարակնութիւնս, այլ անարատապէս հայել յարարածս Աստուծոյ. և ականջացն՝  
ոչ յօժարութեամբ ունկնդիր լինել վնասակարաց բանից, այլ օգտակարաց. և լեզուոյ՝ ոչ խօսել զայն ինչ  
220 բանս՝ որով արտաքինքն վարին, որ է անվայելուզ սրբոյ աստիճանին, այլ զպիտանին և զզովելին. և սրտի՝ ոչ բարկանալ տարապարտոց, այլ հեզ լինել. և ձեռաց՝ ոչ յանիբարափ զոք հարկանել, այլ վաստակի զբարիս և յաղօթս ամբառնալ. և բերանոյ՝ ոչ մերձենալ տուաժամ ի կերակուոս, այլ պահօք դաստիարակիլ. և ոտից՝ ոչ զնալ ի շաւիզս գայթակղութեան ոգուց, այլ ի հանապարհս արդարութեան. և ոչ և միոյ անդամոյ թոյլ տայ ժուժկալութիւն, որ ունի զնա, շարժիլ ի վատթարագոյնսն: Արդ, այսոքիկ և որ սոցին  
225 նման՝ ժուժկալութեան գործ:

Մի արծարաէր. արծաթասիրութիւնն՝ զոր մայր ասէ Պողոս ամենայն շարեաց, թէպէտ և ամենայն ուժմեր և յամենայն գործս՝ յորում են մարդիկ, վնասակար է, առ թագաւորս և դատաւորս առ իշխանս և գործակալս, և առ ամենայն ոք, որ յաշխարհի հա, բայց առաւել առ Յովեոր առաջնորդութիւնս: Քանզի առ աշխարհի իշխանութիւնս՝ ըստ մարմնոյ առնէ վնաս ուժմեր, կամ անիրաւ դատելով կամ զրկելով, կամ յափրշտակելով կամ զրպարտելով, կամ գողանալով կամ սպանանելով, կամ ոռ յայսպիսեաց իցին. հսկ առ Յովեորս այս զ՛ոգիս վնասէ: Քանզի յայսմ ախտէ է դանարժանս յառաջ կոշել յաստուածայնոցն սպասաւորութիւն ի կորուստ կոշողացն և կոշեցելոցն, և զաքժանաւորս յետս կացուցանել, զպիղծս՝ իբրև զուրբս,

219 Ե չի՞ զայն

220 Ե ընթանալ փիս զնաւ

234 Ե չի՞ դատաւորս առ ԾՀ դատաւորս և իշխանս

238 Ե չի՞ անիրաւ

243 Ե սուտ փիս կորուստ

245 և զսուրբս՝ իբրև զպիղծս վարկանելով. և բիւրք են առ  
ի նմանէ խառնափնդորեալ կարգք յեկեղեցւոց, որք խո-  
տելիք են Աստուծոյ, զորոց Դաւիթ ասէ Հոգւովն, թէ՝  
«Խոտեսցին այնոքիկ, ոյք ընտրեալ են արծաթով»\*:  
Վասն այնոքիկ Հրամայէ առաքեալն վասն եպիսկոպո-  
սաց, թէ մի՛ արծաթասէր, մի՛ կռուող, մի՛ հարկանօղ,  
քանզի թէ Քրիստոսի ես աշակերտ, մանաւանդ թէ՝  
փոխանակ զհեզութեան նորին ընկալ զօրինակ, որ-  
պէս Հրամայէ աշակերտելոցն, թէ «Ուսարուք լինէն,  
զի Հեզ եմ և խոնարհ»\*\*. զորմէ և Եսայի ասէ, թէ՝ «Ու  
255 աղաղակեսցէ, և ոչ վիճեսցի»\*\*\*. և ինքն իսկ Տէրն  
երանի տայ Հեզոց և խաղաղարարաց:

Եւ զի ոչ ամենայնիւ ներօղ պարտ է լինել և հեզ  
առաջնորդին, այլ առ յանցաւորս զսաստն ի կիր ար-  
կանել. տայ և այնմ օրինակ, զի առեալ խարազան և  
260 եհան արտաքս զվաճառականսն ի տաճարէն, և այն զի՝  
շուանեայ և ոչ ի կարծր նիւթոց:

Խրատէ զառաջնորդս՝ ոչ զդառնութիւն միայն ի  
կիր արկանել առ յանցաւորս, այլև քաղցրութիւն և նե-  
րողութիւն ունել ի սաստելն, վասնորոյ յաւելու ասել,  
265 թէ՝ այլ Հանդարտ. և զհանդարտութեան շափ տէրու-  
նականն ուսուցանէ խրատ, որ ոչ միայն զինքն, այլև  
զընդիմակն Հանդարտ առնէ. զի յիտ միոյ դիմաց ապ-  
տակին՝ զերկորդն մատուցանել Հրամայէ առաջի անի-  
րաւին, որով թէ և քան զգագանս խստագոյն լինիցի: Եւ ինքն Քրիստոս ոչ

\* Սաղմ. Կէ. 31

\*\* Մատթ. ԺԱ. 29

\*\*\* Ես. ԽԲ. 2

248 BE շի՛ այնոքիկ

249 CD շի՛ վասն

255 B շի՛ տէրն

260 G շի՛ արտաքս, զայն վխ այն զի

267 ACDEFGH զդիմակն

270 B Քրիստոս Յիսուս ոչ աղաղակարաներ

աղաղակէր և ոչ վիճաբանէր, այլ որպէս զոշնար ի  
 սպանդ վարիր՝ ըստ Եսայեայ, զնոյն նմանութիւն  
 պարտ է և առաջնորդաց եկեղեցւոյ բերել յինքեանս,  
 բայց ոչ առ ամենայն ժամանակի: Քանզի յիրոյ ան-  
 ձին արհամարհութիւն, որ յանիրաւաց, բարոք է հան-  
 գարտութիւն և վարձուց արժանաւոր: Իսկ յորժամ զառ-  
 տուածային պատուիրանս տեսանէ արհամարհեալ  
 յանզգամաց, առ այնպիսին ոչ զհանդարտութիւն, այլ  
 զբարեկութիւն ի կիր արկանի արժան է, ըստ բարոյ  
 280 նախանձուն Եղիայի վառելով, որպէս և Տէրն, յորժամ  
 առ ինքն ձգէին զնախատանացն բանս՝ դիւահար կո-  
 շելով, ներելով տայր պատասխանին ասելով՝ «Յիս  
 գե ոչ զոյ»\*: Իսկ յորժամ ոռ Հայր և Հոգին, ցանոյր  
 և վրէժինդիր լինէո, այսինքն՝ յորժամ նոքա, որք  
 285 զգործսն սատանայի գործէին, Հայր կոչէին զԱստուած,  
 ասէք՝ «Դուք ի Հօրէ սատանայ էք»\*\*: և յորժամ զգոր-  
 ծըս Հոգոյն՝ թէնզգեբուզայ՝ իշխանին դիւաց տային,  
 ասէր թէ՝ «Ամենայն որ ասէ բան զՄրդոյ մարդոյ թող-  
 ցի նմա, բայց որ զՀոգին Սուլը Հայցոյէ, մի՛ թողցի  
 290 նմա»\*\*\*: Այսորիկ և սոյնպիսիքս հն բարոք, և ըստ  
 կամացն Աստուծոյ՝ եղբեմն Հանդարտութեան, և եր-  
 բեմն ոչ Հանդարտութեան օրինակը, որոր առաջեալն  
 հրամայէ ունել եպիսկոպոսին:

\* Յովհ. Ղ. 49

\*\* Յովհ. Ղ. 44

\*\*\* Մատթ. ԺԲ. 32

271 Յ շի՞ և ոչ վիճաբաներ

282 Յ ասելով թէ

284 Յ յորս փիս յորժամ

286 Յ շի՞ Հօրէ

288 Յ շի՞ ամենայն, զորդի

288—290 Յ շի՞ թողցի նմա... թողցի նմա

Յաւելու և զայս, վերակացու, ասէ, լինել բանին  
295 վարդապետութեան, այսինքն՝ ուսանել և գիտել և սպա-  
սաւորել աստուածային օրինացն քարոզութեան. և  
առաջին զայն ստանալ գործ և ապա զնիւթականացն  
Հոգաբարձութիւն, որպէս առաքեալքն արարին և ուսու-  
ցին, քանզի ասէին՝ «Ոչ է պարտ թողով մեզ զբանն  
300 Աստուծոյ և պաշտել զսեղանս»\*: Թէպէտ և սեղանն  
այն աղքատաց էր սպասաւորութիւն և ոչ անձանց,  
բայց զի զմարմինս կերակրել զաղքատաց՝ փոքր հա-  
մարէին ի բարիս, քան զ՞ոքի աղքատացեալս ի բա-  
յիաց Հոգեորական կերակրովն, որ է բան վարդապե-  
տութեանն: Նորին աղակաւ նիսթականին կերակրոց  
զՍտեփաննոսեանքն եղին սպասաւորել ժողովրդոցն,  
իսկ ինքեանք զբանն Աստուծոյ քարոզէին:

Եւ այս է՝ զոր Հրամայէ եպիսկոպոսաց վերակա-  
ցու լինել բանին վարդապետութեան, և զողջամիտսն  
310 մխիթարել, այսինքն, որք ոչ ունիցին Հիւանդութիւն  
հաւատոյ, որք զաթոռն ընդունին զառաքելոցն, պար-  
տին և զգործն ստանալ զառաքելոցն, որպէս եղեն հե-  
տևողքն նոցին սուրբ Հարքն առաջինք:

Եւ թէ որք զեպիսկոպոսութեանն ունիցին աստի-  
315 ճան, և ոչ իցեն վարժեալք վարդապետական բանիւ,  
պարտ է յայնցանէ, որք կրթեցան յայս շնորհ Աստուա-  
ծային, մերծ առ ինքեանս ունել, զի տացեն ծառայակ-  
ցացն յիւրաքանչիւր ժամու զբանին Աստուծոյ զկերա-  
կուրս, և զհակառակորդոն, ասէ, կշտամբէլ: Երկու

\* Գործք. Զ. 2

302 Բ զի որ

304 Բ բարեաց կերակրել

309 CDH զողջացեալսն

311 Ե չի պարտին

312 DH չի եղեն

316 Բ պարտ է նոցա

319 Բ չի ասէ

320 գործս գնէ բանին վարդապետութեան վերակացու լինելովն առաջնորդաց. առաջին՝ զծառայակիցսն կերակրելով ըստ աւետարանական հրամանին, երկրորդ՝ զթբշնամիսն ճշմարտութեան, որք հակառակին հաւատոյն բանի և օրինաց Աստուծոյ և աւանդութեանց եկեղեց-  
 325 ւոյ՝ ըմբերանել աստուածային զիտութեամբն, զի մի զպարզամիտս ի ժողովրդոցն՝ պատիր բանիւքն ձգեսցին ի կորստեան խրեանց խորխորատ, ըստ ընտանի գազանացն կրկին գործոյ, որք զվայրենի գազանսն հալածեն և զհօտս հովուին պահեն արթնութեամբ, որ-  
 330 պէս կարգեցան:

Արդ, որք զառաջինն ընկալան ի Քրիստոսէ զգործ և պիսկոպութեան՝ դասք առաքելոցն, այսպէս արարին ինքեանք և ուսուցին հետևողաց խրեանց նովին օրինակաւ վարիլ: Իսկ յայմմուս թշուառութեան ժամանակի այնքան հեռացաք ի բարոյ նոցին նմանութենէ, մինչև զի ոչ այլ ինչ գործոյ պատճառ զիտել զեպիսկոպութիւնն, որք յօժարին ստանալ զնա, բայց միայն զանազան հնարիւք ինչւ ժողովել ի հնազանդելոցն և փառս որսալ ի փառաւորչաց, զոր անարգանս պարտէ ասել և ոչ փառս: Քանզի ճշմարիս փառք այն են, որ  
 335 ի ձեռն բարեաց գործոց անուանն Աստուծոյ լինիցի ոք փառաւորութեան պատճառ, ըստ Տեառն Յրամանին, թէ՝ «Տեսցին զգործս ձեր բարիս և փառաւոր արացին զշայր ձեր, որ յերկինս է»\*: Իսկ անձին առ  
 340 ի մարդկանէ փառքն ոչ միայն հակառակ են փառացն Աստուծոյ՝ ըստ ասելոյն ի Տեառնէ զոմանց, թէ՝ «Սիրեցին զփառս մարդկան առաւել, քան զփառս Աստուծոյ»\*\*, այլև ի զովլացն առ երեսս դորովեալք լինին

\* Մատթ. Ե. 16

\*\* Յովհ. ԺՀ. 43

335 Ը այն փիս այնքան

343—344 Ե փառաւորեացեն փիս փառաւոր արացին Ը չի՛ ձեր.

348 Ը զովլաց ևս փիս զովլացն առ երեսս

իբրհ զախտաւորս, յորժամ տեսանեն ցանկութեամբ  
350 զհետ ընթացեալ զովութեան և փառացն, որ ի նո-  
ցանէ:

Թողից ասել զես գծնդակագոյնսն այսր ժամանա-  
կի եպիսկոպոսաց գործ, զի և բազում անարգանաց և  
տուժից տանին յալազգեաց, ոչ յաղագս աստուածա-  
355 յիւ օրինացն, որպէս առաջին սուրբքն, զի այն երա-  
նութեան էր արժանաւոր, այլ վասն սնոտի փառացն  
յուսոյ և զգերփեալսն ի հնազանդելոց պէսպէս հնա-  
րիւ և բռնութեամբ, զոր յեկեղեցոյ պայծառութիւն  
360 արքատաց պէտս հրամայեցաւ լինել, զայնոսիկ ժո-  
զովին որպէս զմաքսաւորս, և բռնակալաց աշխարհի  
ուժինեն: Եւ ոչ թէ ի նոցանէ բռնադատելով զայն առ-  
նե: քանզի ի սոյն իսկ յազգէ մերմէ սկսաւ այս գործ  
շարութեան, և ծանուցաւ այլազգեաց յաներկիւղից  
ոմաց և ի փառամոլից, որք մի ի միոյ վերայ յառնե-  
365 լով տակաւին աճեցուցանեն զկապալս ի վերայ եկե-  
ղեցոյ Քրիստոսի, որպէս զտունս բաժից կամ զներկո-  
ցաց, որոց մեղաց շիք թողութիւն՝ ըստ առ ի յԱս-  
տուած մեղուցելոցն<sup>92</sup>: Որ ոչ միայն քահանայապետու-  
թեան շեն արժանի՝ որ զայս դաժան գործ սկիզբն  
370 արարին մուծանել յեկեղեցի, և կամ այնոքիկ, որք ի  
հայրապետաց ընկեցեալք յաթոռոյ՝ վասն հոգեոր  
պատճառի, այլազգեաց բռնաւորութեամբ և յաւելուա-  
ծով կապալացն՝ դարձեալ փութան յափշտակել զեպիս-  
կոպոսութիւնն, այլև՝ ոչ քրիստոնէութեան հաւատոյ և  
375 կարգի և ոչ օրինաւոր քահանայական թաղման և սրբոց  
պատարագին յիշատակի:

Զի՞նը ասել և զմօրէն այսոցիկ շարեաց, զյայտնա-  
պէս հակառակացն ճշմարտութեան և սրբոյ աթոռոց

352 D զեմս փիս զես

356 E չիք վասն

358 DF բռնաւորութեամբ

360 E իբրհ

377 CDF զինէ է

կուսաւորշին, որք ինքնաշարժ ախտիւք և բռնակալաց  
380 աշխարհի հրամանօք զանձինս իւրեանց յայս աստի-  
ճան հոգեոր քարձրութեան ձգեն, և ոչ ընտրութեամբ  
Աստուծոյ և աստուածայնոց արանց համօրէն ազգիս,  
որպէս օրէնն պահանջէ, որով բիւր նեխութեան և ապա-  
կանութեան անդամոց Քրիստոսի լինին պատճառ: Զի  
385 թէ ի զլուխն Ահարօնի իշանեն շնորհք Հոգոյն Սրբոյ,  
որ է հայրապետութիւնն, և ի զլիսոյն ի մօրուսն՝ յեպիս-  
կոպուսութիւնն, և ի մօրուացն ի զրապանակսն, որ է  
քահանայութիւնն, և ի զրապանացն ի զգիստն, որք հն  
ժողովրդեանն դասք:

390 Եւ արդ, զո՞ր արդեօք իւղ շնորհաց ունիցին, որք  
յԱհարօնեանն զլիսոյ օտարացեալք են, և ընդ Դադա-  
նայ և Աբիրօնի, որք հակառակ կացին մեծին Մովսէսի  
և Ահարովնի, յօդեալք իցեն զործովք, կամ եթէ զոր  
կամակորութեամբն մերկացան՝ բաժանեալք և որո-  
395 շեալք ի շնորհաց, զիարդ կարիցեն զյինքեանց կորու-  
սեալն այլոց ընձեռել:

Որք յաղագս սոյն և այսո իրի յանդպնութեան՝ ի  
ժամանակս տեառն մերոյ և եղրօր Գրիգորիսի կաթու-  
ղիկոսի սրբոյ, ի սուրբ լեառն՝ մեծաւ սիւնհոգոսիւ,  
400 սուրբ և առաքինեաց արանց ազգիս Հայոց՝ ժողովով  
աւելի քան զերկու հազար և հինգ հարիւր անձանց  
եապիսկոպոսաց, վարդապետաց, հարց վանականաց և  
միանձանց սրբոյ լերինն, նզովեալ հերքեցան յեկեղեց-  
ւոյ Քրիստոսի, և սրով բանին Աստուծոյ հատեալ՝ ի  
405 բաց ընկեցան որպէս զնեխեալ և զփտեալ անդամ յա-  
ռող մարմնոյ եկեղեցւոյ՝ անէծս ցաւագինս կուտեալ  
ի զլուխ նոցա<sup>94</sup>, որոց ոչ եկեալ ի միտս, և ոչ զգա-

390 CDEH Ճի՛ և արդ

392 G Ճի՛ հակառակ կացին... սպասաւորել սրբութեանցն, էջ 121,  
տող 102

400 CF ժողովեալ վիս ժողովով

403 C հերկեցին վիս հերքեցան

ցեալ զմահու ցաւս Հոգուց՝ առնլով զդեղ կենաց ի դե-  
ղատուէ իմաստնոյ, և բժշկիլ զղջմամբ և ապաշխարու-  
թեամբ ի մահահամբոյր պատուհասէն: Այլ, Հանգոյն  
իժի և քարբի, խցեալ զւսելիս աստուծային բանին,  
դեռևս յամառեալ բորբոքին ի նոյն չարութեան, ար-  
բեալ և յիմարեալ փառամոլ ախտիւ իբրև զգազան  
կատաղիս, ոչ դադարեն մուծանել զիսովութիւն յառա-  
գաստ խաղաղութեան երկնաւոր հարսնարանի՝ փե-  
սայացեալ բանին, զոր արեամբն գնեալ՝ ազատեաց ի  
շար մշակութեանց բանսարկուին, որոց արին ի զգուս  
իւրեանց եղիցի, և վրէժ շարութեան գործոց նոցին՝  
յանձինս իւրեանց լիցի:

420 Այլ դուք, որք ճշմարտութեանն էք ջատագովք և  
նոյն բարեաց Հետևողք, աղաշեմք պատրաստ լերուք  
ամենայնիւ ի գործ Հոգեոր Հովուութեանդ, զոր ընկա-  
լայք ի ճշմարիտ Հովուապետէն, ամենայն զգայարա-  
նօք ըստ վերոգրեալ սահմանիդ և ըստ կանոնական  
425 խրատու սուրբ առաքելոցն և նոցին Հետևողաց, որպէս  
զի համարձակութեամբ և պարզերես կացչիք առաջի  
աւանդողին ձեզ զտաղանդ պատուիրանին՝ տալով  
զհամար շահիցն նմա կրկնապատիկ յաւելուածով,  
յորմէ լսիցէք զբարբառն երանաւէտ, եթէ՝ «Ծառայ բա-  
430 րի և հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատա-  
րիմ ես, ի վերայ բազմաց կառուցից զքեղ, մուտ յու-  
րախութիւն տեառն քոյ»\*: Որում և մեզ լիցի աղօթիւք  
ձեր հանդիպիլ ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր:

\* Մատթ. իե. 21—23

430 Ե որով

430—432 Ե հաւատարիմ մուտ ուրախութիւն քո որով իսկ

433 Ե մեր որում փառք յաւիտեանս Գ ամեն Հ մեր որ աւրհնեալ  
յաւիտեանս ամէն: Այսուղ ընդհատվում է Հ ձեռաղի նախորդ գրչությու-  
նը և բնագիրը շարունակվում է նոր գրչությամբ:

## ԱՌ ԴԱՍՍ ՔՍՀԱՆԱՅԻՑ

Դարձուցուք այսուհետև զկարգ բանիս առ դասս  
քահանայիցդ, որք աստիճանաւ երկրորդ էք և պիսկո-  
պոսաց և կարգեալ էք քահանայական գործառնութեամբ  
5 նուիրել զամենայն զորդիս Աստուծոյ՝ ծնանելով զամե-  
նայնսն մկրտութեամբ սուրբ աւազանաւ՝ յորդէգրու-  
թիւն Հօրն երկնաւորի և ի ժառանգակցութիւն Քրիստո-  
սի Աստուծոյ, և մեղսաքաւիչ մարմնոյ և արեանն Տե-  
որն բաշխմամբ կերակրել զհոգիս նոցա յանմահու-  
10 թիւն:

Եւ արդ՝ աղաշեմ զամենայնսն սիրովն Քրիստոսի  
բանալ զաշս մտաց և զարթնուլ ի մահահրաւէր թմբբու-  
թենէ կենցաղոյս և ճանաշել զզօրութիւն երկնային  
գործոյդ, յորս հրաւիրեալ կոչեցալք, որ և հրեշտակա-  
15 կան գերաշխարհիկ զօրութեանցն է զեր ի վերոյ այս  
աստիճան, որք անարատութեամբ և սրբութեամբ պաշ-  
տեն զսա:

Եւ որովհետև արժանի եղէք յերկնայինն գործ մա-  
տուցանել զանձինս, մի և մի իւիք պատճառս տայք  
20 արատոյ անկանել ի պաշտօնդ ձեր՝ ըստ առաքելոյն  
խրատու, այլ արիաբար և յօժարամիտ սրտիւ, առանց  
ծուլութեան զկանոնեալ սահմանս աղօթից սուրբ հար-  
ցըն անթերի կատարեցէք ըստ իւրաքանչիւր ժամու: Եւ

1 Ե քահանայից խրատ ի ներսիսէ կաթողիկոսէ ԻՀ վի՛ առ դասս

5 Ե հոգիս վի՞ս զորդիս

9 Ե կերակրելով

մաքուր Հոգովկ և սուրբ սրտիւ և անարատ հաւատով  
25 և մեծաւ յուսով և պարզ մտօք և կատարեալ ահիւ և  
գողութեամբ սպասաւորեցէք աստուածային խորհրդոյն  
և մի իբրև ջուր ընդ խողովակ անցանիցէք անմտաբար  
ընդ խորհրդական բանս աղօթիցն, զոր մատուցանէք,  
եթէ սաղմոսերդութիւնք են և եթէ ընթերցումն սուրբ  
30 զրոց, եթէ պաշտօներդութիւն և եթէ քահանայական  
աղօթք սրբոյ պատարագին և այլոց կարգադրեալ կա-  
նոնացն, այլ յոյժ մտաւորաբար. և թէ զոյ հնար ար-  
տասուօք և մեծաւ երկիւղիւ, որպէս թէ դուք նորոգա-  
պէս բղխէք զնոսա ի սրտէ և ի մտաց ձերոց, զի ամե-  
35 նայնքն խնդրուածք են առ Աստուած զանազան և պէս  
պէս պարգևաց և բարութեանց մեզ առ ի նմանէ: Եւ  
ինքն պարգևատուն բարեաց Աստուած, յորժամ տեսանէ  
զչերմեռանդն հայցուածս խնդրողին, առաւել առատա-  
պէս շնորհէ զիսնդրելին, ըստ այնմ, եթէ՝ «Որ խնդրէ  
40 առնու»\* և որ զկնի:

Դիտասչիք, զի յառաջափոյն ի ժամանակս առա-  
քելոցն, մինչդեռ նոր ծաղկեաց գարունն հաւատոյ,  
ամենայնքն լի էին Հոգով Սրբով և շնորհօք Հոգոյն,  
յինքեանց մտաց խօսէին զբանս աղօթից՝ ըստ ժամուն  
45 պիտոյից զպատարագին խորհրդածութեան և զամենայն  
կատարողապետութեանց:

Իսկ ի ժամանակս յետինս, քանզի հանդերձեալ էր  
ձմեռն մեղացն սառնամանեօք խստութեան ցրտացու-  
ցանել զբորբոքումն առ Աստուած սիրոյն յամենեցունց,  
50 և բթացուցանել ի շնորհաց Սուրբ Հոգոյն, տեսեալ  
հոգույ ակամբ սուրբ և հոգեկիր վարդապետք եկեղեց-  
ւոյ՝ և այնր աղազաւ զբով աւանդեցին զամենայն զկնի  
եկողացս: Զի նոքօք անվրէպ և անսայթաք առաջնոր-

\* Մատթ. է. 8

25 Ի շիք և մեծաւ յուսով

48 Ե սառնամանեոք ցրտութեան խստացուցանել

դեալք՝ կատարեսցուք զամենայն կարգաւորութիւնս  
55 եկեղեցւոյ, վասնորոյ զսոյն մտաւորաբար պարտք է  
մատուցանել և մեծաւ հաւատով և յուսով:

Մաներուք և զայս, զի կոշումն անուան քաջանա-  
յութեանդ ձերոյ՝ ոչ է ի մարդկանէ և ոչ ի ձեռն մար-  
դոյ, այլ յայնմանէ, որ կոչեցաւն քաջանայ ըստ կար-  
60 դին Մելրիսեղեկի, որ և ինքն է ճշմարիտ քաջանայ և  
քաջանայապիտ և պատարագ Աստուծոյ Հօր. և նա ետ  
ձեզ զկոշումն անուան խրոյ և յանձն արար ընդ ա-  
նուանն և զգործն իւր՝ Հովուել զժողովուրդ իւր և ուսու-  
ցանել միշտ զգործս բարիս և տալ զանձն օրինակ բա-  
65 րեաց ամենեցուն, ըստ որում և Պօղոս զրէր առ Տի-  
մոթէոս, թէ՝ «Մի՛ անփոյթ առնէր զշնորհացդ, որ  
տուաւ քեզ ի ձեռնադրութենէ երիցութեան»\*: Եւ զար-  
ձեալ՝ թէ՝ «Քաջանայք կրկին պատուոյ արժանի եղի-  
ցին, որք աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ»\*\*:

70 Վասնորոյ, աղաչեմք, զի ըստ անուանդ կոշման և  
զգործն կատարիցէք. և որպէս հարք և ծնողք ժողովը-  
դեան ձերոյ՝ յամենայն ժամ տուր նոցա զհոգեոր խրա-  
տըս, միշտ ուսուցանելով յեկեղեցւց, ի հրապարակս  
և առտնին, զամենայն ոք ըստ իւրաքանչիւր հասակի՝  
75 զգուշացուցանելով և յորդորելով յաստուածայինս:

Եւ թէպէտ և ամենայն բարեաց տեսակօք և առա-  
քինութեամբ կատարեալք իցէք, սակայն զեկեղեցւոյ  
պայծառութենէ և զսրբոյ Պատարագին պատուական և  
մաքուր զգեստուց մի անփոյթ առնէք, որպէս լսեմք  
80 զոմանց՝ եթէ հասարակաց զգեստուք և աղտեղեալ  
տրեխօք ելանեն ի բեմն սուրբ և զսարսափելի խոր-  
հուրդն անխորհրդական զգեստուք կատարեն, և զայն  
ի պարկեշտութիւն անձանց համարին, հանելով զժողո-

\* Ա. Տիմոթ. Դ. 14

\*\* Ա. Տիմոթ. Ե. 17

վուրդն արտաքոյ եկեղեցւոյն և զդուռն ընդդէմ ձգելով.

85 և ոչ միայն, այլև անմտաբար ի բամբասանս բերին  
ոմանց եկեղեցեաց և ի մերս բարեզարդ կարդաւորու-  
թիւն:

Եւ արդ՝ մի ոք վայրապար և անխորհուրդ Համա-  
րեսցի զքահանայականն զգեստ, զի որպէս ի Հնումն  
90 առ Մովսէսիւ նկարեցաւ խորհուրդ սրբոյ պատարագին  
նախօրինակօք և նորումս կատարեցաւ ի Քրիստոս,  
նոյնպէս և քահանայք Հնոյն՝ նորոյ քահանայութեանս  
էին տիպք, և պատմուճանն Ահարովնի՝ նորոց քահա-  
նայիցս զգեստուցն յարացոյց, զոր և սուրբ առաքեալ-  
քըն, զործակցութեամբ Հոգոյն Սրբոյ, կատարելապէս  
յարդարեցին զլրումն եկեղեցւոյ, և յամենայն տեղիս  
ձեռնադրեալ կարգէին քահանայս և սարկաւագունս, և  
պատուիրէին ներքին և արտաքին մաքրութեամբ սպա-  
սաւորել փրկական խորհրդոյն, որ և ընդ ընաւ աշխար-  
100 հըս մեծազարդ պայծառութեամբ զարդարեալ լինէին  
եկեղեցիք ընդհանուր ազգաց քրիստոնէից՝ պայծառա-  
զգեստ վայելութեամբ սպասաւորել սրբութեանցն: Նա  
ևս առաւել և Հայաստանեացս ազգի եկեղեցիք ի սուրբ  
Էուսաւորչէն մերմէ սկսեալ մինչև յաւերումն աշխար-  
105 հի ի հիմանց:

Բայց այսոցիկ բարւոյ աւանդութեանց Հակառակե-  
լոյ առաջնոց Հարցն սրբոց ոչ այլ ինչ է պատճառ,  
քան թէ տգիտութիւն և ինքնօրէն անձնահաճ կամա-  
պաշտութիւն, որք ոչ տեսին զառաջին պայծառութիւնս  
110 մինչ ողորմութեամբ Տեսան լի էր երկիր, այլ ի հալա-  
ծանացս ծնեալ ժամանակի ընդ խրթնատեսակս նայե-  
ցան տգեղութիւն, որովք կապեալ են յամենայն ուրեք

85 B միայն այս

90 C չի առ

94 B ապացոյց Փիս յարացոյց H ապրեցոց Փիս յարացոյց

105 G հայոց Փիս ի հիմանց

111 C չի ժամանակի

ազգ մեր յաղքատութեան, որպէս ընդ երկաթոյ ի ներ-  
քոյ լծոյ ծառայութեան իւրաքանչիւր ազգաց՝ ուր և  
115 իցեն, ոյք և հարկաւոր պիտոյիցն կարօտ են ըստ  
մարմնոյ, թող թէ պայծառութեան եկեղեցւոյ ի խրն-  
դիր, և ըստ Հոգոյ ամեննկին անշարժք ի բարիս, զի  
ցամաքեցաւ սէրն՝ ըստ տէրունական բանին: Ու որ-  
պէս առաջին հալածանացն ժամանակին՝ նոր հաւա-  
120 տացեալքն ի Քրիստոս, յորս այնքան զօրանայր սէրն  
Աստուծոյ՝ մինչ զի ի հալածանսն առաւել մեծամեծու և  
վայելուլս տեսանհմք շինհալ ի նոցանէ եկեղեցիս, քան  
մինչ խաղաղութիւն եղել եկեղեցւոյ:

Եւ արդ՝ ո՞ ի գիտնոց զիսաւարին զայս տեսանհ-  
125 լով անկարգութիւն, որ յաղքատութենէ և յաւերմանէ, և  
զբարկութիւնս, որ յԱստուծոյ աւանդութիւնս և օրէնս  
կարծելով, և նորին աղափաւ յանդգնին հակառակել առ-  
տուածաւանդ հրամանացն:

Այլ մեր ի բաց թողեալ զանիմաստ հակառակոր-  
դացն զիմնունս, հնազանդ եղելոցդ օրինաց Աստու-  
ծոյ ի վերայ ասացելոցս և զայս աւանդեցուք պատուի-  
րան, որ վասն այսր իրի խնդրոյ:

Ու ունել քահանայից յԱստուծոյ և ի մէնչ հրաման-  
առանց սուրբ ծածկութի պատարագամատուցին զգին-  
135 լոյ մատուցանել զսուրբ պատարագն, կամ աւետարան  
կարդալ, կամ խաշ առնուլ ի ձեռս, կամ յայլ ինչ ի

---

Ճ13 Ծիմ ընդ

Ճ19 Ե չիմ ժամանակին

Ճ22 Ե քանդի Փիս քան

Ճ24 Յ տգիտաց զիսաւարայինս Փիս ո՞ ի գիտնոց զիսաւարին

Ճ29—130 Յ բաց զանիմաստ, հակառակացն, Յ վիճումն թողլով հնա-  
զանդեցուք օրինաց, CD հնազանդելոցն, F հակառակադրացն

Ճ32 Ե չիմ որ

Ճ33 Ե չիմ քահանայից

Ճ36 Խ աշ Փիս խաշ

սրբութիւնսն մերձենալ. և այսոքիկ, զորս զրեցաք սա-  
կառուք և որ նման սոցին՝ արտաքին մարդոյս զգուշու-  
թիւն, որոց հանդերձեալ են սպասաւորել աստուածայ-

140 նոցն:

Ասասցուք և յաղագս ներքին մարդոյն, որ և օրի-  
նակ է արտաքնոյն, զարդ՝ սորին Հոգեսոր պայծառու-  
թեան զարդու. մի ոք ի ձէնց անարժանութեամբ աս-  
տուածային խորհրդոյն սպասաւորեացէ և կամ զոք ի  
145 ժողովրդենէն անքննաբար հաղորդեցուացէ, զի մի ընդ  
Յուղայի և ընդ խաչաճանուացն դատապարտեացի:

Մի ոք ծածկելով յոգի իւր զգործս մեղաց առանց  
ճշմարիտ խոստովանութեան և այնպէս մատիցէ ի տէ-  
րունական խորհրդոյն սպասաւորութիւն, զի մի զբար-  
կութիւն Աստուծոյ շարժեացէ ի վերայ ինքեանն և աշ-  
խարհին, և ի բաց ընկեցի յաստուածային հարսա-  
նեացն, քանզի զիաւարատեսակ մեղացն զգեցեալ  
պատմուճան՝ հմուտ յեկեղեցի Աստուծոյ, որ է օրինակ  
վերին հարսնաբանին, որ և լսելոց է զահագին քար-  
150 բառն, «Ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հան-  
դերձ հարսնաեաց»\*, և թէ՝ «Հանէք զգա արտաքս»\*\*,  
այս է՝ յարքայութենէն, և կտրեցէք զգա ընդ մէջ, այ-  
սինքն՝ զհաւատոն և զշնորհս սուրբ աւազանին և զբա-  
հանայութեան ի բաց մերկացուցէք, և մասն դորա ոչ  
155 ընդ հաւատացեալս, այլ ընդ անհաւատսն լիցի, քան-  
զի ոչ հաւատաց եթէ մարմնոյ և արեանն Աստուծոյ  
սպասաւորէ, այլ հաց լոկ և զինի համարեցաւ, և վասն

\* Մատթ. իթ. 12

\*\* Մատթ. իթ. 13

187 Ե այստեղ հավանաբար նկատելով որ էջեր են պակաս, լուսանց-  
քում հավելագրել են «կանոնք քահանայից»:

141 Ե մարդոյն զգուշութիւն

157 Ե այսինքն վիս այս է

158 Բ շին սուրբ

160 Ե կացուցէք հաւատացեալս ասէ

այնորիկ անարժանութեամբ ժպրջեցաւ մերձենալ և  
առանց խոստովանութեան:

165 Եւ արդ, աղաշեմք, մի որպէս մարմնական ինչ  
գործ վարկանելով զերկնային խորհրդոյն կատարումն,  
այլ աճիւ և դողութեամբ սպասաւորեցէք աստուածայ-  
նոցն, զի թէ սէրովքէն սուրբ յօրինակն ունելեաց կա-  
րուանայր, մերձենալովն ի կայծակունսն, որ ի վե-  
170 րայ սեղանոյն, մեզ հողեղինացս և մեղաւորացս քա-  
նի՞ մաքրութիւն և զգուշութիւն պիտոյ է յաղագս առ  
ճշմարտութիւն այնը օրինակի մերձենալոյ:

Վասնորոյ զմիտս և զգայարանս պարտապան էք  
պարսպել յամենայն վնասակար իրաց՝ սպասաւորքդ  
175 սրբոյ խորհրդոյ յամենայն ժամանակի, առաւել յայնմ  
աւոր, յորում յԱստուած մերձենալ հանդերձեալ իցէք:

Զի թէ Մովսիսի ասացաւ յԱստուծոյ՝ ոչ կոխել մե-  
ռեալ մորթովք զտեղին, ուր երկեցաւ հուր աստուա-  
ծութեան<sup>95</sup>, ո՞րքան մեզ արժան է լուծանել նախ զմե-  
180 ռելութիւն մեղաց ի մէնջ, և ապա յաստուածայինն մեր-  
ձենալ խորհուրդ, զի ոչ միայն խօսել ընդ Աստուծոյ  
ըստ Մովսիսի կայ մեր առաջի և կամ տեսանել զյե-  
տոյսն Աստուծոյ, այլև ձեռօք շօշափել զանշօշափե-  
լին և շրթամբք համբուրել զսէրն և բերանով ճաշա-  
185 կել զկերակրիչն ամենայնի, և ի սիրտս ընդունել և  
հոգուով միանալ ընդ նոյն և լինել Աստուած՝ շնորհօք  
ընդ Աստուծոյ միաւորելովն: Վասն որոյ զտեսանելիս  
և զսելիս և զլեզու և զամենայն անդամս խրատեցէք  
ի բարիս շարժել և ի շարիս անշարժ մնալ, և ողջախո-  
190 հութեամբ և սորութեամբ յաշխարհական ցանկութեանց  
և զբօսանաց զմիտսն ամփոփելով, և ապա յերկնային  
խորհրդոյն սպասաւորութիւն մերձենայցէք. զի մի ի  
դատաստան անձանց ուտիցէք և ըմպիցէք զմարմին և

178 Յ մարթովք Փիս մորթովք

181 Կ ամփոփելով

գարիւն Տեառն՝ ըստ առաքելոյն, այլ ի քաւութիւն մեղաց և ի մաքրութիւն հոգւոց՝ ձեզ և ժողովրդեան ձերում:

Եւ մի լիցի, որպէս լուաք զոմանց աներկիւղ քահանայից, որ ի քաղաքս բնակին, եթէ յառաւօտէ մինչև ցժամ պատարագին ի վաճառափողոցս քաղաքին շրջին ի տուրեառութիւն վաճառաց, յորս բազում նետք հարկանին յոգիսն ընդ մուտս զգայարանացն ի տեսանել և ի լսել, ի խօսել և ի գործել զանպատշաճուն, և անտի դարձեալք մտանել յանդկին յեկեղեցիս, և յայլոց քահանայից կազմեալ նշխարաւ, առանց սաղմոսաց և աղօթից, մատուցանեն զպատարագն: Որոց պատուիրեմք՝ յայսմհետէ ի բաց կալ յայդպիսի աներկիւղ և շար սովորութեանց, և նախ սրբել զմիտսն գիշերոյն և տունջեանն աղօթիւք, որպէս վերափոյնն զրեցաք, և ապա մտանել յեկեղեցի սուրբ և յանդիման լինել Աստուծոյ սրբով պատարագաւն:

Մի ոք ի քահանայից առանց գիտելոյ զիսստովանութիւն մարդոյ, զհաւատոյն և զգործոցն, կամ իւր ինքեան, կամ այլում քահանայի, տացէ նմա զհաղորդութիւն մարմնոյ և արեանն Քրիստոսի՝ ի յառողջութեան կամ ի հիւանդութեան, և կամ գիտելով զանարժանութիւն ուրուք՝ տայ յաղագս մարդահաճութեան զաստուածային խորհուրդն, ծածկելով այնու զկարծիս շարութեան, որ զնմանէ. զի այնպիսին է, որ տայ զարբութիւն շանց և առաջի արկանէ զմարդարիտն խոզաց:

Մի ոք ի քահանայից պատարագողաց, ոխակալութիւն ունելով ի սորին ընդ ումեք, մատիցէ յաւտուածային խորհրդոյն կատարումն և անընդունելի-

199 C վաճառ փողոցս G զվաճառս փողոցին

202 H և լսել և խօսել

208 G վերագրոյն

211 F չի մի ոք ի քահանայից աստուածային օրինացն... Էջ 229<sup>o</sup>

առնիցէ զպատարագն առաջի Աստուծոյ, այլ նախ հաշտեսցի ընդ եղբօրն, ըստ հրամանին Քրիստոսի, և  
225 ապա եկեալ մատուցէ զպատարագն:

Նոյն սահման և ի վերայ Հաղորդականացն եղիցի,  
բայց այս օրէնք առ համապատի եղբարսն է, քահանայից առ քահանայս, և աշխարհականաց առ աշխարհականս: Իսկ եթէ քահանայն ընդ բանիւ արարեալ զոք  
230 ի ժողովրդականացն վասն պատուիրանազանց լինելոյ յօրէնս Աստուծոյ, և նա Հպարտացեալ ոչ գայ յուղութիւն, և ոչ խնդրէ թողութիւն ի քահանայէ անտի,  
քահանայն առանց խղճի մտաց մատուցէ զուրբ մրատարագն, և ընդ դատապարտութեամբ է այն, ոչ ոչ  
235 ուղղեցաւ, և ոչ խնդրեաց զիթողութիւն, քանզի Քրուսոս  
ոչ վայրապար հրամայէ առնել թողութիւն տրտմեցուցանողին, այլ եթէ անկեալ առաջի խոստանաց ապաշխարել, յայնժամ ասէ՝ շնորհեսցի առ ի քէն թողութիւն յանցանացն, զոր առ քեզն յանցեաւ: Իսկ եթէ մեղուցեալն առաջի անկեալ քահանային և խոստանաց գալ յուղութիւն, և քահանայն յաղագս մարմնական ինչ  
240 պատճառի ոխակալ լինելով՝ ոչ առնիցէ թողութիւն, չէ պարտ նախ քան զհաշտելոն մատուցանել պատարագ:  
Նաև առ քահանայս բազում պատճառս յօդէ սատանայ՝ խոռվելոյ ընդ միմեանս և վիճաբանելոյ, և յոխակալութեան և ի նախանձու ախտս տանջելով զոգին զամենայն ժամանակս, որ և առ տգէտս և վայրենաբարոյս առաւել զօրանայ. է որ վասն յափշտակելոյ ի ժողովրդինէ միմեանց՝ ագահութեան ախտի, և է որ  
245 յաղագս հարստահարելոյ զընկերն՝ փառասիրութեան

226 Ի եկեղեցի ՓԽ եղիցի

227 Ե եղիցի ՓԽ է

233 Ի չի մտաց

236 Ե համարէ ՓԽ հրամայէ չի թողութիւն

244 Ո այլ ՓԽ առ

աղակաւ, և յայլ ևս յոլովագոյն ատելութեան պատ-  
ճառաց լուծանի ի նոցանէ սիրոյն պատուիրան, և  
Քրիստոսի աշակերտութեան նշան, առ որս ասաց, թէ  
«Յայսմ ծանիցէ աշխարհ զձեզ. եթէ իմ աշակերտք էք,  
255 եթէ սիրիցէք զմիմեանս»\*: Որոց և մեք զառաքելականն  
աւանդեմք պատուիրան, եթէ «Արեգակն ի վերայ բար-  
կութեան ձերոյ մի մացէ, և մի տայք տեղի սատանա-  
յի»\*\*, այսինքն՝ զի թէ զիսաղաղութիւնն, զոր ևտ Քրիս-  
տոս աշակերտացն և նոքօք մեզ, փութայ հանել ի  
260 ձէնչ խոռվարանն, և զիսովութիւն իւր փոխանակ խա-  
ղաղութեան սերմանել ի միջի ձերում, մի տայք նմա-  
տեղի՝ երկար ժամանակաւ բնակել ի յոդիս ձեր, զի մի  
զտաճարդ Աստուծոյ, որ ի ձեզ, շարին առնիցէք բնա-  
կութիւն ատելութեամբն և ոխակալութեամբն: Այլ ընդ  
265 շարժել բարկութեան եռանդն բոցոյն, որ ի փշմանէ  
անտի նորա բորբոքի, շիջուցէք զնա խաղաղարար ջրով  
Հոգուցն՝ նախ քան զմտանել արեգականն, որպէս զի  
խաղաղասէր լինելովն՝ որդիք Աստուծոյ լինիջիք, ըստ  
երանութեան խոստման զճշմարիտ որդույն Աստուծոյ  
270 զգործ արդեամբ ի ձեզ կատարելով, այն որ արար խա-  
ղաղութիւն յերկինս և յերկրի արեամբ խաչին իւրոյ:

Իսկ եթէ ոք ի քահանայից խոռվելոց ընդ ընկերի՝  
սիրէ զատելութիւն, քան զսէր, և զիսովութիւն, քան  
պիսաղաղութիւն և ոչ լուծանէ զտրտմութեան պատճա-  
275 որն և հաշտեսցի ընդ եղբօր իւրում՝ ի խոնարհել միոյն  
և ի խնդրել զհաշտութիւն, մի իշխեսցէ քահանայա-  
զործութիւն առնել, որչափ զդեն տրտմութեան և բար-

\* Յովհ. ԺԳ. 35

\*\* Յովհ. ԺԳ. 35

258 Ի զետ փխ զոր ետ

260 Ե մենչ փխ ձէնչ

261 Ե մերում փխ ձերում

265 BG եռանդոյն

267 Ե մոսեսանել փխ զմտանել

կութեան յինքն բնակեցուցանէ, զի «Զի՞նչ հաղորդութիւն է լուսոյ ընդ խաւարի» ասէ առաքեալն, կամ 280 «Քրիստոսի ընդ Քելիարայ»\*: Քանզի գրեալ է, թէ որպէս «Որ զմէրն ունի՝ զԱստուած յինքն բնակեցուցանէ, զի Աստուած սէր է»\*\*, նոյնպէս՝ և որ զատելութիւն ունիցի՝ զստանայ յանձն իւր դարմանէ, զի կերպակուր է նորա ատելութիւնն, որպէս և ամենայն գործք շարեաց: Վասն որոյ, ամենայն ոք ի ձէնչ որքան ատելութեան ախտիւ տայ տեղի սատանայի ընդարձակադյոյն յինքեան, Քրիստոսի մարմնոյն և արեանն ոչ է արժանի բնակութեան. և թէ ոխակալութեան և նևութեան հոգուով յանդգնի առնուլ զնա, նման լինի Յուրացի մատնչի, որ յետ պատառոյն ապա հմուտ ի նու ստանայ:

Եւ արդ, աղաչեմ զամենեսեան զձեզ՝ զժուազաշարժ լինել ի վիճաբանութիւնս և ի կոփւս և դիրաշարժ՝ ի հաշտութիւն և ի խաղաղութիւն: Եւ մի ոք, որ 295 զօրաւորն է ի մարմնական յառաջադիմութիւնս, չանայ զրկել զընկերն և անիրաւել, զի մի զայն, որ առնէ իրաւունս զրկելոց զԱստուած, դատաւոր և դատախազ իւր կացուցանէ, և զոր ի յանցաւոր կեանս զրկեաց, ի յանանցն վաշխիւ հատուցանէ:

300 Այլ աւագագոյնքդ ի ձէնչ և հաստատունքդ յիմաստութիւն՝ շահեցարուր զկրտսերագոյնսն և զպակասամիտսն, ներօղ լինելով առ նոսին և երկայնամիտ, որով և վարձս ընկալչիք յԱստուծոյ ի շահելն զեղբարս:

\* Բ. Կորնթ. Զ. 15

\*\* Ա. Ցովհ. Դ. 16

278 С զի զոր ինչ ՓԽ զի զինչ

280 В որ ՓԽ որպէս

282 В այնպէս ՓԽ նոյնպէս

286 С ախտիւ

Իսկ կրտսերագունիցդ պատուէր տամք՝ զիսոնար-  
305 հութիւն և զճնազանդութիւն ցուցանել աւագագունիցն  
և իմաստնոց քահանայիցն։ Եւ յայսպիսի բարեկարգու-  
թիւն լինելով ձեր՝ անուանն Աստուծոյ վառաւորութեան  
լինիք պատճառ առ արտաքինսն և ժողովը դերոյ՝  
բարեաց նախանձու։ Իսկ եթէ ի վիճմունս ի հակառա-  
310 կաբանութիւնս և ի հայշոյութիւնս միմեանց տեսանեն  
զձեզ, յորս են բազումք, մանաւանդ թէ ամենեքին,  
բաց ի սակաւոց, անունն Աստուծոյ վասն ձեր հայ-  
շոյի ի տեսողացն արտաքնոց, և ժողովուրդ ձեր առա-  
ւել խոտորին ի պատուիրանացն Աստուծոյ, և զպատիժ  
315 դատաստանին դուք կրէք զթիւրելոցն ձերով պատճա-  
ռաւ յուղիղ ճանապարհէ աստուածային օրինացն։

Մի ոք ի ձէնջ սիրեսցէ զկուրութիւն տգիտութեան  
քահանայական ուսմանց յաղագս ծուլութեան կամ աշ-  
խարհական զբազմանց, այլ թէև ոչ ամենեցուն ամե-  
320 նայն շնորհօք կատարեալ լինել ճնար է, զոր և աս-  
տուածային օրէնքն պահանջեն ի քահանայից, սակայն  
ի հարկաւորսն պարտին անթերի լինել, այսինքն՝ զե-  
կեղեցական գիրս ուղիղ ընթեռնուզ, և զմանր ուամունս  
ձայնաւորացն պաշտել յեկեղեցիս, և ապա զալ ի ձեռ-  
325 նազրութիւն քահանայութեան։

Բայց լսեմք զոմանց սուտ քահանայից, զի ոչ  
միայն յայլ ուսմանէ են տգիտք յաղագս հեղգութեան,  
մանաւանդ թէ՝ վասն անհաւատութեան, այլ և զսաղ-  
մուն Դաւթի ոչ գիտեն բովանդակ, առանց որոյ զնո-  
330 սին զհարիւր և յիսուն փոխսն խօսել բերանով ընդ  
Աստուծոյ՝ ոչ մատշի պատարագ ըստ աւանդութեան  
կանոնի հարցն սրբոց։ Ոմանք և ոչ զբանս աղօթից  
սրբոյ պատարագին գիտեն ի բերան, և սուտ պատա-

319 C և Փիս թէն

323 C ուղիւ

328 F չի՛ մանաւանդ թէ վասն անհաւատութեան

330 E չի՛ փոխսն

բագաւն խարել կարծեն զանխարելին Աստուած և զմար-  
դիկ և զհոգիս ննջեցելոցն՝ առ աշխ մարդկան կեղծա-  
ւորելով, որոց գատաստանն առաւել է, քան զամենայն  
մեղաց առաջի Աստուծոյ. որք և ոչ իսկ են արժանի  
այլ ևս մատուցանելոյ պատարագ, թէ յետ յանդիմա-  
նելոյն առնուցուն ի բերան։ Այլ թէ կամիցին զողիս  
340 իւրեանց փրկել ի դատապարտութենէ մեծաւ ապաշ-  
խարութեամբ՝ թէ արդեօք քաւեսցին յառ Աստուած մե-  
ղանացն։

Մի ոք ի քահանայից վայրապար և առանց մեծի  
զգուշութեան կատարեսցէ զսուրբ մկրտութիւնն իբրև  
345 զաշխարհական ինչ զործ համարելով և մի ընդ աս-  
տուածային բանիցն բանս ծիծաղականս և կատակեր-  
գութիւնս խառնեսցէ, որպէս լսեմք զոմանց տղիտաց և  
աներկիւղից՝ զի առնեն, զի մի ինքեանց դատապար-  
տութեան լինիցի այն պատճառաւ, և երախայիցն ան-  
350 մեղաց թերակատար զջնորհս Հոգոյն Սրբոյ ընդունե-  
լոյ, այլ որպէս զսուրբ պատարագն, այնպէս երկիւղիւ-  
կատարեցէք զպաշտամունսն և զընթերցմունս աս-  
տուածաշունչ բանիցն և զամենայն կարգաւորութիւնսն  
սուրբ մկրտութեանն խորհրդոյ. և եթէ այսպէս առնի-  
ցէք, հաւատացէք, զի որպէս էջ Հոգին Սուրբ ի վերայ  
փառակցին իւրոյ ի Յորդանան, նոյնպէս և ի վերայ  
ամենայն ուղղափառ հաւատով մկրտելոց իջցէ, զորս  
և յորդէգրութիւն Աստուած հայր վերակուչ շնորհօք,  
որպէս զընութեամբ որդին, և լինիք զուք արբանիակը  
355 և սպասաւորք Հոգոյն Սրբոյ յաստուածարարութեանն  
շնորհ, մանաւանդ թէ՝ իբրև զմանկաբարձս որդոցն

337 Ե մեղաւորաց վիս մեղաց

338 Ե չի՛ այլ ևս

347 Ե չի՛ լսեմք

349 Ե չի՛ այն

357 Գ ի չուր վիս իջցէ

360 Գ չի՛ Հոգոյն Սրբոյ

Աստուծոյ ձեռօք ձեր կատարելով և բառնալով ի մօրէ  
նոցին՝ յաւագանին ծոցոյ:

Եւ մի ոք ի քահանայից յետ հաց ուտելոյ իշխեսցէ  
365 առնել մկրտութիւն առողջից մանկանց, բայց թէ յեր-  
կիւղէ մահու, այլ նախ կատարեսցէ զմկրտութեանն  
գործ և ապա մատուցէ զպատարագն սուրբ, յորմէ և  
զմկրտեալն հազրդեցուացէ:

Եւ մի յանհաւատից արանց կամ կանանց, որք  
370 ոչ են երկրպագուք Քրիստոսի, առցէ ոք կնքահայր  
մանկանց մկրտելոց, զի զոր ինքեանք ոչ ունին, այլում  
զիա՞րդ կարեն տալ զիսոստովանութիւնն, որ ի սուրբ  
երրորդութիւնն, յորժամ պահանջէ քահանան ի գէմն  
մկրտելոյն զգաւանութիւն հաւատոյն:

375 Վասնորոյ, մի՛ տայք տգիտաց աշխարհականաց  
յաղագս մարմնական ընշասիրութեան զայս առնել. և  
թէ յանդգնին, դուք մի՛ յանձն առնուք զմկրտելն, զի  
մի թերի առնիցէք զայն, որ մկրտինն, ի կատարմանէ,  
և ծիծաղելիս զմեծ խորհուրդն աստուածային կացու-  
380 ցանէք առաջի անհաւատիցն, որ թէ հնար էր՝ և ոչ  
միում ի նոցանէ արժան էր լինել մերձ յաւագանն սուրբ  
ի մկրտութեանն ժամու, զի մի՛ վասն հակառակացն  
Հշմարտութեան Հոգին Սուրբ հեռասցի ի մկրտելոցն:

Եւ մի՛ ոք ի ձէնչ ըստ հարկի պահանջեսցէ զինս  
385 արծաթոյ անզին շնորհին վասն մկրտութեանն, կամ  
մահու հազրորդ տալոյ, այլ որ ունին և տան սիրով,  
որպէս զնուէր եկեղեցւոյ՝ առէք, և որ աղքատ լինին՝  
մի՛ բռնադատէք:

Ասեմք և յաղագս զծնունդս այլազգեացն մկրտե-  
390 լոյ, որ սովորութեամբ բերի ի հին ժամանակաց և է  
ընդդէմ հրամանին Քրիստոսի, որպէս ասաց՝ ոչ տալ  
զսրբութիւն շանց, զոր արժան էր խափանել, և ոչ թո-

377 Ե շիբ և թէ յանդգնին դուք մի յանձն առնուք զմկրտելն

384 Ե շիբ ի ձէնչ

386 Ե փիս լինին

դացուցանել, զի զի՞նչ օգուտ է այլով բերանով խոս-  
տովանել զՔրիստոս և զգենով զնա մկրտութեամբն

395 մինչ անբանն է և անզգայ, և յորժամ զարգանայ հա-  
սակաւ մերկանալ դարձեալ ուրացութեամբն և լինել  
հայոցիշ աստուածային խորհրդոյ տնօրէնութեան նո-  
րա, ըստ դենին իւրեանց, փոխանակ փառաբանիշ լի-  
նելոյ: Որով առաւել դատաստանաւ դատելոց են յա-  
400 զագս եղծանելոյ յինքեանս զտիրական պատկերն, զոր-  
վերստին նկարագրեաց ի նոսա աւազանն սուրբ, քան  
զամենեին ոչ զրօշմեալսն, այլ զի զոյ ի նմա և մասն  
բարւոյ, այսինքն՝ զի ի մկրտելոց անտի բազմաց ի  
տղայական հասակին հասանէ վախճան մահու, և այ-  
405 նոքիկ ոչ ընդ կորուսեալսն, այլ ընդ փրկեալսն արժա-  
նաւորին փրկութեան, և զի զսակաւն զայնոսիկ յափրշ-  
տակելով ի սատանայէ<sup>3</sup> խառնեմք ի զունդն Քրիստո-  
սի, վասն այնորիկ ոչ իրաւունս համարեցաք զամենեին  
խափանելն:

410 Բայց զայս միայն վասն սորին իրի պատուէր-  
տամք քահանայիցդ, մի՛ վասն ագահութեան ախտի-  
յորդորել զնոսին և կամ յօժարութեամբ ընդունել, այլ  
դժուարաւ և ի հարկէ բերիլ յայնափսի իրս: Զի թէ հաս-  
տատուն մնալոց էին ի հաւատս, բարի էր յորդորում-  
415 նրն և յօժարութիւնն ձեր, բայց զի ապրեալըն ըստ  
մարմոյ՝ անդրէն ընդ ջուրսն են անցանելոյ, և ի լու-  
սակիզն յօդեաց ի սկսութիւն այծից փոփոխելոց, ըստ  
սրբոյ կուսաւորչին մերոյ տեսլեան, նորին աղազաւ  
անօգուտ է ջանն, որ վասն նոցին, զի շահն սակաւ է  
420 և վնասն յոլով:

Մի՛ ոք ի ձէնչ զադտ պսակ դիցէ ումեք, այլ եթէ  
ծնօղս ունիցի և միաբան իցէ և ոչ բաժանեալ, զիտու-

406 G զանկատարն ՓԽ զսակաւն

414 C մնալ ոգեին ՓԽ մնալոց էին

421 F չի մի ոք ի ձէնչ... այլ ի մարդկային բռնութիւնէ Էջ 134  
առող 469

422 G ոչ է

թեամբ և կամաւ նոցին եղիցի: իսկ եթէ ոչ ընդ ծնողօք՝  
հասարակաց տեսութեամբ յայտնի դիցի պսակն, զի  
425 վկայեսցի յամենեցունց, թէ ուղիղ է և ոչ ընդդէմ օրի-  
նացն Աստուծոյ, որով և երգոցն ձայնք և նուազարա-  
նացն զնոյն նշանակեն, իբրև թէ վկայս պսակելոցն  
գամենեցունց լսելիս և զտեսանելիս կացուցանելով:  
430 իսկ զաղանին՝ անվկայ է և անհաստատ և ոչ ընդ օրի-  
նօք, յորմէ պատուէր տամք ի բաց հրաժարել և ոչ  
յանդոնել յայսպիսի իրս վասն ազահութեան:

Մի՛ և կնաթողաց արանց կամ այրաթողաց կա-  
նանց առանց կանոնական հրամանին դիցէ ոք պսակ,  
զի մի՛ լուծջիք որուք ի քահանայական կարգէ ըստ կա-  
435 նոնաց, և եղեալ պսակն՝ քակեսցի, և եթէ բոնանան  
ոչ բաժանին՝ ընդ պոռնիկս համարեալ լիցին:

Մի՛ և այնոցիկ, որք առեանգս ասին, դնիցէ պսա-  
կըս, զի հակառակ օրինաց Աստուծոյ է և բիւրք չա-  
րեաց պատճառք ի սատանայէ շարժեալք ի մոլեկան  
440 ախտսն, և բազումք այն իսկ են, որ յետ սուտ պսա-  
կին, յորժամ յագին դիւական տոփմամբն, մեծաւ ատե-  
լութեամբ բաժանին ի միմեանց, և պսակադիրքն այս-  
պիսեացս կցորդ շարեաց նոցին լինիցին:

Մի՛ և տղայոց անմեղաց՝ յաղագս ազահութեան  
445 հայրենի ժառանգութեան, կամ վասն այլ ինչ պատճա-  
ռի, պսակ դիցէ ոք ի քահանայից, զի բազում վնասք  
լինին յայնցանէ և պատճառս բաժանման յետոյ ի մի-  
մեանց: Այլ ժամանակ պսակի է ի զարգանալ արու-  
թեան հասակին ի հնգետասանին ամաց լրումն առնն,  
450 և յերկոտասանին կամ ևս առաւել՝ կնոցն, որպէս զի  
կարօղ լինիցին ըստ բանաւորաց՝ հաճութեամբ զուգին  
ընդ միմեանս առ ի հաստատուն լինելոյ զուգութեանն,

423 Հ ծնողօք եղիցին

424 Յ չի նոցին, Ծ այսոցիկ վիս այսպիսեացս

444 Ե չի ազահութեան

452 Գ զուգաւորութեան վիս զուգութեանն

և մի ըստ անբանից՝ առանց կամաց և յօժարութեան  
անհաստատ գոլով և առ ժամոյն պատահումն։ Եւ այրն  
455 աւագագոյն պարտի լինել ըստ ժամանակի քան զկինն,  
որպէս զԱղամ նախ ստեղծեալ Աստուծոյ և ապա զԵ-  
ւայ։

Մի՛ ոք ի քաջանայից ի բռնութենէ բռնաւորաց  
առանց կամաց առնն և կնոջն պսակ դիցէ, որպէս լսեմք  
460 ի կողմանս Հայաստանեաց լինել, որ ընդ իշխանու-  
թեամբ այլազգեաց են։ Զի պսակն այն անհաստատ  
է և լուծանելի, և պսակադիրքն ոչ առանց պատժոց,  
թէև ակամայ է գործն, և կաշառատուրքն բռնաւորաց  
վասն ջատագով լինելոյ նոցին յանիրաւ գործն յայն՝  
465 առաւել դատապարտութեան և անիծից են արժանի, զի  
զօրէնս Աստուծոյ և զդատաստանս եկեղեցւոյ լուծանել  
փութան բռնութեամբ աւագաց։ Վասնորոյ, առանց  
խզճոյ է լուծումն այնպիսւոյ պսակին, քանզի չէ ըստ  
Հրամանին Աստուծոյ, այլ ի մարդկային բռնութենէ։

470 Մի՛ ոք համազգեաց, որոց արեան մերձաւորու-  
թիւն իցէ, պսակ օրհնութեան դիցէ, այլ մինչև ի յեր-  
կուց կողմանցն զշորորդ ազգին զիսաւորութիւնն կա-  
տարեալ ունիցին։

Եւ թէ զի՞նչ պատճառաւ զշորեակ թիւն կանոնա-  
475 դրեցին հարբն սուրբք սահման ամուսնութեան՝ ծանու-  
ցուք, զի կիտիցէք։

Քանզի բնութիւն մարմնոյ ի շորից տարերաց գո-  
լով՝ յիրակի և մարմնական ազգակցութիւնն մինչև ի  
շորորդ թիւն ժամանէ, որ է այսպէս. ի միոյ հօրէ եր-  
480 կուց եղբարց բաժանեալ՝ հաւասար ունին յինքեանս  
զհօրն զոյացութիւնս, իսկ առ ի նոցանէ ծնունդքն՝  
զկէս արեան եղբայրութեանն, և երրորդ ծնունդն, որ  
յեղբարցն որդոց, զկիսոյն կէս արեանն միայն, իսկ  
շորորդ ծնունդն, որ ի սոցանէ, զշորեակ մասն արեանն

485 մնացելոյ: Եւ այս է սահման և կէս արեան մերձաւու-  
րութեան:

Եւ քանզի ամենայն փոյթ Աստուծոյ և աստուա-  
ծայնոցն յաղագս սիրելոյ է զմիմեանս մարդկան, վասն  
այնորիկ իրաւունս համարեցան, որք Հոգովոն օրի-  
490 նադրեցին, զօտարացեալսն ի միմեանց միանալ սիրով  
ամուսնութեանն կապակցութեամբ, իսկ զմերձաւորսն  
արեամբ՝ բաւական վարկան համազգակցութեամբն  
միայն ունել զհաղորդութիւն սիրոյ առ իրեարս:

Եւ այս է առաջին պատճառ ոչ տալոյ թոյլ համա-  
495 ցեղիցն ամուսնութեան, են և այլք յոլովք զորս իմաստ-  
նոցն թողաք քննել:

Եւ արդ, որ այսպիսի ընտրութեամբ ըստ օրինացն  
Աստուծոյ լինիցի պսակն, որպէս և գրեցաք, մի յայ-  
լում ժամու զիցէ զայն քահանայն, բայց յառաւոտէ  
500 աւուրն մինչ ցժամ ճաշոյն. և կերեալ և արքեալ զոք մի  
թողուցուք յեկեղեցին, և մի յանառակ կանանց կամ  
յարանց, որ յազլում ժամու չեն արժանի եկեղեցւոյ,  
զի մի պղծեցի նոքօք տաճարն Աստուծոյ և աղտե-  
ղասցի պսակն օրհնութեան:

505 Եւ ի ժամ կատարելոյ զսուրք պսակն երգ զուսա-  
նացն լոեալ դադարեսցեն մինչև ելցեն յեկեղեցւոյն, զի  
մի դիւական երգն խառնեցի ընդ աստուածային եր-  
գոցն:

Եւ ի բուն բարեկենդանի օրէ սկսեալ մինչև ցկա-  
510 տարումն պահոց շաբաթուն, որ յիտ պենտէկոստէին է,  
մի ոք ի քահանայից տղիտութեամբ պսակ դիցէ ումեք,  
և ոչ յամենայն կիւրակէս տարույն, որպէս Հաստատե-  
ցին կանոնաւ սուրբ Հարցն առաջինք, քանզի պահոց  
քառասնորդացն աւուրք՝ սգոյ և տրտմութեան է և խոր-

488 В չի՛ մարդկան

497 В որք վիս որ

500—508 F չի՛ և կերեալ և արքեալ զոք մի... աստուածային երդոցն  
505 CH կուսանացն

514 E չի՛ աւուրք

515 Հուրդ շարչարանաց Տեառն և ոչ գինարրութեան և  
ուրախութեան հարսանեաց, իսկ յինունքն և կիւրակէքն  
ունին զօրինակ երկնաւոր փեսացին Քրիստոսի հարսա-  
նեաց և հարսին եկեղեցւոյ, որ լինելոց է ի հանդեր-  
ձեալ աշխարհին, յորժամ խառնեալ միանան ազդ ար-  
520 դարոց մարդկան ընդ ինն դասս հրեշտակաց, զոր և  
անուն իսկ աւուրցդ յայտ առնէ յինունք վերակռչելով,  
որով և զհաւատացեալս ամենայն մանկունս առագաս-  
տի հարսանեաց անուանեաց Տէրն, որոց հրամայէ ոչ  
պահել որչափ զփեսայն ընդ ինքեանս ունիցին, որ են  
525 աւուրք յարութեան նորա, մինչև ի վերանալ նորին  
յերկինս. վասն այսր պատճառի ոչ պատշաճ համա-  
րեցան հարքն սուրբք ի հոգեոր հարսանեացն օրինա-  
կի աւուրսն, յորում ասացաւ ի Տեառնէ «Ոչ արանց  
կանայս առնել, և ոչ կանայք արանց լինել»\*, զմարմ-  
530 նականս զայս կատարել հարսանիս, որ է ախտաւոր և  
ծննդական:

Եւ որոց ի հարսանիսն երթիցեն քահանայք, զայս  
խրատ պատուիրանի աւանդեմք: Մի յապաղել անդր  
ընդ գինարբու աշխարհականացն մանկունս, յորում  
535 յոլովս մեղանչեն անպատճաստքն, որք դեգերինն ի  
նմա ի տեսանելն ի լսել և ի խօսել զանուղղայս, այլ  
յորժամ զբաւ լինիցի կերակրոյն, և մինչ յերիս միայն  
արբումն բաժակի, յառնել վաղվաղակի ի սեղանոյ ան-  
տի, զի մի ընդ զինեմոլսն յարեցութեան ըմբռնեալ՝  
540 այսին լինիցի արտաքնոց տեսողաց, ոչ միայն ինքն,  
այլև ամենայն քահանայք՝ միովն: Եւ ծանրագոյն ա-  
պաշխարութեամբ, թէ արդեօք քաւեսցէ զարբեցու-  
թեանն մեղս, վերստին արժանի լինել քահանայդոր-  
ծութեան:

\* Մատթ. ԽՅ. 30

532—569 F չի՞ և որոց... զայս առնէ

545 Մի՛ ոք ի քաջանայից զսատանայական յանցանս  
յինքեան ցուցցէ, այն որ հակառակ եկաց Աստուծոյ և  
կործանեցաւ, և ընդդիմակաց լինիցի եպիսկոպոսին իւ-  
րոյ ի բանս կամ ի գործս, որպէս Կորիս Դադան՝  
550 Մովսեսի և Աճարովնի, զի մի զնոցին կործանումն ըն-  
կալցի յԱստուծոյ, մանաւանդ այնոքի՛, որք յանդգնին  
կապալս յարուցանիլ ի վերայ եկեղեցւոյ, կամ աճե-  
ցուցանիլ զյառաջարունից եղեալսն. և այսու պատճա-  
ռաւ արտաքսեն զեպիսկոպոսունս յաթոռոց բռնու-  
թեամբ այլազդեց, և ինքեանք լինին հրամանատարք  
555 ժողովրդոց և կապալստուք փոխանակ նոցա, որք ան-  
ձամբ զանձինս ի ներքոյ առնեն աններելի դատաստա-  
նացն Աստուծոյ և անիծից դատապարտութեան. այն-  
պիսէքն ոչ են արժանի ի կեանս իւրեանց քաջանայա-  
գործութիւն առնելոյ, և ոչ ի մահուն՝ հաղորդի կամ  
560 քաջանայական թաշման:

Դարձեալ՝ մի՛ ոք ի քաջանայից կամ ի ժողովրդոց  
գեկեղեցւոյ դատաստան առ մարմնական իշխանս դա-  
տեսցի, կամ՝ առ այլազգիս, կամ՝ առ քրիստոնեայս,  
զի՝ մի՛ դատապարտեցի յառաքելական և ի կանոնա-  
կան հրամանացն. որպէս և զրէ Պօղոս առ կորնթա-  
ցիսն, թէ՝ «Խշէ ոք ի ձէնց, եթէ իրք ինչ իցեն ընդ ըն-  
կերի իւրում դատել առաջի անիրաւաց և ոչ առաջի  
սրբոց»\*. և հարբն սուրբք ի կանոնս իւրեանց լուծա-  
նել հրամայեն ի քաջանայութենէ, որ զայս առնէ:

570 Դարձեալ՝ մի՛ ոք ի քաջանայից հոգաբարձու քա-  
ղաքի կամ գեղջ լինիցի, կամ գաւառապետ՝ աշխարհա-  
կան իշխանաց, կամ զրօղ հարկաց կամ սակից, կամ  
յայլ ինչ զործակալութիւն աշխարհի լինելով, քանզի  
անկարելի է ըստ տէրունական հրամանին՝ երկուց

\* Ա. Կորնթ. Զ. 1.

548 Ե և Փիս կամ

564 Շ դատեսցի

572 Ը և Փիս կամ

575 Հակառակ տերանց ծառայել և հաճոյանալ տան Աս-  
տուծոյ, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանոյ և տան  
աշխարհականաց: Վասնորոյ ընտրեցէ այնպիսին ի  
միոյն ի բաց կաէ, կամ ի յաշխարհական հոգաբար-  
ձութենէն կամ ի քահանայական գործոյն, իսկ եթէ ընդ  
580 աշխարհական հոգոցն յանդնի և զքահանայական  
պատիւն ունել և զտեսութիւն ժողովրդոց, բոնութեամբ  
է այն և ոչ հրամանաւն Աստուծոյ և մեր, որ և դա-  
տելոց է այնպիսին ընդ կրկին յանդնութեանն:

Լոեմք զոմանց քահանայից ձիավարժու լինել և  
585 զէնս առնուլ ըստ զինուորաց, և ի խրախճանութիւնս  
խաղոց ձիբնթացից ընդ նոսին արշաւել երիվարօք և  
ի յորս երէոց և ի նետաձգութիւնս և յամենայն ինչ  
յայսպիսիս, որ նոցայն զործոյ է անկ և ոչ եկեղեցոյց  
սպասաւորաց, «Զի զէն զինուորութեան մերոյ ոչ է  
590 մարմնաւոր»\*, որպէս հրամայէ առաքեալն, այլ հոգե-  
վոր և աստուածային, որովք պատերազմիմք ոչ ընդ  
մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ  
պետութիւնս, ընդ այս շարութեան, որ ի ներքոյ երկ-  
նից:

595 Վասնորոյ, աղաշեմք ի բաց լինել յայսմհետէ ի  
յանկարգ սովորութենէ աստի, և բայց թէ ի ճանապար-  
հի, եթէ ի ճետիոտոս և թէ երիվարաւ՝ առնուլ զէնս յա-  
ղագս երկիւզի ինչ եղելոյ կարծեաց, և այն՝ պարկեշ-  
տութեամբ և ոչ ըստ զինուորութեան կարգի կապար-  
600 ճիւք և կամ կազմեալ սուսերաւ: Այլ ոչ ևս է արժան

\* Ա. Կորնթ. Ժ. 4

578 B յաշխարհի փխ ի յաշխարհական

579 CDEF հոգեոր փխ քահանայական

580 B զործոցն փխ հոգոցն

584—611 F շիք լոեմք զոմանց... պատուիրանքն

589 G շիք զէն...

590 G հրամայէ Պօղոս

600 CD շիք կամ

առնուլ զէնս կարգաւորաց, կամ արշաւանս առնել երիշ  
վարօք ըստ մանկական բարոյից ի բամբասանաց պատ-  
ճառս տեսողաց: Զի զորս խրատէ Պօղոս, «Զգէն լուսոյ  
զգենուլ»\*, այսինքն՝ զուղիդ հաւատս և զզործս բա-  
րեաց, և նորօք կռուել ընդ բնութեան մերոյ թշնամ-  
ւոյն. չէ արժան զիսաւարայինս զայս զէն ստանալ յան-  
ձին և պատերազմէլ սորօք ընդ համազգեաց մերոց  
մարդկան, կամ խոցոտել զանբանից կենդանեաց Յովս  
և կամ սիդաբալ երիվարօք յօրանալ, բայց թէ ի տկա-  
րութենէ, քանզի յանցանէ և ի սոյնպիսեացն արգելուն  
զմեկ աստուածաշին պատուիրանքն:

Քաջանալ, եթէ զոք ի ժողովրդինէ իւրմէ վասն  
պատուիրանազանց լինելոյ ընդ բանիւ առնիցէ, և նո-  
րա յամառեալ մնայ ի յանցանան և ոչ դառնայ, այլ ոք  
615 ի քաջանայից անտի մի իշխեսցէ ընդունել զնա յիկե-  
ղեցի իւր, որպէս սովոր են ոմանք ի տպէտ քաջանա-  
յից յինքեանս ձգել զայնպիսիսն, և որ զայս առնէ,  
նա տայ նմա ի ոեղաց անտի անդարձ լինել, և զանձն  
իւր կցորդ պատուճասի յանցանաց նորա առնիցէ:

Այլ վասն այսպիսի իրաց եղելոց այս օրէնք հաս-  
տառեսցի ի միջի ձերում, զի զորոշեալն ի միոյ քա-  
ջանայէ; և ամենայն քաջանայակիցը նորին նմանա-  
պէս ի քաց որոշեսցն յինքեանց, մինչև զղացեալ  
յանցաւորն դարձցի ի յանուզզայ զնացից իւրոց և  
առաջի անկեալ խնդրեսցէ զթողութիւն և ուխտ դիցէ  
Աստուծոյ՝ ապաշխարել և այլ ոչ ևս ի նոյն սովորութիւն  
շարեաց անկանել: Եւ յորժամ յիւրոյ քաջանայէն այս-  
պիսի օրինակաւ ընկալցի զթողութիւն, յայնժամ և այլ  
քաջանայըն ընկալցին զնա սիրովն Աստուծոյ:

Այս օրէնք ուղղութեան և ի մէջ եպիսկոպոսաց  
հաստատեսցի, որպէս զի զառ միոյ եպիսկոպոսէն բա-  
նագրեալն՝ ի քաջանայից կամ յաշխարհականաց, այլ

\*Հոռովմ. ԺԳ. 12

ոք յեպիսկոպոսաց ոչ ունին իշխանութիւն լուծանելոյ,  
բայց ի բանադրողէ անտի:

635       Աւանդեմք և զայս ևս պատուիրան ամուրեաց քա-  
հանայիցդ, որ ըստ աշխարհի, զի որում ի մանկական  
հասակին հասանէ վախճան ամուսնոյն, թէ կամեսցի  
զողի իւր ապրեցուցանել ի մեղաց և ի բամբասանաց  
և սուրբ խորհրդոյն արժանաւորապէս սպասաւորել,  
640       Հրաժարեալ յաշխարհէ՝ ըստ կանոնական հրամանին և  
կարգ կրօնաւորութեան մտցէ, զի ի մէջ աշխարհի սո-  
վորական ընդելութեամբ լինելով ի տեսութիւնս և ի  
խօսակցութիւնս ընդ կանայս, մանաւանդ՝ խոստովա-  
նութեան նոցին լինել ընդունօղ ըստ օրինի քահանա-  
645       յութեան, անհնար է սրբութեամբ ծառայել Աստուծոյ՝  
ապա թէ ընդ անձուկ ճանապարհն զնալ զժուարանայ՝  
զլայնն և զարձակն սիրելով, լոել արժան է նմա ի  
սրբոյ պատարագին սպասաւորութենէ, թէն ի յայտնի  
վատութիւնս ոչ բամբասի, քանզի ոչ կարէ յերիտա-  
650       սարդական հասակին մաքրապէս սպասաւորել սրբու-  
թեանցն, մանաւանդ որ ոչ երկիւղածութեամբ և պար-  
կեցաւթեամբ և պահօք և աղօթիւք զգուշանայ անձին  
իւրում, այլ աներկիւղութեամբ վարի ի կերակուրս և  
յըմակելիս և յամենայն տեսակս ընդարձակ վարուց:  
655       Իսկ որոյ մերձ ի ծերութիւն հասանէ վախճան ա-  
մուսնոյն, և վստահ լինի յանձն իւր սրբութեամբ և ա-  
նարատ վարուք և առանց բամբասանաց սպասաւո-  
րել Աստուծոյ, որպէս զի գովութիւնս ընկալցի ի տե-  
սողաց և մի բամբասանս. այնպիսին կացցէ յիկեղեց-  
660       ուց իւրում որքան ախորժէ:

633 Ե չի՛ ոք

635—660 Բ չի՛ աւանդեմք... որքան ախորժէ

640 Բ հրաժարեսցէ

641 Բ կրօնաւորական

647 Բ զնդարձակս վիս զարձակն

656 Բ է վիս լինի

Եւ արդ քաջանայիցդ առ ի խրատ՝ զոր գրեցաք  
սակաւուք, ոչ իշխանաբար հրաման տալով, այլ ծա-  
ռայակցապէս աղաշելով, բաւական լիցի առ ի մէնջ-  
իսկ զպակասեալն ի մերոցս՝ ունիք հմտանալ կատա-  
բելապէս ի հարցն առաջնոց կանոնական գրոց՝ որովք  
օրինադրեցին զմանկունս եկեղեցւոյ ի փառս աստու-  
ծոյ:

---

661 Ե չի՛ առ ի խրատ

ԱՌ ԻՇԽԱՆԵՍ ԱՐ ՀԱՍ ԱՇԽԱՄԾՀԻ

Փուլոխնցուք զաստուածային պատուիրանցութեամբ և առ ձեզ՝ որ ըստ աշխարհի ունիք դքաղաքաւութեամբ:

- 5 Եւ նախ և առաջին առ իշխանութ, որք ի նուազեալ  
ժամանակիս տիրեք ի տեղիս տեղիս բազմաց և կամ  
սակաւուց, զօրաց և դաւառաց, զորս աղածեմ, մի  
անհնազանդ լինիք օրինացն Աստուծոյ, այլ որպէս  
կամիք, զի ծառայք զկամս Հրամանի ձերոյ ճնազան-  
10 գութեամբ և անթերի կատարեսցեն, որք թէ և զմի ինչ  
ի Հրամայելոցն անկատար թողուն, պատուհաս երեն և  
ձէնց, նոյնպէս և զուք, վասն զի բնութեամբ ծառայք  
էք Աստուծոյ, ծառայեցէք Տեառն երկիւզի և ճնազան-  
գութեամբ, զի մի պատուհասիցիք իրեւ զավատամ-  
15 բեալս ի Տեառն այլ որպէս զմտերիմ ծառայս՝ պատիւ  
ընդունիցիք յնրկնաւոր թաղաւորէն:

Եւ արդ՝ առաջին զայս պատուիրան աւանդեմք ձեզ, մի անհրաւաբար վարիք առ Հնագանցեալոց ծանր և ոժուաբակիր հարկադրութեամբ, զոր ոչ կարեն բառ-  
նալ, այլ օրինօք դատեցէք և ըստ շափոյ զօրութեան զիւրաբանչիր ոք, զմտաւ ածէք՝ «Զի և ձեր տէր գոյ յերկինս, և ակնառութիւն ոչ է առաջի նորա»\*, որպէս  
և առաքեալ ասէ:

\* *Bibliography*, 9.

1 ԵՐ Տեսն ներսեսի ասացեալ առ Բ Հիմ որ ըստ աշխարհի

## 2 AEFH ማስታወሻ

9 CE əmənəyp əbə

Մի՛ զոք զրկէք ի մարդկանէ և մի՛ նեղէք զաղքաւ-  
տըս և զտնանկս, զի մի բողոքեցին առաջի Աստուծոյ  
վասն ձեր, և Աստուած լսէ նոցա՝ ըստ իմաստնոյն Սա-  
ղումոնի, զի ասէ, թէ՝ «Մի տար պատճառս աղքատին  
անիծանել զքեզ, զի մի՛ արարիշ նորա լուիցէ նմա և  
հատուցէ քեզ չարիս»\*:

Մի՛ չար և անիրաւ գործակալս և զաւառապետս  
կացուցանէք ի վերայ աշխարհի ձերոյ, զի մի յանիրա-  
ւութենէ նոցա, զոր գործեն, զուք զատիք յԱստուծոյ՝  
հանդերձ նոքօք, այլ զարդարամիտս և զարդարադա-  
տըս ընտրեցէք ունել ի վերայ մարդկան զգործակալու-  
թիւն, զի մի զարքունական սահմանեալ իրաւունսն՝  
վաստակաւորացն թողցեն վասն սակաւ կաշառացն  
զբազումն և կամ ինքեանք գողացին. և մի՛ առաւել  
քան զհրամայեալսն նեղեցին զնոսս և առցին, զի  
անիրաւութիւն են երկու կողմանքն առաջի Աստուծոյ.  
40 այլ այնպէս իրաւադատ լինիցին, զի «Տացեն զկայսե-  
րըն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»\*\*:

Մի՛ զոք անիրաւութեամբ դատիք, այլ ուղիղ դա-  
տաստան արարէք, զի և ձերն դատաստան քաղցրու-  
թեամբ լինիցի յԱստուծոյ և մի խստութեամբ: Մի՛  
45 վասն կաշառաց կամ վասն սիրելութեան միոյ կողմա-  
նըն, կամ վասն ատելութեան և ոխակալութեան, կամ  
վասն պատույ երեսաց ի միոյն աշառելով՝ զանիրաւն  
արդարացուցանէք ի դատաստան և զարդարոյն թիւրէք  
զիրաւունս, զի մի անիծից օրինացն Աստուծոյ, որ յա-  
50 դագս այսոցիկ, պարտականս զանձինս առնիցէք:

\* Առակ. և. 19~

\*\* Մատթ. իթ. 21

24 Յ զրպարտէք վիս զրկէք

33 Ե չի՛ այլ

35 Յ զարքայական վիս զարքունական

39 Շ անիրաւութենէ

47 Շ չի՛ վասն

50 Շ այնոցիկ է պարտական

Մի՛ անտես առնէք զայրոյն և զաղքատին զիրաւ-  
 տունսն, յորժամ աղաղակեն առաջի ձեր վասն զրկողաց  
 իւրեանց, այլ դատ արարէք որբոյն և տուք իւրաւոնս  
 այրոյն, որպէս ասէ Աստուած մարգարէին. և ուն-  
 55 կընդիր լերուք աղաղակի նոցա և փրկեցէք զնոսա ի  
 նեղլաց իւրեանց և զյափշտակեալ ինչս նոցա դարձու-  
 ցէք յանիրաւացն, յայնժամ և Աստուած լսող լինի ա-  
 ղաշանաց ձերոց և կատարէ զինըրուածս սրտից ձերոց:  
 Մի որպէս զանբան կենդանիս, որ բնութեամբ ծա-  
 60 ռայք են մարդկան, ծառայեցուցանէք զմարդիկ, որ  
 ընդ իշխանութեամբ ձերով լինին, ի գործ խիստ և ան-  
 ներելի, որպէս և փարաւօչ՝ զորդիսն հսրայէլի; և զայն  
 առանց կերակուր տալոյ նոցին, այլ ներելով և քաղց-  
 րութեամբ և սակաւորեալ ժամանակաւ, և առատագոյն  
 65 կերակրօք լցուցանել զնոսա յաշխատութիւն անդր, և  
 շափով և մի յանշափս, որպէս զի կարօղ լինիցին վաս-  
 տակօք իւրեանց զաղքատանաց կեանս զտանց և զորդ-  
 ոց իւրեանց լցուցանել և զարքունական հարկն հա-  
 տուցանել:  
 70 Մի զվարձս վաստակաւորաց ձերոց հատանէք իշ-  
 խանաբար, որպէս զայնոցիկ, զորոց ամբաստանին  
 առաքեալրն և մարդարէքն, թէ՝ ոջրէկեալն ի ձբնջ աղա-  
 ղակէ, և բողոք հնձողաց եհաս յականցս տեառն զօռու-  
 թեանցը\*:  
 75 Բաւական լիցի ձեզ, զի վաստակօք նոցա մհծա-  
 նայք, և առաւել բան զշափն փափկանայք, և այս՝ զի  
 ոչ թէ այլ բնութիւն է նոցա, և այլ՝ ձեր, այլ ի միոց  
 կաւոյ և ի խառնուածոյ, քանզի նմանապէս է տերանց

\* Յակոր. Ե. 4

66 СДЕФԻ շիք և շափով և մի յանշափս

70 С հատուցանէք Փխ հատանէք

75 С շիք ձեզ

77 С շիք այլ

և ծառայից, փարթամաց և աղքատաց, սկիզբն գալոց  
80 լաշխարհ և կատարած ելիցն յաշխարհէ:

Վասն զի զուգահաւասար ամենայնքն ծննդեամբ  
մտանեն յերկիր և մահուամբ ելանեն ի սմանէ, իսկ  
մեծութիւն և փոքրկութիւն, բարձրութիւն և խոնարհու-  
թիւն, բարեբախտութիւն և պանդստութիւն, ի մէջ  
85 ծննդեանն և մահուանն պատահեն մարդկան, որ են  
իբրև զերազը զարթուցելոց, որպէս ի փորձոյ անտի  
յայտնի է ամենեցուն իմաստնոց և տղիտաց, զի ոչ ինչ  
ի սոցանէ ունի գհաստատութիւն:

Վասնորոյ մի՛ վասն անցաւորիս կենաց կորուսա-  
90 նէք զյափտենական զկեանսն, զի թէպէտ և Քրիստոս  
դժուարաւ ասաց մեծատանց յարքայութիւն երկնից  
մտանել, ըստ օրինակի ուղուու ընդ ծակ ասղան, այլ  
եթէ զմեծութիւն ձեր ըստ կամացն Աստուծոյ ի գործ  
արկանէք, դժուարինն՝ ձեզ դիւրին լինիցի:

95 Զի և Աբրահամ մեծատուն էր, և ոչ միայն արքա-  
յութեանն մտանելոյ արժանացաւ, այլև զոգ նորա ար-  
քայութիւն Աստուծոյ եղեւ և անուանեցաւ ճանդիսաւ  
ամենայն արդարոց. նոյնպէս և Յոր և ամենայն մեծա-  
տուն արդարքն, ըստ ասելոյն ի Տեառնէ, թէ՝ «Տեսա-  
100 նիցէք զԱբրահամ և զիսահակ և զՅակոբ և զամենայն  
արդարսն յարքայութեան Աստուծոյ»\*:

Այսպէս և՝ զուք, եթէ ըստ նոցին օրինակի զնայք  
ի ճանապարհու արդարութեան, զի ոչ զոք նեղէին, ոչ  
զուրուք զինչս յափշտակէին, և ոչ ումեք անիրաւու-  
105 թիւն ինչ առնէին և կամ նենգութիւն, այլև յիւրեանց

\* Պուկ. ԺԴ. 28

87 Հ չի՛ յայտնի

91 Ե աստուծոյ Փլս երկնից

94 Ծ չի՛ լինիցի

97 BCDFGH անուանեցաւ և

103 EGH և Փլս զի

104 Ե ումեք ինչ

արդար վաստակոցն զքաղցեալս կերակրէին, զմերկս  
զգեցուցանէին, զհիւրս ընդունէին, զկարօտութիւն կա-  
րօտելոց լցուցանէին, նեղելոց բաւական լինէին, և  
տկարաց զօրացուցիչ, զաղքատն և զտնանկն ոչ միայն  
110 ինքեանք ոչ նեղէին, այլև փրկէին ի նեղլաց իւրեանց:

Եւ որպէս ոչ եղև նոցա մարմնաւոր փարթամութիւնն  
արգել և խափան ժառանգելոյ զարքայութիւնն երկնից,  
նոյնպէս և ոչ ձեզ լինիցի պատճառ շարեաց մեծու-  
թիւնդ, եթէ կամիցիք արդարութեամբ վարել զդա, որ-  
պէս և նոքա, այլ մանաւանդ բարւոյ առիթ լինի ըստ  
իմաստնոյն, զի ասէ, թէ՝ «Փրկանք առն՝ մեծութիւն-  
իւր»\*:

Իսկ այն, որ փոխանակ զիւրն տալոյ կարօտելոց,  
զնոցայն յափշտակէ, և կողոպտէ զնոսա, և փոխանակ  
120 հիւրընկալ լինելոյ և հանգուցիչ՝ աշխատելոց ի ճա-  
նապարհի, զողակից լինի զողոց և զարանակալ ի ճա-  
նապարհի այնոցիկ, որք անմեղութեամբ զնան ընդ  
ուղիղ ճանապարհ իւրեանց, և զտուն իւր յանիրաւ  
ստացուածոց անտի ընու և մեծանալ կարծէ:

125 Թողից ասել զանթողին յանցանք, որք ոչ միայն  
զինչսն յափշտակեն, այլև զարիւն անմեղացն հեղուն,  
զի մի դատախազ լինիցին յափշտակողաց ընչից իւ-  
րեանց, և զայն ոչ ածեն զմտաւ եթէ այլ զատաւոր կայ  
զիտօղ ամենայնի, յորմէ ոչ կարեն թաքուցանել զը-  
130 զաղտնիս շարեաց իւրեանց:

\* Առակ. ԺԳ. 8

105 Е չի ինչ

106 В ստացուածոցն վիս վաստակոցն

107 CD զհիւանդս վիս զհիւրս

112 G չի երկնից

122—123 G չի այնոցիկ, որք անմեղութեամբ զնան ընդ ուղիղ ճանա-  
պարհս իւրեանց

Յաղագս այսպիսեաց մեծատանց յիրաւի Հրամա-  
թէ Քրիստոս՝ դժուարաւ մտանել յարքայութիւն երկնից,  
որոց ոչ արքայութիւնն է օթևան, այլ Հուր գեհենին, և  
ասպնջական որդն անքուն և տարտարուն յաւիտենա-  
135 կան:

Եւ այս յիրաւի, զի թէ որք յիւրեանց արդար ըն-  
չեցն ոչ կերակրեն զբաղցեալս և ոչ զգեցուցանեն զմեր-  
կըս և ոչ ժողովեն զօտարս, լսելոց են ի Քրիստոսէ յա-  
ւուր դատաստանին, եթէ «Երթայք լինէն անիծեալք ի  
140 հուրն յաւիտենից»\*. ապա, որք աղքատին առաւել  
քաղցի լինին պատճառ և տառապելոյ մերկութեան և  
օտարին՝ կորստեան ընշիցն և անձին, և փոխանակ  
զբանդարկեալսն տեսանելոյ և մխիթարելոյ բանիւ և  
145 արդեամբք՝ արձակելոց անմեղաց բանդից և կապանաց  
լինին առիթ, ո՞ւր արդեօք իմանի տեղի և շափ տան-  
չանաց այնպիսեացն, եթէ ոչ ընդ սատանայի և Հրեշ-  
տակաց նորա, զորոց և գկամսն կատարեցին:

Վասնորոյ, աղաշեմ, ի բաց լինել ամենեցուն ձեզ  
ի կորստական գործոցս յայսցանէ, և մի ոք պատճա-  
150 ռեցէ զպատճառս մեղաց ասելով՝ զի եթէ ոչ զրկեմք  
և ոչ յափշտակեմք, զիշխանութիւն մեր ոչ կարեմք  
հաստատուն ունել:

Եւ առ այս՝ առաջին զայս ասեմք, զի թէ անկարե-  
թի էր որոց զիշխանութիւնս ունին՝ Հաճոյ լինել Աս-  
155 տուծոյ, ապա զիա՞րդ բազումք ի թագաւորաց և յիշ-  
խանաց զովելիք եղեն Աստուծոյ և մարդկան, որք և  
յիշտակին ի զիրս սուրբ:

\* Մատթ. ԽԵ. 41

136 Ե չի թէ

137 Ե զաղքատս Փիս զբաղցեալս

140 Գ յաւիտենական

141 Ը տառապելոյն լինին

151 Ը չի մեր

Դարձեալ, թէ և անհնարելի էր, ըստ ասելոյ ձեր՝  
առանց զրկանաց իշխանութիւն վարել, ապա որ իմաս-  
տունն է՝ փախչել արժան էր յանցաւոր իշխանութենէն,  
և ոչ վասն այնորիկ անանց տանջանօք ընդ սատանայի  
տանջիլ: Բայց ոչ է անհնարին առանց անիրաւութեան  
վարել զիշխանութիւնն, այլ դիւրին և Հեղտալի է, որք  
սիրեն և կամին. և մեք վկայեմք առաջի Աստուծոյ և  
երաշխաւոր լինիմք ամենեցուն: Զի եթէ ոք զտուն իւր  
մաքրեսցէ ի զրկանաց և զիրաւամբք ստացուածս միայն  
ժողովեսցէ անդ, թէ և սակաւ թուի թէ իցէ, առաւել  
շահեկան լինիցի և պատճառ հարստութեան, քան զբա-  
զումս անիրաւարար ստացեալս: Եւ զայս իմաստունն  
Սողոմոն յայտ արարեալ ասէ, թէ «Անէծք Տեառն ի  
տունս ամբարշտաց, յարկք արդարոց օրհնին»\*, քան-  
զի սակաւ ինչ անիրաւն զբազում իրաւամբք ստացեալ-  
սըն՝ նման հրոյ կիզէ և ապականէ, զի անիծիւք և դառ-  
նութեամբ է ժողովումն անիրաւն ի զրկելոց անտի, և  
ընդ աղքատացն անիծից և Աստուծոյ անէծքն մտա-  
նեն ի տունս զրկողացն, իսկ տուն արդարոյն, զի սուրբ  
է ի զրկանաց և կերակրիչ է քաղցելոց, ընդ օրհնու-  
թիւնս աղքատացն և Աստուծոյ օրհնութիւնն մտեալ ի  
ծածուկ և անյայտ՝ զսակաւն բազմացուցանէ, որպէս  
զՍարեփթացի այրույն և զՍոմնացւոյն և զորս տէրն  
կերակրեաց յանապատին:

Եւ մի ոք յանմտաց և ի մարմնասիրաց զբազում  
ինչս տեսանելով զրկողաց և ամբարշտաց և զսակաւս  
որոց իրաւամբք ստանան, այսպանիցէ զբանիւք մերովք,  
այլ լուիցէ այնպիսին աստուածահօր մարգարէին Դաւ-  
թի՝ զի ասէ. «Լաւ է սակաւիկ ինչ արդարոյն, քան

\* Առակ Գ. 33

161 Ծ չի՛ ոչ

182 Ե բազմասիրաց փիս մարմնասիրաց

185 Յ չի՛ Դաւթի

186 Ո որ փիս զի

պրագում մեծութիւն մեղաւորաց»\*. նոյնպէս և որդույ  
նորին Սաղոմոնի, արդարոյն ասէ՝ «Ամենայն աշխարհ  
լի է ընչիւք, իսկ ամբարշտին և ոչ դանդ մի»\*\*. և դար-  
190 ձեալ՝ լաւ է ասէ՝ «Բանջառոք կերակրիլ հանդերձ ար-  
դարութեամբ, քան մեծամեծ զենլեօք անիրաւու-  
թեամբ»\*\*\*: Եւ յիրաւի է այս, զի որք յիրաւացի և  
յարդար ընչից իւրեանց կերակրին, ոչ ինչ կրեն պա-  
տիժս յԱստուծոյ, իսկ այնք, որ ի զրկանաց կամ ի  
195 գողութենէ և ի յափշտակութենէ լուսն զսեղանս իւ-  
րեանց, զամենայն, զոր առատապէս վայելեն յայլոց  
իրաց, տոկոսեօք ունին հատուցանել ի դատաստանին  
աւոր:

Մի և զպահս հաւատոյ լուծանէք ի ձուկն և ի գինի  
200 իշխանաբար, զի մի ընդ անժուժկալսն զատիցիք:

Դարձեալ և զայս ասհմք, զի ստութիւն և խարէու-  
թիւնն, զոր Քրիստոս Հրամայեաց, թէ ի շարէն է՝ ի  
սատանայէ, թէպէտ և ամենայն մարդոյ վնասակար է,  
բայց առաւել մեծամեծաց և իշխանաց, զի փոքրն,  
205 վասն զի անզօր է, ջանայ ստութեամբն զբան իւր հաս-  
տատել և հաւատալի առնել, իսկ մեծն, քանզի ի ձեռ  
իր է առնելն, զոր կամիցի, իշխանաբար, յորժամ զի-  
րաւունս արհամարհիցէ:

Դարձեալ՝ ռամիկ մարդոյ, եթէ ստութիւն ինչ խօսի  
210 և թէ այլ ինչ վատթար իրս զործէ, ոչ լինի այնքան  
յայտնի, և ոչ Հրապարականախատ լինիցի, իսկ զմե-  
ծին և զփոքր մի սխալանքն ի հայբոյութիւն և ի թըշ-  
նամանս բարձրացուցանեն մերձաւորք և հեռաւորք,  
այս սիրողքն շարի՝ օրինակ շարութեան առնուն զա-  
215 ի մեծամեծաց եղեալ պատուիրանազանցութիւնս ինչ:

\* Սաղմ. լԶ. 16

\*\* Առակ Ժէ. 4

\*\*\* Առակ ԺԵ. 17

190 CDEFGH հանդարտութեամբ վիս հանդերձ արդարութեամբ

206 Ե չի քանզի

վասնորոյ, աղաջեմ, մի եղիցի առ ձեզ բան խա-  
բէութեան և ստութեան, մի առ ձեր հնագանդեալսն և  
մի առ արտաքինսն, այլ որոց խոստանալք բանիւ  
զբարիս, զնոյն և զործով կատարեցէք, զի այն է հաճոյ  
220 առաջի Աստուծոյ և մարդկան և զովութեան պատճառ  
ձեզ յամենայն բերանոյ:

Նաև զգինուորաց ձերոց և զամենեցուն, որք ծա-  
ռայինն ձեզ, զահմանեալ հոռզսն մի պակասեցուցա-  
նէք, զի զրկանք մեծ է այն և անիրաւութիւն. քանզի  
225 որպէս նոքա պարտական են վասն պարզեացն, որ ի  
ձէնչ, զարինս իւրեանց հեղուլ վասն ձեր, նոյնպէս և  
դուք պարտիք զխոստացեալ թոշակսն նոցին հատու-  
ցանել անթերի:

Եւ մի ինչ բռնութեամբ առաւել, բան զշափն, զնայք  
230 առ նոսա, զի մի յերկիւղէ կողոպտելոյ և բանդ և պա-  
տուհաս կրելոյ ի ձէնչ անիրաւաբր՝ զաղտնի փախ-  
շին և ուրացողք լինին երդմանցն, որ առ ձեզ, և եր-  
կու կողմանցդ լինիցին մեղք՝ նոցա և ձեզ: Այլ եթէ  
հաւանիք խորհրդակցութեան մերոյ և խրատու, զայտ  
235 սահման դիք ամենեցուն, որք ծառայենն ձեզ, զի որ-  
շափ կամբ լինին մարդոյ կալ ի ծառայութեան ձերում՝  
հաւատարմութեամբ ծառայեցեն ձեզ և առանց նեն-  
գութեան, և որ որ յօժարի ելանել ի ծառայութենէ ձեր-  
մէ, յայտնի հրաման խնդրեցէ ի ձէնչ առանց երկե-  
240 ղի, և դուք մի սաստիւ և բռնութեամբ լինիք արգելօդ,  
բայց եթէ սիրով և իւրով կամաւ: Զայն, որ ոչ կամիք  
դուք զնալ ի ձէնչ, և այլոցն՝ քաղցրութեամբ տուք հրա-  
ման, և եթէ ինչ պարտից էք՝ հատուցէք նոցա: Եւ յոր-  
ժամ այսպիսի իրաւունք տեսանեն ի ձէնչ լիալ, կամ ոչ  
245 զնան բնաւ, և կամ թէ զնան՝ փութով դարձեալ առ ձեզ

227 Յ չիք պարտիք

235 GH որ փիս որք

241 Յ չիք իւրով

245 E չիք դարձեալ

դառնան և ազատէք զնոսա և զձեզ ի խղճէ երդմնազանցութեանն, և լինի այն մեծ վարձուց պատճառ ձեզ յԱստուծոյ:

Դարձեալ, մի՛ եղիցի ձեզ յօժարութեամբ դիմել

250 երդմունս յանուն Աստուծոյ և յաւետարանն սուրբ և ի խաչ՝ առանց մեծագոյն հարկի, քանզի Քրիստոս հրամայէ յաւետարանին, ուր երդումնն լինի, թէ՝ «Ամենեւ վին մի երդնուցուս ոչ միայն յարարիչն, այլև ոչ յարածու, ոչ յերկինս և ոչ ի յերկիր և ոչ ի զլուխ քո»\*,  
255 այլ այնպէս ցուցէք ամենեցոն զձեզ ճշմարտախօս լինել, մինչ զի լոկ բանից ձերոց, որպէս երդման, հաւատացցեն մարդիկ: Իսկ եթէ ծանրագոյն ինչ հարկ լինիցի երդնոյց, մի ոք մեղիցէ զանթողի յանցանսն՝ ուրանալով զերդմունսն և երդմնազանց լինելով, զի  
260 առաւել շար է ուրացութիւնն, որ լերդմունսն է, քան դայն, որ յերկիւղէ մահու առաջի անհաւատից ուրանան, քանզի այն ի բռնութենէ է և յերկիւղէ տանջանաց և մահու, և այս՝ կամաւրութեամբ և վասն սակաւ ինչ կորստական շահի, և է զանազանութիւն սոցա, որ-  
265 պէս կամաւ մեղքն և ակամայ:

Եւ ոչ միայն առ հաւատակից քրիստոնեայս պարտէ առանց ստութեան պահել զերդմունսն, այլև առ այլազգիս, և մանաւանդ առ նոսա առաւել, զի մի անուանն Աստուծոյ և հաւատոյս քրիստոնէութեան պատճառը լինիք հայէն առաջոյելոյ ի նոցանէ. զի թէ կուապաշտ թագաւորին նաբուզողոնոսորայ՝ երդմնազանց լինելով հրէիցն, մատնեաց Աստուծ զքաղաքն և զազգն ի ձեռս նորա, քանի ևս ի նորում պատուհասէ Աստուծ զայնոսիկ, որք ատեն և ուրանան զերդմունսն, որ առ  
270 նոսա:

\* Մատթ. Ե. 34

247 Ե չի ձեզ

250 CDEFH չի յանուն աստուծոյ և

Եւ մի՛ ոք զայն առաջի դիցէ, եթէ վասն զի նոքա  
ստեն երդմանցն, որ առ մեղ, պարտ է՝ զի և մեք առ  
նոսա զնոյնս արասցուք, այլ չէ մերս երդումն և նո-  
ցայն հաւասար զի մերս առ ճշմարտութիւնն է, և նո-  
ցայն ոչ նոյնպիսի: Վասնորոյ և մեք որպէս զծառայս  
զիտօղ կամաց տեառն իւրոյ և ոչ արարօղ՝ բազում  
ըմպեմք գանս, և նոքա որպէս զտղէտո՞ սակաւ:

Դարձեալ աղաշեմք, մի՛ առ բարկութիւն շարժելով  
և ոչ ուղղադատ իրաւամբք, կամ իրատ ինչ առնէք  
մարդոյ կամ մահու վճիռ տայցէք, քանզի նոր օրէնքս  
ոչ հրամայեն զայսոսիկ, և ճին օրէնքն թէպէտ և հրա-  
մայեն, բայց ոչ վայրապար, այլ ըստ յանցանացն  
արժանաւրութեան զիւրաքանչիւրսն դատել ի իրատ  
և ի մահ:

Վասնորոյ և դուք, որ յիշխանութեանդ էք, թէպէտ  
և զնոր օրէնքս անկարելի ասէք պահել, զիին օրինացն  
հրամանս, որ վասն այսպիսի իրաց է, կատարեցէք: Իսկ  
եթէ առանց օրինաց դատիք զմարդիկ անիրաւաբար ի  
սպանումն և ի իրատ, զիտասչիք հաստատուն, զի  
խնդրելոց է ի ձէնչ Աստուած յաւուրն դատատանի  
զարին սպանելոցն և զհատեալ անդամս իրատելոցն:

Նաև զայս ևս պատուիրան աւանդեմք ձեղ, մի՛  
լինիք վրիժառուք և քինախնդիրք, որով զիշխանսն իս-  
րայէլի նախատէ մարգարէն ծսայիաս, այլ ըստ հրա-  
մանին Քրիստոսի ներօղ և երկայնամիտ լերուք առ  
ամենեսեան՝ որ մեղուցեալ իցեն ձեղ, զի և դուք ըն-  
կալզիք առ ի նմանէ զքաղցրութիւն և զբարերարութիւն,  
ըստ ասելոյն, թէ՝ «Մի՛ դատիք և ոչ դատիցիք, մի  
պատժէք, և ոչ պատժիցիք»\*, զի որով շափով շափէք,  
305 շափեսցի ձեղ:

\* Պուկ. Զ. 37

291 Ը անկարգելի

293 Ե չի՛ եթէ

305 Յ ձեղ և Քրիստոս աստուծոյ մերո փառք յախտեանս ամէն:

## ԱՌ ԶԻՆՈՒԱՐԱՑ ԴԱՍՍ

հեռիմք ըստ կարգի և առ դասս զինուորացգ, որ  
ընդ ձեռամբ էք իշխանութեանց և պետութեանց:

Եւ նախ և առաջին՝ զառաքելականն առ ձեզ բար-  
5 բարիմք բան, որ պատուիրէ ձեզ Հնազանդ լինել տե-  
րանց ձերոց՝ յամենայնի. «Մի՛ առ ականէ ծառայել  
որպէս մարդահաճոյք, այլ միամտութեամբ սրտիւ որ-  
պէս Աստուծոյ»\*: Զի և այնմ ասէ, Տէր է հատուցա-  
նօղ, այսինքն թէ՝ որ հաւատարմութեամբ ծառայէ այ-  
10 նըմ՝ ընդ որոյ իշխանութեամբ անկեալն է, թէև ի  
նմանէ պակասութիւն ինչ լինիցի ինքեան, մի ասէ  
տրտմեսցի, զի Աստուծ է որ հատուցանէ նմա փո-  
խարէնս բարեաց՝ ըստ ուղիղ վաստակոց իւրոց:

Իսկ որ նենգաւոր գտանիցի բանիւ կամ գործով,  
15 կամ անձին տեառն իւրոյ, կամ տեղոյ ամրականի նո-  
րա, կամ ընչից նորին, Աստուծոյ է այն նենգութիւն և  
ոչ մարդոյ. և յԱստուծոյ ընդունելոյ է զվրէֆ հատուց-  
ման շարեաց իւրոց, որ և ի հաւատոյն որոշեալ է այն-  
պիսին և շար քան զանհաւատսն է, քանզի նոքա թէ-  
20 պէտ և ի ճշմարիտ հաւատոյ և յօրինաց Աստուծոյ մո-

\* Եփես. Զ. 6

1 Ե դասս խրատ

2 CFGԻ որք Փիս որ

5 Ե շի՛ տերանց ձերոց

8 Ե հատուցանող բարեաց

9 Ե զայն Փիս այնմ

լորեալք են, բայց զ՞նազանդութիւն տերանց իւրիանց և զմտերմութիւն հաստատուն բերեն յանձնու:

Եւ զի՞նչ ասեմք առ քրիստոնեայ իշխանս՝ ունել միամտութիւն և սէր, յայտնի և ծածուկ. այլ թէկ ի  
25 քրիստոնէից ոք ընդ այլազգոյ է իշխանութեամբ և ի նորին պարզեց կերակրի և զգենու, զնոյն հաւատարմութիւն պարտ է ցուցանել նմա և զառանց նենգութեան ծառայութիւն: Զի և յորժամ զրէր զայսոսիկ առաքեալն Պօղոս, թէ՝ «Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց»\*, ոչ եթէ քրիստոնեայք էին տեսարք ծառայիցն, այլ կոապաշտք: Բայց այսու յայտնի կամեցաւ ցուցանել հեթանոսացն զջշմարիտ օրէնս քրիստոնէից, եթէ ատելի է օրինաց մերոց նենգութիւն տերանց և սիրելի է հաւատարմութիւնն, զի մի՛ բանու  
35 հայճոյութեան յօրէնս և ի հաւատս մեր խօսեացին, յորժամ ի քրիստոնէից զոք տեսցին նենգաւորս գտեալ առ նոսաւ:

Եւ եթէ կարգիցիք ի տէրանց ձերոց ի զործ վերակացութեան, կամ առաքիցիք ի տնօրէնութիւն ինչ բանի, արդարութեամբ և իրաւամբք առ զ՞նազանդեալսն վարեցարուք, մի՛ զոք նեղելով անողորմաբար արտաքոյ իրաւանց և մի՛ զոք զրպարտելով անկարեկից բնութեամբ՝ ցուցանելով զձեզ առ նոսա օրինօք զահճաց, և մի՛ առաւել բան զհրամայեալն ձեզ առնիցեք  
45 ըստ սրբոյ Մկրտչին խրատու, այլ թոշակօքն ձեր բաւականասցիք և ողորմութեամբ և սիրով զնացէք առ ամենայնսն, զի և դուք ողորմութիւն գտանիցէք յԱս-

\* Կողոս. Գ. 22

22 Յ պահեն վիս բերեն

24 Յ մտերմութիւն վիս միամտութիւն

29 Յ շիք ծառայք

31—32 Յ յայտնել շիք ցուցանել

36 Յ շիք տեսցին

47 Յ միմեանս վիս ամենայնսն

տուծոյ, և մի՛ յաղագս զինուորութեանդ արհամար-  
հեալ զպատուիրանս Աստուծոյ, լինիցիք անհնազանդք  
50 առաջնորդաց, որք խրատեն զձեղ պահել զպատուի-  
րանս Աստուծոյ, կամ զսուբք պահս ահօրինաբար լու-  
ծանէք, կամ զյափշտակութիւն ընչից աղքատաց և  
զանպարտ արեանց Հեղմունս ոչ մեղս համարէք, զի  
բաց ի հասարակաց պատերազմական սպանմանցն,  
55 որք հրամանաւ թագաւորացն լինին, ալլոցն, որ ի ձեն-  
չըն լինին, ամենեցուն համարս պահանջելոց է ի ձենչ  
Աստուծած՝ ծանր և անաշառ դատաստանաւ:

Եոյնպէս և զորս քան զսահմանեալ Հռոգսն ձեր  
անիրաւաբար և բռնութեամբ յաղքատաց յափշտակէք,  
60 կամ ի տերանց ձերոց ընչից զողանայք, ունիք տալ  
զվճարն առանց պակասութեան յաւուն դատաստանի:

Նաև քան զայլ հասարակաց ժողովրդականսդ՝ ձեզ  
առաւել պարտ է երկնշել յԱստուծոյ և զպատուիրանս  
նորա պահել, զի յամենայն ժամ ընդդէմ սրոյ թշնա-  
65 մեաց ունիք պատերազմել:

Վասնորոյ, առաւել քան մարմնական զինուք, հա-  
ւատոյ զինովն վառեցարուք, այսինքն՝ աստուծածպաշ-  
տութեամբ և արդարութեամբ և սրբութեամբ, պահօք և  
աղօթիւք և ողորմութեամբ, որպէս զի Աստուծած լիցի  
70 ախոյնեան ի պատերազմունսն և զթշնամիսն վանեսցէ  
առաջի ձեր:

55 CD սահմանացն Փիս հրամանաւ G չի՛ ալլոցն որ ի ձենչն թ-  
մին

64—65 F չի՛ զի յամենայն... պատերազմել

69 G լիցի ձեղ

## Ա.Ո. Ք.Ա.Ջ.Ք.Ա.Կ.Ա.Ն.Ս.Դ.

Պատուէր տամք և քաղաքայնոցդ և որք ի վաճառափողոցս նստիք գնել և վաճառել և առ արուեստաւորսըդ, զի ուղղութեամբ տանիցիք զկեանս ձեր և անտարտ քաղաքավարութեամբ:

Եւ մի ոք խաբէութեամբ և նենդաւորութեամբ վաճառեսցէ զստացուածս իւր անմեղ գնողաց, մանաւանդ ստախօսութեամբ և սուտ երգմամբ զռամիկսն և զանգէտսն խաբելով, զի ի դատաստանին աւուր ընդ գողս 10 և ընդ յափշտակողս դատելոց է այնպիսին, և առնու Աստուած զբարեգործութիւնն իւր և տայ զրկելոցն ի նմանէ:

Եւ մի եղիցի առ ձեզ կշիռ մեծ և փոքր և շափէ կրկին, «Ճի պիզծ են երկորեան առաջի Տեմոն»\* որ 15 պէս ասաց Սաղոմոն, այլ արդարութեամբ և զորդութեամբ վաճառեցէք զգործս ձեռաց ձերոց և զնիւթ վաճառոյ ձերոյ, զի մի անէծք զրկելոցն այրեցէ զգոյս ձեր, այլ օրջնութիւնն Աստուծոյ մտցէ ի տունս ձեր:

\* Առակ ի. 10.

1 Յ առ վաճառականսն և արևստաւորսն վիս առ քաղաքականսդ

2 Յ ասացուք վիս պատուէր տամք և քաղաքայնոցդ

11 Յ զբարեպաշտութիւն վիս զբարեգործութիւն

13 Գ չի՛ առ

15 Ը ուղղութեամբ վիս զորդութեամբ

16 Չի՛ և զնիւթ վաճառոյ ձերոյ

17 զգործս վիս զգոյս

18 Գ չի՛ այլ... ի տունս ձեր

Եւ մի արհամարհէք զշինականսն, իբրև զանգէտս, յա-  
սիրէ Աստուած զարդարամիտ կեանս նոցա քան զարա-  
20 դագս պարզամտութեանն իւրեանց, քանզի առաւել  
տաւորս և զիսարեբայս ի մարդկանէ:

Մի տայք զարծաթ ձեր ի վարձու, ըստ մարզա-  
րէին, այնոցիկ, որք նեղին ի բռնութենէ իշխողաց, և  
25 ուտէք զազքատութեան վաստակս նոցա ի շահս վաշ-  
իսիցն, այլ որպէս եղբարք կարեկիցք և օդնականք լի-  
րուք միւմեանց:

Եւ զոր տայք նոցա փոխ՝ զայն միայն պահանջի-  
ցէք ի նոցանէ և շահիցիք զվարձս յԱստուծոյ բազմա-  
30 պատիկ յանանց կեանսն, որպէս և Հրամայէ Քրիստոս  
ոչ միայն առանց վաշխից տալ, այլ թէ՝ տուք այնոցիկ,  
յորոց ակն ոչ ունիցիք առնուկ»\*:

Այս յամենայն գոյից ձերոց տուք ողորմութիւն  
կարօտելոց և աղքատաց, զի այնու սրբեսցի ամենայն  
35 ինչ ձեր և առնուցուք զփոխարէն ի Քրիստոսէ յաւորն  
դատաստանի:

\* Պուկ. Զ. 34

24 Յ իշխանաց

28 Յ մի վիս միայն

ԱՅ ԵՐԿՐԱԳՈՐԾՄ ԵՎ ՀԱՄՕՔԵՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՍԴ

Լուարուք և երկրագործք համօրէն ժողովրդական-  
քրդ զիսրատ պատուիրանին Աստուծոյ, զոր աւանդեմք  
ձեզ, որոց մանաւանդ առաւել պիտանացու է դեղ Հո-  
5 վերական առ ի բժշկութիւն ոգուց, զի և դուք առող-  
ջանայցէք ի մեղացն Հիւանդութենէ:

Որով աղաշեմք զձեղ, մի՛ անցաւոր կենացս Հեշ-  
տութեամբ մարմնոյ, զյաւիտենական Հեշտութիւնն  
հոգւոց, զոր յարքայութեանն երկնից վայելեն սուրբ-  
10 քըն, կորուսանէք:

Եւ զի տաճար էք Աստուծոյ, որպէս ասաց առա-  
քեալ, և Հոգի Աստուծոյ բնակեալ ի ձեղ մկրտութեամբ  
աւագանին, մի՛ ապականէք պղծալից պոռնկութեամբ  
և շնութեամբ զտաճարդ Աստուծոյ, որ են հոգիք ձեր,  
15 զի մի՛ ապականեսցէ զձեղ Աստուած ի դատաստա-  
նին առուր հրով գեհենին, որպէս և զրէ Պօղոս:

Եւ մի՛ արքենայք զինեաւ յորում զեղսութիւն և յի-  
մարութիւն է, որ է մայր պոռնկութեան և ամենայն  
պղծութեան և անիրաւութեան և վիճման և աղտեղի  
20 բանից անարգանաց, յորմէ և սպանութիւնք լինին, զի  
մի արտաքս անկանիցիք յարքայութեանն Աստուծոյ  
ժառանդութենէ ընդ սպանողս և ընդ շարագործու՝ բատ  
ապեկական բանիցն:

1 BG չի՛ երկրագործու և

2 B խաւահացուք և առ փխ լուարուք և երկրագործք

18 E չի՛ ամենայն

20 B ապականութիւնք փխ սպանութիւնք

Եւ թէ ոք ի ձէնջ մեղաւ այսոքիւք Աստուծոյ և  
25 կամ այլ ինչ յանցանօք, մի կացէ հանապազ ի նոյն  
աղտեղի սովորութիւնն մինչև ի վախճանին օր, այլ  
ի ձեռն խոստովանութեան և ապաշխարութեան քաւես-  
ցէ զյանցանս իւր և դործեացէ յայսմհետէ փոխանակ  
շարին զբարիս:

30 Դարձեալ՝ մի՛ գլեզուս ձեր առնէք զործի սատա-  
նայի ի ձեռն շար և դառն յիշողաց, մանաւանդ որ զհա-  
ւատ և զհոգիս անարգեն և զմկրտութիւն աւազանին և  
զմկրտիչ քահանայն և զերես և զբերան, որ քան զու-  
րացութիւն և զթլպատութիւն մեծ են այս յանցանք,  
35 զի այլազգիք, որ ուրանալ տան քրիստոնէին զհաւատն-  
զԱստուած ոչ տան անարգել:

Իսկ այս, որ զհաւատն անարգէ, ոչ զմարդ անար-  
գէ, այլ զԱստուած, զի հաւատ ամենայն աստուածա-  
պաշտի՛ Աստուած է, և որ զմկրտութիւն և զմկրտիչ քա-  
40 հանայն անարգէ՝ առ Հոգին Սուրբ է անարգութիւնն  
այն, զի նովաւ ծնանին մկրտեալքն աւազանաւն. և որ  
զհոգի մարդոյ և զերես անարգէ, նոյն առ Աստուած  
վերանայ հայհոյութիւնն, զի Հոգի յԱստուծոյ է փշու-  
մըն, և երեսն պատկեր է Աստուծոյ, նոյն և բերանն  
45 ընդունող է մարմնոյ և արեանն Քրիստոսի:

Եւ արդ՝ մի տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Աս-  
տուծոյ այսպիսի զազիր և աղտեղի բանիւք, զի մի հե-  
ռասցի ի ձէնջ Աստուծոյ Հոգին, որ բնակեաց ի ձեզ  
յաւազանին, և փոխանակ մտցէ և բնակեսցէ ի սիրտս  
50 ձեր հոգին սատանայի:

Դարձեալ և զայս պատուէր առ հասարակ ամե-  
նայն հաւատացելցդ աւանդեմք, զի զմանկունս ձեր  
երկիւղիւն Աստուծոյ սնուցանիցէք, խրատելով զնո-  
սա ի մանկական տիոց լինել աստուածասէր, ողոր-  
55 մած, աղօթասէր, և ուսուցէք նոցա զբանս աղօթից, և

31 Ե դառն և մանր փխ շար և դառն

49 Յ չի սիրտս

սաստեցէք շսովորել ի խօսս աղտեղիս և ի յիշոցատու-  
ութիւնս, զի ի մանկութեան ժամանակի առաւել տնկի  
խրատ ծնողացն ի միտս մանկանցն անջնջելի յիշատա-  
կաւ, ընդ որում և վարձու բարեաց ընկալչիք փոխարեն  
60 ի Քրիստոսէ:

Եւ զլուխ ամենայն բարեաց զմէր առ միմեանս  
կալչիք, և առ աղքատս և մերկս և հիւրս և բանգեալս  
և հիւանդս՝ զկարեկցութիւն և զողորմութիւն, որով ար-  
քայութեանն լինիչիք ժառանդորդս ի Քրիստոս Յիսուս:

---

59 Յ. բարի ՓԽ բարեաց

61—62 Ղ միմիանս և առ ամենեան կալչիք մանաւանդ

## ԱՌ ԿԱՆԱՆՑ ԴԱՍՍ

Պատուէր տամք և կանանց ազգի պարկեշտութեամբ և բարեձեռւութեամբ լինել յամենայնի, որպէս և վայել է քրիստոնէից, և առաւել քան ոսկով և արծաթով՝ ամօթխածութեամբ և պատկառանօք զարդարել զանձինս ձեր:

Եւ մի՛ ոք ի գայթակղութեան պատճառս մեղաց անմիտ երիտասարդաց այլագունեսցէ զգոյն երեսաց իւրոց օտար գեղօք, զի մի՛ զիւր հոգին և զցանկացողին ինքհան արկցէ ի գուրն անօրէնութեան:

Եւ մի՛ ոք նմանօղ լիցի օձին՝ գործի անօրենութեան լինելով սատանայի, զոր և կաւատն անուանեն, զի որպէս նա եւայի ջամբեաց զպտուղն մահու խաբէութեամբն, նոյնպէս և սա զանմիտ կանանց և զարանց տայ ճաշակել զպտուղն մահարեր մեղաց, որ ի սկիզբն քաղցր երեխ անմտաց, և յետ կատարմանն դառն, քան զլեղի, որ և զանէծս օձին ժառանգեսցէ այնպիսին յԱստուծոյ, զորոյ և զգործն ստացաւ:

Պարձեալ՝ մի՛ ոք ի ձէնչ սատանայական կախարդութեան և աղանդոց գեղատուութեան զհետ երթիցէ, զի այլ մեղք ի գործն է վնասն, և այդ ի հաւատն, քանզի կախարդութիւնն ի սատանայէ է, և եթէ ոք ոչ նախ հեռանայ յԱստուծոյ և առնէ զինքն սատանայի

1 CDEF առ կանայս Հ առ ազգս կանանց

11 Բ չի՛ անօրենութեան

13 մահարեր փխ մահու խաբէութեամբն

17—18 Բ չի՛ և... ստացաւ

պաշտօնեալ և երկրպագու, ոչ յաջողին կախարդու-  
թիւնքն:

Վասնորոյ աղաշեմք ի բաց լինել յայսպիսի մեծ  
և աններելի շարեաց, զի մի ընդ սատանայի դատա-  
պարտեացի այնպիսին ի հուր գեցենին, զի այս գործ  
կուապաշտիցն է և ոչ քրիստոնէց, զոր Քրիստոս եբարձ  
30 գալստեամբն իւրով յաջիւարձէ զկուցն մոլորութիւնն  
և զգործս նորին շարութեան:

Արդ, մի՛ ոք վերստին գործակից լիցի սատանայի  
շար գործովք կախարդութեան և ընդ նմին այրեացի ի  
հուր գեցենին յաւիտեան:

35 Եր և այլ ինչ բազումս զրել առ ձել յաստուածա-  
յին պատուիրանաց առ ի զգուշութիւն ի մեղաց և յա-  
մենայն շար դործոց, բայց զոր պակասն է ի գրոյս  
ունիք ուսանել ի քահանայիցդ և յեպիսկոպոսացդ, որք  
կարգեալ են յԱստուծոյ տեսուչք հոգոց ձերոց՝ օր ըստ  
40 օրէ համառօտել ձեզ զբանն ճշմարտութեան:

Եւ մեր աղաշեսցուք զՏէր, զի հանցէ ի ձէնց զսիրտ  
քարեղէն և տացէ ձեզ սիրտ մարմնեղէն՝ լինել երկիր  
արգաւանդ և արդիւնացուցանել զսերմն բանիս մեր  
յոգիս՝ ձեր և տալ պտուղ բազմապատիկ ի շափ երրոր-  
45 դին, որով զուարթազին և անտրտում երեսօք ասաս-  
ցուք յաւուրն դատաստանի առաջի արդար դատաւո-  
րին՝ ահա ես և մանկունք իմ, զոր ետուր ցիս, և դա-  
սեցուք ընդ աչեալյոն ի յաւիտենական կեանսն՝ ձեօք  
հանդերձ ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որ է օրհ-  
50 նեալ յաւիտեանս, ամէն:

28 Ե չի՛ ալս

35 Ե չի՛ բազումս

38 Ե որ վի՞ որոք

41 Ե չի՛ մեր

42 Ե չի՛ երկիր

45 Ե որպէսպի վի՞ որով

46 Ե չի՛ առաջի արդար դատաւորին

48 CD ձեր վի՞ ձեօք

## ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅԱԿՆԵՐ

1 «Թուղթ» ընդհանրական ներսէսի կաթողիկոսի Հայոց առ Համօքէն Հայութու ազինս, որոց տեսչութիւն Հաւատացաւ նմա ի Տեսանկ», Էջմիածին, 1865 թ.: Ալուսուհետե՛ ամենուր «Թուղթ ընդհանրականի»: Այս և հաջորդ բոլոր մեջբերումները կատարվում են Էջմիածնի 1865 թ. Հրատարակությունից: Ցավոք այս Հրատարակության 65—66 էջաճամարները կրկնված են, թեև բնագիրը ճիշտ է շարունակվում: Մեջբերումների ժամանակ մենք Հետեւում ենք գրքում նշված էջաճամարներին:

2 Է. Մ. Բաղդասարյան, Շովաննես երգնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 47—48:

3 Անդ, էջ 44—48:

4 Դ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, մենակտիկ, 1873, էջ 343—344:

5 Շնորհալու «Թուղթ» ընդհանրականի» առաջին Հրատարակությունը իրականացվել է դեռևս 1788 թ., Սանկտ Պետերբուրգում, Զովսի արքեպիկոպոս Արքուրյանի կողմից: Արդությանը, ինչպես և միջնադարյան գրիչները, թղթի վերնագիրը ընդհանուր է Համարել ողջ ժողովածուի Համար, սակայն կատարել է Խմբագրական որոշ աշխատանք:

Ամբողջ ժողովածուն Արդությանը բաժանում է 3 մասի, որի առաջին մասը կազմում է բուն թուղթը, այնուհետե՛ ներսէս ու Գրիգորիս կաթողիկոսների, Մանուել կայսրի ու Միքայէլ Ատարիարքի նամակներից մեկական օրինակ: Երբորդում՝ ներսէս Շնորհալու նամակները գրված դանական անձանց: Ժողովածուն լի է նաև ուշագրավ այլ նյութերով՝ Հիշատակարանով, ցանկերով: Իրեն Հավելում տպված է ներսէս Լամբրոնացու Շնորհալուն նվիրված ներբողը:

Հովսեփ Արդությանը առաջարանում շարագրում է այն պատճառները, որոնք խթան Հանդիսացան իր ժամանակի Համար բավական զժվարությամբ ի կատար ածված հիշալ Հրատարակությանը: Պատճառներից առաջնը օտարքներին, որոնց երկրներում ապրում էին Հայերը, մեր եկեղեցու դավանանքին ծանոթացնելն էր, քանզի այլադավան բրիստոնյաները Հաճախ էին Հետաքրքրվում Հայոց եկեղեցու դավանանքով, իսկ երկրորդը այն, որ թղթում եղած Հորդորներին հետեւին իրենք՝ Հայերը:

Ժողովածուն լույս է տեսել հետեւյալ խորագույն՝ «Գիրք որ կոչի Ընդհանրական արարեալ սրբազնասուրբ Հայրապետին մերոյ տեսան ներսէսի Ծնորհաւոյք», Ս. Պետերբուրգ, 1788թ.:

6 «Թուղթ ընդհանրականը» Ծնորհալու բազմաթիվ այլ գործերի հետ 1867 թվականին Հրատարակվել է նաև ոռուսերեն՝ Ալեքսանդր Խուդափաշնի թարգմանությամբ, Հակիմ առաջարանով, ծանոթագրություններով և առարկայական ցանկով (Исторические памятники вероучения Армянской церкви, СПб, 1847): Այս Հրատարակությունը ևս, մախորդի նման, թէկադրված էր գործնական նպատակներով: Բանն այն է, որ XIX դարի 30-ական թթ. վերջերին ոռուսական մամուլում լույս են տեսնում Հայ եկեղեցու դավանանքի մասին աննպաստ հոգվածներ, չիմք ունենալով միջնադարյան առանձին հոգվածների ու պատմիչների բացասական տվյալները Հայ եկեղեցու վերաբերմամբ: Հովհաննես Կարբեցի կաթողիկոսը այդ առիթով բողոքում է Նիկուայ առաջին կայսրին: Կայսրն իր Հերթին բողոքում է ոռուսական Սինոդին, կարգադրելով վերաբննություն մացնել Հայոց եկեղեցու մասին եղած Հոգվածներում և թույլ շտալ անարդարացի Հարձակումներ: Կայսեր կարգադրությամբ Սինոդը դիմում է կաթողիկոսին, ինչդեռևս Հայոց դավանանքի մասին մանրամասն տեղեկագիր տալ: Կարբեցուն փոխարինած Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը զգուշանալով, թէ զա կարող է եկեղեցիների միության նոր խնդիր առաջ բերել, բացատրություններ զգելու փոխարքն 1850 թ. ուղարկում է Ծնորհալու թղթի ոռուսերեն թարգմանությունը, որը, ըստ Աշտարակեցու, նիրկայացնում է Հայոց եկեղեցու դավանության մանրամասն վերլուծումը: Տե՛ս ն. Մելիք-Թանգարան, Հայոց եկեղեցական իրավունքը, Ա. գիրք, Ծուշի, 1903, էջ 568:

7 Այս իմաստով, ինչպես նկատվել է Հայագիտության մեջ, բացառիկ արժեք են ներկայացնում Ծնորհալու գրագրությունները բյուզանդական կայսր Մանուկի և Կոստանդնուպոլիսի պատրիարքի հետ:

Ծնորհալին Մանուկ կայսրին գրած նամակում նշելով, որ եկեղեցիների միությունը Հանրավոր է միայն խաղաղ ճանապարհով և փոխպեշտումների միջոցով, առանց ուժեղի կողմից բռնություն գործադրելու, միաժամանակ շի խուսափում ուղղակի ասելու «Եվ յառաջին թագաւորացն ոչ զոր, բայց զձերդ միայն ետևս խոհեմութիւն, այս մեծագունի բարուց լինել պատճառ եկեղեցոյ, և արժանաւոր իսկ էր, որպէս լուար ի բաղմաց...»: «Իուղթ ընդհանրական» («Պատասխանի առաջին թղթոյն Հոռոմոց Մանուկի, գրեալ Ներսիսի, կաթողիկոսին Հայոց»), էջ 157:

Ավելին՝ Կ. Պոլսի հետ բանակցություններում արժանապատվությամբ պահպաններով Հայ եկեղեցու դավանանքն ու շահերը, միաժամանակ զգուշացնում է Հայ եկեղեցու հոգևոր Հայրերին շվատահել այն անհիմն լուրեր տարածողներին, որոնք, Հավանաբար, ձգուում էին բանակցություններն օգտագործել երկարակություններ՝ առաջացնելու կաթողիկոսարա-

նից հեռու գտնվող Հայկական թիմերում. «Վասն որոյ և մեր ի ձևոն աղօթական եղբարցը՝ որք գան լարեւեւ շրջել ի սուրբ տեղիս ուխտից Հայաստաննայց, զրեցաք դայսուիկ սակաւուք՝ ծանօթ լինել զգեղ ճշմարտապէս վերագրելոցդ իրագործութեանց, զի մի յանիմաստից ոմանց անողուապէս ինչ լոււաւ ալլընդալոց ինչ կարծիցէք»: «Թուղթ ընդհանրական» («Առ Կիլիկիապոս և վարդապետ Հայաստաննայց, Վասն սիրոյ և միաբանութեան ընդ լոյնս»), էջ 291—292:

8 Г. Г. Микадян. История Киликийского армянского государства. Ереван, 1952, с. 127.

9 «Թուղթ ընդհանրական», էջ 8: Կիլիկիայի Հայկական պետության պատմության որոշ ուսումնասիրողներ, այդ թվում և Ս. Յոսինազյանը, Շնորհալու այս արտահայտությունը վերագրում էն Կիլիկիայի մասնատվածությանը, որի հետ դժվար է համաձայնվել, որովհետև Թուղթը զրելու շրջանում Կիլիկիան արգեն հիմնականում ենթարկված էր Ռուբինյաններին, թեև դեռևս չեր վերածվել թագավորության և վերջնականապես պիտությանը չեր միացվել Լամբրոնի Հեթումյանների իշխանությունը: Շնորհալու խոսքը ոչ թէ Կիլիկիայի մասնատվածության, այլ հայ ժողովրդի մասնատվածության մասին է, քանի որ «Թուղթը» ուղղված է Համայն Հայությանը: Տե՛ս Ս. Յոսինազյան, Սոցիալ-տնտեսական Հարարերությունները Կիլիկիան Հայկական պետությունում, Երևան, 1973, էջ 41:

10 «Թուղթ ընդհանրական», էջ 8—9:

11 «Թուղթ ընդհանրական», Տեղան Ներսէսի առ Կիլիկիապոտնս և վարդապետ և Համօրէն գասս եկեղեցով, որք յաւուր տօնի արժաւենքաց ժողովելը ի կոչմանէ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի՝ եղոր նորին, ի ձեռնադրութիւն զնա կաթողիկոսութեան Հայոց, էջ 420:

12 «Թուղթ ընդհանրական», էջ 68—69:

13 Հայտնի է, որ մեր մատենադրության մէջ, երբ զրության նոր ձեւվերի հն դիմում, Հաճախի ձգտում հն երևուցի կարելիությունը արդարացնել՝ օրինակներ բերելով առաքաներից, սրբերից կամ եկեղեցու այլ նշանակոր հայրերից: Շնորհալին ևս դիմում է Պողոս առաքյալի Հիղինակությանը, որը ոչ միայն շրջելով էր քարոզում ավետարանը, այլև «ի կապանս գոլով՝ թղթովք հաստատէր դաշտակերտ հաշտակերտեալսն» («Թուղթ ընդհանրական», էջ 10):

14 Նկատենք մի կարեռ Հանդամանք ևս: Մեր Համոզմամբ նոր կանոնախմբեր շտանդավելու մյուս պատճառն էլ կաթողիկոսարանի բացակայությունն էր բուն Հայաստանում: Որքան էլ էական լիներ Կիլիկիայի դերն ու նշանակությունը Համահայկական կյանքում, Կիլիկիայում և Հայաստանում հասկանում էին, որ վճռական խոսքը պատկանում էր բուն երկրի հոգեպրականությանը, որը ներկայացնում էր Հայ ժողովրդի հիմնական զանգվածները: Ուշագրություն պետք է դարձնել այն փաստի վրա, որ նոր կանոնական խմբեր սկսում են երևան գալ Հիմնականում XVI դ.

Հետո, այսինքն, երբ ամենայն հայոց կաթողիկոսությունը վերադարձվում է հզմիածին:

15 «Թուղթ ընդհանրական», էջ 10:

16 Մատենագրան, ձեռ. № 3906, էջ 4ա:

17 Է. Մ. Բարդարյան, նշված աշխատությունը:

Հովհաննես Երզնկացու «Խրատ հասարակացի» ուսումնասիրության առիթով նկատել էինք, որ նա ազգվել է Ծնորհալու «Թուղթ ընդհանրականից»: Ի հաստատումն մեր այդ ենթադրության, հարկ ենք համարում նշել Հետիշալը: Ծնորհալին այսպիս կոչված «Ճպիրհին» գրած իր նամակներից մնակում, պատասխանելով վերջինիս այն մեղադրանքին, թե իրը «Զի առաքք գրել ի ձևու հակառակորդացն, և նորա արարին ընդ քեզ որպիս հրամայեցաք մեր», ավելացնում է, որ ինքը նրանց, ովքեր Հալածիլ են «Ճպիրհ»-ին, ոչինչ առավել չի ասել, քան ինչ որ եղել է հասարակաց բղորում. «արդ եթէ առաւել բան ինչ, քան զՀասարակաց թուղթն մեր ամացեալ է մեր ընդ նոսա, գրեալ դատակնիքն քո եղիցի ի վերայ մերը, «Թուղթ ընդհանրական», (Նորին տեսան Ներսիսի առ նոյն ժպիրհն), էջ 296—297: Նկատի առնելով, որ Ծնորհալու թղթերում ընդհանրապիս արդարիսի անվանմամբ հատուկ թուղթ չկա, մենք հավանական հնք զտնում, որ Ծնորհալու խոսքը այսուղ «Թուղթ ընդհանրականի» մասին է, և Ծնորհալին փաստորեն նշում է, որ ինքը տվյալ անձնագորության մասին ոչինչ չի գրել նրանց, ովքեր հալածել են «Ճպիրհին»: Եթէ ընդունելի է մեր այս ենթադրությունը, ապա պետք է նկատել, որ Երզնկացին իր ամենախոշոր խրատական գրությունը կոչել է «Խրատ հասարակաց», ենելով Ծնորհալու «Թուղթ ընդհանրականը» բնույթից: Թերևս ժամանակին այդպիս է անվանվել «Թուղթ ընդհանրականը» ևս: Սակայն, այսուղ հարկավոր է անել մի լական լրացում. Օրմանյանը այս «Ճպիրհին» նույնացնում է Հուսիկ արեգայի հետ, որը Գևորգ արեղայի և Կարապիտ երեցի հետ քաղկեդոնիկ էր դարձել և Եղիսիայի կողմերում չորս հարյուր տուն հետևորդներ ուներ: Ինչպես հայտնի է, վերջիններիս անօդուս խրատելուց հետո Ծնորհալին ստիպված եղիսիայի իշխանին նամակ է գրում Հուսիկյաններին զսպելու համար (Մ. Օրմանյան, Աղգապատում, Հ. Ա., մ. Բ, Քեյրութ, 1959, էջ 1437—1438): Սակայն, եթէ Ծնորհալին ժպիրհի գեպքում ժխտում է ոչ միայն իր հատուկ թուղթ գրած լինելը, այլև այն, որ ինքը բացի «Հասարակաց թղթից» որևէ մեկի մասին հավելված բան չի գրել, կնշանակի անընդունելի է դառնում ժպիրհին Հուսիկյանների հետ նույնացնելու Օրմանյանի կարծիքը:

18 Լ. Ս. Խաչիկյան, Կոստանդին Բարձրերդցու խրատական թողթը առաքված Արենլյան Հայաստան 1251 թվականին, Բանքեր Մատենագրանի, № 4, 1958, էջ 267—284:

19 Պ. Ալիշան, Ծնորհալի և պարագայ իւր:

20 Մ. Օրմանյան, Աղգապատում, Հ. Ա., մ. Բ, էջ 1402—1410:

- 21 Մ. Աբեղյան, Երկեր, Հ. Դ., Երևան, 1970, էջ 147—156:

22 Է. Մ. Բաղդասարյան, նշված աշխատությունը, էջ 38—40:

23 Վահնքիրի Հարաբերական անկախության փաստը անուղղակի կերպով ընդունում է նաև Մ. Արեգյանը, նկատելով, որ վանականները կարգություն էին անտեսել կաթողիկոսի խրատներն ու հորդորները: Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, Հ. Դ., էջ 152:

25 Այս թե ինչպիս է բնութագրում իր դարը Ներսես Շնորհալին, այն հակագրելով նախորդ ժամանակների հետ, երբ մութ մարդիկ ամեն կարգի անհեթեթությունների կարող էին հավատալ. «զի թէ տակաւին ի խաւարի անփառութեան նստէաք, որպէս ի կուապաշութեան, չէր հնար այսպիսում ծիծագական աւանդիք հաւանել, թող թէ յայժմուս, մինչ լցեալ է երկիր ամենայն գիտութեամբ տեսան և լոյսն իմաստութեան ծագին ի յաշխարհ», «Թուղթ ընդհանրական» (Նորին յաղագս աւանդութեանց հիեղեցւոյ), էջ 191:

26 Ինչպես վերը տեսանք, այդ մասին ցավով նշում է նաև Շնորհալին վյուրում ոչ և մարմնական հարկաւոր պիտոյիւր շատացեալը ի գիտղից կամ յագրակաց, յորոց ունիմք և ոչ մի... և ոչ օգնութիւն ուստե՞ք՝ որպէս արժան էր, ի թագաւորաց և յիշխանաց ի Քոփստոս հաւատացելոց»: Նկատենք, որ վանքիրը միջնադարում դարձել էին ոչ միայն աստվածաբանական, այլև ճշգրիտ գիտելիքների ուսումնասիրության կենտրոններ («Թուղթ ընդհանրական», էջ 9):

27 Մ. Աբեղյան, նշված աշխատությունը, էջ 152:

28 «Թուղթ ընդհանրական», էջ 49: Շնորհալուց հարյուր տարի հետո ստեղծագործող Հովհաննես Երդնկացին (Պլուտ) ավելի է մեղմում մարմնական պահանջների ստորագասառում հոգեւորից:

29 «Թուղթ ընդհանրական», էջ 66:

30 Պատմութիւն Արքստակիսի Լաստիվերացւոյ, Երևան, 1963, էջ 67—68: «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օքբէկան արքեպիսկոպոսի Սիսնաց», Թիֆլիս, 1910, էջ 319:

31 «Սամուել քահանացի Անեցւոյ, Հաւարձունք ի զրոց պատմագրաց յաղագս զիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս...», Վաղարշապատ, 1893, էջ 110:

32 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Հ. Յ-րդ, Երևան, 1976, էջ 463:

33 Սբրոյն Ներսէսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի, Խորհըրդագութիւնը ի կարս եկեղեցւոյ, և Մեկնութիւն խորհրդոյն պատմագին, Ալենետին, 1847, էջ 526: Այսուհետե՛ Ներսես Լամբրոնացի, Մեկնութիւն պատմագին:

34 Անդ, էջ 529:

35 «Թուղթ ընդհանրական», էջ 66:

36 Ներսես Լամբրոնացի, Մեկնութիւն պատմագին, էջ 440—441:

37 «Թուղթ ընդհանրական», էջ 66:

38 Անդ, էջ 66:

39 Ներսես Լամբրոնացի, Մհկնութիւն պատարագին, էջ 440—441, 526—531:

Ինչպես Հայտնի է, պահպանվել է Հռոմեակայի 1179 թվականի Էկկլի-  
ցական ժողովի Հիմնական մասնակիցների ցուցակը, որից և կարելի է  
համոզվել, թե Կիլիկիայում եպիսկոպոսները անհամեմատ քիչ էին («Թուղթ  
ընդհանրական», էջ 272—273): Ճիշտ է, Օրմանյանը նշում է, թե Կիլի-  
կիայից ներկա էին 9 եպիսկոպոս, սակայն կարծում է, որ այս թվին  
էլ պետք է վերապահությամբ մոտենալ, որովհետև եղածների մեծ մասը  
աշխարհապահական խմաստով էին Կիլիկիան ներկայացնում և ոչ թե Հայ-  
կական իշխանություններին նեթակա մասերը, ինչպես Անտիոքի արքեպիս-  
կոպոսը, Սիւեկիայի արքեպիսկոպոսը և այլն (Մ. Օրմանյան, Ազգապա-  
տում, Հ. Ա., մ. Բ, էջ 1468):

40 Դատաստանագիրք Ամբատ իշխանի (Գունդստարլի), Ա. էջմիա-  
ծին, 1918, էջ 37:

41 Անդ, էջ 39:

42 «Թուղթ ընդհանրական», էջ 81—82:

43 Արժե թերեւ նշել, որ Հայաստանում բնակվող բազմաթիվ ազ-  
գիր, մասնավորակեն քրդերը, անզամ հիմա, երբ Արևմայան Հայաստանը  
զրիթե լրիվ դատարկված է Հայերից, շարունակում են պահպանել Հայե-  
րից մնացած բազմաթիվ ծեսեր, այցելել Հայկական պաշտամունքային  
վայրեր և այլն:

44 Հայկական Էկկլիցում օտար մանուկների մկրտության և այդ  
առթիվ Ծնորհալու վերաբերմունքի մասին ակնարկում է նաև կաթոլիկ  
Հոգևորական Օթոն Տրիսինգացին, տալով շատ միամիտ բացատրություն:  
Բայց նրա իբր ոչ ըրիստոնյա ազգերը իրենց զավակներին Հայ Էկկլիցի-  
ների մերտության ավագաններում լողացնում էին նրանց վրայից ոճաճ  
Հոտը վերացնելու համար (Մ. Օրմանյան, Ազգապատում, Հ. Ա., մ. Բ, էջ  
1371):

45 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ  
308:

46 Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո Հայկական  
զորքերի վիճակի մասին լաստիվներոցու Հաղողած տեղեկություններից  
կարելի է եզրակացնել, թե Հայկառակ քաղաքական անկայուն վիճակին,  
Հայկական զորական միավորումները դեռևս շարունակում էին լուրջ ուժ  
ներկայացնել, ոչեծելազօրն անտերունշ շրջեալ, ոմն ի Պարս և ոմն ի  
Յոյնս և ոմն ի Վիրս: Սեպուհ գունդն աղատաց ելեալ ի Հայրեննեաց, ան-  
կեալ ի ճոխութենէ՝ մոնշեն, ուր և հն իբրև զկորիւն առիւծոցն ի խըշ-  
տիս իւրեանց» (Պատմութիւն Արքստակեսի Լաստիվներոցույց, էջ 60):  
Ահա, մասամբ այս զորքն էր, որ պետք է հետագայում հենարան դառ-  
նար ոչ միայն Հայկական նոր իշխանությունների երևան գալուն Հայաս-  
տանար ոչ միայն Հայկական նոր իշխանությունների երևան գալուն

տանի հարավում և Ասորիքի Հյուսիսային մասերում, այլ նաև Կիլիկիա-յում: Նույն գորբն էր նաև, որ պետք է զորացներ հայկական տարբե-վրաստանում, ընդհուպ մինչև ռազմական ու քաղաքական հիմնական հրա-մանատարական դիրքերի գրավումը և Հայաստանի Հյուսիսի փաստական անկախության համատառումը:

47 Օտար աղբյուրները ևս, խոսելով Զաքարի և Իվանի Զաքարյան-ների մասին, հիմնականում նրանց ռազմական հզորությունն են ակնար-կում, համարելով նրանց Վրաստանի բոլոր զորքերի զիսավոր և ականա-վոր զորացիաներ: Այդ մասին ուշագրավ փաստեր է բերում և. Թորոս-յանը իր «Թագակիրների պատմությունն ու գովարանությունը», որպէս Հայաստանի ու Զաքարյանների պատմության սկզբնաղբյուր անտիւ դորձում:

48 Պ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 484:

49 Անդ, էջ 485:

50 «Թուղթ ընդհանրական», էջ 100:

51 Անդ, էջ 94:

52 Անդ, էջ 101:

53 Անդ, էջ 104—105: Այս առնչությամբ տեղին է նշել, որ անընդու-նելի է Ա. Հովհաննիսյանի այն պնդումը, իրը «սպասելով Արևմտյան Հայաստանի համար ֆրանկների ռազմատարօ միջամտությանը, Շնորհաւին միենույն ժամանակ հնագանդություն էր քարոզում Արևելյան Հայաստանի աղատությունը Հափշտակած բռնավորների համար...»: Նախ, շատ կամա-յական ձևով է այստեղ բաժանում կատարվում Արևելյան և Արևմտյան Հայաստանների միջև: Իրականում Շնորհաւու մոտ ազդպիսի տարրեր-կում չկա և իր «Թուղթը» նա ուղղում է Հավասարապես բոլոր հայերին, և երկրորդ՝ Շնորհաւին ոչ թե հնագանդության քարոզ է կարում Հայերին ընդդեմ Հայաստանը զրավոզների, այլ այն հայ զինվորներին, որոնք Հա-յաստանում կամ նրանից դուրս, ինչ-ինչ պատճառներից թելադրված, ծա-ռայում էին օտար իշխանավորների մետք: Բայց էովթյան, Շնորհաւուն այս զեպքում ավելի է հետաքրքրում, ինչպես ինքն է նշում, Հայերի նկատմամբ օտարների կարծիքն ու վերաբերմունքը, որ երկրորդական խնդիր չէր հայկական այն զանգվածների համար, որոնք ապրում էին օտարների հետ խառը և օտար տիրապետությանը հնթակա: Անշուշտ, այսուղ առկա է նաև տիրոջ ու ծառալի փոխհարաբերության միջնադրյան ըմբռնումը, սա-կայն սա երբեք չի կարող դիտվել իրեն քարոզ տիրողներին հնագանդելու (Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ աղատազրական մտքի պատմու-թյան, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 387):

54 Ն. Շնորհավի, Նամականի, Վենետիկ, 1838, էջ 7:

55 Ներսես Լամբրոնացի, Մեկութիւն պատարագի, էջ 229:

56 Կիլիկիան հայկական բանակի վերաբերյալ հատկապես ուշագրավ են Պ. Ալիշանի, ինչպես և Ա. Բոռնադյանի ուսումնասիրությունները

¶ Ա. Ալիշան, Միսուան, էջ 487: Ա. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիան Հայկական պետությունում): Ալիշանը բերում է արար պատմիչ Արքովիկեղայի վկայությունը, ըստ որի Հայկական Հեծեազորությունը պինդորը ստանում էր ամսական 12 ոսկի, մինչդեռ Հետեակի զինվորը՝ ընդամենը 3 ոսկի:

57 Հայ ժողովրդի պատմություն, Հ. Յ, էջ 275:

58 Ի. Արովածե, Քարթիս ցիստրերայի կամ Վրաց ժամանակադրության հին Հայերեն թարգմանությունը, Թրիլիսի, 1953, էջ 245:

59 Դ. Ալիշան, Միսուան, էջ 487:

60 Է. Մ. Բաղդասարյան, նշված աշխատությունը, 1977, էջ 235:

61 Ա. Բոռնազյան, նշված աշխատությունը, էջ 116:

62 Տե՛ս Հերում պատմիչ թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 54:

63 Նորին Յոհան վարդապետի աւացեալ ի բանն առաքելոց, որ առէ ունենալու անձն, որ ընդ իշխանութիւնը է ի հնագանդութիւն կա...», Մատենադարան, ձեռ. № 2173, էջ 86ա—101ա:

64 Արդ մասին ի թիվս ալլոց վկայում է նաև Կիրակոս Գանձակեցին. ուն սիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 283:

65 «Բուզբիզ ընդհանրական», էջ 89:

66 Անդ: Հետաքրքիր է, որ անգամ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին Արևմտյան Հայաստանում վանահայրությունը առավելապես վստահվում էր ոչ այնքան ունեոր, որքան մեծ գերգաստան ունեցող հոգեորական նորմերին, որպեսզի կարողանալին անհրաժեշտության դեպքում վանքերը պաշտպանել:

67 «Թուղթ ընդհանրական», էջ 95:

68 Անդ, էջ 94:

69 Անդ, էջ 107:

70 Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 117—118:

71 «Թուղթ ընդհանրական», էջ 107:

72 Անդ, էջ 63:

73 Անդ, էջ 40—43, տե՛ս զողության մասին Հատկածը:

74 Խոսքը վերաբերում է մովսիսականությանն ու քրիստոնեությանը:

75 «Թուղթ ընդհանրական», էջ 102—103:

76 Անդ, էջ 66:

77 Հ. Մանանդյան, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, Հ. Բ, մ. Բ, Երևան, 1960, էջ 98:

78 «Թուղթ ընդհանրական», էջ 33:

79 Անդ, էջ 94:

80 Անդ, էջ 70—71:

81 Արդ խնդրին անդրադարձէ նաև Մխիթար Գոնեցի կաթողիկոսը (1344—1355), որի Հաղորդած տեղեկությունները շատ արժեքավոր են

Հարցի լուսաբանման համար: Պարզվում է, որ օտարքները ոչ միայն թաշխանում էին հայկական և կեղեցիների հարուստ արդուզարդը, այլև ըրունություններ էին գործադրում նրանց նկատմամբ, ովքեր պատկերներ էին կախում և կեղեցիներում: Գոնեցին այդ առթիվ զրում է. «Առաջնորդք հայոց միջաւ ընկալան պատկերս սրբոց, զորս և ունիմք և կեղալ յեկեցին մեր, և թէպէտ երեմն գոյք հակառակութիւն ընդ յոյնս և ընդ հայս փ վերայ այսր, բայց այդ ի մէջ տղիտաց և տիմարաց ուժանց էր... իսկ պատճառ նուազութեան պատկերաց ի տեղիս տեղիս աշխարհին Հայոց մեծաց՝ է բանութիւն ապազգեաց, որք տիրենն ի Հայս, և հալածին յոյժ զպատկերս և զունօղս նոցին...») Մ. Զամշան, Պատմութիւն Հայոց, Բ. Վենեսետիկ, 1785, էջ 1021):

Անկասկած, այդ հալածանքը թելադրվում էր մահմեդական կրոնի զաղափարախոսությամբ, որ ընդհանրապես սրբապղծություն էր համարում կրոնական թեմաներով մարդկային պատկերներ ստեղծելը:

Հայկական և կեղեցիների շքեղ հանդերձավորման մասին է վկայում նաև Ասողիկը, պատմելով Գագիկ Ա-ի ու Կատրանիդի թագուհու կողմից շքեղորեն զարդարված Անիի մայր տաճարի մասին. «Եւ զարդարեաց ի զարդ ծիրաննեածղիկ, ոսկեթել նկարագործ անկուտածոց, արծաթեղին և ոսկեղին անօթոց և բարձրապայծառ լուսատու անօթոց վայելլութեամբ, որովք շահանայր ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ, որ ի բազարին մնաւ» (Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողիկան Պատմութիւն տիեզերական, Ա. Պետերբուրգ, 1885, էջ 256):

82 Երկու խոսք նաև № 3906 ձեռագրի (մեր բնագրում Ի) մասին: Ձեռագրի հնագույն մասը նախագաղափար օրինակի հիշատակագրության պատճառով թյուրիմացարար թվագրված է 1169—1170 թթ., առանց նկատի առնելու, որ հենց այդ մասում տեղադրված է Հակոբ Կլայեցի (Մեծքարեցի) կաթողիկոսի հանձնարարական գրությունը նվիրված նման գործ ստեղծելու իր մատհոգություններին և այդ ընթացքում Ծնորհալու երկր Հայոտնարեկելուն: Ինչպես հայտնի է, Հակոբ Կլայեցին գահակալել է 1268—1286 թթ.: Գատեկով այդ փաստից, ինչպես և հնագրական ու թղթի մշակման տվյալներից, պետք է ենթագրել, որ ձեռագիրը գրված է XIII դարից երին XIV դ. ակզրներին: Սակայն ձեռագրի հին գրությունը հասնում է մինչև «Առ զասս քահանայից» գլուխը; որից հետո բնագիրը շարունակվում է XVII դ. գրչությամբ:

83 Ձեռագրի նախագաղափարը գրված է եղել 1240 թ., Ծնորհալու մահվանից 67 տարի հետո «մեծիմաստ և հանձնարեղ գրչէ Գրիգորէ որ ի Հոռոմկային...» հենց իր Ծնորհալու բնագրից: Ահա նախագաղափարի գրիշ Գրիգորի հիշատակաբանը. «Ես Գրիգորիս մեղապարտ գրիշ և յետին ծառայ Քրիստոսի գտի զուրբ բուզր սուրբ տեառն ներսիսի գրեալ գրով սուրբ ձեռին իւրոյ. զինի նկ ամի վերափոխման իւրոյ յաստեացս, (ընդգծումը մերն է—է. Բ.) և ի հնացեալ և ի տեղւոչէ տեղ հատկալ թշ-

թոցն, մեծաւ աշխատոթեամբ և ջանիւ յիրիւրեցի և նորոգալիս ի մատենիս գրեցի, զի մի այնպիսով սրբոյն Աստուծոյ բան ի վայր անկեալ մոռացի և աղաւաղեալ կորիցէ, այլ որպէս զամբար լուսափառ պայծառացեալ ծաղկեցի յեկեղեցին Հայուստանեալց անգինց յիշատակաւ» (ձեռ. 912, էջ 33բ):

Գրիգոր գրչի այս օրինակից Թումա գրիլը 1302 թ. Խորին անապատում արտագրում է այն ձեռագիրը, որից 1779—1788 թթ. Ստեփանոս Կոստանդնուպոլսկիցին ընդօրինակում է մեր օրինակը: Ահա և Թումա գրչի Հիշատակարանը. «Ես Նուաստս յամենալի եւ յեսին ծառայ ծառայից Քրիստոսի, Թումաս մեղապարտ եւ մեղսամէր եւ անիմաստ գրին բայ ըզձից փափագման ուգոյ իմոյ, զտի զընդհանրական թուղթս տեսան ներսիսի Հայոց կաթողիկոսի, եւ գրեցի զսա ի լաւ եւ յընտիր աւրինակէ, ի մեծիմաստ եւ հանձարեղ գրչէ՝ Գրիգորէ, որ ի Հոռոմկալայն, որ եւ նա գրեալ էր այսպէս...»:

Ի միջի այլոց Թումա գրչի օրինակից 1823 թ. Նազարեթ Գևորգյան դպիր Կոստանդնուպոլսկիցին ընդօրինակում է Ոսկան ճգնավորին ուղղված Լամբրոնացու թուղթը, նշելով՝ «Իսկ յետինս թուղթ, որ առ Ոսկան ճրպնաւորն, հանի ի ձեռագիր ընդհանրականէ իմերէ գրեալ բոլորգով ի Թումաս գրչէ, Խորին կոչեցեալ անապատն, ի թուղթն Հայոց Զժեն եւ ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ, որոց յիշատակարանն է այս...» և բիրում է Գրիգոր Հոռոմկալայցու և Թումա գրչի վերը բիրված հիշատակարանները, փաստորեն միանգամայն աներկրա դարձնելով Թումայի օրինակը գոյությունը և գրության թվականի ճշտությունը, այն է՝ 1302 (Հ. Տաշյան, Յուցակ Հայերեն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 621): Սակայն Կոստանդնուպոլսում եղել է նաև «Թուղթ ընդհանրականի» մեկ այլ օրինակ, դարձյալ գրված Թումա գրչի ձեռքով՝ Խորին անապատում, նույն 1302 թվականին, որից և կատարվել է թղթի 1825 թ. Կ. Պոլսի հրատարակությունը: Անշաւշտ, կարկի է ենթադրել, թե նույն գրիլը 1302 թ. Նույն ձեռագրից երկու օրինակներ է արտագրել և հարցը փակել, մանավանդ, որ ինքն էլ այդ մասին ակնարկում է, բայց որոշ մանրամասներ թելադրում են մտածելու այլ կերպ:

Եթե առաջին դեպքում Թուման հայտնում է, որ ինքը ընդօրինակել է «լաւ եւ յընտիր օրինակէ ի մեծիմաստ և հանձարեղ գրչէ՝ Գրիգորէ, որ ի Հոռոմկալայէ», մյուս դեպքում՝ նկարագրում է այն դժվարությունները, որոնք ծառացած են եղել իր առջեւ. «...Եւ իմ վասն այսր լուսոյ՝ ըստ ըղձից փափագման ոգույ իմոյ աշխատասիրեալ բազում տառապանաւք այսր և անդր յածմամբ յուղէի գրաղձալիս իմ»:

Վասն զի ոչ համագումար զտի որպէս տեսանէք ի միասին ժողովեալ, այլ որպէս միոյ մարմնոյ մասունս ի բազումս յաւշեալ՝ առ ոմն ձեռք և առ ոմն ոտք անջատեալք ի միմեանս, երկարեալ և եռաւրեալ և սա աւելի ճանապարհաւք:

իսկ իմ ի բաց եղեալ զտկարութիւն մարմնոյս՝ զրոլորն լրմամբ ստացայ և ձեռն ի գործ արկեալ մեղասներկ մատամբ իմով ձարուհեալ զրեցի զսրոյ և զտիեղերալոյս զիտապետին հայոց և զերկրորդ լուսաւորչին զտէր ներսիսի զգեղեցկարան վարդապետութիւնն, որ առ ընդհանուր հայկաղունն և զթուղթնն որ առ թագաւորն յունաց Մանուկի՝ վասն միաբանութեան, զինդիրսն և զլնդդէմ պատասխանիսն և զայլսն բազումն որ յաղագս պէսպէս և զանազան իրաց ասացեալ է բաղձալի ուսումնասիրաց անձանց ժողովեալ զրազումն ի մի հաւաքմամբ դնել միմեանց առընդեր՝ իբր զծաղկիս ի պսակ բոլորեալ, զի լիցի պատճառս հոգեոր զրաւսանաց ամենախակ և անկատար մանկութեան իմոյ և ի սփոփանս սպապտ ոգույս՝ որքան աստուածային կամաց ի մարմնի տաղաւարիմ...» (Թուղթ ընդհանրական, Կ. Պոլիս, 1825 թ., էջ 229):

Նույն անձի երկու տարբեր հիշատակարանները մեզ թևադրում են, որ առաջին զեպքում Թոմա զրիլը Գրիգոր Հոռոմկլայիցուց ընդօրինակում է միայն «Թուղթ ընդհանրականը» և պատահական չէ, որ № 912 ձեռագրում և Գրիգորի, և Թոմայի հիշատակարանները բերված են անմիջապես «Թուղթ ընդհանրականից» հետո, մինչդեռ մի փոքր ավելի ուշ Թոմային հաջողվում է ի մի բերել ու միայն Ծնորհալու բազմաթիվ գործեր, այլև կտատարել այլ հավելումներ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի երկերից:

Մնում է ենթադրել, որ Թոման, նախքան Հոռոմկլայից դուրս գալը, տեղյակ է եղել Ծնորհալու գործերից կազմված ժողովածուի մասին և, չբավարարվելով միայն թուղթը ընդօրինակելով, նույն թվականին գտնում և մի ամբողջության մեջ է հավաքում ժողովածուի մեջ հղած նյութերը:

Ժողովածուն, հավանաբար, կազմել է ներսս կամքրոնացին, որի հիշատակարանը կա № 2496 ձեռագրի 301ա էջում, ուր, զիմելով իր եղայրը Հեթում իշխանին, զրում է, «Ելյամ ականատես և ականչալուր եղեալ նուաստ Ներսէս՝ Զամանուն որդին տեսան Ներսէսի հայրապետի ըստ փափագման քո, իշխան բարեկաշտ և հարազատ եղրայր իմ՝ Հեթում, շարադրեցի համառաւաբար զպատճառս նամակացն հանդերձ թղթովն: Իսկ զրովանդակ վարս երանեալ հաւըն մերոյ և սուրբ կաթուղիկոսի տեսան Ներսէսի եթէ կամիցիս կարգաւորաբար ուսանել նախքան զայս է մեր աշխատասիրաբար գտեալ (հավանաբար պիտք է լինի «գրեալ»—է. թ.) տաղաչափական բանիւ, զոր առհալ ի ձեռս ընթեցիս և մխիթարէ: Բ.) տաղաչափական բանիւ, զոր առհալ ի ձեռս ընթեցիս և մխիթարաց բիստրիս Հոգուով ըստ առակախաս իմաստնոյն, եթէ ի հիշատակ արդարոց խնդան ժողովուրդը, քանդի զայս փափագ միայն զրո բարեպաշտութիւնդ ի մերումս ժամանակի տեսաք վարակեալ առ ի խնդրել և յուսանել: զոր և իմ կատարելով՝ ըստ կարի զրեցի ի փառս Քրիստոսի աստուծոյ, որ եւ արհնեալ յափտեանս յափտենից ամմէն»:

84 Ակնարկում է կիլիկիայի Սև լեռների իրենց զիտությամբ Հուակ վայելած հոգեորականությանը:

85 Ակնարկում է 1166 թ. ապրիլի 17-ին Հռոմկայում տեղի ունեցած եկեղեցական ժողովը, ուր ինքը ձեռագրվեց աթոռակից կաթողիկոսի եղբար՝ Գրիգոր Գ կաթողիկոսի կողմից (Մ. Օրմանյան, Ազգակառություն, հ. Ա, մ. Ա, էջ 1387):

86 Ակնարկում է Հռոմկայի կաթողիկոսանիստ աթոռը, որը ապահովության համար 1149 թ., Գրիգոր Գ Պահապենու՝ Ներսես Շնորհալու եղբոր կաթողիկոսության օրոք, Սովորեց տեղափոխվել էր այստեղ:

87 Լիորիկիա—Աղրիատիկ ծովի արևելյան ափի՝ ներկայիս Ալբանիայի և Հարավալավիայի ծովափնյա մասի պատմական անվանումը:

88 Արիստ Ալեքսանդրացի՝ Գ դարի նշանավոր Հռոմեորականներից Արիստականության աղանդի հիմնադիրը, որը ձգնում էր ապացուցել, թե աստվածային երրորդությունը ոչ թե անսկիզ և անվերջ է, ու միասնական, ինչպես ընդունում էր եկեղեցին, այլ իր «Արդին Սուրբ» ժամանակի ընթացքում ստեղծված է Սուրբ Հոռ կողմից: Որդուց էլ բխում է Հռոմին Սուրբ: Ըստ այսմ, ինչպես պնդում են Արիստը և նրա ուսմունքի հետեւրդները, Հավիտենական է միայն Հայր Աստվածը: Արիստի ուսմունքը նախ բյուզանդական կայսր Կոստանդինի միջնորդությամբ խստիվ քրնակատվեց 325 թ. Նիկիայի տիեզերական ժողովում, իսկ Արիստը վտարվեց եկեղեցուց, ապա նաև՝ 381 թ. Կոստանդնուպոլսի ժողովի կողմից: Զնայած այդ ամենին Արիստականությունը առանձին վայրէրում ունեցավ իր հետեւրդները:

89 Ճշմարիտ է, այստեղ եղած իրատները նախ և առաջ ուղղված են Հայությանը, սակայն, նկատի առնելով, որ նույն երեսվթները նկատելի էին նաև քրիստոնեական այլ համայնքներում, Շնորհալին փաստորեն իր խոսքը անուղղակի կերպով ուղղում է նաև նրանց: Սա հասկանալի կլինիկին նկատի առնենք, որ հնոց ինքը իրականացնում էր Հայ եկեղեցու գործոն բանակցությունները և միարնակ, և երկարնակ եկեղեցիների հետ և այն մեծ հեղինակությունը, որ նա վայելում էր արևելյան քրիստոնեական եկեղեցիներում:

90 Այս հատվածը Հաստատում է, որ իրատները կանոնական պարտադրող ուժ են ունեցել, ըստ որում ոչ միայն Հռոմեորականության, այլև աշխարհիների համար, եթե ուղղված են վերջիններիս:

91 Հռուու և մարմնի հարաբերության մասին խոսելիս Շնորհալու մոտ դիմուն նկատելի է մարմինը հռուուն ծառայեցնելու, ստորագասելու միտումը, չնայած ընդդժվում է նաև մարմնականի անհրաժեշտությունը: Այս հարցը XIII—XIII դարերում անընդհատ ուշադրության կենտրոնում էր և XIII դ. վերջերին Հռովհաննես (Պլուզ) Երգնկացու մոտ մարմնականի պահանջները բավարարելու անհրաժեշտությունը գրեթե հավասարեցվում է Հռուեանի անհրաժեշտությանը:

92 Կէս էջ=լորի:

93 Այս հատվածը ուշագրավ է մի քանի առումներով: Ինչպիս Ներածության մեջ նշել ենք, Շնորհալու այն տեղեկությունը, թե եկեղեցիները Հարկատու դարձնելու և օտար տիրապետողներին կաշառելու դրում հիմնականում մեղավոր են Հայ Հոգեռականները, պետք է խիստ վերապահությամբ ընդունել, որովհետեւ հենց Հաջորդ տողերում նա Հայունում է այն բռնությունների մասին, որ օտարները կատարում էին Հայ եկեղեցու ու Նրա գործիչների նկատմամբ: Նրանք անգամ կաթողիկոսի կողմից վոնդվելուց հետո իրենց գրածո անարժան եպիսկոպոսներին նորից վերադարձնում էին իշխանության: Հասկանալի է, որ նման եպիսկոպոնները պետք է հաճոյանալին օտարներին:

Մյուս կողմից Հայունի է, որ բազմաթիվ Հայ ավատակերեր իրենց տիրույթները նվիրում էին եկեղեցուն և իրենք էլ դառնում Հոգեռականներ: Բայց օտար տիրապետողները, բնականարար, Հեշտությամբ չէին Հաշորվում այս երեսութիւն և ինչ-որ փոխհատուցման ձև էին փնտրում՝ այդ տիրույթներից նկամուտ ստանալու համար:

94 Ակնարկվում է Քեսունի Կարմիր վանքում տեղի ունեցած Հոգեռութողովը, որտեղ, ի թիվս այլ խնդիրների, քննվեց և մերժվեց Աղթամարում Հակաթոռ կաթողիկոսարանի ստեղծումը և Դավիթ Թոռնիկյանին կաթողիկոս օձելը:

95 Ակնարկվում է Հին Կտակարանի այն դրվագը, ուր Աստված արգելում է Հողեղին արարածներին իր փառքը տեսնելու և թիկունք է դարձնում Մովսեսին: Ելից լից 17—23:

Երկու խոսք	5
Ներածություն	8
Բնագիր	51
Թուլք ընդհանրական ներսէսի կարուղիկոսի Հայոց առ համօրէն Հայասեռ ազինս, որոց տեսչորին Հաւատացաւ նմա ի Տեառնէ	53
Առ կրօնաւրս խարազնազգեացս՝ որ ի վանուայս	74
Առ առաջնորդս սրբոց ովտից վանականաց	96
Առ առաջնորդս եկեղեցւոյ՝ որ են յաշխարհի, որ կոչին եպիսկոպո- սունէ	102
Առ դասս ժահանայից	118
Առ իշխանս որ քառ աշխարհի	142
Առ զինուորաց դասս	153
Առ բաղամականսդ	156
Առ երկրագործս և համօրէն ժողովրդականսդ	158
Առ կանանց դասս	161
Մանոթագրություններ	163

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

Հրատ., խմբագիր Ա. Լ. Սահմակյան  
Տեխ., խմբագիր Լ. Ա. Ազիզբեկյան  
Մրրագրիչ Լ. Ա. Խաչիկյան

Հանձնված է շարուածքի 15. 12. 1994 թ.: Ստորագրված է տպագրության  
20. 10. 1995 թ.:

Զափլ 84×108 1/<sub>32</sub>: Թուղթ Ն 1: Տառատեսակ «գրքի սովորական», բարձր  
տպագրություն: Պամ. 9,25 մմ., տպագր. 11,0 մմուլ:  
Ներկ. մամուլ 9,25 : Հրատ.-Հաշվարկ. 7,45 մմուլ: Տպաքանակ 600:  
Պատվիր № 130: Գինը պայմանագրային

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ  
Բաղրամյան պող. 24 դ.:

Издательство НАН РА, 375019. Ереван,  
пр. Маршала Баграмяна, 24 г.

ԱՐԵՎՈՅԱՆԻ

«ԵՐԵՎԱՆ» ընթագմատիկահիմք մեկ առև՝ արևելահայությանը բարգավաճախական համար է նշանակվել 1991 թ.